

ՈՒՅԱՅԷԼ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵՆ

ՀԱՅՈՉ ԺԸ-ԻԱ ԴԱՐԵՐԻ ՌՈՒՄԱԹԵԼԱԴԻՐ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ



9(47.925)

7-20

112

ՌԱՖԱՅԷԼ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ — ԻԿ

ՀՀ Գիտությունների ակադեմիայի  
Ազգային գրադարանի կազմակերպությամբ  
տարածվող հրատարակած:  
1990-2020 թթ.  
Ի Կ - Ի Կ Ե

ՀԱՅՈՑ ԺԸ-ԻԱ ԴԱՐԵՐԻ  
ՌՈՒՍԱԹԵԼԱԴԻՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐ

6400

ԵՐԵՎԱՆ 2021



ՀՏԴ 94 (479.25)  
ԳՄԴ 63-3 (5 Հ)  
Հ 205

Rafael Hambardzumyan  
Freeing 18<sup>th</sup>-21<sup>st</sup> - Century Armenian History  
from Russian Bias

Հրատարակիչ՝  
Մամիկոնեհից-գարոնականների ուխտը հանրային մարմին  
Խմբագիր՝  
Խմաստարան Աշոտ Պետրոսյան

**Համբարձումեան Ռ.**

Հ 205 Հայոց ԺԸ-ԻԱ դարերի ռուսաթելադիր պատմության  
սրբագրումներ: Ռաֆայել Համբարձումեան:- Եր.:  
Հեղ. հրատ., 2021թ.,- 224 էջ:

Գրքոյկը արձանագրում է, որ Հայոց ցեղասպանության սկզբնադիրը Ռուսաստանի կայսր Պետրոս Ա-ն է, որը 1724 թ. թուրքերի հետ հայերից գաղտնի կնքած ռազմադաշինքով սկսեց, իսկ 1728 թ.՝ Դաիթ Բեկի վախճանից յետոյ, վճռական դերակատարութիւն ունեցաւ նրա հիմնած Հայոց անկախ պետականութիւնը վերացնելու մէջ: Գրքոյկը հիմնաւորում է նաեւ, որ 1828 թուից արեւելահայութեանը կալանած Ռուսաստանի առնուազն 100-ամեայ պարտադրանքով Հայոց ցեղասպանութեան մասին մեզանում հրապարակուած աշխատութիւնները, յօդուածներն ու ելոյթները Մեծ եղեռնը շարունակում են բարդել ՄԻՄԻԱՅՆ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՎՐԱՅ: Գիտաշխատութիւնը անհերքելի փաստերով հիմնաւորում է հայութիւնից եւ մարդկութիւնից մշտապէս թաքցուող հետեւեալ ճշմարտութիւնը. Թուրքիայում դեռեաւ 1895-1896 թթ. հայոց կոտորածներ սադրած Ռուսաստանը, դեռեաւ այդ ժամանակ պաշտօնապէս ազդարարելով հայ բովանդակ ժողովրդին բնաջնջելու անհրաժեշտութիւնը, սկզբնաւորեց նաեւ ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլէայի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ի վճռագրով միջազգայնորէն ցեղասպանութիւն անուանուած այդ եղեռնագործութեան ռազմավարութիւնը:

ՀՏԴ 94 (479.25)  
ԳՄԴ 63-3 (5 Հ)

ISBN 978-9939-0-3866-7

© Համբարձումեան Ռ., 2021

## SUMMARY

The book states that the Russian Emperor, Petros the Great (1672–1725) is the original provoker of the Armenian Genocide, which began by the Russo-Turkish military alliance secretly concluded against Armenians in 1724. After the death of Davit' Bek (1629–1728) in 1728, the military alliance played a principal role in the elimination of the Armenian independent state that was established by Davit' Bek. The book also argues that since 1828 Russia, which has kept tyrannizing the Eastern Armenians for at least a hundred years, forced to publish the studies, articles, and speeches about the Armenian Genocide for Armenian readers to consistently pin the Great Genocide on Turkey alone. The academic work publicly uncovers the following truth with undeniable facts that have been disguised from Armenians and humanity. Russia that provoked Armenian pogroms in Turkey in 1895–1896, declaring the necessity of extinguishment of the whole Armenians at that time yet, initiated also the policy of the massacre by the UN Genocide Convention of the General Assembly, which recognized the massacre internationally as genocide on 9 December 1948. In 1895–1896, Russian Tsar, Nicolas II's ambassador to Constantinople sent a letter to Sultan on behalf of Tsar who supported the pogroms of the Western Armenians by the appeal, "Massacrez, Majeste', massacrez, Majeste" (Massacre [them], Your Highness, massacre [them]). In those years, Nikolas II passed an official statement, "We need Armenia without Armenians" with the help of Minister of Foreign

Affairs, Prince Aleksey Borisovich Lobanov-Rostovsky to Armenian-massacrer, Abdul Hamid, and a governor of Caucasus, Grigory Golitsyn (1838–1907, as Nikola's envoy, confirmed his public statement that Russia has its policy of the extinguishment of the Armenians. "I will be relieved at that time when the museum of Tiflis will exhibit the dummy of the Armenians to confirm the fact that Armenians, too, used to live in the Caucasus some times ago." Those official statements are the undeniable facts of the reality that Russia was the first authority to initiate the idea of genocide, the author of the massacre policy, and the instigators of the genocide of the nations as described by modern academic terms. These arguments can be the reasons for a specialist, and in general, for anyone who adopts an objective approach to this question to conclude undoubtedly that it was Russia that inflicted this punishment policy on the people; the country is the originator of criminal conspiracy of the elimination of the civilization, the author of this idea, the organizer, and the executioner. An eloquent and world-famous example is the Soviet Union. From December of 1917 to 1956, when the 20 th Council of the Soviet Party was summoned, Nikita Khrushchev (1894–1971), First Secretary of the Communist Party of the Soviet Union, Ukrainian by origin, began de-Stalinization; in 38–39 years, Stalin and Lenin continually massacred more than 114.000.000 people that lived in the Soviet Union, which means that they condemned 3.000.000 people to death annually in 1917–1955 (see Платонов О., Русский труд, М., 1991 г., pp. 253, 261).

## ԴՐՈՒԱԳ Ա

*Պիտ պարտուի, պիտ մեռնի կեղծիքը մեր  
կեանքում, որ ապրի մեր ժողովուրդը:  
Գարեգին Նժդեհ*

Հիմնաւորապէս վերաշարադրում եմ հայ-ռուս առնչութիւնների վերջին 300 տարուայ պատմութիւնը: Ռուսաստանում հայ տարրի կատարած կրօնական, մշակութային, տնտեսական ու իրաւաբաղաբական վիթխարի դերակատարութիւնը զուգորդել եմ կայսրութեան հայաստանակործան մշտական գործողութիւնների դեմ հայ ժողովրդի՝ յաճախ անհաւանական թուացող յարթանակներին:

**1. Հին Ռուսիայի քրիստոնէացումը** Կոստանդնուպոլսի մօրական կողմից հայ Փոտ պատրիարքի (Թ դ.) ձեռամբ սկսել, Բիւզանդիայի «Հայկական» (ռուսական պատմագիտութիւնը անուանում է «Մակեդոնական») կայսերատոհմի Վասիլ Բ հայկազուն կայսեր (976–1025) թոյր Աննայի միջոցով աւարտել են հայերը: Աննան ամուսնացաւ Կիեւի իշխան Վլադիմիրի հետ եւ հայերից բաղկացած շքախմբով (եկեղեցականներ, շինարարներ, գրիչներ, բժիշկներ, առեւտրականներ եւ այլն) մտաւ Կիեւ<sup>1</sup>:

<sup>1</sup> Ստեփաննոս Տարսնացի, Տիւբերական պատմութիւն: Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. 3, Երեւան, 1976 թ., էջ 22, 110, 128–129, 131–132, 136–137, 142–147:

2. Ռուբեն իշխանատոհմերի մեջ աւելի քան 100 տարի գոյութիւն է ունեցել Կիւեի իշխանների «**Յայկական գահատոհմ**» (դինաստիա), որը սկսուում է Բիւզանդիոյ **Վասիլ Բ կայսեր թոռ Եարոսլաւ Իմաստունից** (1019-1054) եւ հասնում մինչեւ Մոսկուան խրամներ ու փայտեայ պատեր կառուցելով բերդամրոց դարձրած **Եուրի Դուզորուկին** (1125-1157):

«Սլաւոնական» կոչուող գրեթէ բոլոր հողերը միաւորած **Եարոսլաւ Իմաստունը** Յայոց դատաստանագրքի հիման վրայ հայ վարդապետների ձեռամբ կազմել տուեց հին Ռուսիայի օրէնքների առաջին ժողովածուն՝ «Ռուսսկայա պրաւոա» (ծագում է լատիներէն iustitia (մատաւորապէս՝ իրաւաբանութեան հիմունքներ) նշանակող բառից, հայերէն՝ Ռուսական իրաւունք, Ռ. Յ.) օրէնսգիրքը, կառուցեց բազմաթիւ ու բազմապիսի շէնքեր, որոնց մեջ նաեւ «Յին ռուսական» կոչուող ճարտարապետութեան ամենաերեւելի ու ՅՆԱԳՈՅՆ կոթողը՝ սբ. Սոֆիայի տաճարը, հիմնեց Եարոսլաւ բաղաբը: Նա էր, որ Կիւեւում հաստատելով առաջին ռուսական մետրոպոլիտութիւնը՝ սլաւոն եկեղեցին օժտեց յաւելելալ ինքնավարութեամբ: Եարոսլաւ Իմաստուն հայկազունի թոռ Վսետլոդի որդի **Վլադիմիր Մոնոմախը** արեան 70 տոկոսով հայ էր: Նա Կիւեի իշխանն էր 1113-1125 թթ. եւ իր մօրական պապ, Բիւզանդիայի Կոնստանդին Մոնոմախ հայազգի կայսեր հետեւութեամբ իրեն կոչում էր Մոնոմախ: Նա միաւորեց հին սլաւոնական բոլոր իշխանութիւնները, գրեց սլաւոն գրականութեան հնագոյն էջը՝ «խրատ»-ը, իր որդիներին («խրատ որդւոց իմոց»), կազմեց ու հրապարակեց «Կանոնադրութիւն» կոչուող իրաւական

յօդուածների ժողովածուն: Սրա վեցերորդ որդի Եուրի Դուզորուկին, խրամներ եւ փայտեայ պատեր կառուցելով, Մոսկուան դարձրեց բերդաքաղաք: Սակայն Մոսկուան աննշան բնակավայրից յայտնի քաղաքի վերածեցին յատուկ հրաւերով այստեղ բնակուելու եկած «Սուրոժցի» կոչուող հայ վաճառականները, որոնք միջնադարում յայտնի քաղաք էին դարձրել Դրիմի Սուդակ (նախկինում կոչուել է նաեւ Սուրոժ) քաղաքը: Դրիմը օտարները համատարած անուանում էին «Ճովահայեաց Յայաստան»: Եուրի Դուզորուկի հայկազունը եւս համարում է Կիւեւեան Ռուսիայի նշանաւոր իշխաններից, որի պատուին Վլադիմիրի մեջ **հայերի ձեռամբ** 1158-1164 թթ. կառուցուել է սբ. Գեորգ եկեղեցին: Նրա «Դուզորուկի» մականունը հայոց **Չաքարեաններ** իշխանատոհմի շառաւիղ **Արդութեան-Երկայնաբազուկների** «ԵՐԿԱՅՆԱԲԱՉՈՒԿ» *շքանունի* թարգմանութիւնն է, իսկ գինանշանի վրայի առիւծը՝ Բագրատունեաց գինանշանի առիւծը:

3. 4. Պոլսի նշանաւոր համալսարանի հիմնադիր Լեւոն Յայ թուաբան (մաթեմատիկոս)-աստղագետը Կոստանդնուպոլսի՝ 837-843 թթ. հայազուն պատրիարք Յովհաննէս Է Զերականի եղբօրորդին էր: Այս Լեւոնի հոգեւոր զաւակներ Կիրիլն ու Մեթոդին (Յովհաննէս Զերականի եւ Կ. Պոլսոյ հայազգի Փոտ պատրիարքի աշակերտները) 43-տառանի այբուբեն ստեղծեցին արեւելեան սլաւոնների համար: Այն իրողութիւնը, որ այդ այբուբենը ոչ թէ այդ ժամանակների ամենատարածուած **յունական այբուբենի օրինակով 24**, այլ **հայոց այբուբենի օրինակով 30-ից** աւելի տառ ունի, ապա-

ցոյց է, որ Կիրիլի ու Մեթոդիի համար **տառաշարի հիմք է ծառայել հայոց այբուբենը:**

4. Հայերը Ռուսաստանում կառուցել են բազմաթիւ տաճարներ, գրել ու զարդանախշել են ձեռագրեր, նկարել սրբապատկերներ, պատկերազարդել եկեղեցիներ, ծաղկեցրել են այդ երկրի գրչարուեստը, արհեստները, մանրանկարչութիւնը, մշակոյթը, շինարուեստը, անասնաբուծութիւնը, տնտեսութիւնը, գիտութիւնը, գիտատնտեսութիւնը, յետազայում նաեւ երոպական արդիւնաբերութիւնը<sup>2</sup>:

5. **Դաւիթ Բէկը 1722 թ. վերջերին 450 տարի առաջ վերացած ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԻՆՆԻՔՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒՄ ՅԵՏՈՅ պարտութեան մատնեց Հայաստանը նուաճել ձգտող ռուսերուրբ ռազմադաշինքին, որը կողմերը Պետրոս Ա-ի նախածեռնութեամբ կնքել էին 1724 թուին: Դաւիթ Բէկն իր այդ յաղթանակներով հայոց պետութիւնը պահպանեց մինչեւ 1728 թ.՝ իր մահը: Այսպիսով, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ 300-ԱՄԵԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏԵՐԻ ՍԿԶԲԼԱԴԻՐԸ ԴԱՒԻԹ ԲԷԿՆ Է:**

6. Ռուսաստանի կայսր Պետրոս Ա-ն 1724 թ. Թուրքիայի հետ հայերից գաղտնի կնքած ռազմադաշինքով խափանեց սղնախներում նոյնպէս պատրաստուող ինքնիշխանութեան վերականգնումը՝ **Դաւիթ Բէկի վախճանից յետոյ** գլխաւորելով հայոց անկախ պետականութեան կործանումը:

<sup>2</sup> Տնեայների մեծ մասը տես Կալախչյան Օ. Խ., *Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре*, Ереван, 1957 г.; *Строительная деятельность армян на территории Восточной Европы*, Ереван, 1978 г.

7. 1828 թ. Պարսկաստանի մի նշանակալի հատուած **Պարսկահայքի** կցումը ժամանակի ճորտատիրական յետամնաց բռնակալութիւն Ռուսաստանին մեր ժողովրդի համար հոգեբանական, քաղաքական ու տնտեսական ԱՂԵՏԱԲԵՐ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՑԱՒ: Ազատական օրենքներ, ընտրովի հաստատութիւնների եւ ինքնավարութիւն գոյացնելու **հազարամեակների աւանդոյթ** ունեցող հայ ժողովրդի արեւելահայ հատուածը ընկաւ ժամանակի ամենավայրագ ու յետամնաց միապետութեան բռնիշխանութեան տակ: Բնակչութեան մեծամասնութիւնն այստեղ իրաւագորկ **ստրկահանգոյն**<sup>3</sup> ճորտն էր, որին շուկաներում վաճառում էին անասունի պէս:

8. ԺԸ դարից ի վեր քաղաքակիրթ աշխարհում գործադրուող ընտրութեան եւ կառավարումի սահմանադրական սկզբունքները հայերիս մէջ առկայ էին դեռեւս քրիստոնէութեան մուտքից **ԲԱԶՄԱԴԱՐԵՐ ԱՌԱՋ**: Համաքրիստոնէացումից անմիջապէս յետոյ վարչաձեւի սահմանադրական սկզբունքը Հայաստանեայց Առաքելական սբ. եկեղեցու տնօրինութեամբ դարձաւ կառավարումի **հիմնուղի**: Պետականագրկումի հարիւրամեակներում հայ հանրութեան կառավարումը **հայատարածքներում** եւ գաղթավայրերում տնօրինում էին Հայաստանեայց եկեղեցու ընտրովի մարմինները: Հայ եկեղեցու այդ ապակեդրոն ու ժողովրդավար հաստատութիւնները, որոնք ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ըստ էութեան նաեւ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ դեր ունէին, առնուազն Դ դ. սկզբից գոյանում էին բնակչու-

<sup>3</sup> Իմ ստեղծած բառերից, որոնք գրքում ամենուր նշել եմ մզացուած-թէքուած:

թեան բոլոր խաւերից ընտրուած աշխարհականներից ու հոգեւորականներից: Մեծ պատմաբան ու հայ եկեղեցու եւրոպահռչակ պատրիարք Արշակ Ալպոյաճեանը (1879–1962) նշուած խնդիրները պարզաբանելուց յետոյ տալիս է ընտրութիւններով Հայաստանեայց եկեղեցու կազմակերպական մարմինների գոյաւորումն ու գործունեութիւնը համակարգող երեք հիմնական սկզբունքներ, որոնք գործում են 301 թուից ի վեր:

«Ա. Ժողովրդային կամքը իր պաշտօնեութեան ընտրութեան ատեն, բարձրագոյնէն մինչեւ խոնարհագոյնը (այսինքն՝ բարձրագոյնից մինչեւ խոնարհագոյն պաշտօնեաների ընտրութիւնը՝ ժողովրդի կամքի արտայայտութեան դրսեւորում):

Բ. Եկեղեցական անշատ դասակարգ մը չկազմելը:

Գ. Եկեղեցոյ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ նիւթական վարչութեան մէջ աշխարհականներու գործակցութիւնը եւ մասնակցութիւնը»<sup>4</sup>: Ի տարբերութիւն միւս բոլոր ժողովուրդների հոգեւոր իշխանութիւնների՝ Հայաստանեայց եկեղեցու պաշտօնեայ ընտրողներն ու ստանձնողները, քահանայից կաթողիկոս, ՄԻԱՅՆ եկեղեցականներ չէին, այլ ՆԱ՛ԵԻ ԱՇԽԱՐՀԱԿԱՆՆԵՐ: Այսինքն՝ արդար ընտրութեամբ ձեւաւորուած Հայաստանեայց եկեղեցու հաստատութիւնների (ծխական, թաղական ու թեմական խորհուրդներ) անդամները 301 թ-ից ի վեր ընտրուում էին ոչ թէ **միայն** եկեղեցականներից, այլեւ բնակչութեան բոլոր խաւերից (Ամենայն Հայոց կաթողիկոսին ընտրող Ազգային-եկեղեցական ժողովի երեսփոխանները նոյնպէս թէ՛ հոգեւորական-

ներ էին եւ թէ՛ աշխարհականներ)<sup>5</sup>: Հայոց եկեղեցին իր ապակեդրոն ու ժողովրդավար կառոյցով անելի քան 1700 տարի պահել ու էլ անելի է զօրացրել մեր ժողովրդի **հոգեխառնուածքի** մէջ Հայկ Նահապետից ի վեր շարունակուող ԲՆԱԶԴՈՐԷՆ ԱՌԿԱՅ որակները՝ ազատութիւնը, անկախութիւնն ու ժողովրդավարութիւնը: Հայոց եկեղեցին իր կազմակերպական կառոյցով դրանք պահպանել է նաեւ գաղթավայրերում՝ Ջնդկաստան, Լեհաստան, Հունգարիա, Ուկրաինա, Տրանսիլվանիա, Պարսկաստան եւ այլուր: Հայերը սահմանադրական կառավարումը ԵՐԱՍԻԱՅԻ ԱՄԵՆԱԲՈՒԱՏԻՐԱԿԱՆ երկիր **Ռուսաստանում գործադրել են առնուազն Ժ դարից**, երբ Կիւեւեան Ռուսիայում, այն է՝ ՌՈՒԹԵՆԻԱՅՈՒՄ, հիմնեցին գաղթավայրեր: Իսկ սահմանադրութեան արդի իրաւասկզբունքները 1135 յօդուածանի «Աստրախանի հայոց դատաստանագրքով» ժԸ դ. ԿԵՍԵՐԻՑ ՌՈՒՍԱՍՏԱՆ են ՆԵՐՄՈՒԾԵԼ ՀԱՅԵՐԸ: Նշածս «դատաստանագրքով», որը 1765 թ. կազմել են Եղիազար Գրիգորեանը, Գրիգոր դի Սաֆար Կամպանեանը եւ Օհանի որդի Սարգիսը, առաջնորդում էին Նոր Նախիջեւանի (այժմ՝ Դոնի Ռոստով), Աստրախանի, Մոզդոկի, Ղզլարի, սբ. Խաչի (այժմ՝ Բուդեոնովսկ), Մոսկուայի, Պետերբուրգի եւ այլ վայրերի հայ համայնքները: Հայերն այդ դատաստանագրքերով ճորտատիրական Ռուսաստանում իրենց օրենսդիր եւ դատական իշխանութիւնը կազմաւորում էին ազատ ընտրութեամբ գոյաւորած մարմիններով: **Կառավարումի սկզբունք, որն այդ**

<sup>5</sup> Ռ. Համբարձումեան, Որոգայթ փառաց, Ակունքները, այժմեականութիւնը եւ առանձնայատկութիւնները, 1999 թ., էջ 7-8, 12-18:

<sup>4</sup> Արշակ Ալպոյաճեան, Հայ եկեղեցին Սահմանադրութեան հարցը, Գահիրէ, 1945 թ., էջ 8:

երկրի բնակչության համար ՄԱՍԱՎՄԲ ՄԻԱՅՆ հասու եղաւ 1991 թ. յետոյ եւ այդպէս կիսատ-պռատ շարունակուում է ցայսօր... Կարելի է ասել՝ Ռուսաստանի սահմանադրական մտքի պատմութիւնը սկսել են ուկրաինացիները, որոնց ռուս իշխանութիւնները անուանում էին **մալոռուս**: Ուկրաինացի գիտնականները ցոյց են տալիս, որ Ռուսաստանում 1710 թ. սահմանադրութիւն են ստեղծել Չապորոժեան կազակները: Այդ սահմանադրութիւնը կոչուել է **Ֆիլիպ Օրլիկի** սահմանադրութիւն (ուկրաիներէն՝ Конституція Пилипа Орлика, փակագծում «Բենդերեան»): Այն ոչ թէ ամբողջովին, այլ իբրեւ կանոնարկող **փաստագիր** 1710-1714 թթ. գործել է «աջափնեայ» Ուկրաինայում: Փաստաթուղթը Չապորոժիեի նորանշանակ հեթման Ֆիլիպ Օրլիկի եւ իր համակիր մի քանի աւագների միջեւ 1710 թ. ապրիլի 5-ին Բենդերիում (այն ժամանակ Օսմանեան կայսրութեան տարածք էր, այսօր Մոլդավիայի Պրեդնեստրովիե քաղաքն է) կնքուած համաձայնագիրը հրապարակուել է երկու օրինակից՝ արեւմտառուսերէն ու լատիներէն (ուկրաիներէն՝ *Пакти й конституції законів і вольностей Виїська Запорозького*, լատիներէն՝ *Pacta et Constitutiones legum libertatumque Exercitus Zaporoviensis*): Քանի որ լատիներէնում «վճիռ» (որոշում) բառը հնչում էր *constitutio*, փաստաթղթի վերնագրի այդ բառը թարգմանեցին «սահմանադրութիւն»: Փաստաթուղթը Մալոռուսիան յայտարարում էր Ռուսաստանից եւ Լեհաստանից անկախ տարածք: Այն բարուոքում էր նաեւ հեթմանի իշխանութիւնը: Հեթմանը Գերագոյն դատարանի գործունեութեանը միջամտելու իրաւունք չուներ, պարտաւոր-

ում էր բնակչութեանը պաշտպանել աճող հարկերից, օգնել անկեալներին ու որբերին: Կառավարումի արդի համակարգի հիմքը մարդու եւ ազգերի ազատութիւնը, ընկերային արդարութիւնն ու ժողովրդավարութիւնն է: Դրանք հանրութեանը ազատում էին կառավարումի բրգածեւ վարչակարգից՝ ապահովելով ապակեղրոն համակարգը, որը գոյանում է բնակչութեան բոլոր խաւերի հաւասար ու ազատ ընտրութեամբ: Փիլիպոս Օրլիկի Իրաւագիրը թէեւ այս սկզբունքները չունի, բայց, այդուամենայնիւ, նոյնիսկ վերոնշեալ սկզբունքների չգոյութեամբ իսկ բացառիկ էր Ռուսաստանի նման մի բռնապետութեան համար<sup>6</sup>:

**Իրաւագիրը** պիտի գործադրուէր Շուլէիայի դէմ Ռուսաստանի սկսած հիւսիսային պատերազմում (1700-1721 թթ.) Շուլէիայի յաղթանակի դէպքում այդ երկրի թագաւոր Կարլ ԺԲ-ի ստորագրութեամբ վաւերացուելուց յետոյ միայն, որից յետոյ ինքն ու իր յաջորդները լինելու էին Ուկրաինայի (Մալոռուս) **մշտախնամակալները** (պրոտեկտոր): Սակայն պատերազմում Շուլէիայի պարտութեամբ փաստաթուղթը ի չիք դարձաւ, որը Ուկրաինայի անունից ստորագրելու էր «Ձախակողմեան Ուկրաինայի» հեթման, Ուկրաինան Ռուսաստանից անջատելով անկախ պետութիւն գոյաւորելու ազատագրական պայքարի առաջնորդ Մազեպան:

<sup>6</sup> А. Ивахненко «Конституція Пилипа Орлика», Київ, 1997 з.; Кульчицький С. В., Мицик Ю. А., Власов В. С. Історія України: довідник для абітурієнтів та школярів. — К.: Літера ЛТД, 2009.

## ԴՐՈՒԱԳ Բ

Աշխատութիւնը արձանագրում է, որ 1828 թուից արեւելահայութեանը կալանած Ռուսաստանի առնուազն հարիւրամեայ պարտադրանքով Հայոց ցեղասպանութեան մասին հրապարակուած աշխատութիւնները, յօդուածները, պաշտօնագրերն ու ելոյթները ՄԵԾ ԵՂԵՂՆԸ ԳՑՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ ԹՈՒՐԶԻԱՅԻ ՎՐԱՅ: Հայոց ցեղասպանութեան միակողմանի **ՆԵՆ-ԳԱՔԱՐՈՎՅՈՒԹԵԱՄԲ** ակեյի քան 100 տարի մեր ժողովրդի ապահիւրազեկումին վերջ տալը վաղուց է **գերանհրաժեշտ:** Գիտաշխատութիւնը անհերքելի փաստերի հանրաւորումով բացայայտում է հայութիւնից եւ մարդկութիւնից մշտապէս թաքցուող հետեւեալ իրողութիւնը. ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողովի՝ 1948 թ. դեկտեմբերի 9-ի վճռագրով միջազգայնօրէն ցեղասպանութիւն **անուանուած** ցեղասպանող **ՍԿԶԲԼԱԻՈՐԵԼ Է** 1895-1896 թթ. Արեւմտահայքում հայերի կոտորածներ սադրած ու կազմակերպած Ռուսաստանը: Այդ ժամանակների մեր շրջահայեաց փոքրաթիւ գործիչներն ու պատմաբանները անհերքելի վաւերագրերով արձանագրում են, որ Ռուսաստանի թագաւոր Նիկոլայ Բ-ն իր արտգործնախարար Լոբանով-Ռոստովսկու եւ Պոլսի իր դեսպանի միջոցով քաջալերում էր արեւմտահայոց՝ 1895-1896 թթ. կոտորածները: Նա հայասպան Աբդուլ Համիդին Ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆԱՆՑԵԼՈՎ **«ՀԱՅԱՍՏԱՆԸ**

**ՄԵԶ ՊԵՏԸ Է ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐԻ»** պաշտօնական յայտարարութիւնը, Կովկասի կառավարիչի բերանով էլ **ՊԵՏԱԿԱՆՕՐԵՆ** ազդարարում էր, որ Ռուսաստանն էլ ունի ՀԱՅՈՒԹԵԱՆԸ ԲՆԱԶՆՑԵԼՈՒ ԻՐ ԾՐԱԳԻՐԸ. «Ես կհանգստանամ այն ժամանակ միայն, երբ ԹԻՖ-ԼԻՍԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՑՈՒՅԱԴՐԵՆ ՀԱՅԻ ԽՐՏԿԻ-ԼԱԿԸ՝ ի հաստատումն այն փաստի, որ Կովկասում ինչ-որ ժամանակ ապրելիս են եղել նաեւ հայեր»: Այս պաշտօնական անհերքելի փաստերը ցոյց են տալիս, որ ժողովուրդներին **ԲՆԱԶՆՑԵԼՈՒ** արդի եզրոյթով **«ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ»** ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱՅ ՍԿԶԲԼԱԻՈՐԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԸ: Այն է՝ այսօր **ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԻՒՆ** ԿՈՉՈՒՈՂ ՑԵՂԱՄՊԱՆԴԻ **ԳԱՂԱՓՈՐԱՏՈՒՆ, ՄԱՐՏԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ Է:**

Ասուածը հիմնաւորելու աշխարհահռչակ պերճախօս օրինակը «բոլշեւիզմ» անուանումով Ռուսաստանն է, որը 1917 թ. նոյեմբերից մինչեւ 1956 թ. կոտորել է ակեյի քան 87 ՄԻԼԻՈՆ ՍԵՓԱԿԱՆ ԶԱՂԱՔԱՑՈՒ, որը անում է ՏԱՐԵԿԱՆ ՄՕՏ ԵՐԿՈՒՄՈՒԿԵՍ ՄԼՆ ՄՊԱՆՈՒԹԻՒՆ: Վաւերագիրը սպանուածներին անուանում է «ոչ իրենց բնական մահով կեանքից հեռացածներ» (տե՛ս Платонов О., Русский труд, М., 1991 г., էջ 253, 261): Եթէ այս 87 միլիոնին յաւելենք **ՀԱՍԱՃԱՐԱԿՆԵՐԻՑ, ՍՈՎԻՑ<sup>7</sup>, ՆԱԵՒ «ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴԱՒԱՃԱՆ», «ՍՈՎԵՏ ՄԻՈՒԹԵԱՆ ԹՇՆԱՄԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԼՐՏԵՍ»** եւ

<sup>7</sup> Յատկապէս 1932-1933 թթ. Ուկրաինայում Ստալինի կազմակերպած արհեստական սովը (ուկրաիներէն՝ զոլոդոմոր, հայերէն՝ սովասպանդ), որին փոհ գնաց 3,3 մլն ուկրաինացի (Սովետ Միութեան մնացած տարածքներում սովասպանդի ընդհանուր թիւը ինձ յայտնի չէ):

այլ նման ԱՄԲԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՍՊԱՆՈՒԱԾ ԵՕԹ ՄԻԼԻՈՆԻՑ ԱԻԵԼԻԱՅԼՈՑ, ներառեալ Բ աշխարհամարտում սովետների զոհաբերած 27 միլիոն ռազմիկները, ապա 1917 թ. վերջերից մինչև 1956 թիվը (Մօտ 38 տարում) «բուլշևիկեան» կոչուող Ռուսաստանը կոտորել է ամնուազն 121 միլիոն սեփական քաղաքացու, այսինքն՝ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆԻՑ ԱԻԵԼԻ: Այս ու բացառիկ այլ փաստերն ու տուեալները դիւանական պաշտօնագրերից ու այլ վաւերանիւթերից քաղել ու հրապարակել է ուկրաինացի արդի յայտնի պատմաբան Ա. Կուլչիցկին<sup>8</sup>:

1915-1918 թթ. Ռուսաստանը Արեւմտահայաստանն ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՄԲ Թուրքիային յանձնելուց, իսկ Արեւելեան Հայաստանի մի քանի շրջանները 1920-1921 թթ. զաւթելով ու դրանց մի մասը Սովետական Հայաստան կոչելուց յետոյ Նախիջեւանն ու Արցախը տուեց Ադրբեջանին, Ջաւախքը՝ Վրաստանին: 1921 թ. մարտի 16-ի ռուսեւթուրք դաշնագիրը ստորագրելուց մինչև 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում **ԴԻԱԳՈՐԾԱԾ** արհեստական երկրաշարժը ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆԴԸ ՄԵՆ-ՄԻՆԱԿ ԻՐԱԳՈՐԾԵԼ Է ՈՌՍԱՍՏԱՆԸ: Հայութեանը բնաջնջելու մէջ Թուրքիայի դաշնակիցն ու ոճրակիցը լինելու **վաւերափաստերը** անհերքելի ապացոյցներն են այն իրողութեան, որ **ՌՈՒՄԱՍԱՆԸ** հայութեանը բռնաձուլելու եւ որպէս ժողովուրդ մշտտեղից վերացնելու ճրագիրը **ՊԵՏԱ-**

<sup>8</sup> Կուլչիցկի Ա., *Ինչիւ էր նա մեզ ոչնչացնում, Երեւան, 2010 թ., էջ 134-211, ուկրաիներէնից հայերէնի վերածեց ու տպագրեց այդ թուին 77-ում Ուկրաինայի արտակարգ եւ լիազոր դեսպան, հայագետ Օլեսանդր Բոնկոն: Платонов О., Русский труд, М., 1991 շ., стр. 253, 261: Տե՛ս նաեւ՝ Դ գլխի յղումները:*

ԿԱՆՕՐԵՆ հրապարակում եւ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՐ ԱՌՆՈՒԱԶՆ 1891 թ. ՍԿՍԱԾ<sup>9</sup>: Զանի դեռ մեր ժողովրդի բացարձակ մեծամասնութիւնը չի համոզուել այս անժխտելի իրողութիւնների մէջ, քանի դեռ ՀՀ իշխանութիւնները, կուսակցութիւններն ու անհատ գործիչների մեծամասնութիւնը հայոց ցեղասպանդի մասին հրապարակումներում շարունակելու են պատմական անհերքելի եղելութիւնների անտեսումը, Մեծ եղեռնի մասին մեր պաշտօնական հրապարակումները նորից մնալու են ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՄՈԼՈՐՈՂ ԿԵՂԻՔՆԵՐ՝ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՀԱՅՈՑ ՄՕՏ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ **ԵՂԵՆԱԶՈՂ** ՄԻՒՄ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՑԻՇԱՏԱԿԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ԱՆՏԵՍՈՒՄԸ... Մեծ ԵՂԵՆԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ ԿԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՁԻ հիմքերը Ազգերի լիգայի՝ 1920 թ. որոշումներով Հայաստանն իբրեւ ինքնիշխան պետութիւն ճանաչելն էր եւ ԱՄՆ 1913-1921 թթ. Նախագահ Վուդրո Ուիլսոնի՝ 1921 թ. նոյեմբերի 22-ին ընդունած Իրաւարար վճռով

6400

<sup>9</sup> «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. VI, Երեւան, 1981 թ., էջ 284: Գ. **Լալեան**, Հայաստան եւ Հայ դատ, Երեւան, 1991 թ., էջ 88-95: Բ. **Իշխանեան**, Տաճկահայ խնդիրը եւ միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1906 թ., էջ 44-48: Ռուսաստանը եւ Հայոց ցեղասպանութիւնը, Փաստաթղթեր, Երեւան, 2004 թ., էջ 32, 192: **Борян Б. А.**, Армения, Международная дипломатия у СССР, часть I, Москва-Ленинград, 1928, стр. 267-268: **Гр. Чалхушьян**, Армянский вопрос и армянские погромы в России, вь России, Ростов-на Дону, 1905, стр. 44-53, 74-77: **Հայխուշեան Գ.**, Ինչ էր եւ ինչ պիտի լինի մեր ուղին, 1923 թ., էջ 6: **Լեո**, Անցեալից, Թիֆլիս, 1921 թ., էջ 111, 133, 301-302, 320: **Համբարձումեան Ռ.**, Թուրք ընդհանրական, Երեւան, 1990 թ., էջ 15-22: «Դրօշակ» ամսագիր, 1898 թ., ապրիլի 30, 1905 թ., թիւ 2: **Սիմոնեան Հրաչիկ**, Ապատարական պայքարի ուղիներում, գիրք I, Երեւան, 2003 թ., էջ 41-42, 39-49, 51-60, 80-83, գիրք II, էջ 7-8, 77-78, 88-93, 99, 349: **Платонов О.**, Русский труд, М., 1991 շ., стр. 253, 261.



Հայաստանին յանձնուած տարածքները ՌՈՒՄԱՍՏԱ-  
ՆԻՑ ԵՒ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ Միջազգային դատարանով  
ստանալու հայցերը: Սրանք են հայոց Մեծ եղեռնի մա-  
սին մեր ժողովրդից եւ օտարներից աւելի քան մէկ դար  
թաթցող հիմնական իրողութիւնները...

## ԴՐՈՒԱԳ Գ

ՌՈՒՄ ԲՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
300-ԱՄԵԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏԵՐԻ ՍԿԶԲԱԴԻՐԸ  
ԴԱԻԹ ԲԷԿՆ Է

Ներկայացնեմ Ռուսաստանի՝ 1722-1988 թթ. կազ-  
մակերպած ու իրագործած Հայոց ցեղասպանութեան  
**գիտապացոյցները:**

Ռուսաստանի՝ Հայաստանը հայազրկելու, հա-  
յութեան ցանկացած ինքնիշխանութիւն ամէն գնով  
ոչնչացնելու ցայսօր շարունակուող 300-ամեայ քա-  
ղաքականութեան սկզբնադիրը Պետրոս Ա-ն է: Աշ-  
խատելով եւ սովորելով Եւրոպայում (Գերմանիայ,  
Յոլանդիայ, Անգլիայ)՝ Նա սերտեց կառավարումի,  
պետականաշինութեան, առետրի, տնտեսութեան,  
կրթութեան եւ այլ ոլորտների եւրոպական սկզբունք-  
ները՝ թագաւոր դառնալուց յետոյ դրանք ներմուծելով  
քաղաքակրթութիւնից առնուազն 500 տարի յետ ըն-  
կած վաղմիջնադարեան այդ ցեղապետութիւն: Նա  
Ռուսաստանի վարչատարածքային բաժանումը, պաշ-  
տօնաբաշխումը, շինարարութիւնը, կրթութիւնը, կա-  
ռուցապատումը, ռազմական գործը, մի խօսքով՝ պե-  
տութեան մէջ գործող ԲՈՒՈՐ ոլորտները ԱՄԲՈՂ-  
ՋՈՒԹԵԱՄԲ եւրոպականացրեց ու կերպաւորեց:  
Նա հիմնեց Նահանգներ ու գաւառներ, Նաւատորմ,  
գիտութեանց կաճառ, համալսարան, թերթ, թանգա-

րան, ներմուծեց օրացոյցը, բացեց դեսպանատներ եւ Մոսկովիայում այլ անգոյ հաստատութիւններ: Այդ երկիրը ինչպէս որ չունէր պետութիւնում առկայ նշուած հաստատութիւնները, այնպէս էլ չունէր ո՛չ երկրի ճշգրիտ երկրանունը, ո՛չ ցեղանունը, ո՛չ լեզուանունը: Երկրանունը կոչում էին Մոսկովիա, բնակչութեանը անուանում էին մոսկուացի (մոսկովիտը), իսկ լեզուն, որով խօսում էր բնակչութեան երեւի թէ 97 տոկոսը, անուն չունէր, մօտաւորապէս անուանում էին «ճորտերի լեզու», հայերէն լեզուամտածողութեամբ՝ ճորտերէն: Արքունիքը եւ բարձր պաշտօնեաների լեզուն գերմաներէնն էր, որով խօսում էին բնակչութեան մօտ երեք տոկոսը միայն՝ արքունիքն ու բարձրագոյն պաշտօնեաներն ու խոշոր հողատերերի մի մասը: Կայսրութեան ցեղանունն ու երկրանունը Պետրոս կայսեր համար բացառիկ անհրաժեշտութիւն էին, եւ նա բնակչութեանը հրամայեց կոչուեն ռոս, երկրանունը կոչեն Ռոսիա, լեզուն՝ ռոսիսկի, այն է՝ ռուսերէն:

**1722 թ.** յուլիսին արշաւելով Այսրկովկաս՝, Թուրքիայի հետ Սիւնիքում ու Արցախում ձեռնարկեց ու գլխաւորեց հայոց ինքնիշխանութիւնը վերացնելու գործողութիւններ: Այդ նոյն թուի վերջերին փոքրաթիւ զօրախմբով վրաց թագաւորի տնօրինութեամբ Կրաստանից Սիւնիք եկած **Դաւիթ Բեկը Վերսկուսկեւ ԷՐ** 450 տարի առաջ վերացած **ամբողջ ՀԱՅԱՍՏԱՆԻ ընդհանրական ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ**: «Ղափան գաւառի բոլոր կողմերից նրա մօտ հաւաքուեցին ամրակազմ հայորդիները, - նշում է աղբիւրը, - որ լսել էին նրա

\* 1722-1723 թթ. «Պարսկական արշաւանք» կոչուած վարժումներով ներխուժեց նաեւ Իրան:

մասին, շուրջ 400 հոգի»: Աղբիւրը չի նշում, թէ Դաւիթ Բեկը քանի հոգով է մտել Սիւնիք, բայց տալիս է Սիւնիք մտնելու պահին նրա ունեցած զօրախմբի թիւը (400 հոգի) եւ ապա շատ կարճ ժամկետում նրան միացած մարտիկների քանակը, որը հասնում էր մօտ 6000-ի<sup>10</sup>: Նոյն աշխատութիւնում մի քանի սկզբնաղբիւրների յղումով նշում է, որ Դաւիթ Բեկը Հայաստան է մտել 30 հոգով<sup>11</sup>: Դաւիթ Բեկի հռչակաւոր յաղթանակներից յիշատակուող Սիւնիքն ու Արցախը Եսայի կաթողիկոս Հասան-Չալալեանի տնօրինութեամբ եւ Մխիթար սպարապետի ու ինքնիշխանութեան ձգտող փոքրաթիւ մելիքները մեծ խանդավառութեամբ միացան Դաւիթ Բեկի գլխաւորած **պետականակերտումին: ՄԵՐ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԺԸ Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՐԱԳՈՅՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ ՓՈՆԱՆԱԿ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ**, գերիսնդիր է սարքել ռուսաց կայսր Պետրոս Ա-ի «հայանպաստ դիրքորոշում» **զրպարտութեան ջատագովքը**: Պետրոս Ա-ն հայերին տուած **կեղծախոստում** օգնութեան փոխարէն դեռեա 1722 թ. յուլիսից էր ձեռնարկել բացառելու հայերի որեւէ ինքնավարութիւն, էլ ուր մնաց թէ անկախութիւնը: Երբ Դաւիթ Բեկը լծուած էր հայոց պետութիւնը ԱՌԱՒԵԼ ԸՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ՉԱՆՔԵՐԻՆ, Պետրոս կայսեր նա-

<sup>10</sup> Դաւիթ Բեկ, Ընտիր պատմութիւն (1722-1729), Գրառութեամբ՝ Դ. Ղուկաս Սեբաստացու, քննական բնագիրը եւ վրագործի աշխարհաբար թարգմանութիւնը՝ ներածական ուսումնասիրութեամբ եւ ծանօթագրութիւններով՝ բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Լ. Գ. Խաչերեան, Լոս Անճելոս, 1988 թ., էջ 71-77, 156-161, 177:

<sup>11</sup> Անդ, էջ 177:

խածեռնութեամբ 1724 թ. յունիսի 12-ին Կ. Պոլսում կնքուած ռուսերօրք ռազմադաշինքով նրանք Պարսկահայքն ու Իրանից գրաւուած այլ տարածքներ բաժանեցին իրար մեջ: Ռուսաստանին անցաւ Դերբենդից Մազանդարայ ընկած Կասպիականի ափամերձ տարածքները, ինչի դիմաց Թուրքիան ստացաւ Այսրկովկասի՝ Իրանին պատկանող հողերը՝ ներառեալ Երեւանի խանութիւնը, Սիւնիքն ու Արցախը: Դաւիթ Բէկը 1727 թ. հանդիպեց Ատրպատականում գտնուող պարսից շահ Թահմազի հետ, որը ոչ միայն ճանաչեց Սիւնիքի հայոց ինքնիշխանութիւնը, այլև Դաւիթ Բէկին հռչակեց «Ամբողջ Դափանի տերը»՝ ՆՐԱՆ ԳՊԱՏԱԿԵՑ-ՆԵԼՈՎ ՆԱԵԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԹՈՒՐՔ ԲԵԿԵՐԻՆ ՈՒ ՅԵՂԱՊԵՏԵՐԻՆ: Պարսից շահից Դաւիթ Բէկը ստացաւ դրամ հատելու արտօնութիւն, իսկ թուրք բանակի դէմ Ազովիսը գրաւելու կռիւներում շահը նրան օգնութեան ուղարկեց պարսիկ երեք խաների<sup>12</sup>: Սա ըստ էութեան Դաւիթ Բէկի ու Պարսկաստանի ՊԱՏԱՍԽԱՆՆ ԷՐ ՊԱՐՍԿԱԳԱՅՅԸ ԻՐԱՐ ՄԷՋ ԲԱԺԱՆԵԼՈՒ ռուսերօրք ռազմադաշինքին: **Յայ պատմագիտութիւնը հարկ է՝ արձանագրի հետեւեալ պատմաիրողութիւնը. ԺԸ դ. առաջին տասնամեակների հայեւուս շփումների պատմութիւնը ճշգրիտ լուսաբանող դիւանագիտական ԵՐԿՈՒ ԻՐԱԿԱԶՕՐ փաստաթուղթ կայ ՄԻԱՅՆ. մէկը 1724 թ. ռուսերօրք *պորադաշինքն է*, միւսը՝ Դաւիթ Բէկի եւ Իրանի շահի միջեւ 1727 թ. կնքուած *զինակցութիւնը*: Մնացածը ոչ թէ ԴԻԿԱԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ, այլ Պետրոս Առաջինին հայերի գրած**

<sup>12</sup> Միքայել Չամչեանց, Պատմութիւն հայոց, հտ. 9, Կենտրոն, 1786 թ., Երեւան, 1984 թ., էջ 797-798:

հարիւրից աւելի աղերսագրեր, որոնք հայ **ռուսախոս-ժէտ** հանրային գործիչներն ու «պատմագետները» աւելի քան 200 տարի անընդհատ հրապարակելով որպէս **վաւերափաստեր**, հանրութեանը շարունակում են մոլորեցնել, թէ իբր Ռուսաստանի «հայամետ քաղաքական պատմութիւնը» դրանցով է սկսուում: Տասնեակ երկրներ գրաւած եւ հարիւրի չափ ժողովուրդներ բռնակալած աշխարհաւեր բռնապետութիւնը, որը դեռեւս 1828 թուից էր կալանել արեւելահայութեանը, ինչո՞ւ պիտի իր իշխանութեան տակ տապակուող պետականագուրկ ժողովուրդներից **ՅԵՆՅ ԳԱՅԵՐԻՆ** օգնէր վերականգնելու ինքնիշխան պետականութիւնը...

Ռուսաստանը, իրականում, սակայն, շարունակելով հայոց պետականութիւն գոյաւորելու ազատամարտերը **ԽԱՓԱՆԵԼՈՒՄ** իր **ռազմաքաղաքականութիւնը**, Սիւնիքի ու Արցախի դրօշակիր մելիքներին Պետրոս Ա-ի մարտավարութեամբ **ՔՈՉԵՑՐԵՑ ԳԻՄՍԻԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ** եւ այլուր, դաւադրաբար ոչնչացրեց ազատամարտի հիմնադիրներից ու յայտնի գործիչներից շատերին<sup>13</sup>, որպէսզի հայ **ռազմագաղթականութեան** վրայ յենուած՝ յետագայում նուաճէր Հիւսիսային Կովկասի մեծ մասն ու Կասպիականի ափերը... Ահա՛ ռուս կայսրութեան

<sup>13</sup> Այդ **դաւապանդների** սկզբնաղիւրդ նոյնպէս Պետրոս Ա-ն է, որը հայ երեւելիների սպանութիւնը 1711 թ. սկսեց Ատրախանում՝ Իսրայէլ Օրիֆց: Նա հաւանաբար զգացել էր, որ Իսրայէլ Օրիֆ հասկացել էր հայերի դէմ իրականացուող խաբէութիւնը: Մտահոգ, որ դա յայտնի դառնալով հայ միւս գործիչներին, պիտի գրկուի հայերին մոլորելով, նրանց քաղաքական, տնտեսական եւ այլ կարողութիւնները շահագործելուց, մշտեղից վերացրեց հայ երոպահոռչակ ազգային մեծ գործիչին: Պետրոս Ա-ի յաջորդները ՆՈՅՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ 1740 թ. վերացրին նաեւ հայ-ռուս բանավարդութիւնները տնօրինող Միխաս վարդապետին (1658-1740):

առաջին վարձը մեզ՝ իր հետ Հայաստանում անմիջա-  
կան շփում ունենալներուս ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՕՐՈՒԱՆԻՑ  
ՍԿՍԱԾ... Պետրոս Ա-ի յետագայ գործողութիւնները  
**Դաւիթ Բեկի հիմնած Սիւնիքի հայոց անկախ պե-  
տականութիւնը ՎԵՐԱՏՆԵԼՈՎ** հայերին ամբողջու-  
թեամբ իր աշխարհակալութեանը լծելն էր, ինչը նա  
անում էր հայութեանը օտարից ազատագրուելու **ստա-  
խոստումներով**: Արցախցուն հայրենալքութիւն պար-  
տադրելու այս գործողութիւնները **ԱՐՑԱԽԻ ՍՊԱՍԵԼԻ  
ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԽԱՓԱՆՈՂ ՈՐՈՂԱՅԹՆԵՐ ԷԼԸ**:

Հայոց պետականութեան զօրաւորումը խափանե-  
լուն ի խնդիր **ռուսաց կայսրը ձեռնարկեց Հայաստանի  
ԻՆՔՆԻՇԻԱՆԱՆՈՒԹԵԱՆ** այդ տարիների օրրան **Սիւ-  
նիքի անկախ պետականութիւնը ԹՈՒՐԶԻԱՅԻ ԶԻ-  
ՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ** վերացնելու՝ հայերից գաղտնի դա-  
ւադրութիւնները: Դրանք հիմնականում ուղղուած էին  
հետեւեալ նպատակին. Կասպիականի գրաւեալ հողերը  
խրացնելուն ի խնդիր, այդ տարածքները **ԲՆԱԿԵՏՆԵԼ  
ԱՅՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՎ**, որոնց այդտեղ պիտի  
գաղթեցնէին Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ բա-  
ժանուած հայահոծ միւս վայրերից: Դա իրականացնե-  
լու **ՄԻԱՎ ԽԻՉՈՑԸ** թուրքական տիրապետութիւնից  
ազատուելու Արցախ-Սիւնիքի միասնական պայքա-  
րի **ԿԱՍԵՑՈՒՄՆ ԷՐ**, որպէսզի Արցախի մելիքներն ու  
սղնախները չմիանային **ՌՈՒՄԵԻԹՈՒՐԸ ԶՕՐԱԴԱ-  
ՇԻՆԵԻ ԴԵՄ ՅԱՂԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԿԱՐՈՂ ԴԱ-  
ԻԹ ԲԵԿԻՆ**: Այսինքն՝ ՊԱՌԱԿՏԻՉ ԴԱԲԱՐՈՒԹԵ-  
ԱՄԲ հայերին դրդում էին միանալու ոչ թէ ռուսեպորբ  
զօրադաշնութեան դեմ ազատամարտող ինքնիշխան  
Սիւնիքին, այլ Թուրքիայի **պինադաշնակից** Ռուսաս-

տանին, ըստ եւութեան՝ Թուրքիային: Արցախի ինքնիշ-  
խանութիւնը վերացնելու ուղիներից միւսը արցախա-  
հայերին իր զաւթած Կասպիականի ափեր բշելն էր:  
Ռուսաստանը դա իրագործելու նպատակով էր ամեն  
կերպ Պետրոս Ա-ի ծրագրած այդ մարտավարութեամբ  
հայերին իրենց բնօրրանից քոչեցնում **ռուսանուած  
ԱՆԲՆԱԿ** տարածքներ՝ դրանք բնակեցնելու եւ շահոյ-  
թի աղբիւր դարձնելու համար: Ծրագրին խանգարող  
ամենամեծ խոչընդոտը Պետրոս Ա-ի համար դարձե-  
ալ ու վերստին Դաւիթ Բեկի կերտած Զանգեզուրի ին-  
քնիշխան պետութիւնն էր: **Դաւիթ Բեկը մինչեւ կեան-  
քի վերջը, աւելի քան վեց տարի, խափանեց Սիւնիքի  
անկախ պետութիւնը վերացնելու ռուսեպորբ հարի-  
ւրապատիկ գերագանց ուժերի բազմագրոհ** նկրտում-  
ները: 1728 թ.՝ Դաւիթ Բեկի մահուանից յետոյ, Ռուսաս-  
տանը, Թուրքիային դաշնակցած, 1728-1731 թթ. ըն-  
թացքում վերացրեց Սիւնիքի հայոց պետութիւնը, թէւ  
Արցախը չլքած մելիքները Մխիթար Սպարապետի  
գլխաւորութեամբ իրենց գոյութիւնը կիսանկախ շարու-  
նակեցին, մինչեւ որ կայսրութիւնը նրանց դատարկեց  
Արցախից ու մղեց Ռուսաստանի զինուորական ու բա-  
ղաբական կեանքի մէջ փառաւոր, բայց ուրիշներին վե-  
րագրուած էջեր լցնելուն: **ՅԵՐԻՒՐԱՆԸ Է** նաեւ իբր թէ  
Պետրոս Ա-ի հայանպաստ քայլերով ժԸ դարում ձեւա-  
ւորուած «Հայոց ազատագրական պայքարի ռուսա-  
կան կողմնորոշումը», Յերիւրանք, որը 1828 թ. սկսած՝  
արեւելահայ պատմագիտութեանը պարտադրեց ռու-  
սական արքունիքը, եւ որը շարունակուում է ահա ար-  
դէն մօտ 200 տարի: Եւ մարտութիւնը հետեւեալն է՝  
**ԺԸ** դ. առաջին բառորդը Ո՛Չ ԹԷ «Հայոց ազատագրա-

կան պայթարի ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԻ»  
**ՍԿԻԶԲՆ** Էր, այլ ՌՈՒՍԱՍԱՆԻ ԴԵՍ ԴԱԻԹ ԲԵ-  
**ԿԻ ԳԼԽԱԴՈՐԱԾ ԶԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԵԼԻ ԶԱՆ**  
**300-ԱՄԵԱՅ ԱՆԿԱՆԱՍԱՐՏԵՐԻ՝ ՍԿԻԶԲԸ:**

Հայոց ռուսադաւան պատմագիտութիւնը այդ սուտ կողմնորոշումի հիմնադիր յայտարարեց **ԶԱՅՈՅ ԲԱԶ-ՄԱՂԱՐԵԱՆ ԵԻՐՈ՞Պ ԴԻՄԱԶԱԿՈՒԹԻԻՆԸ ՎԵՐԱ-ԿԱՆԳԱԾ ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻԻՆ**, որն իբր թէ իր կողմնորոշումը «փոխեց» ռուսականի: Բայց Իսրայէլ Օրին ՄԻԱՅՆ ՈՐԵԻԵ ԵՐԿՐԻ կողմնորոշում չունեւ, քանի որ ԳՈՐԾԱԿՑՈՒՄ ԷՐ ԵԻՐՈ՞ՊԱՅԻ ԲԱԶՄԱԹԻԻ Երկրների ռազմաքաղաքական ղեկավարների հետ: Եթէ նրան ինչ-որ կողմնորոշում վերագրելու լինենք, ապա դա պիտի անուանենք **ԵԻՐՈ՞ՊԱԿԱՆ: ԵԻՐՈ՞ՊԱՅԻ ՇԱՏ ԵՐԿՐՆԵՐԻ** հետ հայանպաստ բանակցութիւններ վարած գործիչ **«ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ փոխարինուեց ՌՈՒՍԱԿԱՆՈՎ»** յայտարարութիւնը ՄԵԿ ԱՅԼ ՅԵՐԻԻՐԱՆԶ Է: Նա իր դիւանագիտական ու ռազմաքաղաքական բացառիկ ունակութիւններով Երոպայում վաստակած վիթխարի հեղինակութեան շնորհիւ Երոպայի տիրակալների (օրինակ՝ Տոսկանիայի ու Ֆլորենցիայի դուքսերը, Գերմանիայի Կուրֆիւստը, Զոմմի պապն ու Զոմմեական սրբազան կայսրը) օժանդակութեամբ ու միջնորդութեամբ բանավարութիւն սկսեց Պետրոս Ա-ի հետ՝ Հայաստանը **ԵՐՊԱՌՈՍ** միացեալ ուժերով ազատագրելու եւ հայոց ազգային պետականութիւնը վերականգնելու համար: Հայ ժողովրդի առնուազն ՉՈՐՍՈՒԿԵՍ ԶԱԶԱՐԱՄԵԱՅ ազատամարտերի՝ 19-20-րդ դարերի փուլը «ռուսական կողմնորոշում» ԲԱՆԱՐԿՈՒԹԵԱՆԸ ԳԱՄԱԾ կայսրութիւնը այդքանով չբա-

ւարարուեց: Նա ԻՐ ՄԱԳԻԼԼԵՐԸ 1828 ԹՈՒԻՑ Ի ՎԵՐ ՄՂՈՑՈՂ եւ կայսրութեանը բազմիցս ռազմաքաղաքական պարտութիւնների մատնած ազատատենչ հայութեան հարիւրաւոր նուիրեալներին տանջասպանելուց յետոյ **ՆՐԱՆՑԻՑ** ամենայայտնիներին (Իսրայէլ Օրի, Միխիթար Սպարապետ, Խաչատուր Աբովեան եւ ուրիշներ) հայ ռուսախտաժահրի **ՄՈՂՊԱԾՈՂԱԿՈՎ** յայտարարել տուեց այդ անգոյ կողմնորոշումի ճարտարապետներ: **ԱՐԵՆԵԼԽԱԿԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՆԸ, (ԳԱԼԱՅԻՕՐԷՆ ՆԱՆԷ ԱՐԵՆՄՈՒԿԱՅ ՄԻ ՔԱՆԻ ԿՐԹԱՄՉԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՅՆԵՐ)** հայոց նոր ժամանակների բազմարդիւն գործիչ **Իսրայէլ Օրիին Նոյնպէս վարկաբեկելով**, նրա ամբողջ գործունեութեան մէջ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑԱԾ «տուեալներով» դարձրին հայերի ԱՆԳՈՅ «ռուսական կողմնորոշումի» **հիմնադիր**: Երոպայի առնուազն 5-6 պետութիւնների հետ բանակցող քաղաքական ու **դիւանագիտական** բացառիկ ունակութիւններով օժտուած **ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻԻ ԴԻՄԱԶԱԿՈՒԹԻՒՆԸ** ոչ թէ Նշուած պետութիւններից որեւէ մէկն էր, այլ հաւաքական **ԵԻՐՈ՞ՊԱՆ**, որը ԱՌՆՈՒԱԶՆ **ԺԷ** դարից Ի ՎԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՈՒ ՄԵՉ ԶԱՄԱՐ **ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ, ԳԻՏՈՒԹԵԱՆ, ԿՐԹՈՒԹԵԱՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱԶՕՐՈՒՄԻ** ԵՒ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ **ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՕՐՐԱՆՆ ԷՐ...** Յոյժ անհրաժեշտ է արձանագրել, որ մեր մէջ Երոպ դիմադարձը գրչ է սբ. **ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԴՈՐԻՉԻ ՈՒ ՏՐԴԱՏ ՄԵԾԻ ԶՈՒԳԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ** Ի ՎԵՐ, **Դ** դարի առաջին տասնամեակներից: Ազաթանգեղոսի յունարէն բնագրի վկայութեամբ այդ ժամանակ Զոմմեական կայսր սբ. Կոստանդիանոսի հրաւերով Հայոց արքայ Տրդատ Մեծն ու Կոստանդիանոս կայսրը հան-

դիպեցին: «Ապա Հայոց մեծ արքա Տրդատը իր հետ առաւ մեծ արքեպիսկոպոս Գրիգորին, նրա որդի Արիստակէս եպիսկոպոսին եւ միւս եպիսկոպոս Աղբիանոսին, զինուորական կողմից՝ իր պալատի չորս գահերեցներին, որոնք բղեշխ են կոչուում... Նաեւ այլ բազմաթիւ մեծամեծներով (նշում է դրանցից 13-ի անունները, Ռ. Հ.) ու եօթանասուն հազար ընտիր զօրքով Այրարատ գաւառի Վաղարշապատ քաղաքից... գնացին հասան Հռոմ թագաւորանիստ քաղաքը... Աստուածակարգ թագաւոր Կոստանդիանոսը եւ մեծ հայրապետ արքունի դռան արքեպիսկոպոսը, որի անունն էր Եւսեբիոս, մեծ սիրով... իրար հաւասարապատիւ ողջոյն տալով՝ ուրախ եղան: Տրդատ արքան ... կայսեր առջեւ ցոյց տուեց Գրիգորին. «Սա այն մարդն է, ասաւ, որի ձեռքով մենք ճանաչեցինք Աստուծոյ մարդասիրութիւնը եւ նրա տոկուն համբերութեան երեւելի հրաշագործութիւնները: Սրա վրայ զարմանալով՝ Կոստանդիանոս կայսրը խոնարհեցրեց իր անձը, ընկաւ Գրիգորի առջեւ, որպէսզի օրհնուի նրանից եւ բազում վայելուչ մեծարանքներով պատուեց նրան իբրեւ Զրիստոսի խոստովանողի... Նոյնպէս եւ Տրդատ արքային, իբրեւ սիրելի եղբօր, մեծ ուրախութեամբ սեր ցոյց տուեց, մանաւանդ առաւել եւս դաշինք կնքեց նրա հետ..., որպէսզի միշտ հաստատուն պահեն մտերիմ բարեկամութիւնն իրենց թագաւորութիւնների միջեւ... Ապա հրաժեշտ տալով եւ այնտեղ ըստ թագաւորական արժանապատուութեան մեծամեծ պատիւներ ընդունելով՝ եկան հասան Հայոց երկիրը»<sup>14</sup>: Մեջբերում եմ նաեւ Ազաթանգեղոսի հայերէն բնագրում բացա-

<sup>14</sup> Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1983 թ., էջ 485-489: Այդ այցն ու հանդիպումը կարճատև յիշատակում են նաեւ Մովսէս

կայող, բայց յունարէն վարքում առկայ հայ-երոպ զինակցութիւնը ՍԿԶԲՆԱԻՐՐԱԾ Դաշնագիրը, որը իբրեւ երկու տերութիւնների շիտակ ու անաղարտ յարաբերութիւնների եզակի պաշտօնագիր, մինչ այդ աննախադէպ էր դաւանագիտութեան պատմութեան մէջ: «ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵՏ ԿԱՅՍԵՐ ԵՒ ՀՈՈՍԻ ՊԱՊ ՍՈՒՐԲ ՍԵՂԲԵՍՏՐՈՍԻ ԵՒ ՏՐԴԱՏ ԹԱԳԱԻՐԻ ՈՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՐԻԻՉԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԻՐՈՅ ԹՈՒՂԹԸ Կամօքն Աստուծոյ եւ միջնորդութեամբ սուրբ Աստուածածնի, սուրբ առաքելոց եւ ամենայն սրբոց՝ երկու արքաներս, երկու Հայրապետներս եւ հռովմեացի ու հայ երկու ազգերս ...եղբայրներ դարձանք միմեանց, Զրիստոսի Փռագ խաչափայտի առաջ յաւիտենական ուխտ եւ դաշինք հաստատեցինք մեր մէջ՝ քաջարի լատինացիներս եւ անյաղթելի թորգոմացիներս: Եւ ի հաւատարմութիւն հաստատուն ու անջնջելի մեր ուխտի, Զրիստոսի ահագոյն եւ անգին արիւնը խառնած մելանին (թանաքին, ծանոթութիւնը՝ թարգմանչի, Ռ. Հ.), գրով իրար եղբայր համարուեցինք մենք՝ արեւմտեան եւ արեւելեան ազգերս, եւ պարտաւորուեցինք, որպէս Զրիստոս Աստծուն եղբայրակիցներ, իրարու հանդէպ ունենալ հաւատ, սեր եւ միաբանութիւն, իրար համար կամովին մահ ընդունելով, սիրելիներին՝ սիրելի եւ թշնամիներին թշնամի դառնալով»<sup>15</sup>: Հայ-ռուս առնչութիւնների՝ ԺԸ դարից

խորենացին, Յովհաննէս կաթողիկոսը, Ստեփաննոս Օրբելեանը եւ այլ պատմիչներ:

<sup>15</sup> Յունարէնի հայերէն թարգմանութիւնը տպագրուել է՝ Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Կոստանդնուպոլիս, 1709 թ., էջ 334, ուրկից Պօղոս խաչատրեանի արդի աշխարհաբարի վերածածը հրապարակել եմ Ազգային միասնութեան ուխտի ԱԶԱՏ ՀԱՅՔ պաշտօնաթերթի թիւ 43-65 միացեալ համարում (Երեւան, 1991 թ., էջ 94):

սկսուող *պատմափուլերի* կեղծիքները ախտահանելու համար **ԺԸ** դ. հայոց պատմագիտութեան մեջ հարկ է՝ կատարուեն հետեւեալ *սրբագրումները*.

**Ա.** Պետրոս կայսրը 1722 թ. յուլիսի երկրորդ կեսին սկսում է Կասպիականի ափերն ու Այսրկովկասը Նուաճելու «Կասպիական» (սաեւ «Պարսկական» կոչուող) ռազմարշաւը: Նշուած տարածքները դիրաւ Նուաճելու համար նրան պետք էր թուրքիայում ունենալ թիկունքից խփող *պինաջակից*: Դա հայութիւնն էր, որին էլ իր պաշտօնեաների եւ իրեն ծառայող ռուսաճարակ հայանունների միջոցով տուեց բազմաթիւ խոստումներ: Ռազմարշաւի կարեւորագոյն խնդիրներից մեկը յայտարարուեց հայերին թուրքերի կոտորածներից փրկելը: Այդ թակարդն ընկած հայոց եկեղեցական ու աշխարհիկ բազմաթիւ գործիչներ սկսեցին «կոտորածից փրկուելու համար պատերազմում պետք է օգնենք ռուսներին» յորդորները, քարոզչութիւնն ու գործողութիւնները: Մինչդեռ ՌՈՒՄԱՑ ԿԱՅՄՐԸ ՅԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ ՅՐԱՅՐԵԼԸ, ԿԱՉՄԱԿԵՐՊԵԼՆ ՈՒ ԻՐԱԳՈՐԾԵԼԸ ԴԱՐՁՐԵԼ ԵՐ իր աշխարհակալ նկրտումների **ՌԱՉՄԱՍՄՐՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ**: Յենց այդ ժամանակ էր, որ փոքրաթիւ ջոկատով Սիւնիք հասած Դաւիթ Բէկն իր զօրաջոկատը համայրելով հազարաւոր տեղացիներով, անհաւանական թուացող յաղթանակներով վերականգնեց Յայոց անկախ պետականութիւնը: Դաւիթ Բէկը, պետականակերտումը ցոյց տուեց, որ հայութեան սերունդքի ՄԵՉ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ **ՆՊԱՏԱԿԱՍԱՆՑ ԶԳՏՈՒՄԸ** ՏՐՈՓՈՒՄ Է ՄՇՏԱՊԷՍ: Մեր ազգի՝ հազարամեակներ շարունակ ուժաւորող ազատութեան ու անկախութեան տենչը 1720-

1728 թթ. իրագործեց Դաւիթ Բէկը, ՈՐԻ ՄԵՉ ՉՈՒԳՈՐԴՈՒՄԸ-ԲԱՐԱԴՐՈՒՄԸ-ԱՍԲՈՂՁԱՑԱԾ ԷԻՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԵՐՈՒՑՔՆ ՈՒ **ՌԱՉՄԸՆՏՐԱՆԻՆ**: Նրա մեծագործութեամբ հայութեան քաղաքականապէս գրագետ եւ հասուն հատուածի համար համոզմունք դարձաւ, որ տարածաշրջան արշաւած ռուս կայսեր նպատակը հայութեան կարողութիւններն իր աշխարհակալութեանը գամելն էր: ԱՅՍ եւ մի քանի այլ ԱՉ-ԴԱԿՆԵՐՈՎ **ԴԱԻԹ ԲԵԿԻ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՈՒՄԸ ԸՆԴԴԻՍԱՍԱՎՐՏ ԵՐ** հայութեանը սեփական աշխարհակալ նկրտումներին բեւեռող **Պետրոս Ա-ի** ռազմաքաղաքականութեան դէմ **ՍԿՉԲՆԱԻՐՈՒՄԻ ԻՍԿ ՓՈՒԼՈՒՄ**: Դաւիթ Բէկն իր անզուգադիր յաղթանակներով խանդավառեց Սիւնիք-Արցախի մելիքների, սղնախներին ու տանուտերերի փոքրաթիւ, բայց անձնուէր հատուածին՝ նրանց կանգնեցնելով *հայրենահրգ* երկընտրանքի առաջ. կամ հայերին ինքնիշխանութիւն խոստացած ռուսաց թագաւորին հաւատարմով, ԼՃՈՒԵԼ նրա նուաճումներում եւ կամ միանալ հայոց պետութիւնն ԱՐ-ԴԵՆ ԿԵՐՏԱԾ Դաւիթ Բէկի **ՀԱՆՐԱՍԱՐՏԻՆ**: Այս հանգամանքը ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԴԱՐՁՐԵՑ Պետրոս Ա-ի աշխարհակալութիւնը խափանող **զօրունակ գործօն, ուստի ԻՐ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ** ԲԵԲԵՈՒԵՑ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՅԱՊԱՂ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՎՐԱՅ, որը նա պիտի աներ կամ թուրքիայի եւ կամ Պարսկաստանի զինակցութեամբ: Պետրոս Ա-ի համար այդ պետութիւնը թուրքիան էր, որի կատարած իբր թէ «մշտական կոտորածներից հայերին փրկելու համար էր» նաեւ *ռազմարշաւել* այդ կողմերը: **Նրան առաւել մտահոգում էր յատկապէս**

այն իրողութիւնը, որ **Դաւիթ Բէկի** ազատագրած տարածքներն ու բնակիչները անընդհատ ատելանում էին, ինչի շնորհիւ հայոց պետականութեանը միացած ինքնիշխանութեան ձգտող Սիւնիքի ու Արցախի սղնախներին ու մելիքներին (Աւան Իւզբաշի եւ ուրիշներ) **հետզհետե** հետեւում էին նորերը: Ընդհանրապէս ցանկացած գործչի արածները թուարկելիս յոյժ անհրաժեշտ է ցուցանել դրանց **ԱՐԴԻԲԼՔՆԵՐԸ**: Դաւիթ Բէկի մասին վերոնշեալ տուեալներին ի յաւելումն նշեմ եւս մի քանիսը.

**Բ.** Հայոց պաշտօնական պատմագիտութիւնը ժԸ դարի առաջին տասնամեակները ներկայացնում է որպէս Պետրոս Ա-ի շնորհիւ ձեւաւորուած «Հայոց ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումի» սկիզբ: Դաւիթ Բէկի՝ հայոց պետականութեան վերականգնումը **ՉՐՈՅԱՅՆՈՒՄ** Է ԱՅԴ ՅԵՐԻԻՐԱՆԸԸ՝ ցոյց տալով, որ ճշմարտութիւնը **ՃԻՇՏ ՀԱԿԱՌԱԿՆ Է**. ԺԸ դարի սկիզբը **Ո՛Ղ ԹԷ** «Հայոց ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշում» կոչուող **ԲԱՐԲԱՉԱՆՔԻ** սկիզբն է, այլ հայութեանն իր բնօրրանից տեղահանելու եւ պետականագրկելու Պետրոս Ա-ի **ռազմագործողութիւնների ԴԷՄ 1722-1728 թթ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻՅ ՅԱՂԹԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԵՐԻ ԿԿԻԶԲԸ**: Ուստի **ՀԱՅ-ՌՈՒՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ՝ 18-ից 21-րդ դդ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՍԿՍՈՒՄ Է ՍԻՒՆԻՔԻ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԶԻԱՅԻ ԶԻՆՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՍՐ ԿԵՐԱՑՆԵԼ ԵՂՆՈՂ ՌՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԿԱՅՍԵՐ ԴԷՄ ԴԱԻԹ ԲԷԿԻ ՓԱՌԱՅԵՂ ՅԱՂԱՆԱԿՆԵՐՈՎ**: Այս յաղթանակները հայութիւնը կերտեց հենց **հայաստանակործան** այդ **ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԿԶԲԱՓՈՒԼՈՒՄ**...

**Գ.** Երեքուկէս դար ընդմիջումից յետոյ Սիւնիքում վերականգնելով հայոց պետութիւնը՝ Դաւիթ Բէկը **խափանեց** Արցախի եւ այլ տարածքների հայերին իրենց բնօրրաններից գաղթեցնելուց **ՅԵՏՈՅ ԱՄԷՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏՆ ՈՒ ՍԻՒՆԻՔԸ** լիովին հայագրկելու Պետրոս կայսեր **ռազմածրագիրը**: Դաւիթ Բէկի **փառագործողութիւնը** հայոց ազատամարտի պատմութեան անզուգահիշ էջերից է, որոնցով **ՆԱ ՄԻԱԴԱՍՈՒԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԻՅ ՅԱԻԵՐԺԱԿԵԱՄՑ** ՄԵԾԱԳՈՐԾՆԵՐԻ **ԶՕՐԸՆՏՐԱՆՈՒՆ**: Չլիներ **ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԻ ԵՒ ՍԻՒՆԻՔԻ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ**<sup>16</sup>, արդեօք Արարատեան դաշտում այնքան հայ մնացած պիտի լինէր, որ 1918 թ. մայիսի 30-ին հայութիւնը հրաշակերտէր իր պետականութիւնը... Հարկ է նշել, որ հայութեանն իր բնօրրաններից տեղահանելը Պետրոս Ա-ի **ՆՈՐԱՍՈՒԾՈՒԹԻՒՆ** Է **ՀԱՅԱՉՆՁՈՒՄԻ ՄԵՉ**: Եթէ թուրքերը հայերին կոտորում էին մեր բնօրրաններում, ապա Պետրոս Ա-ն **ՀԱՅԱԶՐԿՈՒՄ** ԷՐ մեր **ԲԼՕՐՐԱՆՆԵՐԸ**: Իր յաջորդներին կտակած Պետրոս Ա-ի «**ՀԱՅԱԲՆԱԿ ԲՆԱԿԱՏԵՂԵՐԸ՝ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐԻ՝ ռճրապատգամը**՝ Ռուսաստանը կենսագործեց Արեւմտահայքը հայաթափելով, իսկ վերջին 30 տարում իրեն ճորտագրուած ՀՀ բարձրագոյն ղեկավարների ձեռամբ շարունակեց ներկայ Հայաստանում **երկրից գաղթեցնելով առնուազն մէկ միլիոն հայի...**

Ռուսաստանը 1991 թ. ի վեր իր ճորտագրած ՀՀ թիւ մէկ ղեկավարների ձեռամբ **ՀԱՅԱՍՏԱՆԸ** դա-

<sup>16</sup> Մեր հայրենիքը կաթող թշնամու դեմ հապարամեակներ շարունակ անհաւասար կոիւներում հայերիս պաշտպանական մարտավարութիւնը ոչ թէ ԿԵԱՆԸՈՒ ՓՐԿԵԼՈՒ համար երկրից ԳԱՂԹԵԼՆ Է ԵՂԵԼ, այլ ԿԵԱՆՔԻ ԳԼՈՎ ԲԼՕՐՐԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ...

տարկում է հայերից՝ ՆՐԱՆՑ ՓՈՒՆԱՐԷՆ ՀՀ բնակչութիւնը կրկնապատկելու յոխորտանքներով պետականօրէն կազմակերպելով Ո՛Չ ԹԵ ՀԱՅԵՐԻ, այլ հնդիկների, փակիստանցիների ու Ափրիկէի յետամնաց երկրների ընչազուրկ բնակիչների բնակեցումը ՀՀ-ում: ՏԱՍՆ ՄԻԼԻՈՆԻՑ անեյի Սփիւռք ունեցող ժողովրդի ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ներգաղթի ռազմավարութեան առանցքային խնդիրը դարձրել է ՈՉ ԹԵ ՀԱՅՐԵՆԱԴԱՐԱՉՈՒԹԻՒՆԸ, այլ սփիւռքահայերի փոխարէն հազարաւոր ԱՅԼԱԶԳԻՆԵՐԻ բնակեցումը: ՍԱ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐԻ» ՌՈՒՄԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ Է՝ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱՐԴԷՆ ՀՀ ԴԵԿԱԿԱՐՈՒԹԵԱՆ ՁԵՌՔՈՎ: Այն է՝ ՀՀ բարձրագոյն ղեկավարները, ԼՏԴ-ից սկսած ու ՅԱՏԿԱԴԵՍ վարչապետով վերջացրած, Ռուսաստանի թելադրանքով 1991-2021 թթ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՏԱՐԿՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԻՑ: Դրան որեւէ ուրիշ ճշգրիտ բնորոշում անհնար է տալ: Ասուածի պերճախօս օրինակը դարձեալ Ռուսաստանն է տայիս. այդ երկրից օրական մի քանի հարիւր ուղեւոր ունեցող երեք-չորս օդանաւ է վայր իջնում երեւան: Եկողները հիմնականում ընտանեօք հանդերձ Հայաստան բնակուելու եկած ռուսներ են, եւ դրանց մեջ գրեթէ Ո՛Չ ՄԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐԱՉ ՀԱՅ: Սա այն դէպքում, երբ այդ երկրում ԵՐԿՈՒ ՄԻԼԻՈՆԻՑ անեյի գաղթահայ կայ... Հայաստանը հայազրկելով մեջտեղից վերացնելու այս արհաւիրքի դեմ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Ե ՀԱՄԱՅՆԱՄԱՐՏԻ՝ ունենալով հետեւեալ համոզումը. մեր հայրենիքը զաւթող թշնամու դեմ հազարամեակներ շարունակ անհաւասար զօտեմարտերում հայերիս մարտավարութիւնը ոչ թէ ԿԵԱՆՔԸ ՓՐԿԵԼՈՒ համար

ԵՐԿՐԻՑ ԳԱՂԹԵԼՆ Ե ԵՂԵԼ, այլ ԿԵԱՆՔԻ ԳՆՈՎ ԲՆՕՐՐԱՆԻ ՊԱՅՊԱՆՈՒԹԻՒՆԸ...

1860-ականներից սկսեալ՝ «Հայոց ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումի» ճարտարապետ յայտարարուեց նաեւ Ռուսաստանի տանջասպանած յաջորդ մարտիրոսը՝ հաչատուր Աբովեանը, որն իր «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» վէպի ՎԵՐՆԱԳՐՈՎ ԱՐԵԻԼԱՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻՆ ԿՑԵԼԸ ԱՉՂԱՐԱՐԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՉԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ, ինչի համար նրա տանջասպանութիւնը ազդարարուեց անյայտացում: հաչատուր Աբովեանի վէպի վերնագրի սոյն բացայայտումը մտաբերում եմ Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսէս Աշտարակեցուն յղած նրա հաւանաբար 1847 թ. զարնանը գրած մի անստորագիր գրաբար նամակից: Նամակում նա շեշտում է. «Նորին Վեհափառութիւն... Չեմ կարող լռել, որի մասին քարերն են աղաղակում, ես չեմ կարող թաքցնել սրտումս այն, որի կսկծեցնող ցաւը զգում է ամեն մի հայրենասեր... Ինչո՞ւ են խաբում մեզ Կովկասի կեղծաւոր լրագրերը, թէ մեր ազգը փառքի ու բարեբախտութեան մեջ է, որը ճշմարտութեան օդայն շահնդ է միայն: Ի՞նչ օգուտ եւ փառք մեր ազգին Հայաստանի ազատութիւնից, երբ Հայաստանը **ԳՏՆԻՈՒՄ Ե ԱԲԵԼԻ ԽԱԿԱՐ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԵՋ, ԶԱՆ ՆԱԽՈՐԴ ԺԱՍԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԵՐԲ ԳՏՆԻՈՒՄ ԵՐ ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐԻ ԲՈՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ** (ընդգծումս իմն է, Ռ. Հ.)... Ատելութիւն իրար հանդէպ, ամեն կարգի ու տեսակի վարքի ապականութիւն՝ մեր հայրենիքի ազատութեան 20 տարուայ ընթացքում էլ անեյի արմատացած են երեւում, քան թէ բարբարոսների բռնակալութեան դարաւոր ժա-

մանակներում... Այժմ Ռուսաց տերութեան խնամքի թելերի տակ անառակութիւնը եւ անկարգութիւնները կեղեքում են ամեն մի տեսնող անցաւորի անմեղ սիրտը միայն... Ինչպէս թաքցնեմ վերքերս, որ **ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՆԱԵԻ ԱԶԳԻ ԱՄԲՈՂՋ ՄԱՐՄԻՆԸ ԳԻՇԱՏԵԼ**: Եւ ինչն է այս բոլորի աղբիւրն ու պատճառը, եթէ ոչ տգիտութիւնը, որ... այժմ օրէնքի պաշտպանութեան վարագոյրի տակ, ինչպէս անբուժելի ժանտախտ, վարակել եւ գրաւել է ամենքի սիրտն ու հոգին... **Պոլսում, Չմիւռնիայում անտերունչ ազգը կազմում է ընկերութիւններ, ինքնայորդոր զոհաբերութեամբ դպրոցներ է բաց անում բարբարոսների ժանիքների մէջ: Էջմիածնում ազգի հաւատի եւ լոյսի աղբիւրին բարեզարդում են անասունների գոմը: Տաճկաստանում եւ Վենետիկում տքնում են լուսաւորութեամբ հռչակել եւ բարձրացնել ազգի անունը, Հայաստանում հաւատի եւ աթոռակալները, եւ ատենակալները քննելու, պարապութեան, ծուլութեան, խռովարարութեան, բամբասանքի եւ որկրամոլութեան մէջ տքնում են գերազանցել միմեանց: Որտե՞ղ է այստեղ բարեբախտութիւնը... Խաբեբայ լրագրերը ստում են եւ ինձ՝ ականատեսիս... մնում է միայն արձակ համարձակ, առանց ակնառութեան ասել, թէ խաբուած ակնկալութիւնը եւ յոյսը աւելի եւս սուր, աւելի թունաւոր, բան իժի խայթը կը խոցոտեն մարդու սիրտը, չեմ ասում արդէն բովանդակ ազգի... Այն, որ օվսաննայով գովաբանեցինք..., **ԱԻԵԼԻԶԱՆ ՀՆԳԱՊԱՏԻԿ** խոր ցած գցեց ոչ միայն մի դար, այլ տասնեակ դարեր... **Բարբարոսների օրերով իսկ Սիմէոն կաթողիկոսը, Պետրոս Բերդումեանը (Թուրքիայում, Ռ. Հ.) հոգում էին՝ ծաղկեցնելու հայոց****

աթոռի վիճակը, իսկ մեծագոր Նիկողայոս արքայի եւ ռուսաց հզոր տերութեան օրերին գոմէշները եւ էշերը պէտք է զովանան լճերի մէջ եւ պարարտանան մեծակառոյց գոմերի մէջ: Եթէ ճիշտը չեմ խոստովանում, ձգեցէք ինձ, խնդրում եմ, ամենախիստ նզովքի տակ..., որովհետեւ ես ինքս ականատեսը եղայ մեր ազգային աթոռի թշուառութեան, որտեղ միայն տգիտութիւնն է, որ բազմած է Լուսաւորիչի գահի վրայ... Այլեւ շատ բան ունէի երկար ու ձիգ ասելու, բայց իմ վիրաւորուած սիրտը ինձ ոյժ եւ զորութիւն չի տալու շարունակելու խօսքիս ընթացքը: Գրածիս տակը չեմ դնում անունս, բայց Ձերդ վեհափառութեան մեծախոհ հոգին թող ինձ համար մեղք չհամարի իմ արդարացի ամբաստանութիւնը, որ բխում է ազգասիրութեան աղբիւրից»<sup>17</sup>: ԱԼ Իսահակեանը «**ՎԷՐԷ Հայաստանի, որք հայրենասիրի**» վէպի **ԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒ ԱՍԵԼԻԶԸ ԲԱՏԱՅԱՅՏՏՈՒՄ Ե անակնկալ շեշտադրումով**. «Ռուսական կայսրութեան աւելի կտրուկ թուրը՝ ցարիզմի այլասերող վտանգը, բացեց նրալեզուն, խօսեց հրեղէն լեզուն. «Էդ ո՞ւմ վրայ էք թուր հանել, հայոց մեծ ազգին չէ՞ք ճանաչում»: Ես չեմ կարող որոշել, թէ ինչ է «ՎԷՐԷ Հայաստանին»... անսանձ, փոթորկավառ երեւակայութիւն, անհանգիստ կայծակնայից հոգի, մտորումների, մտքի թռիչքների բուռն, յախուռն զգացմունքների մշտայոյզ օվկիան: Եւ վերջապէս մեր համազգային, դարերի ու

<sup>17</sup> *Խաչատուր Աբովեան, Երկերի լիակատար ժողովածոյ, տասներորդ հատոր՝ լրացուցիչ, Երեւան, 1961 թ., էջ 295-298: Թարգմանութիւնը տես Ղիւան Խաչատուր Աբովեանի, Երկրորդ հատոր, Երեւան, 1948 թ., էջ 50-53 (Բոլոր ընդգծումները իմն են. ինչպէս ամենուր, այստեղ նոյնպէս կրճատածս հատուածների տեղերը նշել եմ բազմակետերով, Ռ. Հ.):*

դարերի պաֆոսը, մեր կիրքը՝ հայ ժողովրդի ինքնորոշումը, ձերբազատումը բռնակալներից, օտար տիրապետություններից, որ լուսեղեն շանթի պես անցել է մեր գրականության սկզբից՝ Խորենացուց, Ղ. Փարպեցուց, Եղիշեից, Չամչեանից, Ալիշանից, Գամառ-Ջաթիպայից, Րաֆֆուց մինչև Հայաստանի ազատագրումը... **Խաչատուր Աբովեանը մեր նոր միֆն է, մեր նոր Միեռն է նա՝ ազատագրուած, շղթայազերծ»**<sup>18</sup> (բոլոր ընդգծումներն իմն են, Ռ. Հ.): Աւետիք Իսահակեանի այս կարծիքը ցայսօր մնում է ԱՆՀԱԻԱՏԱԼԻՕՐԵՆ ԲԱՅԱՌԻԿ, քանի որ այդ ժամանակ ոչ մեկի մտքով իսկ չէր անցնի եւ այսօր էլ չի անցնում, թէ «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» վեպի «Էդ՝ իմ վրայ էք թուր հանել» բառերով սկսուող յայտնի խօսքերը, որոնք ամենուր հրամցրել էի ԱՅԺՄ ԻՍԿ հրամցնում են որպէս Թրուքիայի մասին խօսքեր, Ա. Իսահակեանի կարծիքով ՌՈՒՍԱՍԱՆԻՆԻ ՄԱՍԻՆ են: Մեր ընկերային-քաղաքական միտքը հայ գրականության այս մեծագոյն արարումներից մեկը 1858 թ. տպագրուելուց մինչեւ այսօր **ՉԱՐԱՓՈԽԵԼ Է** բռնակալութեան ամրոց Ռուսաստանում արեւելահայերի ԿԱԼԱԼՔԸ ԳՈՎԵՐԳՈՂ ՆԵՐԲՈՂԻ: Ասել է թէ՛ հայոց **գիտակրթամշակութային** միտքը 1840-ական թթ. ի վեր ԿԱՐԿԱԲԵԿՈՒՄ Է հայոց ազատաբաղձ ոգու վեմագոյն պահապաններից ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻՆ... Մեր պատմագիտութիւնը զրպարտում է նաեւ հայոց անկախ պետութիւնը վերականգնելու գաղափարական առաջնորդ Իսրայել Օրիին՝ նրա քաղաքական գործունեութեան մեջ մտցրած անգոյ տուեալներով նրան հռչա-

<sup>18</sup> Աւետիք Իսահակեան, Երկեր չորս հատորով, Երեւան, 1959 թ., էջ 230-234:



Գուրգէն Էղիլեան

կելով «հայերի ռուսական կողմնորոշումի հիմնադիր»: Ռուսաստանի հայավնաս քայլերի մասին Խաչատուր Աբովեանի ցայսօր չտարածուող կարծիքը 1920-ական թթ. առաջինը շրջանառել է Խ. Աբովեանի մասին ցայժմ լոյս տեսած ԱՄԵՆԱՆԱԶԱՌ աշխատութեան հեղինակ Գուրգէն Էղիլեանը<sup>19</sup>: Խ. Աբովեանից արած մեջբերում-

<sup>19</sup> Աշխատութիւնը Գ. Էղիլեանի հարապատեանից ձեռք բերել, խմբագրել, 2020 թ. հրատարակել է իմաստագետ Աշոտ Պետրոսեանը, որը Էղիլեանի վարքում նշում է, որ նա ծնուել է 1884 թ. դեկտեմբերի 25-ին Զարվանսարայում (այսօր՝ Իջեւան), 1903 թ.՝ սբ. Էջմիածնի Գեորգեան ճեմարանն աւարտելուց յետոյ, 1904-1919 թթ. ուսումը Գիտակրթական համալսարանում՝ աւարտելով նախ՝ Ենայի ու Լայպցի-շարունակել է Գերմանիայում՝ աւարտելով նախ՝ Բեռլինի ու Լայպցի-գի, ապա՝ Շվեյցարիայի Բեռնի համալսարանները: 1909 թ. Բեռնի համալսարանում պաշտպանած նրա Dr G. Edilian, Kritik der Zillerschs formalistufentheorie վերնագրով ատենախօսութիւնը տպւում է առանձին գրքով: Գիրքը Եւրոպայի եւ աշխարհի մանկավարժագիտութեան մեջ տիրապետող Դերբերտ-Յիլլերեան համակարգի փոխարէն ներկայացրեց նոր գիտահամակարգ՝ համալսարանական խարէն ներկայացրեց նոր գիտահամակարգ՝ համալսարանական խարէն ներկայացրեց օժտելով յեղաշրջիչ նորութեամբ, որը հայ գիտակրթահամակարգը օժտելով յեղաշրջիչ նորութեամբ, որը հայ գիտակրթական գործունեութիւնը 1909-1914 թթ. սկսում է իբրեւ գիտակրթական գործունեութիւնը 1909-1914 թթ. սկսում է իբրեւ Գեորգեան ճեմարանի դասախօս: Ցեղասպանութեան տարիներին Գ. Էղիլեանը 1916 թ. Թիֆլիսում ստանձնում է Գաղթական դպրոցների տեսուչի տաժանակիր պաշտօնը: 1919 թ. հայրենադարձուելով, 1920 թ. դասախօսելու է հրաւիրում Երեւանի նորաբաց համալսա-

Ներից առաջ Նա շեշտում է, որ Աբովեանը ռուսական իշխանութիւնը անելի ահաւոր էր համարում, քան պարսկա-տաճկականը: «Աբովեանի կարծիքով,– շարունակում է Գ. Էդիլեանը,– ռուսական մօտ 20 տարուայ տիրապետութեան ժամանակ հայ ժողովուրդը բարոյապես այլանդակուել է... խաբեբայութիւն, զեխութիւն, վարքի ապականութիւն, կրօնի անկում, մի բան, որ Նկատելի չէր «բարբարոսների» տիրապետութեան ժամանակ»: Եւ նոյնիսկ բացատրում է, թէ ինչու էր այդպէս. «Պարսիկների եւ տաճիկների իշխանութեան ժամանակ նրանց բռնութիւններն ու հարստահարութիւնները ամբողջում են ժողովրդի հաւատը դէպի իր կրօնն ու եկեղեցին, եւ նրան մխիթարում էր իր «սուրբ հաւատը, աչքի էր ընկնում իր «հաւատի հաստատութեամբ», «բարքերի մաքրութեամբ», «անկեղծ ջերմեռանդութեամբ դէպի իր կրօնն ու ազգակիցները», իսկ այժմ ռուսական իշխանութեան օրով այդ «առաքինութիւնները» վերանում, կորչում են: Նա դեռ Դորպատում եղած ժամանակ համոզուեց, թէ դեռ որքան **անբարեկիրթ է ռուս ժողովուրդը**, եւ որքան բարբարոսական վարչածեւ ունի Ռուսաստանը, ուր համալսարաններին զօրանոցի կերպարանք է տրուած, ուր զանազան դաւանանքների մեջ խտրութիւն է դրւում, եւ օրէնքի առաջ բոլորը հաւասար չեն»<sup>20</sup>: Այս ամենով հանդերձ, մեր ընկերային-քաղաքական միտքն ու գրականագիտութիւնը, Խ. Աբովեանի վէպի գեղարուեստական արժեքին անելի քան մեկուկէս

րան, իսկ 1934 թ. իբրեւ դպրոցական տեսուչ, պաշտօնավարում է Արցախում: 1937 թ. շատ-շատերի հետ ձերբակալւում, տասը տարով աքսորւում է Սիբիր, որտեղ 1942 թ. վախճանւում է:

<sup>20</sup> Գուրգէն Էդիլեան, *Խաչատուր Աբովեանի կեանքն ու գործունեութիւնը*, Երեւան, 2020 թ., էջ 358-372 եւ այլ էջեր:

դար երկրորդական նշանակութիւն տալով, հայ գրականութեան մեծագոյն արարումներից մեկը ներկայացրել էւ ցայսօր ներկայացնում են բռնակալութեան ու յետաշրջութեան ամրոց Ռուսաստանում արեւելահայերի կալանքի գովեստ եւ ռուսամեծար գետնասող քարոզչութիւն: Ասել է թէ՛ հայոց ռազմական, *գիտակրթամշակութային* ու քաղաքական գաղափարաբանութիւնը ներկայացնող բազմաթիւ «տեսաբաններ», աղճատելով ու շօճաշարելով ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ՝ մեր ժողովրդի ազատաբաղձ ոգու վեհաշուք կոթող ՎԷՊԻ ԽՈՐՅՈՒՐԴ ԽՈՐԻՆԸ, 1848 թուից մինչեւ այսօր վարկաբեկում են նրան:

## ԴՐՈՒԱԳ Դ



ԴԱԻԹ ԲԷԿ (1669-1728)

1891թ. փետրուարի 12-ին սկսուեց *հայահոգե-սպանդի* նոր արշաւը: Ռուսաստանի կայսեր գումարած այսպէս կոչուած «Հայկական գործերի բարձր մակարդակի ժողով»-ը Հայոց ցեղասպանութեան ՍԿԻԶԲԸ ՀԱՄԱՐՈՒՈՂ ԹՈՒՎԿԱՆԻՑ 24 ՏԱՐԻ ԱՌԱՋ հռչակեց ռուսահայութեան *հոգեյօշոջ* բազմապատկելու, այն է՝ հայութեանը *ՆԱ՛ԵՒ ԲՈՒՆԱԶՈՒԼԵԼՈՒ ԿԵՐՊՈՎ ՈՒ ԵՂԱՆԱԿՈ՛Վ ԱԶԳԱՍՊԱՆԵԼՈՒ ԻՅՄՆՈՒՂԻՆԵՐը*. «ՀԱՅ ԱԶԳՈՒԹԵԱՆԸ ՀԵՏԶԳԵՏԵ ԶՈՒԼԵԼ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ՏԻՐՈՂ ԲՆԱԿԶՈՒԹԵԱՆԸ... դպրոցական հարցում ձգտել էկեղեցական-ծխական ուսումնարանները... լրիւ կերպով ուսումնական վարչութեանը ենթարկելուն»<sup>21</sup>... Հայոց լեզուի գործածութիւնը առաւելագոյնս սահմանափակելու այդ հրամանագիրը հայոց դպրոցը վերացնելու հրաման էր: Այն հրահանգում էր. «1. Հայոց դպրոցներու մէջ ճեմարանաւարտներուն ուսուցչութիւնը արգիլել եւ որ յատկապէս կառավարութենէ արտօսուին: 2. Հայոց լեզուն եւ կրօնքն զատ ամեն առարկայ ռուսերենով աւանդել Հայ դպրոցներուն մէջ: 3. Պետական դպրոցներու մէջ Հայոց կրօնքն ալ ռուսերենով աւանդել: 4. Հայոց եկեղեցական կա-

<sup>21</sup> ՍՍՀՄ պետական կենտրոնական պատմական դիւան, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 12, տես Վահէ Երկանեան, Պայթար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երեւան, 1970 թ., էջ 187: Ակնունի, Կովկասեան վերքեր, Ժընեւ, 1903 թ.:

լուածները կառավարութեան յանձնել՝ փոխարէն պաշտօնէից թոշակ եւ ծախուց գումար ստանալու պայմանաւ: 5. Էջմիածնի աթոռին պատկանող գիւղերուն տասնորդի կամ արդիւնքի հասոյթը յարքունիս գրաւել՝ դրամական փոխարինութեան պայմանով: 6. Դատարաններու առջեւ ելլողներուն դատաստանական երդումը ռուսերէն լեզուով ընել տայ: 7. Քաղաքական շարժումներու մասնակցող եկեղեցականները անմիջապէս ձերբակալել, դատել ու պատժել, կաթողիկոսին տեղեկութիւն տալէ առաջ... Բոլոր այդ որոշումները նոր ալ չէին, եւ հին կարգադրութեանց կրկնումներ եւ ժամանակաւոր թոյլտուութեանց (նկատի ունի Նախկինում տրուած ժամանակաւոր չնչին արտօնութիւնները, Ռ. Գ.) դադարումն էին»<sup>22</sup>: Յարձակումը արգասաւորելու եւ սկսածը աւարտելուն ի խնդիր կայսրութիւնը «յարմար» առիթ էր հասունացնում, ինչի համար հայութեան մէջ **ԴԱՐՁԵԱ՛Լ ԾԱԼԱԼԵՑ** այնպիսի քարոզարշաւ, որպէսզի **ՌՈՒՄԱԳԱՅԵՐԻ ԳՈԳԵՒՈՐ ՈՒ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՆԱԽԾԻՐԸ ՏԱՃԿԱԳԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԳԱՍԵՍԱՏ** առաւելագոյնը **ՉԱՐԵԱՑ ՓՈՔՐԱԳՈՅՆ ԸՆԿԱԼՈՒԷՐ**: Այդ դաւադրութեան ակամայ ու տգետ վարձկանները դարձան **ՌՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ** հիմնուած եւրոպական չափանիշներով **ԶԱՂԱԶԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ** կուսակցութիւնները՝ **ՅՆՉԱԿ**-ն ու **ՅՅԴ**-ն: Դրանք, որ հոգեխառնուածքով յեղափոխական, ազատաբաղձ ու **արդարատենչ** հայութեան մէջ պարարտ հող ունէին ծաւալուելու, Թուրքիայում կատարած խժոժիչ գործողութիւններով (1890 թ. Գում Գափուկի արկածախնդրութիւնն օրինակ)

<sup>22</sup> Մաղաքիա Օրմանեան պատրիարք, Ազգապատում, Գ հատոր, Երեւան, 2001 թ., էջ 533:

կարողացան հասունացնել «ռուսական միջամտութիւն»: Այդ միջամտութիւնը այս անգամ **ՆՈՅՆԴԵՍ ՎԵՐԱԾՈՒԵՑ ՌՈՒՄԵԻԹՈՒՐԸ ԳԱՅԱՍՊԱՆ ԴԱՇԻՆԵԻ**: Կովկասի կառավարիչ Շերեմետեւը ցարին յիշեցրեց, որ հայկական դպրոցները «լուրջ խոչընդոտ են հայերի մէջ ուղղափառութիւն տարածելուն... եւ շատ վայրերում հայերը լրիւ հայախօս ու հայասեր են դարձել եւ այլեւս ռուսական ուղղափառ եկեղեցիներ չեն գնում»<sup>23</sup> (ընդգծ. իմը, Ռ. Գ.): Երբ սուլթանը Ռուսաստանի բազմապիսի աջակցութիւններով 1895 թ. սկսել էր տաճկահայերի կոտորածները, նոյն թուի դեկտեմբերին Մոսկուան վերսկսեց փակել հայոց դպրոցներն ու ակեյի ծաւալուն դարձրեց յարձակումները հայոց եկեղեցու վրայ: Թուրքիայում հայոց ջարդեր հրահրելուց յետոյ կայսրութեան թեւերն արձակ էին՝ վերջաւորելու ռուսահայերի **հոգե-նախճիրը**, որի պայմաններից մէկը **ԱՐԵԻԵԼԱԳԱՅՈՒԹԵԱՆԸ ԱՌԱԻԷԼ ԱԶԱՏ, ՌՄՏԻ ԵՒ ԱԻԵԼԻ ԴԱՅԶԱՐՈՒԼԱԿ ԱՐԵԻՄՏԱԳԱՅԵՐԻՑ ԱՄԷՆ ԳՆՈՎ ԳԵՌՈՒ ԴԱՅԵԼՆ ԷՐ**: Ռուսաց թագաւորը, արեւմտահայերին ազդարարելով խռովարար յեղափոխականներ, **ՅՐԱՊԱՐԱԿԵՑ** նրանց **ԱՄԷՆ ԳՆՈՎ ԱՐԵԻԵԼԱԳԱՅԵՐԻՑ ԳԵՌՈՒ ԴԱՅԵԼՈՒ ՅԱՏՈՒԿ ԳՐԱՄԱՆ**: Պատմագիտութիւնը ամբողջովին չի բացայայտել նշուած հրամանագրի ծալքերը, որոնցից մէկն էլ այն է, որ այդ հրամանը վերաբերում էր նաեւ **ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ** բոլոր Ո՛Չ ՌՈՒՄԱԳԱՅԵՐԻՆ, հատկապէս **ԱԶԱՏ ԵՒՐՈՊԱԳԱՅՈՒԹԵԱՆԸ**: Գրամանի **ՆՊԱՏԱԿԸ ԳՈԳԵՍՊԱՆԴԻ ԴԵՍ ԱՐԵԻԵԼԱԳԱՅԵՐԻ ԻՆԸ**

<sup>23</sup> ՍՍԳՄ պետ. Կենտրոն. Պատմ. դիւան, ֆ. 821, ց. 140, գ. 53, էջ 147, տես նաեւ Վ. Երկանեանի նշվ. աշխատութիւնը, էջ 199:

**ՆԱԴԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԳՕՏԵՍԱՐՏԻ ՄԷՋ ԱՐԵՒ-ՄՏԱՅԱՅԵՐԻ ԵՎ ԸՆԴԱՆՐԱԴՊԵՍ ՍՓԻՒՔԱՅԱՅԵՐԻ ՎՃՈՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՍԵՑՈՒՄՆԵՐ:** Ռուսաստանն իր գրեթե ոչ մի հայահալած գործողությունն Նոյն յաջողությամբ չէր կարողանում թաքցնել աշխարհից, ինչպես դա անում էր իր բռնապետության միւս բազմաթիւ ազգերի առումով: Սփիւռքահայերը Ռուսաստանի ձեռնարկած ամեն մի հայահալած գործողությունն աշխարհում դարձնում էին քննարկումի թեմայ: Արեւմտահայութիւնն ու ամբողջ աշխարհում սփռուած հայութիւնը, յատկապէս Եւրոպայում ու ԱՄՆ-ում, Յայաստանեայց եկեղեցու տնօրինութեամբ այդ երկրների ազդեցիկ ղեկավարութեան, գիտակրթամշակութային աշխարհահռչակ դեմքերի, կազմակերպութիւնների եւ ՄԱՍՈՒԼԻ՝ Ռուսաստանի հայահալածութեան ՅԱՄԱՏԱՐԱԾ դատապարտումները համաշխարհային հայանպաստ պայքար էին ձեւաւորում: Դա կայսրութեանը ստիպում էր ոչ միայն դոյզն-ինչ զսպել, այլեւ չընդարձակել հայահալածութեան շառաւիղները: Յայաստանեայց եկեղեցին ռուսահայերի հոգեւախճիրին բազմաթիւ երկրներում դիմակայում էր կարելի է ասել գրեթե պաշտօնապէս, քանզի աշխարհի բոլոր երկրների հայոց եկեղեցին հայութեան ՅԻԴՊԱՏՈՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵՐ ԵՐ կատարում: ԴԱ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲՆՈՅԹ ՄՏԱՅԱՒՅԱՏԿԱԴՊԵՍ 1903-1905 թթ. հայոց եկեղեցու պետական կողոպուտի դեմ Նորին Սուրբ Օծութիւնն իրիմեան Յայրիկի գլխաւորած ՅԱԴԹԱԿԱՆ համայնամարտում...

*Թէեւ հայ պատմագիտութիւնը Յայաստանեայց եկեղեցու գոյքի բռնագրաւումը սկսում է 1903 թուից, բայց դա սկսուել էր դեռեւս 1881 թ., երբ եկեղեցու*

*խնայած դրամով գործող դպրոցները պետականացուեցին առանց հատուցումի: Բռնապետութիւնը 20-ամեայ յամառ ջանքերից ու գրեթե ամենամեայ հրամանագրերից յետոյ (1881, 1884, 1885, 1889, 1891, 1892, 1895, 1897 թթ.) փակեց բոլոր հայոց դպրոցները, իսկ դրանից յետոյ՝ նաեւ հայոց հրատարակչական ընկերութիւնը, մշակութային, բարեգործական միութիւնները եւ այլ հաստատութիւններ<sup>24</sup>: Ռուսահայաստանում հայերէն խօսելը, գրելը, թերթ ստանալը, ճառելը եւ Նոյնիսկ թատրոն գնալը դիտում էր «հայկական նացիոնալիզմ»: Կայսրութեան խոսափող «Կաւկաս» եւ այլ թերթեր իրենց «ինտերնացիոնալ» յօդուածները ԲՈԼՈՐ ՑԵՂԵՐԻ ՁՈՒԼՈՒՄԻ «ԱՆԽՈՒՄԱՓ» ԼԻՆԵԼԸ «ապացուցող» գիտական փաստարկներով էին համեմում: Մայրենին մոռանալ չկամեցող հայերին մեղադրում էին անջատականութեան եւ այլ բաների մէջ: Ահա թէ ինչ պայմաններում ռուսահայ կուսակցութիւնները լծուեցին իրենց անծանօթ «Տաճկահայքը ազատագրելու» գործին, մի բան, որ թուրքահայերը շատ անելի ՆՊԱՍՏԱԻՈՐ ՈՒ ՕԳՏԱԻՏ անում էին 1850-1860-ական թթ. ի վեր: ԺՉ դարի վերջի ազատամարտերի շնորհիւ սուլթանի՝ 1622 թ. հրովարտակով կիսանկախութիւն ստացած զէթունցիների՝ 1862, 1877-78 եւ 1895 թթ. ընդվզումները, նաեւ 1862 եւ 1878 թթ. ապստամբութեանց ազդեցութեամբ Վանի, Մուշի, Էրզրումի ու պոլթեանի ընդվզումները ասուածի վառ օրինակներն*

<sup>24</sup> *Յայ պատմագիտութիւնը եկեղեցական գոյքի բռնագրաւումը սկսում է 1903 թուից, մինչդեռ դա սկսուել էր դեռեւս 1881 թ., երբ հայ ժողովրդի ու եկեղեցու խնայած դրամով գործող դպրոցները պետականացուեցին՝ առանց հատուցումի:*

են: Նորելուկ կուսակցությանը ջոջերը եթե այդ օրերին չէին ըմբռնում «Ռուսաստանի ազատարար առաքելության» խորհուրդ խորհինը, գոնե տեսնեին թուարկած ակնամուտ իրողութիւնը: Նրանք մի թռուցիկ հայեացք պիտի ձգէին ՆԱԵԻ ռուսերութեան պատերազմների վրայ. այն պատերազմների, որոնցից ակնկալիքներ ունեին իրենց խաբուած հայրերը: Բայց նրանք չլսեցին հաւատալիքուած Ախվերդեաններին, Շանշեաններին, Աղաբեկեաններին եւ այլ Մի ԶԱՆԻՍԻՆ, որոնք ռուս գրաքննութիւնից ամործատ գրուածքներում աղերսում էին թուլացնել արեւելահայութեան հոգեւոր ջարդերը, իսկ ԱԶԱՏ ՄԱՍՈՒԼ ԵՒ ԳՈՐԾՈՂ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐԵՄՍԱՅԱՅԵՐԻ ԿՐԱՅ ՈՐԲԱՑՈՂՆԵՐԻՆ ԷԼ ԿՈՉ ԷԻՆ ԱՆՈՒՄ ՄՏԱԲԵՐԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԵՂԶ ԶԱՅՈՒԹԵԱՆԸ... Զայանուն ռուսախտաժահրը չուզեց հասկանան պատմութեան յուշարար այն թելադրանքը, որ **ճորտատիրութիւնը ատամներով պահպանող Ռուսաստանը տաճկահայերին ազատագրութիւն խոստանալուց առաջ ՆԱԽ ԹՈՂ դադարեցներ ԻՐ ճորտերի անասունի հանգոյն վաճառքը**, թող պահպանէր 1826 թ. տրուած «Չայկական մարզի» իր խոստումը, թող Զայաստան անունը ջնջած չպահէր Ռուսաստանի քարտէզներից, թող արեւելահայութեանը չը բզկտէր միւս այդ չլուած-չտեսնուած **հոգենախճիրով**: Կուսակցութիւնները ոչ միայն չհասկացան մեր եւ միւս ազգերի ազատութիւնը մորթոտող կայսրութեան դաւերը, այլեւ տարակուսողներին գնդակօծում էին սերտած-գրպանները լցրած այն յորդորներով. թէ «...դիւանագետ լինենք եւ Զայաստանը Ռուսաստանի ձեռքով ԹՈՒՐԹԻԱՅԻՑ ԱԶԱՏԵԼՈՒՆ Ի

ԽՆԴԻՐ, չտեսնելու տանք կայսրութեան ոճիրները» եւ այլն: Բայց Զայաստանը տաճիկներից ազատեինք, ում տայինք. բռնակալութեան ու յետաշրջութեան չափանիշ-չափանմուշ «Եւրոպայի ժանդարմին», որը **դեռեւ 1890-ականների վերջերից էր հռչակել հայութեանը մէջտեղից վերացնելու անհրաժեշտութիւնը**,<sup>25</sup> հայի միայն «խրտվիւակը» Թիֆլիսի թանգարանում ցուցանելու ազդարարութեամբ: Դպրոցներից յետոյ մնում էր ԱՐԵՒԵԼԱՅԱՅԵՐԻ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՊԱՆՈՂ ՎԵՐՋԻՆ ՊԱՏՈՒՐԸ՝ ԶԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ: Կառավարութիւնը 1896 թ. կազմեց Զայաստանեայց եկեղեցու հողերը, շարժական ու անշարժ գոյքը բռնագաւթելու նախագիծ: Շղթայակից միւս ազգերին հայերի դէմ լարելու եւ հայերի հնարաւոր **ըմբոստայարոյց** քայլերը կանխելուն ի խնդիր արքունիքը դեռեւ 1896-1897 թթ. էր ԵՐԿՐՈՎ ՄԵԿ ՍԿՍԵԼ՝ մեզ մեղադրելով անշատականութեան, հակառուս **ՏՐԱՍԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ**,<sup>25</sup> **ԿՈՎԿԱՍԸ ԶԱԹԵԼՈՒ** եւ այլ բաների մէջ: Կայսրութեան **պաշտօնապօրը** արքունիքից ստացած հրամանով ռուսացումը իրականացնում էր բացառիկ ՄՈՒԵԳՆՈՒԹԵԱՄԲ: Դրա վկայութիւններից է «Ժողովրդական լուսաւորութեան վարչութեան» պաշտօնեայի հետեւեալ յորդորը.

**«Թէ ուսումն է հայերի ուզածը, թող սովորեն ռուսերէն, թէ աղօթելն է, թող ռուսերէն աղօթեն»:**

<sup>25</sup> Ռուսաստանն իր մասին ԻՍԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ դարեր շարունակ սեպել է «ՌՈՒՍԱՏԵԼՈՒԹԻՒՆ»: ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՐԵՐՈՎ խոշտանգող, իսկ դրանք պահանջողների բանտարկող, արքորող ու գնդակահարող ԿԱՅՐԱՊԵՏԵՐԸ այդ ԲԱՐՁՐԱԶԱՅՆՈՒՄՆԵՐԸ ԱՅՐԱՐԱՐԵԼ ԵՒ ԱՅՍՈՐ ԻՍԿ ԱՅՐԱՐՈՒՄ են «ռուսատելութիւն»:

Օրենքն ուներ հայ հոգեւորականին վարչական կարգով աքսորելու յատուկ կէտ: Հայերին մեղադրում էին «մինչեւ Դոնի Ռոստով Մեծ Հայաստան ստեղծելու» ցանկութեան մէջ<sup>26</sup>: **Երբ Թուրքիան Ռուսաստանի օժանդակութեամբ 1895-1896 թուերին սկսեց արեւմտահայոց կոտորածները, Ռուսաստանը հենց այդ տարիներին բազմապատկեց ՀԱՄԱՅՆԱՅՐԱԾ բռնութիւնները: Յոյժ կարեւոր, նաեւ յուշարար մէկ յաւելում. երբ Թուրքիան Ռուսաստանի անթաքոյց աջակցութեամբ 1895-1896 թթ. կոտորում էր հայերին, ՌՈՒՄԱԿԱՆ Ո՛Չ ՄԻ գրող, մտաւորական կամ կրթամշակութային գործիչ չդատապարտեց հայերի բնաջնջումը:** Մինչդեռ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Եւրոպայի այլ երկրների վարչապետները, խորհրդարանականները, մշակութային, գիտակրթական ու ստեղծագործական ԲԱԶՄԱԹԻԻ ԴԵՄԵՐՐԻ ՀԵՏ (լորդ Զերզըն, Դեյվիտ Լոյտ Ջորջ, Ուիլիամ Գլադսթոն, Ռոպերտ Սոլսբըրի, Հերբերտ Հոլլեր, Արժեյի դուքս, տիկին Ֆրետերիկ Կավէնտիշ, Հ. Լինչ, Զենըն Մակ Կոլ, լորդ Շէֆթսբըր, Ուիլեամ Վեթսըն, Օլիվեր Բոլդուին, լորդ Սոլսբերիի զաւակ լորդ Սեսիլ, գնդապետ Թ. Ֆ. Ջոնսըն եւ ուրիշներ) ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԱԶՈՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԷԻՆ ՍԿՍԵԼ՝ քաղաքակիրթ

<sup>26</sup> «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. VI, Երեւան, 1981 թ., էջ 967: **Երկանեան Վ.**, Պայթար հայկական Նոր դարոցի համար Անդրկովկասում, Երեւան, 1970 թ., էջ 187, 260: **Ալեուսի Է.**, Կովկասեան վերբեր, 1903 թ., ժընեւ, էջ 42-43, 284: ԱԶԳԱՊԱՏՈՒՄ, գրեց՝ Մաղաբիա արքեպիսկոպոս Օրմանեան, Գ հատոր, սբ. Էջմիածին, 2001 թ., էջ 535: Борян Б. А., Арнения, международная дипломатия и СССР, часть I, Москва-Ленинград, 1928 г., стр. 268.

աշխարհին կոչ անելով ամբաստանել Թուրքիային: 1897 թ. «Հայաստանի բարեկամների միջազգային միութիւն» հիմնած, Մեծ Բրիտանիայի բառակի վարչապետ, հայ ժողովրդին ու Հայաստանին անաչառ սատարող Ուիլիամ Գլադսթոնը (1809-1898) իր ճառերից մեկում, ռուսաց թագաւորին անուանելով հայ ժողովրդի արեամբ արատաւորուած մէկը, յայտարարում էր, որ երբ 1895 թ. Թուրքահայաստանում հայերի կոտորածներ էին, Կովկասի ռուսական բանտերը լցնում էին հայ ձերբակալուած մտաւորականներով<sup>27</sup>: Գլադսթոնը 1894 թ. ազդարարում էր. «Ծառայել Հայաստանին, կնշանակի ծառայել քաղաքակրթութեանը»:

Վերոնշեալ *հայաստար* անձանց եւ կառոյցներին յաւելեմ յայտնի այլ գործիչների եւս, որոնց բացարձակ մեծամասնութիւնը յայտնի չէ մեր ժողովրդին: **Ջեյմս Բրայսը** (1838-1922) 1893 թ. հիմնել էր «Էնգլ-Արմինիըն Էսոսիէշըն» (Անգլո-հայկական ընկերակցութիւն), որի բուն նպատակը Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի «գործադրութիւնն էր»: Ընկերակցութեան առաջին նախագահն էր պատգամաւոր **Ս. Սթիվընսը**: 1896 թ. Ռոչեսթըրի եպիսկոպոսի նախագահութեամբ Լոնդոնում հիմնադրուեց «Հայաստանի բարեկամներու միջազգային ընկերակցութիւն»-ը, որին միացաւ «Հայաստանի տեղեկատուութեան գրասենեակը»: Կառոյցի նպատակներն էին՝ հրատարակութիւններով ու այլ ճանապարհներով Հայկական հարցի մասին տեղեկատուութիւն հայթայթելու եւ հայերին

<sup>27</sup> **Էնոն Մեյեր, Արայ Բերբեյան,** Հոնոսի եւ Արաբսի միջեւ 900 տարեկա գերմանա-հայկական հարաբերություններ, Երեւան, 2016 թ., էջ 70:

վերաբերող խնդիրներին նպաստող ընկերությունների միջև կապեր ապահովելը: Բրիտանահայերը 1888 թվից Լոնդոնում հիմնեցին «**Հայոց հայրենասիրական ընկերություն**» անունով կառույց: 1897 թ. **լետի Ֆր. Գավընդիշը** (ծննդեան թիվը յայտնի չէ, մահացել է 1925 թ.) Լոնդոնում հիմնում է Օսմանեան կայսրությանում բնաջնջուող հայերին օգնող Հայաստանի բարեկամներ (Friends of Armenia) անունով «Նպաստամատոյց մարմին», որի բարտուղարը օրիորդ **Է. Գանթլոուն** էր: Միութեան Ընդհանուր յանձնախմբի անդամ էին Նաեւ Բելֆաստ, Էդինբուրգ եւ Անգլիայի այլ բաղաբներից յայտնի անձինք: Միութիւնը երեք տարի անց՝ 1900 թվից, սկսեց հրատարակել Նոյնանուն (Friends of Armenia) եռամսեայ թերթ: «Երեք ամբողջ տարիներ, 1905-էն 1908, Հայաստանի բարեկամներու պաշտօնաթերթը, «Հայաստանի նկատմամբ Անգլիոյ դաշնագրային պարտաւորութիւնները» խորագրին տակ մեջբերեց-իրաբանչիւր թիւին առաջին էջին գլուխը-Պերլինի Դաշնագրին 61-րդ յօդուածը եւ Կիպրոսի համաձայնութեան Առաջին յօդուածը»<sup>28</sup>:

**Յոհաննէս Լեփսիուս** (1858-1926), գերմանացի հանրային յայտնի գործիչ, արեւելագետ, աստուածաբանութեան դոկտոր, բողոքական, երկար տարիներ զբաղուել է Հայկական հարցով: 1895 թ. հիմնել էր «Գերմանական արեւելեան առաքելութիւն», որը այնուհետեւ յաւելելալ կոչուեց «Հայ օգնութեան գործ» (կենտրոնը Ուրֆան էր): 1895-1896 թթ. կոտորածների

<sup>28</sup> Ագապի Նասիպեան, Բրիտանիա եւ Հայկական հարցը, 1915-1923, Երեւան, 1994 թ., էջ 284-289, 8, 11-14, 18, 21, 24, 34-69, 126-142, 149, 164-168, 251-267, 269-287:

եւ Մեծ եղեռնի տարիներին նա Գերմանիայի կառավարութիւնից պահանջում էր ազդու միջոցներով Թուրքիային ստիպել դադարեցնելու հայերի կոտորածները: 1919 թ. Պոտսդամում հրատարակած նրա «Գերմանիան եւ Հայաստանը 1914-1918 թթ., դիւանագիտական փաստաթղթերի ժողովածոյ» աշխատութեան մեջ դատապարտում է Գերմանիայի պատկան գերատեսչութիւնների որոշ կառույցների ունեցած դիրքորոշումները հայոց ջարդերի հանդէպ: Միրիայում հայանպաստ եռանդուն գործունեութեան տարիներին **Յ. Լեփսիուսին** մեծապէս աջակցում էր բժիշկ **Յակոբ Կիւնցլերը** (1871-1924): Հայանպաստ ծաւալուն գործունեութեամբ աչքի էր ընկել Նաեւ մօրական կողմից հայ, հանրային գործիչ, իրաւաբան, Լայպցիգի համալսարանն աւարտած, Թիւրինգենի համալսարանում պարսկական պետութեան կառուցուածքի մասին դոկտորական ատենախոսութիւն պաշտպանած **Չեյմս Գրինֆիլդը** (1873-1939): Նա ամուսնացել էր Զաթարի-Նա Թումանեան հայուհու հետ, որոշ ժամանակ ապրել է Երեւանում, ապա՝ Բաբելոն ու Թիֆլիսում: Հայասեր գերմանացի գործիչ էր **Էռնստ քահանայ Զրիստոֆելը**, որը հիմնադրել էր «Արեւելքում կոյրերի առաքելութիւն» բարեգործական հաստատութիւնը: Գերմանացի արեւելագետ **Եոզէֆ Մարկվարտը** (1864-1930) իր «Հայ ժողովրդի ծագումն ու զարգացումը» պատկառելի գրքում խստորէն դատապարտում է Հայոց ցեղասպանութեանը նպաստած Վիլիելմ Բ կայսեր քաղաքականութիւնը եւ նրա պաշտօնեաների, յատկապէս դեսպան Ֆ. ֆոն Վանգենհայմի գործողութիւնները: Չուիցերիայում հայերին օժանդակող աւետարանական մի քանի «Մարդասիրական կոմիտէներ» 1897 թ.

միաւորուեցին «Շվեյցարական օգնութեան դաշնութիւն Յայաստանի համար» պատկառելի հաստատութեան մէջ, որը ժընեւից բացի գրասենեակներ ուներ Բագելում, Բեռնում, Նաեւ Թուրքիայի Սեբաստիա վիլայեթում եւ Պարսկաստանում: «Շվեյցարական օգնութեան դաշնութիւն»-ը 1898 թուից հրատարակում է «Հաղորդագրութիւններ Յայաստանի մասին» ամսագիրը: Կազմակերպութիւնը հիմնադրելու գործում եական էր Յոհաննես Լեւիսիուսի տպագրած «Հայաստանը ու Եւրոպան, մեղադրական ակտ քրիստոնեական մեծ տէրութիւնների դէմ եւ կոչ քրիստոնեայ Գերմանիային» աշխատութիւնը, որը 1896 թ. տպագրուեց Նաեւ ֆրանսերէն: «Շվեյցարական օգնութեան դաշնութիւնը» 1897 թ. Չուիցերիայի դաշնութեան Նախագահին ներկայացրեց ակեյի բան 433 հազար բաղաբացիների ստորագրութեամբ մի փաստաթուղթ (այդ ժամանակ Չուիցերիայի բնակչութեան թիւը 2,9 միլիոն էր), որում նշուած էր. «Շվեյցարացիներս ցնցուած ենք երկու տարի շարունակ թուրքական կայսրութեան իրականացրած հրդեհների, ջարդերի, կողոպուտի, աների ու արեան մասին սարսափելի հաղորդագրութիւններից... Ձեզ, որպէս մեր կառավարութիւն, խնդրում ենք Շվեյցարիայի ժողովրդի անունից փորձէք եւրոպական մեծ տէրութիւնների կառավարութիւններին միաւորել ամբաստանելու Արեւելքում կատարուող ջարդերը»: Հայերի կոտորածների հանդէպ Պրուսիայի Լանդթագի (խորհրդարան) կեցուածքը 1898 թ. բննադատեց այդ տարիներին Շտուտգարդի բահանայ, «Գերմանական խաղաղութեան ընկերութեան» ղեկավար **Օտտո Ումֆրիդը** (1857-1920): Նա գրեց. «Ռայխսթագի որեւէ պատգամաւոր չկարողացաւ գտնել իսկական բառը, որ բնութագրեր այն, ինչը պատահեց:

Ոչ մէկը նրանցից հանդէս չէկաւ՝ պաշտպանելու մարդու իրաւունքները ոտնահարող դաժանութիւնը... Գերմանիայի պաշտօնական այս կեցուածքը հասցրեց նրան, որ 1898 թ. Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայերի ջարդերի ժամանակ գերմանական դեսպանատունը դռները փակեց հետապնդողների առաջ, մինչդեռ անգլիացիները իրենց դռները բացեցին՝ փրկելով շատ հայերի կեանքը... Ուստի զարմանալի չէ, որ Անգլիան խորին երախտագիտութիւն է առաջացնում հայերի մէջ... Մինչդեռ շատ գերմանացիներ, որոնք Թուրքիա են գալիս թուրք դահիճների հետ, առաւել խանդավառ են ցուցադրում իսլամի հետ իրենց բարեկամութիւնը... Սուլթանի մարդիկ եւ թուրքական թերթերը, կառչելով գերմանացի թղթակիցների նմանօրինակ լուրերից, բժծիծաղով ասում են ընթերցողներին. «Այս գերմանացիները սուլթանի լաւագոյն բարեկամներն են: Բնականաբար հայերը, ի դէմս Գերմանիայի, պետք է տեսնէին իրենց դահիճ երիտթուրքերի դաշնակցին... Դա կարճատեսութիւն էր, որովհետեւ Գերմանիան չի տեսնում, թէ դրան հակառակ, թուրքական կառավարող շրջանակները ինչ են մտածում Գերմանիայի բաղաբանութեան մասին»: Գերմանիայում բայթեան գերմանացի հրապարակագիր **Պաուլ Ռոհրբախը** (1869-1956), որ ուսանողական տարիներից էր բարեկամացել հայերի հետ եւ 1898-1902 թթ. ճամփորդել էր Արեւմտահայաստան, տպագրեց «Ճամարտութիւն Ադանայի մասին» աշխատութիւնը, որը մեծ աղմուկ յարուցեց: Ադանայի եւ Հալեպի ջարդերի մասին նրա տուեալները գերմանական եւ զուիցերական օգնութեան կառոյցներին Նպաստեցին զօրացնել իրենց գործունեութիւնը:

Դանիացի **Զարեն Եփփեն** (1876–1935) գերու-  
թիւնից եւ ստրկութիւնից ազատեց 2000 հայ կնոջ:  
1903 թ. Տիկին Զարեն Եփփեն **ուղեւորուել էր Ուրֆա**  
**քաղաք՝ միանալու այնտեղ գործող գերմանական**  
**հայանպաստ առաքելութեանը:** Նա այստեղ ջուր եւ  
սնունդ էր մատակարարում Ուրֆայով դեպի սիրիական  
անապատի իրենց գերեզմանները բշուող հայերի բա-  
րաաններին:

Հայերին օգնելու համար **Էռնըստ քահանայ Լոհմա-**  
**նը 1896 թ.** հիմնեց «Արեւելքում քրիստոնեական բա-  
րեգործութեան գերմանական օգնութեան միութիւն»-ը:  
Այնուհետեւ «Հայաստանի օգնութեան գերմանական  
միութիւն» անուանափոխուած հաստատութիւնը բազ-  
մաթիւ որբ երեխաներ փոխադրեց **Գերմանիա** (օրի-  
նակ՝ Վիլիելմսդորֆի շերնհոլտեր գիւղը): «Գերմանասու-  
մանեան հիւանդախնամ ծառայութեան» անդամ, եղեռ-  
նի ականատես գրող **Արմին Թ. Վեգները** (1886–1978):

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Ուիլսոնին յղած «Բաց  
նամակ»-ում խնդրում է սատարել Հայաստանին: Թուր-  
քական ծառայութեան խորհրդական **Գեներալ Ֆել-**  
**դմարշալ ֆոն դեր Գոլտցը** (1843–1916) 1916 թ. յու-  
նուարին կանխեց Մոսուլ արտաքսուած հայերի կոտոր-  
ածը: Գերմանիայի Ռայխսթագի պատգամաւոր, Սո-  
ցիալ-դեմոկրատական կուսակցութեան անդամ **Կարլ**  
**Լիբկնեխտը** (1871–1919) 1916 թ. յունուարի 11-ին  
կառավարութեանը դիմեց հետեւեալ հարցադրումով.  
«Ռայխսկանցլերին յայտնի է, որ ներկայիս պատերազ-  
մի ընթացքում դաշնակից թուրքական կայսրութիւնում  
իրենց բնակավայրերից հազարաւոր հայ բնակիչների  
տեղահանում եւ ոչնչացնում են: Ի՞նչ քայլեր է ձեռնար-

կում պարոն ռայխսկանցլերը դաշնակից թուրքական  
կայսրութեան շրջանում քաւութեան զգացում արթ-  
նացնելու, Թուրքիայում մնացած հայ ժողովրդի վիճա-  
կը մարդկային արժանապատուութեամբ կարգաւորելու,  
վայրագութիւնների կրկնութիւնը կանխելու համար»<sup>29</sup>:  
1914–1921 թթ. վարչապետ **Լոյդ Ջորջը** (1863–1945)  
բազմիցս պնդել էր. «Հայաստանը երբեք չի ենթարկուի  
թուրքի անիծեալ բռնակալութեանը»<sup>30</sup>:

Իտալիայի վարչապետ **Վիտորիա Էմանուել Օռլան-**  
**դոն** (1860–1952) 1918 թ. նոյեմբերի 18-ին բացական-  
չեց. «Ասացէք հայերին, որ ես նրանց դատը կդարձնեմ  
իմ դատը»: 1918 թ. նոյեմբերի 21-ին Մեծ Բրիտ. արտ-  
գործնախարարի տարածած Յուշագիրը նշում էր.  
«Նպատակայարմար կլինի Հայաստանի տարածքը ծա-  
ւալել հնարաւորինս լայն ընդգրկումով, այնպէս որ սահ-  
մանի հիւսիսում ներառնուած բոլոր խաւերի իրաւահա-  
ւասարութեան սկզբունքը անվիճարկելի է: Միւս կող-  
մից, երկրի կառավարման իրաւունքում այս տարբեր  
տարրերի համամասնական պահանջներ դնելիս Հա-  
յաստանի դեպքում պետք է սահմանել, որ մահացած-  
ներն ու աքսորուածները հաշուի առնուեն, եւ աշխարհի  
միւս մասերից Հայաստան վերադառնալու համար հայ  
տարագիրներին հարկ է՝ ընձեռնուեն նոյն հնարաւո-

<sup>29</sup> *Էննո Մեյեր, Արայ Բերքյան, Հոնոնսի եւ Արաքսի միջեւ, 900 տար-  
վա գերմանա-հայկական հարաբերությունները, Երեւան, 2016 թ.,  
էջ 69–74, 85, 89, 99:*

<sup>30</sup> *Նման յայտարարութիւններ էին արել նաեւ արտգործնախարար Ար-  
տուր Բալֆուրը եւ արտգործնախարարի տեղակալ Լորդ Ռոպերտ Մե-  
սիլը, որը Անգլիայի խորհրդարանում 1918 թ. յայտարարեց. «Մենք  
չպետք է թող տանք, որ թուրքերի յանցագործութիւնները նուպեցնեն  
հայերի ժառանգութիւնը... Չպետք է լինի Հայաստանի ոչ մի բաժանում  
եւ որ Հայաստանին հարկ է վերաբերուել որպէս մէկ ամբողջութիւն:*

րուփիւնները, ինչ շնորհուել են Պաղեստինի հրեայ ներգաղթողներին, որպէսզի նրանք նոյնպէս հաստատուեն իրենց վաղնջական հայրենիքում»:

Իսպանիայի թագավոր Ալֆոնսո XIII-ը (1886–1941) փորձել է փրկել 1915-ի ապրիլին ձերբակալութիւնների ենթարկուող հայ մտաւորականութեանը<sup>31</sup>: Ժամանակի գործիչներն ու պատմաբանները անհերքելի փաստարկներով արձանագրում են, որ Նիկոլայ Բ-ն 1895–1896 թթ. միացել էր արեւմտահայերի կոտորածին՝ Պոլսում իր դեսպանի ձեռքով սուլթանին յղած ֆրանսերէն «Massacrez, Majeste’, massacrez, Majeste» (Կոտորեցէք, ձերդ մեծութիւն, կոտորեցէք) քաջալերանքով: Նիկոլայ Բ-ն իր արտգործնախարարի ձեռամբ հայասպան Աբդուլ Յամիդին էր միացել նրան ի գիտութիւն փոխանցած «**Հայաստանը մեզ պետք է առանց հայերի**» քաջալերիչ խրախուսանք-յորդորով, իսկ Կովկասի կառավարիչ Գոլիցինի բերանով էլ հաւաստիացնում էր, որ ՌՌԻԱԱՍՏԱՆԸ ԷԼ ՌԲՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆԸ ԲՆԱԶՆՉԵԼՈՒ ԿՐ Ժրագիրը. «**Ես կհանգստանամ այն ժամանակ միայն, երբ Թիֆլիսի թանգարանում ցուցադրեն հայի խրտուկիւկը՝ ի հաստատումն այն փաստի, որ Կովկասում ինչ-որ ժամանակ ապրելիս են եղել նաեւ հայեր**»<sup>32</sup>: Հայութեանը բնաջնջելու մէջ Թուրքիայի դաշ-

<sup>31</sup> Ռիչարդ Գ. Գովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հատոր 1, Երեւան, 2005 թ., էջ 290–291, 297, 338–341: Էննո Մեյեր, Արայ Բերթոյան, Գոնեսոսի եւ Արաբսի միջեւ, 900 տարվա գերմանահայկական հարաբերությունները, Երեւան, 2016 թ., էջ 688:  
<sup>32</sup> Եղիշէ ա. քահ. Գեղամեան, Հայերի պատագրական շարժումները ժՅ դարում, Բագու, 1915 թ., էջ 475: Լեո, Անցեալից, Երեւան, 1925 թ., էջ 111–112, 133: Ա Ղո, Ռուսական ցարերը եւ հայկական հարցը, Երեւան, 2013 թ., էջ 100–101: Հայկ Ասատրեան, ՀԱՅԱՍՏԱՆ արիական նախադիրք առաջաւոր Ասիայում, Երեւան, 2000 թ., էջ 8, 28–29, 86: Ռուսաստանը եւ հայոց ցեղասպանութիւնը 1915–1917, Երեւան, 2004 թ., էջ 192: Յակոբ Սարիկեան, Հիշողութիւններ,

նակիցն ու ոճրակիցը լինելու վաւերափաստ է նաեւ 1895–1896 թթ. ոստիկանութեանը յղած ռուս կայսեր այն հրամանը, որով հայ եկեղեցականներին խստագոյնս պատժելու սպառնալիքով ԱՐԳԵԼՈՒՄ ԵՐ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ԵՒ ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ 1985–1896 թթ. ԹՈՒՐԻԱՅՈՒՄ ԿՈՏՈՐՈՒԾ հայերի հոգեհանգստի ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ... Երբ 1895–1896 թթ. ջարդերի սկզբից մէկ տարի էլ չէր անցել եւ շարունակում էր, Ռուսաստանի կայսր Նիկոլայ Բ-ն 1896 թ. հրամանով հայկական տարրական բոլոր 230 դպրոցները եւ գոյքը Հայաստանեայց եկեղեցուց առեւանգեց-յանձնեց երկրի լուսաւորութեան նախարարութեանը: Այն է՝ հայոց տարրական դպրոցները փակուեցին, քանի որ հրամանագիրը թելադրում էր յարթունիս գրաւուած դպրոցական շէնքերը վերածել «**երկրի բոլոր հպատակ ազգերի համար՝ ռուսական դպրոցների**: Պետութեանն անցած հայոց դպրոցներում ուսուցումը տարւում էր ռուսերէնով, հայերէնով ուսուցանել էր թոյլատրւում միմիայն հայոց լեզուն եւ կրօնագիտութիւնը»<sup>33</sup>: 1891–1896 թթ. հրամանագրերից յետոյ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ԵՆՄԱՐԱՆԻՑ ԲԱՅԻ ՌՌԻԱԱՍՏԱՆՈՒՄ Ո՛Ղ ՄԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑ ԶԵՐ ՄԱՅՏԵԼ: 1897 թ. յունուարի 2-ին եւ 1898 թ. մարտի 26-ին Նիկոլայ Բ-ն հրապարակեց հայոց դպրոցները փակող նոր հրամանագրեր, որոնցով հայերի հոգեւոր եղեռնին նոր թափ հաղորդուեց: Պերճախօս է Թուրքիայի եւ Ռուսաստանի հայոց դպրոցների քանակի բաղդատումը: 1896 թ. Ռու-

Երեւան, 2015 թ., էջ 173: Լեո, Անցեալից, Երեւան, 1925, էջ 111–112, 133:

<sup>33</sup> «Հայոց պատմութիւն», Դասագիրք բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների համար, Երեւան, 2012 թ., էջ 453:

սաստանի մօտաւորապէս 1,7 մլն հայերն ունէին 280 հայկական դպրոց, 16000 աշակերտ, իսկ գրեթէ նոյն քանակութեան արեւմտահայերը ունէին **ՉԼԳԱՊԱՏԻԿ** աւելին՝ մօտ 1500 դպրոց եւ **ամնուազն 250 բազմապատիկ աւելի շատ դպրոց եւ աշակերտ**<sup>34</sup>... Սոյն, նաեւ Ռուսաստանի կազմակերպած եւ Թուրքիայի հետ իրագործած հայասպանդների մասին յետագայ էջերում նոյնպէս հրապարակած անժխտելի միւս փաստերը ցուցանում են, որ Ռուսաստանի կայսր Նիկոլայ Բ-ն, անզուգադրելի **հայահոգեսպան լինելուց զատ, բազմապատիկ առաւել ոխերիմ հայասպան էր, քան Թուրքիայի սուլթան Չամիդն ու նրանից յետոյ եկած Թալէաթը, Էնվերը եւ միւսները...**

## ԴՐՈՒԱԳ Ե

Դպրոցներից յետոյ մնում էր հայութեան վերջին պատուարը՝ մեր եկեղեցու **ԴԱԲԱՆՈՒԹԻԻՆԸ**: Կառավարութիւնը 1896 թ. կազմեց հայ եկեղեցու հողերը, շարժական ու անշարժ գոյքը բռնազաւթելու նախագիծ: Կայսրը նշուած հրամանագրով սկզբնաւորում էր Հայաստանեայց եկեղեցու կայուածների եւ եկամուտների յափշտակումը: Ոստիկանութիւնն ու բանակը դիմադրողների դիակների վրայով խուժում էին եկեղեցիներ, ջարդում գանձանակներն ու պահարանները, յափշտակում **ամբողջ աշխարհի՝ հայ ժողովրդին պատկանող արժէքները**: Չափերով ու ընդգրկումներով չտեսնուած այս յարձակումի դէմ մեր ժողովուրդն իր եկեղեցու զխաւորութեամբ դուրս եկաւ համայնամարտի ու համահայկական անսման սխրանքի: Ռուսահայերը համայն հայութեան **ԲԱԶՄԱԴԻՍԻ** աջակցութեամբ տեղերում մարտնչում էին, ով ինչպէս եւ ինչնով կարող էր՝ գործադուլ, ցոյց, զինուած ելոյթ, ահաբեկչութիւն, դասադուլ, ընդհանրական **բացարկում** (բոյկոտ): Հայութեան յատկապէս մտաւոր խափ դժգոհութիւնը ցասումի էր վերածել նաեւ այն, որ **ռուս կայսրութիւնը հայ եկեղեցու դէմ այդ վայրենութիւնը սկսեց այն օրերին, երբ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԷԿ ԼՅՈՒԱՃ ԷՐ ՆՇԵԼՈՒ ԶԻՒՍՈՆՆԵՈՒԹԻՆԸ ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԿՐՕՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ 1600-ԱՄԵԱԿԸ...**

<sup>34</sup> Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի տուեայներով 1913-1914 թթ. արեւմտահայերն ունէին 2538 գործող եկեղեցի, 451 վանք, մօտ 2000 դպրոց՝ չհաշուած Օսմանեան կայսրութեան հայ կայսրիկների ու աւետարանականների եկեղեցիներն ու դպրոցները (տես **Ազապի Նասիպեան**, Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պէրոլթ, 1994 թ., էջ 3-4):

Կայսրության անօրինակ հոգեսպանդի դեմ ծառայած հայությանը ռուսական առաջին յեղափոխությանից ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԱՌԱՋ մարտնչում էր Էջմիածնից մինչև Դզլար, Կարսից Արմավիր ու Նոր Նախիջեան, Չանգեզուրից Դերբենդ, Լոռիից Բաթում ու Գանձակից Աստրախան: Ուսուցիչները բացեցին գաղտնի դպրոցներ, յեղափոխականները պատուհասեցին բազմաթիվ պաշտօնետաների, հարիւրաւոր երիտասարդներ մտան այլազան կուսակցութիւնների մէջ, գիւղացին հարկը պետութեանը տալու փոխարէն յանձնում էր եկեղեցուն, սայլապանը եկեղեցուց բռնագրաւած հարկը տանելիս ծակծկում էր հակերը, որ թափուփ-տեղ չհասնի, բանուոր եւ գիւղացի երիտասարդութիւնը զինուած դիրքեր էր բռնել եկեղեցիներում եւ *մարտաթմբային* (բարիկադի) կռիվ էր տալիս կառավարութեան *պատժաջոկների* դեմ, արհեստաւորները ստեղծեցին հասարակական դատարաններ եւ հրաժարուեցին ցարական դատարանից... Հայ եկեղեցու կողպաւորի դեմ համայն հայութիւնը դուրս եկաւ տիեզերական *ՀՈԳԵ-ԽՈՅԱԼԵԻ*, որը գլխաւորող Խրիմեան Հայրիկը Սբ. Էջմիածնի Մայր տաճարում վերամբարձ ձեռքերով Աստծուց աղերսում էր. «*Թող կործանուի այս Աստուածը նորդեմ եւ բանտաճուար* (բանտի մէջ ծուարած՝ կուչ եկած, կծկուած բնակչութիւն ունեցող) *կայսրութիւնը*»: Մի խօսքով՝ *ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՄԱՅՆԱԿԵՐՏԵՑ ՆՈՐԸՆՁԻՒՂ ՄԻ ՆՈՐ ԱԻԱՐԱՅՐ*: Բռնապետութիւնը այնքան վստահ էր իր ամենագորութեան վրայ, որ մտքովն իսկ չէր անցել, թէ այդքան օրինապահ ու սակաւաթիւ ժողովուրդ (ռուսահայերի բանակն այդ ժամանակ մօտ մէկուկէս միլիոն էր) կարող էր մարտիրո-

սացումի այդչափ յամառութիւն եւ զօրութիւն գոյացներ իր մէջ: 1905 թ. օգոստոսի 1-ին կայսրը ստիպուած չեղեալ յայտարարեց հայոց դպրոցները փակելու 1897 թ. հրամանը եւ եկեղեցական գոյքը բռնագրաւելու 1903 թ. օրէնքը: **Իր ջախջախիչ պարտութեան վրէժը լուծելու համար կայսրը դրացի շղթայակից Կովկասի թաթարներին զինեց մեր դեմ եւ ՄԵՃ ԵՂԵՆԻՑ ՏԱՍԸ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՀԱՅՈՑ ՋԱՐԴԵՐԸ ՍԿՍԵՑ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻՑ**: Դաշնակցութիւնը 8 տարի ուշացումով հռչակեց «Կովկասեան նախագիծը»<sup>35</sup>: Հայութիւնը, խափանելով հայ ժողովրդի դեմ Ռուսաստանի *ՎՐԻԺԱՐՇԱԲԸ*, ջախջախիչ հարուած հասցրեց Կովկասի թաթարին ռազմաբաղաքական գործիք սարքած այդ կայսրութեանը:

Մեր ազատամարտի պատմութեան ամենադժուարին ու ահարկու էջերից 1903-1906 թթ. *փառամարտը* դեռեւս հիմնաւոր չի հետազօտուել: Ազատամարտի ԲԱՅԱՌԻՎՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ Է այն, որ 20-րդ դարում ռուս կայսրութեան բանտարկեալ ազգերից *ԱՌԱՋԻՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԻԱՀԱՍՈՒՌ ՄԱՐՏԻ ԵԼԱԿ ԻՐԵՆ ՀԱԻԱՏԱՅՅՕՇՈՂ ՌՈՒՍ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳԵԼՈՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՅԱՂԹԵՑ* մինչ այդ որեւէ նուաճեալ ժողովրդի ընդվզումից ԵՐԲԷԸ ԱՅՂ ԿԵՐՊ չպարտուած աշխարհակալին, նրան հասկանալ ստիպելով, որ *Մեճն աղեղնաւորի ՀՈԳԵԿԱՆ ԱՉԱՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴ ԵՎԱԿԱՏԱԳԻՐՆ Է*: Հայաստանեայց եկեղեցին թէւ ստացաւ

<sup>35</sup> Ռուսահայ կուսակցութիւնները, մասնաւորապէս ՀՅԴ-ն, կարելի էր դնել ունեցան 1903-1906 թթ., բայց կովկասահայերի «թշուառութիւնը» նրանք պիտի մտաբերէին ինչ թէ 1905 թ., երբ ապգը երկու տարի առաջ էր միացել եկեղեցու գոյամարտին, այլ, երբ բարոյում էին իրենց բաղաքական ծրագրերը:

ողնաշարի ջարդուածք, բայց վերականգնեց կայսրութեան խլած գրեթէ բոլոր **ՅԻՄՆԱԿԱՆ** իրաւունքները: Մոսկուան ոչ միայն չկարողացաւ դաւանափոխի արեւելահայերին, այլ նաեւ **չմարտեց** հայոց դպրոցների համատարած փակելը: Կայսրութեան այդ եւ միւս հոգեւականդների պատասխանն են Վահան Տէրեանի հետեւեալ **վսեմակոյի** տողերը.

**«Մի խառնէք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին,- Մեր երկիրը աւերուած, բայց սուրբ է ու հին: Բաբելոնն է եղել մեր ախոյեանը՝ տէս - Անհետ կորեւ, անցել է չար մշուշի պէս»<sup>36</sup>:** Եզրակացութիւնը սա՛ է. Թուրքիայում ռուս կայսրութեան ջատագոված ջարդերը փնտրելի խթան էին, որ կայսրութիւնը իրագործէր ռուսահայերի տնտեսական, ընկերային, մշակութային, հոգեւոր ու բնախօսական նախճիրները, որի բարձրակէտը **հայոց եկեղեցու պատմութեան մէջ երբեւէ եղած ամենադժի՛ 1903-1906 թուերի կողոպուտն էր:**

Ռուսաստանում 1905 թ. բռնկուած յեղափոխութիւնը, որը կազմակերպողների մէջ հայերը առաջնակարգ տեղ էին բռնու<sup>37</sup>, շատերին յուսադրեց կայսրութեան բորբոսնած մեղքերը սրբագրելու պատրանքներով:

Երեք տարուայ անհաւասար մարտերում խոնջացած ռուսահայերը երկու տարու չափ շունչ քաշեցին եւ երկաթեայ մագիլների թուլացումով մի տարու չափ խուսափեցին կայսրութեան առաւել դժի՛ **հալածանք-**

<sup>36</sup> Ոմանց կարծիքով այս մտամասունքը Վ. Տէրեանը հաւանաբար գրել է 1916 թ. ռուս գրող Մ. Գորկուն հանդիպելու օրը, երբ սա նրան տուեց հետեւեալ լաիրը խորհուրդը. «Յայտնի դառնալու համար լաւ կանէք գրեք ռուսերէն»:

<sup>37</sup> Սանկտի ուներ բաղաբակութեան բոլոր ժամանակների ոխերիմագոյն թշնամիներից Լենինը, երբ Ռուսաստանում երկու յեղափոխական ազգ էր տեսնում՝ հրեաներին ու հայերին:

**ներից:** Բայց 1908 թ. թուրքական յեղափոխութիւնը տաճկահայերին ռուսահայերի համեմատ ԱՅՆԴԻՍԿ ԱՐՏՕՆԵԱԼ ՎԻՃԱԿԻ ՄԵՉ ԴԻԵՑ, որ ռուս կայսրութեան բորբոքած Ադանայի ջարդերն իսկ չկարողացան հայերի ուշքը շեղեն կայսրութեան բռնարարքերից: Հոգեկրթական ու մշակութային **մշտաջարդների** պատճառով (բռնութիւններ, բանտարկութիւն, աքսոր, գնդակահարութիւն) ռուսահայոց հանրային քաղաքական կեանքում ԱՆԸՆԴՅԱՏ ԴԱԿԱՍՈՒՄ ԷԻՆ ազգային բարձր գիտակցութիւն դրսեւորող դեմքերը: Այդ պատճառով, ի տարբերութիւն ռուսահայերի, թրքահայերը յեղափոխութիւնից յետոյ ստացան 1861 թուից գործող սահմանադրական բարելաւում, թուրք խորհրդարանի եւ կառավարութեան մէջ՝ տեղեր, ազատ ու գրաքննութեան չենթարկող մամուլի յաւելում եւ բազմաթիւ **այնպիսի արտօնութիւններ, որոնց մասին ռուսահայերի մտքովն էլ չէր անցնի:** Միայն Պոլսոյ մէջ 1908-1914 թթ. լոյս էին տեսնում 50-ի չափ ամսագիր, լրագիր ու հանդէս, 5 օրաթերթ<sup>38</sup>:

Տաճկահայքում (Պոլիսը, Չմիւռնիան եւ Թուրքիայի այլ վայրերի հարիւրից աւելի դպրոցները հանած) 1913 թ. գործում էին աւելի քան **1785 հայոց տարրական, միջնակարգ ու բարձրագոյն դպրոց՝ 282 հազար աշակերտներով:** Բայց նոյն թուին Ռուսաստանում կար **370 տարրական, մէկ բարձրագոյն եւ 5 միջնակարգ հայկական դպրոց՝ 28 հազար աշակերտներով:**

Տաճկահայոց այդ ազատութիւնը առաջ բերեց **ուկեղարը յիշեցնող հոգեխոյանք,** որի նպատակը հայ

<sup>38</sup> Այսօրուայ Հայաստանում լոյս է տեսնում հայութեանը պէտք չեկող հայերէն օրաթերթ եւ ազգը ապակողմնորոշող 10-ի չհասնող շաբաթաթերթ ու ամսագիր:

ոգու եւ «ցեղին սրտի» պեղումներն էին: Հայութեան այս նոր **հոգեպարթօնքի** դարբիններն ու լծկաններն էին մեր երբեւէ ունեցած ամենապայծառ զլուխներից Մաղաքիա արք. Օրմանեանը, Յակոբ Օշականը, Գրիգոր Չոհրապը, Կոմիտաս վարդապետը, Վահան Թեբեանը, Ատոմ Եարճանեան-Սիամանթոն, Դանիէլ Վարուժանը, Թորոս Թորամանեանը եւ ուրիշներ: Սակայն 1908-1910 թթ. Ռուսաստանում սկսուած «ստոլիպինեան» կոչուող յետաշրջութիւնը Նորոգեց **հոգեսպանդանցում** փակուած արեւելահայերի համատարած աքսորները, կախաղաններն ու ձերբակալութիւնները: Այսինքն՝ կայսրութիւնը Նորից, վերստին ուժաթափեց **ՀԱՅՐԵՆԱԴԷՏԷ մաքառունակ** ռուսահայոց ՍԵՐՈՒՅՔԻՆ ՈՒ ԸՆՏՐԱՆՈՒՆ:

Ռուսահայերի համեմատ թրքահայերի բազմապատիկ ազատութիւնը **թաքցնելն անհնար էր**, եւ կուսակցութիւնները 1910-11 թթ. մերձեցան Թուրքիային: Արեւելահայութեան ուշքը դարձեալ իր ողորմելի վիճակից շեղելու եւ նրա աչքերից վերստին «տաճկահայերի թշուառութեան վրայ» **Կիկոսի մօր արցունքներ** քամելու համար Ռուսաստանն իր հայանուն խամաճիկներին վերստին գործի լծեց: **Աղանայում «ձեռքի հետ» իր սարքած կոտորածները** չափազանց քիչ էին «Թուրքիայի յօշոտող» տաճկահայոց դատը իր շլինքը գցելու համար: Ռուսաստանը **արեւմտահայքը ոչնչացնելու կերպով ռուսահայերի դրութիւնը «բարեկեցիկ» սարքելու ելք է** որոնում: Կայսրութիւնը ինքզինքը «հայրենասէր» կոչող արեւելահայ մտաւորականութեան տգետ ու **ռուսախտաւոր** զանգուածի միջոցով 1911-1913 թթ. դարձեալ (եւ **ՈՐԵՐՈՐԴ** անգամ) բարձրացրեց «Թրքա-

հայաստանի բարենորոգումների» զառամեալ հարցը: Ռուսաստանը վերստին իր հուղայական ուսերին առաւ «հայասերի» փարաջան եւ ռուսահայ մտաւորականութեան՝ **ինքնագիտակցութիւնից զուրկ հատուածին հրեց ասպարեզ:** Կայսրութիւնը հայերի համար անկախ Հայաստան ստեղծելու պատրանքներով կրկին պաճուճեց ռուսահայ երազամուլ կուսակցութիւններին եւ դրանց 1913 թ. յետ բերեց այնտեղ, ուրկից սկսել էին իրենց գործունեութիւնը: 1914 թ. փետրուարին ռուս-տաճկական համաձայնագրով **հարիւրի հասնող ազգերի բանտ ՄԻԱԴԵՏԱԿԱՆ Ռուսաստանը հանրապետական Թուրքիայից պահանջում էր «բարենորոգումների իրականացում»**՝ Եւրոպային դարձեալ հասկացնել փորձելով, որ թրքահայոց հարցը ոչ թէ միջազգային, այլ ռուսական հարց է, եւ որ հանրապետական Թուրքիայի ազատական օրէնքները անկարող էին թրքահայութեան պորտալարը կտրել Ռուսաստանի ընկերքից: Այդ Նոյն ժամանակ, երբ «խաղաղասէր Ռուսաստանի» պատուիրակները արեւմտահայերի բարենորոգումների «իրամայականն» էին թմբկահարում, կայսերական բանակի գերագոյն հրամանատարութեան **ռուս կոչուող այլազգի** զօրապետերը Դետերբուրգում ցարի առաջն էին փռել նեղուցներն ու Թրքահայաստանը գրաւելու վերջնական **ռազմանախագիծը** (այն դեռ Բալկանեան պատերազմների նախօրէին էր կազմուել): Այս հանգամանքը քօղազերծում է Առաջին աշխարհամարտի **ԻՐԱԿԱՆ ՀՐԶԻԳԻ ռազմաճարակ** եութիւնը եւ նոր ապացուցում դառնում, որ նեղուցները գրաւելու գաղտնի ռազմավարութեան կարեւորագոյն **կետերից մէկը ԹՐԶԱՀԱՅՈՒԹԵԱՆԸ ԲՆԱԶՆՁԵԼՈՎ**

**ՏԵՂԱՅԱՆՆԵՐԿ, ԿՈՉԱԿՆԵՐ ԲՆԱԿԵՑՆԵՆ ԷՐ, ԻՆՋՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆՆԵՐ ԵՎ ԿԱՏԵՐԱԳՈՒ ԻՆՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԻՑ:** Թուրքիայի հետ պատերազմող Ռուսաստանը այդ երկրին խորը **ԹԻԿՈՒՆԵԻՑ** հարուած կարող էր հասցնել **ՄԿՄԻԱՅՆ ՀԱՅԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:** Իր այդ ռազմածրագիրը իրագործելու համար նա 1915 թ. Թուրքիայի դեմ ըստ եւրօթեան գոյութիւն չունեցող հայերի ապստամբութեան յօրինուածքներով, իր ռազմավարութեան հիմնական խնդիրներից մէկը դարձրեց ապստամբ հայերին պատժելու համար **ԵՐԻՏԹՈՒՐ-ԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԴԻ ՄՐԵԼԸ:** Իսկ դա հնարատր էր միայն հայերին «Արեւմտահայաստանը ռուս զօրքերով ազատագրելուն լծուած» **ԹՈՒՐԵԻԱՅԻ ԴԷՄ ՅՕԳՈՒՏ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՊՍԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՐԿ,** ինչին լծեց իր **քաղաքական, ռազմադիւանագիտական ու քարոզչական բովանդակ կարողութիւնները:** Ռուսաստանը 1915-1921 թթ. Հայոց մեծ եղեռնը հրահրեց, այնուհետեւ կազմակերպեց ու երիտթուրքերի հետ իրագործեց այսպէս. 1914 թ. հապշտապ նորէն «*հալածուած կայսրութիւնը Առաջին աշխարհամարտին 230 հազարից աւելի իր հայ ռազմիկներին (Ուիւսթըն Չերչիլը, Նրան հետեւելով նաեւ Եւրոպացի շատ պատմաբաններ նշում են 150 հազար), ռուս-թուրք ճակատ ուղարկելու փոխարէն ուղարկեց ռուս-գերման ճակատներում ոչնչացնելու: Դրան փութաւեռ Թուրքիայում հայեւթուրք պինդնդիարումներ առաջ բերելու համար բանտերից ապատեց եւ Թուրքիա ուղարկեց բազմաթիւ «հայ յեղափոխականների»:* Հայ պիւնուժի ողնաշարը ջարդող այդ **պինաբախումները,** որոնք Ռուսաստանը հայերին, Թուրքիային ու աշխարհին էր ներկայացնում որպէս

ապստամբութիւն, նախ եւ առաջ ցիրուցան արին հայոց ուժերը: Երկրորդ՝ դրանք երիտթուրքերի համար յաւելեալ հիմք դարձան բազմաթիւ այլ վայրերում նոյնպէս ձեռնարկելու հայերի կոտորածներ ու տեղահանումներ:

**Հայաշատ վայրերը թուրքերից գրաւելով յետ տալով, հայերից զենքը խլելով մուսուլմաններին տալով՝ կայսրութիւնը ամէն միջոց բանեցրեց արեւմտահայութեանը ոչնչացնելու, տեղահանելու եւ նրանց հայրենիք վերադարձը ԽԱՓԱՆԵԼՈՒ համար:** Ջարդերից ապատուածների մի մասին ռուսները տեղում կոտորել տուեցին դրացիների ձեռքով: Մնացածին ու դրանց մէջ երեկուայ կամաւորներ եւ դաւադրութեան մասին գլխի ընկածներ, ռուս բանակի ռազմադաշտային դատարանների վճիռներով գնդակահարուեցին, մի մասն էլ հետտիտն եւ կամ մեծամասամբ թուրք գերիների հետ միեւնոյն բեռնախցերով աքսորուեցին Սիբիր՝ ճանապարհին քչերն ապատուելով խեղդամահ արուելուց եւ բեռնախցերից ցած նետուելուց<sup>39</sup>:

1916 թ. գաղտնի համաձայնագրով գրեթէ ամբողջ Տաճկահայքը իրենով անելուց յետոյ Ռուսաստանը հայերին խոստացեալ ինքնավարութիւն տալու փոխարէն, ցարի եղբոր բերանով հայոց հայրապետին ասում էր. «Ոնց որ Ռուսաստանում չկայ եակուտական հարց, այնպէս էլ չկայ Հայկական հարց»: Այսպիսով, Ռուսաստանը կամաւորական գնդերի ու բազմաթիւ արեւմտահայերի վճռորոշ օժանդակութեամբ **ՏԱԳԱՀԱՅՔԸ 1916 թ. ԳՐԱԻԵԼՈՒՑ ՈՒ ՀԱՅԵՐԻՑ ԴԱՏԱՐԿԵԼՈՒՑ ՅԵՏՈՅ** յօշոտեց նաեւ թրքական եաթաղանից մահապուրծ տաճկահայերի առնուազն երկու երրորդին:

<sup>39</sup> Տե՛ս *Красная книга Григорий Чалхушьян (Գ. Չախուշեան, Կարմիր գիրք, 1919 թ., ռուսերէն):*

1914-1921 թթ. ռուսները **ՄԻԱՅՆԱԿ ՈՉՆՉԱՑՐԻՆ ՍԵՎ ՄԻԼԻՈՆԻ ՉԱՓ ՀԱՅԻ** (սպանուածների քանակը իմ ենթադրութիւնն է, քանզի Ռուսաստանի ճիշտ ժամանակահատուածում կոտորուած հայերի քանակը ցուցանող գիտյօղուած կամ տուեալ որեւէ տեղ չեմ կարողացել: Պատմագիտութեան չուսումնասիրուած գիտախնդիրներից այս մէկը եւս հարկ է՝ հետազօտուի): Ահա ռուսական զէնքով «ազատ Հայաստան ստեղծելու եզակի առիթը», որն այնքան եռանդով շեփորում էին ռուսախտի ժահր հայոց «ջոջերը»: Ռուսաստանը 88 տարուայ յամառ ջանքերից յետոյ հասաւ նպատակին: Ինքնավար Տաճկահայքը, որը **ռուս կայսրութեանը երկար ժամանակ խոչընդոտում էր ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ՍԵՓԱԿԱՆԵԼՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻՑ ԿՏԱՐԵԼՈՒ ԿԱՄԱՐ, դատարկուեց հայերից:**

Երբ արդէն արեւելեան ճակատում ապահովուած էր յաղթանակը, եւ 1,5 միլիոն զոհերի զնով պիտի վայելէինք «յաղթանակի պտուղները», կայսրութիւնը մեզ վերջնականապէս զինաթափելու համար զանազան **յերուրակիր** պատրուակներով ցրեց մի-մի դիվիզիայի գործ կատարած հայկական կամաւորական խմբերը, իսկ ծեռքն ընկած ղեկավարներին կամ զնդակահարեց, կամ բռնեց Սիբիրի տանջարաններում «ապաշխարելու»: 1917 թ. Փետրուարեան յեղափոխութիւնը եւ դրան հետեւած բուլշեփկների պալատական յեղաշրջումի հետեւանք քաղաքացիական կռիւները կայսրութեանը երկու տարու չափ զբաղեցրին իր որջում: Այսրկովկասի ազգերը, մոռացած իրար հանդէպ ռուսների բորբոքած փոխադարձ թշնամանքն ու երկպառակութիւնները, ազատութեան բերկրանքից 7 ամիս միատրուեցին **Անդրկովկասեան ՍԵՅՄԻ** մէջ (1918 թ. փետրուարի 10-ին թիֆլիսում հիմնուած

Այսրկովկասի իշխանութեան մարմին)՝ մայիսին անջատուելով ու ստեղծելով իրենց անկախ պետութիւնները: Լեզուով «ինտերնացիոնալիզմ» շաղակրատող, բայց իրականում ազգերի մէջ ատելութիւն եւ թշնամանք սերմանող կայսրութիւնը Կովկասի ազգերի միջեւ հրահրեց ազգամիջեան նոր ընդհարումներ եւ Ռուսաստանում քաղաքացիական կռիւները վերջացնելուց յետոյ Այսրկովկասը վերակցեց իրեն: Ազգերի հաւասարութիւն, ինքնորոշում եւ այլ պարապ խօսքերով ողողելով կալանատր մամուլն ու մոլեռանդ դահիճները՝ կայսրութիւնը մէկի հողերը վերցնելով միասին տալով, Կովկասի եւ ընդհանրապէս կայսրութեան ազգերին հանեց իրար դէմ (այդ նոյն քաղաքականութիւնը նա 1945 թ. յետոյ բանեցրեց Արեւելեան Եւրոպայի երկրների առումով): Հայաստանը կայսրութեան հողաբաշխումների մէջ ամենաշռայլը եղաւ՝ կորցնելով իր հողերի առնուազն կէսը: Կայսրութեան նոր վարիչները, Հայաստանը զաւթելուց յետոյ, 1921 թ. մարտի 16-ի ռուսեթուրք զինակցութեամբ մեր պապենական հողերը բաժանեցին իրար եւ միասնորի մէջ: Մեծ եղեռնը շարունակող այդ հողաբաժանումի ԲՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ ՀԱՅՈՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՏՆԵԼՆ ԷՐ: Գրեթէ ամբողջովին բռնագրաւուած Արեւելահայաստանը բաժանուեց Թուրքիայի, Ադրբեջանի եւ Կրաստանի միջեւ (նկատի ունեմ Կարսը, Սուրմալուն, Իգդիրը, Նախիջեանը, Արցախը, Ջաւախքը): 1828 թ. ի վեր **ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՏԵՐԻՄԱԳՈՅՆ ԹՇՆԱՄԻՆ**, 1919 թ. յունիս ամսից Քեմալական Թուրքիային զէնք-զինամթերք, ոսկի մատակարարելով եւ նրա բանակները զինելով ու ՀՀ ինքնիշխան պետականութիւնը վերացնելով, չեղարկեց Սեւրի միջազգային պայմանագրի եւ Ուիւսընի Իրաւարար վճիռ-քարտեզի ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ:

## ԴՐՈՒԱԳ 2

Մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, դեռևս 1912 թուականից, Ռուսաստանը ձգտում էր հայութեան մեջ գոյացնել Արեւմտահայքը կայսրութեան մարզերից մեկը դարձնելու ընդհանրական կարծիք: Կայսրութիւնն այդ նպատակով հայութեան մեջ էլ անելի մեծ թափով շարունակեց արեւմտահայութեան կոտորածները ուճացնող իր **երկուհարիւրամեայ քարոզչութիւնը**, որը դաշնակում էր ԵՐՐՈՂԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՑ ԱՍԵՆ ԳՆՈՎ ՀԵՌՈՒ ՊԱՅԵԼՈՒ բազմապիսի գործողութիւններին: Այդ մասին «Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը» մեծարժէք աշխատութեան մեջ արժանահաւատ աղբիւրների յղումներով վկայում է եղիշէ աւագ քահանայ Գեղամեանը. «1912 թ. օգոստոսի 21-ին Պետրոգրադի հեռագրական գործակալութիւնը հետեւեալ հեռագիրը տարածեց. «Յուզիչ լուրեր են ստացուած քիւրտստանից: Վանի վիլայեթում քիւրտերը շարունակ յարձակումներ են գործում հայ գիւղերի վրայ: Մի գիւղ հրդեհուած է, ուրիշ երկուսի մէջ 14 հայեր են սպանուած: Բազմաթիւ վիրաւորներ կան. փախուցրել են 8 կին» («Մշակ», 1912 թ., թիւ 185): Այդ «Յուզիչ լուրերը» հայ ժողովրդի ականջին հաւաստի ցուցանելու նպատակով ռուսական իշխանութիւնները հրապարակ նետեցին երկու հայ քահանաների՝ Մոսկուայի Էմմանուէլ քահանայ Նազարեանցին եւ Պետերբուրգի քահանայ

Գրիգորեանցին: Էմմանուէլ քահանան հետեւեալ հեռագիրն է ուղարկել «Մշակ»-ին. «Այստեղ լուր է ստացուած, որ Վանի վիլայեթում հայերի ջարդ է տեղի ունեցել, սպանուած է 54 հոգի: Հրդեհուած է 3 գիւղ» («Մշակ», 1912 թ., թիւ 187): Պետրոգրադի հեռագրական գործակալութեան հեռագրում հրապարակուած 14 սպանուածի յօրինուածքը Նազարեանց քահանայի հեռագրում դարձել էր 54, իսկ հրդեհուած մեկ գիւղը՝ երեք գիւղ: 1912 թ. սեպտեմբերի 1-ին Նազարեանց քահանան հեռագրում էր «Մշակ»-ին, թէ. «Դիարբեքիի, Բիթլիսի եւ Մուշի թեմակալ առաջնորդները (իբր) հեռագրում են տեղի ունեցող գազանութիւնների մասին» (հւմ, Նազարեանցին, միթէ), եւ «սպասում է հայկական մասսայական կոտորած»: Արեւելահայ «ազգային գործիչ» կոչուածները եւ մտաւորականութիւնը ոչ մի անգամ հանրահաւաքներ կազմակերպելով կամ ստորագրուած յատուկ դիմումով Ամենայն Հայոց կաթողիկոսներին չորդորեցին, որպէսզի նա Ռուսաստանի կայսրին դիմեր՝ դադարեցնելու յատկապէս 1870-ական թուերից մինչև 1905 թ. ահաւոր չափերի հասած եւ ընդհուպ մինչև 1912 թիւը շարունակող ռուսահայերի հոգեւոր ջարդերը, Հայաստանեայց եկեղեցու ունեցուածքի բռնագրաւումներն ու հայոց եկեղեցու ինքնութիւնը վերացնելու վայրենի գործողութիւնները... Եղիշէ աւագ քահանան շարունակում է. «Բայց մէջտեղում մի հեղինակատր վկայութիւն կայ, որը Կ. Պոլսոյ Ռուսաստանի դեսպան Գիրսինն է, որ թերթերի թմբկահարումներից նոյնիսկ երեք ամիս յետոյ, այն է՝ դեկտեմբերի 14-ին արտաքին գործերի մինիստրին գրում էր, թէ. «...մօտ ապագայում հայերի մասսայական ջարդ չէ սպաս-

ում» (տես Реформы в Армении, թիւ 7)... 4. Պոլսոյ ռուսական դեսպան Գիրսը 1912 թ. նոյեմբերի 26-ին արտաքին գործերի մինիստրին ուղարկած հեռագրում յայտնում է... «Ուստի ես անհրաժեշտ եմ համարում,- անելացնում է դեսպանը,- որ կաթողիկոսին եւ 4. Պոլսոյ Պատրիարքին հաւաստեմ, որ կայսերական կառավարութիւնը հակում է հայերի խնդրի կողմը եւ հարկաւոր ժամանակ «հնարաւոր պաշտպանութիւն» ցոյց կուտայ: Մի այսպիսի խոստում, թելուզ «շատ ընդհանուր կերպով ձեւակերպուած, տաճկահայերին յոյս կու տար, որ նոր աւարառութիւններ եւ ջարդեր եղած ժամանակ մենք նրանց կ'օգնենք: Եւ այսպիսով սա նրանց յետ կը կանգնեցնէր Մեծ ՊԵՏՈՒԹԻՒՆԵՐԻՆ (իմա՝ Երոպային, Ռ. 3.) ԴԻՄԵԼՈՒ նրանց մտադրութիւնից: Եւ երբ մենք հայերին այսպիսի «ընդհանուր» խոստում տուինք պրծանք, այնուհետեւ ձեռաց կարող ենք նրանց հասկացնել, որ «առայժմ անյարմար ենք» համարում հրապարակ դուրս գալ... Ուստի եւ մենք պատրաստ պետք է գտնուինք մեր զօրքերը այդ վիլայեթները մտցնել հարկաւոր դեպքում: Պոլսոյ դեսպանի վերոյիշեալ ընդարձակ հեռագիրը եւ Վեհափառ կաթողիկոսի խնդրագիրը ստանալուց յետոյ՝ մինիստր Սազունովը... Օսմանեան դեսպանին... «բարեկամաբար» պահանջել է, որ Բ. դուռը չդանդաղի Տաճկահայաստանում ինքնուրոյնաբար բարենորոգումներ մտցնելու, որպէսզի Հայկական հարցը սուր կերպարանք ստանալով՝ ԱՌԻԹ ՉՏԱՅ Երոպական պետութիւնների միջամտութեանը եւ ռուսաց եւ Օսմանցոց դրացիական լաւ յարաբերութեան վատանալուն... (Ռուսաստանը Թուրքիային դարձեալ յորդորում էր միասնական

ջանքերով կասեցնել Երոպայի որեւէ միջամտութիւն եւ մասնակցութիւն արեւմտահայերի հարցում, այսինքն՝ խնդիրը թողնել միայն Ռուսաստանի տնօրինութեանը, Ռ. 3.): Ռուսաց արտաքին գործոց մինիստրի այս առաջարկութիւնը, թէ թող Բ. դուռը շտապի «ինքնուրոյնաբար» բարենորոգումներ մտցնելու Տաճկահայաստանում, օսմանեան կառավարութեան համար շատ ձեռնտու էր՝ Երոպական եւ ռուսական միջամտութիւնը եթէ ոչ իսպառ խափանելու, ապա գէթ յետաձգելու, ձգձգելու... Օրմանեան սրբազանը եւ դոկտոր Տաղավարեանը (1862-1915, յայտնի բժիշկ, բնագետ, սաղմնաբան, տիեզերագետ, Ռ. 3.) մի քանի լուրջ եւ հիմնաւոր դիտողութիւններ արին, որոնք ի յարգանս առնուեցան: Ի վերջոյ սրբազան Օրմանեանը ասելով, թէ. «դահլիճները յափտենական չեն, կրկան նոյնիսկ ռեժիմները փոխուիլ, ուստի կառավարութիւնը պետք է այնպիսի հիմնական ծրագիր մը մշտեղ բերէ, որ որեւէ դահլիճ ալ զայն ընդգրկէ, առանց կուսակցական նկատառումներու: Մենք այստեղ եկած ենք լոկ իբրեւ խորհրդատու, այսինքն՝ մարդիկ, որ պտտելով տեսած ու կարդալով գիտցած են երկրին պետքերը: Սակայն բուն այն մարմինը, որ հեղինակութիւն ունի կառավարութեան հետ լրջօրէն քննելու բարենորոգումներու այս կենսական խնդիրը, Պատրիարքարանն է, այսինքն՝ պատրիարքը իր վարչութիւնով» («Մշակ», 1912 թ., թիւ 287 եւ 288):

Յանձնաժողովը յայտնեց, որ այդպէս էլ կը լինի, այսինքն՝ ծրագիրը կը յանձնուի նաեւ պատրիարքարանի հայեցողութեանը: Եւ յանձնուեց էլ: ...Ինչպէս ասացի, ծրագիրը Ազգային ժողովի առաջ դրուեցաւ դեկտեմբերի 21-ին, որտեղ այն միտքը պաշտպանուեցաւ, ինչ

որ առաջարկել էր սրբազան Օրմանեանը Բ. Դրան ձեռքով կազմուած Յանձնաժողովում, այսինքն, որ. «Ծրագիրը այնպէս պիտի լինի, որ ոչ մի մինիստրութիւն եւ ոչ մի իշխանութիւն ոչ մի պարագայում եւ ոչ մի ժամանակում, կամ որեւէ կերպով, նրա գործադրութիւնը չկարողանայ խափանել կամ ժամանակաւորապէս դադարեցնել»: Գալով երաշխաւորութեան հարցին, Ազգային ժողովը թէեւ այդ մասին լռութեամբ անցաւ, սակայն բոլոր ճառագիտութեան արտայայտութիւններից պարզ երեւաց, որ Ազգային ժողովը միջազգային երաշխաւորութեան կողմն է: Ազգային ժողովի այս տրամադրութիւնը իմանալով, իմանալով նաեւ, որ Լոնդոնի եւ Փարիզի հայկական կոմիտէները մտադիր են ուղղակի մեծ պետութիւնների աջակցութեանը դիմելու, ռուս դիպլոմատիան գտաւ, որ այդպիսով «Տաճկա-Հայաստանի բարենորոգումների ձեռնարկութիւնը իր ձեռքից դուրս կուզայ», ռուստի եւ Գիրսը՝ Պոլսոյ դեսպանը, փութաց իր կողմից, մասնաւոր կերպով, հաղորդել հայերին, որ ինքն արդէն Բ. Դռնից պահանջել է բարենորոգումները փութացնել... սակայն Գիրսը կասկածելով, թէ գուցէ մինչ այդ թուրքական հսկողութիւնը փոխարկով եւրոպականի, 1912 թ. դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի արտգործմինիստր Սազոնովին ուղղած գրութիւնում ցանկութիւն յայտնեց, որ բարենորոգումների վրայ հսկողների թւում ռուսներ եւս լինեն եւ «յամենայն դէպս մեզ հակառակ մարդիկ չը նշանակուեն»: Այնուհետեւ դեսպանը ընդունեց կովկասահայերին քաջ յայտնի բժիշկ Չարիեւիւն, որ Տաճկահայաստանից նոր էր վերադարձել Պոլիս եւ գնաց այցելութեան ռուսաց դեսպանին՝ Հայկական հարցի մասին վեկուցում

տալու համար: «Բժիշկ ՉԱՐԻԵՎԻ ԿԱՐԾԻԵՈՎ...»,- գրում է դեսպանը Սազոնովին,- ...տաճկահայ կեանքի գլխաւոր վերքերը ԿԱՐՈՂ Ե ԲՈՒԺԵԼ ՄԻԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ կամ անմիջապէս, կամ օսմանեան կառավարութեան վրայ ճշում գործադրելով... Բժիշկ Չարիեւը,- վերջացնում է դեսպանը իր գրութիւնը,- ինձ յայտնեց, որ իմ խօսքերը նա կընդունի Ի ԶՐԱՅԱՆԳՈՒԹԻՒՆ եւ ըստ այնմ ԿԱԶԴԵ ԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՒ ԱՌՅԱՍԱՐԱԿ ԻՐ ՀԱՄԱԽՈՂՆԵՐԻ ԿՐԱՅ... Ռուսական դիպլոմատիան գտաւ, որ Հայկական հարցը զարթնեցնելու ժամանակը դեռ չի եկել, ռուստի Վեհափառ Կաթողիկոսին խորհուրդ տրուեցաւ, որ առայժմ մէկ պատգամաւորութիւն ուղարկել եւրոպա»<sup>40</sup>:

Հայկ Ասատրեանն այս առիթով գրում է. «Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի խօսքերից եւ գործերից պարզօրէն եզրակացում է, որ ա) 1912-1914 թթ. բարենորոգումը Ռուսաստանի կողմից պարտադրուած է թուրքերին՝ ՍՐԱՆՑ՝ ՀԱՅԵՐԻ ԴԵՄ ԳՐԳՈՆԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ: Բ) ԽՈՐԱՊԵՍ ՑԱԻՈՒՄ Ե, ՀԱՅԵՐՆ ԻՍՊԱՌ ԶԵՆ ՈՂՆՉԱՑԵԼ, ՈՐՈՎ ԴԵՌ ՄԼՈՒՄ ԵՆՐԱՆՑ ԲԱՐԴ ԵՒ ԴԺՈՒՐԻՆ ՀԱՐՑԸ: Գ) ԲԱՅՑ ՈՒՐԱԽԱԼԻ Ե, ՈՐ ՀԱՅԵՐՆ ԱՅԼԵՒՄ, ԻԲՐ ԹԵ, ԲԱՅԱՐՁԱԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ԵՆ ԿԱԶՍՈՒՄ, ՈՐՈՎ ՎԵՐԱՑԵԼ Ե ՆՐԱՆՑ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ ՏԱԼՈՒ ԶԵՒԱԿԱՆ ՀԻՍՔԸ... ԹՈՒՐԵՐԻ ԶԵՌԵՈՎ ՀԱՅԵՐԻՆ ԶԱՐԴ ՏԱԼՈՒՑ ԱՌԱՋ (ՌՈՒՍԱՍՏԱՆԸ, Ռ. Գ.) ՅՐԱՑԵԼ ԵՒ ԱՆՕՐԻՆԱԿ ԵՂԵՆԻՑ ՅԵՏՈՅ

<sup>40</sup> Եղիշէ ա. ք. Գեղամեան, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը, Բագու, 1916 թ., էջ 487-503, 504-534:

**ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԵՐ ԱՅՍԴԵՍ ԿՈՉՈՒԱԾ «ԵՓՐԱՏԵԱՆ ԿԱԶԱԿՈՒԹԵԱՆ» ԾՐԱԳԻՐԸ, ՈՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴԱՅՄԱՆԸ ՀԱՍԱՐՈՒՄ ԵՐ ԿԵՆՂԱՆԻ ՄԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐԱԲՆԱԿՈՒԵԼՈՒ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ:** Ահա թե ինչ է գրում Կովկասեան բանակի հրամանատար Իւդենիչը փոխարքայ Վորոնցով-Դաշկովին. «...Հայերը մտադիր են...գրաւել քիւրդերի եւ թուրքերի լքած հողերն իրենց փախստականներով: Այս մտադրութիւնն ես անընդունելի եմ համարում, որովհետեւ հայերի խլած հողերը պատերազմից յետոյ դժուար կլինի յետ առնել կամ ապացուցել, որ իրենց չի պատկանում... Չափազանց ցանկալի համարելով սահմանամերձ վայրերը ռուսական տարրով բնակեցնել... անհրաժեշտ է թւում այժմ իսկ Դոնից եւ Կուբանից կանչել բանտորական ընկերակցութիւններ, վերոյիշեալ հովիտների խոտը քաղելու եւ հաւաքելու»: Կովկասեան բանակի հրամանատարի... պաշտօնական այս նամակը գրուած է 5 ապրիլ 1915 թ., այսինքն՝ հայկական հեռաւոր կենտրոն Չեյթոնի տեղահանութիւնից (թուրքերի ձեռքով) եւ Ալաշկերտի քիւրդերին դեպի Տարօս քշելուց (ռուսների ձեռքով), Վանի հայեւթուրք կռուից երկու օր, իսկ հայկական ընդհանուր տեղահանութեան հրահանգի գործադրումից մի քանի օր առաջ: Իւդենիչի այս նամակի վրայ Կովկասի փոխարքան մակագրել է՝ «Համաձայն եմ»... Ռուսների հակաքիւրդ եւ թուրքերի հակահայ հալածանքների միջեւ կայ ներքին կապակցութիւն: Թուրքերը հայկական տեղահանութիւնն սկսում են Չեյթոնից, որ գտնուում է լեռնային Կիլիկիայում, այսինքն՝ Հայաստանի հեռաւոր, ծայրագոյն հարաւում: Ռուսները քիւրդերի

հեռացումն սկսում են Ալաշկերտից, որ թուրքաց Հայաստանի հիւսիսային շրջանն է: Չոյզ տեղահանումները,-արտաքուստ խոտորակ-ներքուստ միանպատակ,-գործադրուել են միաժամանակ: Տարբերութիւնը նրանում է միայն, որ թուրքերը Չեյթոնի հայերին վարել են դեպի Միջագետքի անապատները եւ ոչնչացրել այնտեղ, իսկ ռուսներն Ալաշկերտի քիւրդերին քշել են դեպի դեռեւս թուրքերի ձեռքում գտնուող հայկական կենտրոնները՝ հայերի ոչնչացումը դիւրացնելու նպատակով... հարցը պարզ է. Յուդայի համբոյրով ռուս քաղաքականութիւնը խաչել էր տալիս խաբուած մի ազգ, քրիստոնէադոշ մի ժողովուրդ: Ինչ որ անկարելի էր դարձել բացայայտ թշնամանքով, յաջողում էր կեղծ բարեկամութեամբ: Հայերին մահմեդականների լծից փրկելու նշանաբանով իրականացում էր Լոբանովի ծրագիրը. «Հայաստանը առանց հայերի»<sup>41</sup>:

<sup>41</sup> Հայկ Ասատրեան, Հատընտիր, Երեւան, 2004 թ., էջ 305-307:

## ԴՐՈՒԱԳ Է

Հայրութեանն իր աշխարհակալութեանը լծելու համար Ռուսաստանը մեզ ներքաշեց 1914 թ. նոյեմբերի 2-ին Թուրքիային յայտարարած պատերազմի մեջ: Ռուսական բանակում հայ կամաւորական խմբեր կազմելու մասին ռուսաց թագաւորի՝ 1914 թ. յուլիսի 23-ի հրամանից յետոյ Գ. Յ. Դաշնակցութիւնը Կովկասի փոխարքայ Վորոնցով-Դաշկովի հսկողութեամբ 1914 թ. սեպտեմբերի կեսից կազմեց կամաւորական եօթ ջոկատ, որոնք կռուեցին ռուս-թուրքական կարեւորագոյն ճակատներում: Երբ որեւէ ժողովուրդ ու երկիր բաժանուած է իրար դէմ պատերազմող երկու պետութիւնների միջեւ, այդպիսի ժողովուրդը իրաւունք չունի միանալու իրար դէմ կռուող կողմերից մէկին: Ա՛յդ պատճառով էին բազմաթիւ յայտնի ազգային-եկեղեցական գործիչներ դիմակայում ռուսական բանակում հայոց կամաւորական ջոկատներ կազմելուն (Կոստանդնուպոլսի Չաւէն արք. Տէր-Եղիայեան (1868-1947), Մաղաթիա արք. Օրմանեան (1841-1918) եւ Խորեն Աշղբեան (1842-1999) պատրիարքները, բանաստեղծներ Դեւոնդ Ալիշանը (1820-1901), Աւետիք Իսահակեանն (1875-1957) ու Վահան Տէրեանը (1885-1920), 20-րդ դ. առաջին կեսի հայոց ամենանշանաւոր նկարիչներից Փանոս Թերլեմեզեանը (1865-1941), հետագայում նաեւ գրողներ Գուրգէն Մահարին (1903-1969), Կոստան Չարեանը (1885-1969), Շահան Շահ-

նուրը (1903-1974) եւ այլ երեսելի դէմքեր): Կամաւորական ջոկատներ կազմելուն կտրականապէս դէմ էին նաեւ ԶՅԴ յայտնի գործիչներ Նիկոլ Դումանը, ԶԶ Խորհրդարանի ապագայ նախագահ Ա. Սահակեանը, Արշակ Վռամեանը (ՕՍՆԻԿ Դերձակեան), Բարունակ Կապուտիկեանը, Վանա Իշխանը (Նիկոլ Պողոսեան), Վանա Սարգիսը (Սարգիս Բարսեղեան), Աւետիք Շահխաթունին, ԶԶ ապագայ վարչապետ Յովի. Զաջազունին, Հայաստանի Հանրապետութիւնը կերտողներից Արամ Մանուկեանը, Դաշնակցութեան 3 հիմնադիրներից Ռոստոմը եւ ուրիշներ: Նրանցից շատերի ջանքերով ԶՅԴ 1914 թթ. 8-րդ Ընդհանուր ժողովը որոշեց. «Ամէն հայ բաղաբացի պետք է իր բաղաբացիական պարտականութիւնը կատարէ իր պետութեան հանդէպ»: Սակայն Թուրքիայում ամէն գնով արեւմտահայոց կոտորածներ սադրել ձգտող Ռուսաստանը ճգնում էր հայերի մեջ ներարկած կոտորածների երկիւղով նրանց դարձնել իր համար կռուող խամաճիկների զանգուած: Եթէ Ռուսաստանի նպատակը հայերին թուրքերով ահաբեկելը չլիներ, Թուրքիայի վրայ ոչ թէ դուրս կը բերէր հիմնականում մեծահասակներից կազմուած կամաւորութեանը, այլ Արեւմտեան ճակատ բշած իր 150-ից 200 հազար ռուսահայ զինուորականներին, որոնցից առնուազն 70 հազարը զոհուեցին... Ռուսաստանը, հայոց կամաւորական խմբեր կազմելով եւ այլ սադրանքներով, հասաւ նրան, որ Թուրքիայում իշխանութեան եկած երիտթուրքերը, հայերին մեղադրելով կամաւորական խմբերով ռուսական բանակի կազմում Թուրքիայի դէմ կռուելու, նաեւ ՌՈՒՍՆԵՐԻ ԹԵԼԱԴԻՐԱՆՔՈՎ ԱՊՍՏԱՄԲԵԼՈՒԷ եւ այլ «դաւերի» մեջ, սկսեցին արեւմտահայերի

**տեղահանումն ու կոտորածները**<sup>42</sup>: Ռուսաստանն այսպիսով պարբերական կեղծ նահանջներով Արեւմտահայաստանը հայաթափելուց յետոյ երիտթուրքերին օժանդակեց, որպէսզի քողերի, չերքեզների ու բանտերից արձակած ոճրախմբերի հետ Արեւմտահայաստանում կոտորեն առնուազն մէկ միլիոն հայի: Տաճկահայքը ՄԻԱՅՆ ՀԱՅԱԹԱՓ Վիճակում նուաճելու Ռուսաստանի աշխարհակալ նկրտումներին ամենաեական խանգարողը հայերն էին: Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լեռում, Չեթոնում, Չորք-Մարզպանում, Կարինում, Հանդնում, Այնթափում, Խարբերդում եւ այլուր ռուս բանակի առաջապահ դիրքերում կոռուղ հայ մահապարտ կամաւորների ռազմունակ **սխրամարտերից մի քանիսին** 1916 թ. վերջերից մասնակից էին նաեւ 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինի Արարայ լեռան մօտ հերոսացած Հայկական լեզոնի կամաւորները: Նշանս իրողութիւնները Ռուսաստանի ղեկավարութեան մէջ կասկած իսկ չէին թողնում, որ ԱՐԵՄՍԱՀԱՅԵՐԸ ԳՐԱԻԵԱԼ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԴԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԷԻՆ ԳՈՅԱԻՐԵԼՈՒ: Ուստի կամաւորական խմբեր

<sup>42</sup> Ա. աշխարհամարտին թուրքիայի բանակում Անտանտի դէմ կոռուղ վենետւյացի գրող Ռաֆայէլ դէ Նոգայէսն այդ մասին 1920-ական թուրքին հրատարակած իր «Չորս տարի կիսալուսնի ենթակայութեամբ» իսպաներէն գրքում, իբրեւ Մեծ եղեռնի մասնակցած թուրքական զօրքի հրամանատար, իր գրքում բազմաթիւ տուեալներ է բերում: Նա գրում է նաեւ, որ ռուսեթուրք ճակատում ռուս բանակին միացած հայերը մեծ վտանգ էին ներկայացնում, քանի որ թուրքերին խփում էին թիկունքից: Որպէս օրինակ, Նշում է ճակատամարտերից մէկի ժամանակ թուրքական 3-րդ բանակի հայ զրեթէ բոլոր սպաների ու փնուորների՝ ճակատը լքելն ու միանալը ռուս զօրքին (գտել եմ Նոգայէսի գրքի ռուսերէն Рафаель де Ногалес, Четыре года под пулемётом, Москва, 2006 г., стр. 11, 43 թարգմանութիւնից):

կազմակերպելու հրամանագրից ինը ամիս անց՝ 1915 թ. ապրիլի 6-ին, կայսրը ստորագրեց դրանք ցրելու հրամանը, որը իրագործուեց 1915 թ. դեկտեմբերից, երբ Կովկասեան բանակը սկսեց կայսեր հրամանագիրը կատարել արդէն ո՛չ գաղտնի: Հայ կամաւորների ընդհանուր քանակն այդ օրերին հասնում էր տասը հազարի: Իսկ **արեւմտահայութիւնը** քառասունի չափ բնակավայրերում ոչ միայն անհաւատալի խոյանքով պաշտպանում էր, այլեւ **1915 թ. ԱՊՐԻԼԻՆ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԴԵՏՈՒԹԻՒՆ ԷՐ ՀԻՄՆԵԼ**: Հայութիւնը Վանի իր երԿՐՈՐԴ ԴԵՏՈՒԹԻՒՆԸ 1917 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ՓԱՍՏԱՅԻ, իսկ 1918 թ. ՅՈՒՆՈՒԱՐԻ 6-ին ԻՐԱԻԱԲԱՆՕՐԵՆ ԳՈՅԱԻՐԵՑ ԿՈՍՏԻ շուշեցի ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՏՏՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ: Բանակ, ոստիկանութիւն, նոյնիսկ ՓՈՆԹԻՐ անունով դրամ կտրած եւ 1918 թ. փետրուարի 27-ից գործածութեան մէջ դրած ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԴԵՏՈՒԹԻՒՆԸ ԳՈՅԱՏԵԻՑ ՄԻՆՉԵՒ 1918 թ. ՄԱՐՏԻ ԿԵՍԵՐԸ, մօտ հինգ ամիս: Այնպէս որ, 1918 թ. մայիսի 30-ին Կովկասի մայրաքաղաք Թիֆլիսում հռչակուած Հայաստանի Հանրապետութիւնը հայ ժողովրդի հիմնած հորրորդ պետութիւնն էր (երկուսը՝ արեւմտահայքում, երկուսը՝ Արեւելահայաստանում): Այսպէս, Արեւմտահայութիւնն իր անկախ պետականութիւններից առաջինը ռամկավար գործիչ **ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐԵԱՆԻ**, այնուհետեւ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ գլխաւորութեամբ վերականգնել է Վանում, 1915 թ. ապրիլի 7-ին, երկրորդը՝ ԿՈՍՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ գլխաւորութեամբ 1917 թ. հոկտեմբերի վերջին փաստացի, իսկ 1918 թ. յունուարի սկզբին արդէն իրաւագօր հիմքով, դարձեալ Վանում: Հայութիւնն իր

երրորդ պետութիւնը Հայոց ազգային խորհրդի ջանքերով 1918 թ. ապրիլի 25-ին ՀՀԴ երեք հիմնադիրներից Ռոստոմի տնօրինութեամբ եւ Ստեփան Շահումեանի (1878-1918) վարչապետութեամբ հիմնեց Բաքուում: Երբ 1918 թ. յուլիսին հայ եւ օտար կուսակցութիւնների ու ռազմաքաղաքական մարմինների մեծամասնութիւնը, բուլշեւիկների կատաղի դիմադարձութեամբ, համաձայնեցին՝ գերմանա-թուրք զորքերի փոխարէն Բաքուն յանձնուի անգլիացիներին, Ստեփան Շահումեանն իր «կոմիսարների» հետ յուլիսին Բաքուից փախաւ, պետականութիւնը դարձեալ տնօրինեց Բաքուի Ազգային խորհուրդը: Ռոստոմի տնօրինութեամբ գործող հայոց փաստացի կառավարութիւնը, դիմակայելով Բաքուում սկսուած հայերի ամբողջական բնաջնջումին, սպանուածների քանակը հասցրեց նուազագոյնի՝ բիւրաւորներին փրկելով մորթոտուելուց: Բաքուի հայոց գոյամարտը տեւեց մինչեւ սեպտեմբերի կեսերին Ռոսաստանի բացառիկ օժանդակութեամբ թուրքերի մուտքը Բաքու: Բաքուի հայերի բնաջնջումը ՅԱՏԿԱՂԵՍ Այայմանաւորուած էր ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԵՐԱԿԱՆԳԼԵԼՈՒ ՄԵՉ ՆՐԱՆՑ ԲԱՑԱՈՒԿ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ: Հայաստանի Հանրապետութիւնը ԿՈԹՈՂԵԼՈՒ ՄԵՉ ԲԱԶՈՒԻ ԳՈՅԱՄԱՐՏՆ, ԻՐՕՔ, ԻՐ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՀԱԻԱՍՏԱՆԻՉՈՐ էր Սարդարապատի, Ապարանի ու Ղարաբաղիսայի հերոսամարտերին... Կերոնշեալ փաստերը ՆԱԵՒ ապացոյցն են ցայսօր պատմագիտական ՈՐԵԻԷ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՈՒՄ ՉԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ այն իրողութեան, որ 1918 թ. մայիսի 30-ին թիֆլիսում հռչակուած՝ ԱՌԱՋԻՆԸ ՀԱՄԱՐՈՂ Հայաստանի Հանրապետութիւնը Մեծ եղեռնից յետոյ

հայերի հիմնած ՉՈՐՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ԷՐ: Այդպէս է, քանի որ Հայաստանի առաջինը համարուող այսօրուայ Հանրապետութիւնը հիմնուել է Ո՛Չ ԹԵ 1918 թ. մայիսի 30-ին, այլ ԴՐԱՆԻՑ ԵՐԵՔ ՏԱՐԻ առաջ՝ Կանում 1915 թ. ապրիլին (արեւմտահայերը Կանի երկրորդ հանրապետութիւնը հիմնել էին այսօրուայ ՀՀ ծնունդից ՉՈՐՍՈՒԿԵՍ ԱՄԻՍ ԱՌԱՋ): Պատմական այս բացառիկ իրադարձութիւնը հայոց ՊԱՇՏՕՆԱԿԱՆ պատմագիտութիւնը չի նշել եւ չի նշում: Մինչդեռ այն հարկ էր՝ գիտականօրէն ուսումնասիրուէր ու ամենուր ամրագրուէր, յատկապէս դասագրքերում: Կերոնշեալ անառարկելի եղելութիւնները փաստում են, որ ի պատասխան Արեւմտահայաստանը ամբողջովին դատարկելու ռուսեթուրք բազմամեայ սեւեռուն ջանքերի, արեւմտահայութիւնը ՄԵՆ-ՄԵՆԱԿ, 1915-ից մինչեւ 1918 թ. մարտի կեսերը, անհաւատալի ու անբաղդատելի սխրամարտերով ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՈՒԹԻՒՆԸ ՉՈՐԻՑՍ ՊՍԱԿԵՑ ԱՆԿԱՆ ԵՐԿԻՐ ԿԵՐՏԵԼՈՒ ՓԱՌԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ: Մօտ հարիւր տարի շարունակ Արեւմտահայաստանը «ազատագրել» խոստացող կայսրութեան համար անհանդուրժելի էր, որ հայութիւնը արեւմտահայոց պետութիւնը վերականգնէր ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՎ, ԱՅՍԻՆՆԸՆ՝ ԹՈՒՐԶԻԱՅԻՆ ՅԱՂԹԵՐ ՈՒ ՆՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՆԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՊԱՐՏԱԴՐԵՐ ՄԵՆ-ՄԵՆԱԿ: Պետականակերտում, ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ սակայն: Ահա կարեւորագոյնը: Ոչ թէ խաղաղութեան ու բարգաւաճումի օրերին, ինչպէս լինում է սովորաբար, ԱՅԼ ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԿԵՏԻՆ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՕՐԵՐԻՆ, ԵՐԲ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԻՐԱՐ ՄԵՉ ԲԱԺԱՆԱԾ ՉՈՅԳ ԿԱՅՈՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՆ ԱՐԴԵՆ ԱԲԱՐՏՈՒՄ ԷԻՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ  
**ՅԵՂԱԶՆՁՈՒՄԸ...** ՏԱՐԱԾՔՆԵՐԻ 85-90 ՏՈԿՈՍԸ ԵՒ  
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԿԵՍԸ ԿՈՐՑՐԱԾ ԱՅՂ ՈՐ ՊԵՏԱԿԱ-  
ՆԱԶՈՒԻԿ ԺՈՂՈՎՐԴԻՆ Է ԱՅՂ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԻ  
ՀՐԱՇԱԿԵՐՏՈՒՄ ԱՐԱՐԷԼ\*...

Վերոնշեալ եւ այլ բազմապիսի փաստերը պերճա-  
խօս ապացոյցներ են այն իրողութեան, որ բացարձակ  
ապատեղեկատուութիւն է ցայսօր շրջանառուող այն  
ՀԱՄԱՏԱՐԱԾ կարծիքը, թէ իբր **արեւմտահայութեան  
ամբողջական ոչնչացումն ու հայրենագրկումը ԱԲԱՐ-  
ՏՈՒԵԼ Է 1915 թուին**: Պետականակերտումը եղաւ  
այսպէս: Երբ մօտաւորապէս 1915 թ. մարտի վերջե-  
րից վանեցիները համոզուեցին, որ **հայերին Ռուսաս-  
տանի ԴՐԱՇՈ ՀԱՄԱՐՈՂ** երիտթուրքերը հայերին  
կոտորածներով ահաբեկելու պատրուակ էին որոնում,  
այլեւս կասկած չմնաց, որ նրր հայաջնջում է սկսուել:  
Հայ կամաւորների յաջողութիւնները մշտապէս խա-  
փանող ռուս բանակը հայերի հանդէպ իրագործուած  
բազմապիսի խոչընդոտներով ու այլ դաւերով ու սադ-  
րանքներով թուրքերին աջակցում էր այլեւս անթաքոյց  
(օրինակ, ամերիկահայերի ուղարկած զէնքերը հայե-  
րից ԱԸԸՆԴՅԱՏ խլելը եւ կամ ռուս բանակի սպաները  
մի քանի «յանդուզն հայ կամաւորների» զնդակահա-

\* Արծանագրեմ նաեւ, որ նշածս հայոց չորս պետութիւններից ԵՐԵՐԸ  
հիմնել է ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ: Այդպէս է,  
բանի որ այդ երեք ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՈՒՄՆԵՐՆ ԷԼ գլխաւորել են  
20-րդ դ. ՅՅԴ եւ ընդհանրապէս ՀԱՅՈՅ ՊԱՏՈՒԹԵԱՆ ամենա-  
փառագործ դէմքերից ՌՈՍՏՈՍԸ, ԱՐԱՍ ՄԱՆՈՒԿԵԱՆՆ ՈՒ ԿՈՍՏԻ  
ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆԸ...

րեցին<sup>43</sup>): 1915 թ. ապրիլի 6-ին հանրային գործիչների  
կուսակցութիւնների ներկայացուցիչներն ու գիտա-  
կրթամշակութային յայտնի անկուսակցական դէմքերի՝  
Այգեստանում գումարած համաժողովը Վան-Վասպու-  
րականի գլխին ժամ առ ժամ ուռճացող կոտորածները  
կասեցնելու միակ պայման ազդարարեց **պինինքնա-  
պաշտպանութիւնը**: Արմենակ Եկարեանի (ռամկա-  
վար), Գրիգոր Պուլգարացու (ՀՅԴ) եւ Կայծակ Առաքելի  
(ՀՅԴ) գլխաւորութեամբ ընտրուեց «**Վանի Հայ Ինքնա-  
պաշտպանութեան Չինուորական մարմին**»: Մարմնի  
խորհրդականներ ընտրուեցին Արամ Մանուկեանը, Ար-  
շակ Վռամեանը, Վարդանը (ՀՅԴ), ռամկավար Գաբրիէլ  
Սեմերճեանը, հնչակեան Հրանտ Գալիկեանը եւ անկու-  
սակցական նկարիչ Փանոս Թերլումեզեանը<sup>44</sup>: Դեռեւս  
մինչեւ կամաւորական խմբերի եւ ռուս զօրքի մուտքը  
Վան, ռամկավարների պահանջով Վանում արդէն կազ-  
մուել էր եօթ հոգիանոց կառավարութիւն՝ Ա. Եկարեա-  
նի, Արամի, Ա. Թերզիբաշեանի, պրոֆ. Մ. Մինասեանի,  
Աղաբէկի եւ էլի երկու այլոց մասնակցութեամբ: **Վա-  
նի անկախամարտը, որը մեր նոր պատմագրութիւնը  
ամենուր անուանում է ՄԻԱՅՆ հերոսամարտ, իրա-  
կանում ՀԱՅՈՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳ-  
ՆՈՒՄ ԷՐ**: Նոյն կարծիքին էին նաեւ Վանի քաջա-  
մարտը **հոյակերտած** մարտիկները, որոնցից **Հայկ  
Կոսոյեանը** գրում է. «Հայրենի պատմական այդ քա-

<sup>43</sup> **Հր. Աճառեան**, Հայոց պատմութիւն, Երեւան, 2004 թ., էջ 45:

<sup>44</sup> Վասպուրական, Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի  
տասնեւհինգամեակի առթիւ, 1815-1930, Վենետիկ, Սք. Ղալար,  
1930 թ., էջ 198-200: Ա. Ա. Կեօրկիպեան, Վասպուրականի հերոսա-  
մարտը, 1915 ապրիլ 7-1915 մայիս 7, Պէյրուզ, 1965 թ., էջ 86-88:  
Анри Барбс, В стране ужаса, М., 2008 г., стр. 75.

րաժայռը, որ երբեմն եղած էր Արծրունի իշխաններու եւ թագաւորներու փառաւոր յիշատակարանը, որ տեսեր էր լանկթեմուրեան դիակոյտեր եւ կ'թերեր օսմանեան 500 տարուայ իշխանութեան տակ, այսօր անօրինակ ցնծութեան ու յաղթանակի թափորով վերածնուած, իր թեւերուն վրայ կը կրէր իր հարազատ զինուոր որդիները: 5 դարէ ի վեր անոր կատարին գամուած անհարազատ դրօշը իւր քաջ որդւոց ձեռքով **փոխարինուեցաւ հայոց ազատագրումի կարմիր դրօշակով:** Բայց ափսոս, կարճ, շատ կարճ ապրեցանք այդ կեանքը... Արեւելեան ու Արեւմտեան Հայաստանի սահմաններուն վրայ գտնուած Վասպուրականի սիրտը եղող Այգեստանի մէջ՝ հայ ժողովուրդի կորիւնները իրենց արիւնով կը կերտէին **հայ ժողովուրդի եւ հայ երկրի առաջին իրական ազատութիւնը՝ վեց հարիւր տարուան գերութեան շղթաները փշրելով...** (ընդգծումը իմն է, Ռ. Հ.): Եւ ալ անկէ ետք համբիւրներն ու աղօթքներն էին, որ կը պոռթկային բոլոր շրթներէն, բոլոր սրտերէն... Ծաղիկները, Վանի մայիսեան կարմիր ու սպիտակ սքանչելի ծաղիկները, որոնք ոչ մէկ երկնքի տակ այնքան առատ են, որքան Այգեստանի մէջ, ամբողջ ճանապարհը կը պճնէին. կը պսակէին հայ կամաւորներու ճակատները...»<sup>45</sup>:

**1915 թ. մայիսի 5-ի երեկոյեան առաջինը Վան մտաւ խեչոյի գլխաւորած հայոց կամաւորական հեծելազորը, իսկ ուշ գիշերով՝ նաեւ Դրօն իր կամաւոր-**

<sup>45</sup> Վասպուրական, Վան-Վասպուրականի արքիւեան հերոսամարտի տասնեփնգամեակի առթիւ, էջ 198-200: Յատկապէս տես Ա. Ամուրեան, Հայ դատ, հայ ժողովրդի ազատագրութեան ճիգերը, Թեհրան, 1977 թ., էջ 56-58:

ներով: Ռուս զօրքը մեր կամաւորական միա խմբերի հետ Վան մտաւ մայիսի 6-ին: **Ո՛չ հայոց կամաւորական խմբերը, ո՛չ էլ ռուսները տեղեակ չէին** Վանի յաղթանակից եւ գործող հայոց կառավարութիւնից: Արեւմտահայերին ազատելու խոստումով հայութեանը թուրքիայի դէմ **ԳՈՐԾԱԾԵԼԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ** եւ հայերին տուած խոստումների մէջ **ԿԱՍԿԱԾ ՉՅԱՐՈՒՅԵԼՈՒ** համար Ռուսաստանը մայիսի 7-ին «Վանի ժամանակաւոր նահանգապետ» նշանակեց **Արամ Մանուկեանին: Այդ պաշտօնը Արամին տրուեց արեւմտահայերի հիմնած պետութիւնը ՆՐԱՆՑ ՁԵՌԸԸ ՉԹՈՂՆԵԼՈՒ, ԱՐԵՒՄՏԱՀԱՅԸԸ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾԸ ԴԱՐՁՆԵԼԸ** դարձնել գաղտնի պահելով, **հայութեանը այն մոլորութեան մէջ պահելու համար, թէ ռուսները Արեւմտահայաստանը գրաւում են՝ «արեւմտահայերին թուրքերի լծից ազատելու համար»: Գերագոյն խնդիրը, սակայն, Վան-Վասպուրականի ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ մշտեղից շուտափոյթ ՎԵՐԱՑՆԵԼՆ ԵՐ: Արամը պաշտօնը ստանձնելուն պէս 1915 թ. ապրիլի 6-ին Արմենակ Եկարեանի գլխաւորած կառավարութեանը մի քանի օրերի ընթացքում յաւելեց նաեւ Նահանգային, Զաղաքական վարչութիւններ, Տնտեսական Մարմին, Կրթական Տեսչութիւն, Նահանգային Կեդրոնական դատարան, Երկրագործական, Առեւտրական, Առողջապահական եւ այլ հաստատութիւններ: Կառավարութիւնը անյապաղ սկսեց նաեւ գիւղատնտեսութիւնը զարգացնելու, զաղթակալութեանը առաւելագոյնս օժանդակելու, օրինականութիւնը, կարգ ու կանոնը եւ հայ բնակչութեանը ՌՈՒՄ ԲԱՆԱԿԻ՝ ՇԱՏ ՅԱԾԱԽ ԼԿՏԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՂՂ զագործութիւններից պաշտպանելու գործողութիւն-**

ներ: Հայաստանի պետական դիւանում *ռուս բանակի* ու կազակների դաժանութիւնների ու հայ բնակչութեան ունեցուածքի կողոպուտները փաստող 50-ից աւելի վաւերագրեր ու այլ փաստաթղթեր կան<sup>46</sup>:

Պետականաշինութիւնը ամբողջ Վասպուրականում արագօրէն իրագործելու համար Արամը հիմնեց 14 գաւառապետութիւններ՝ Շատախ, Արճէշ, Բերկրի, Արտամետ, Մոկս եւ այլն, որոնք ունէին իրենց տնտեսական, դատական, բաղաբապետական եւ ոստիկանական հիմնարկները: **Վանի նահանգապետութիւնն ըստ էութեան պահպանեց ու զօրացրեց 1915 թ. ապրիլի 6-ին ԱՐԵՒՍԱՅԱՅՅԵՐԻ ԳԻՄՆԱԾ ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:** Արամի կազմած Վասպուրականի իշխանութեան կառոյցների ցանկը փաստօրէն կառավարութեան լիակատար կազմ էր՝ նախարարութիւններով, բանակով ու ոստիկանութեամբ: **Ռուս բանակի հրամկազմի ուշադրութիւնը շեղելու համար Արամը կառավարութիւնը կոչեց նահանգային վարչութիւն՝ հետեւեալ կազմով. նահանգապետ՝ Արամ, փոխնահանգապետ՝ Սիրական Տիգրանեան (դաշնակց.), նահանգապետի օգնական՝ Պարոյր Լեւոնեան (դաշնակց.), դիւանապետ՝ Արշակ Դարբինեան (ռամկավար), հաշուակալ՝ Կարապետ Աճեմեան (ռամկավար), Տիգրան Թէրլեմէսեան (անկուս.)՝ գանձապահ, բարտուղար՝ Օննիկ Մխիթարեան (դաշնակց.)<sup>47</sup>:** Ինքնիշխանութիւն նուաճած

արեւմտահայոց ինքնապաշտպանութիւնն արդէն ոչ թէ Թուրքիայի դէմ ապստամբութիւն էր, այլ ԳԻՄՆՈՒԿԾ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԶՕՐԱՑՈՒՄ ԵՒ ընդարձակում: **Վան-Վասպուրականի հայոց պետութեան գոյութեան փաստը Արեւմտահայքը հայագրկելն ու Ռուսաստանի մարզ դարձնելը գրեթէ անհնար էր դարձնում:** Ռուստի հայոց պետականութեան վերականգնումը Ռուսաստանին ստիպեց գտնել Արեւմտահայքի հայրենագրկումը ՎԵՐՋԱՒՈՐԵԼՈՒ ՆՈՐ ուղիներ: Այդ նոր Վասպուրականի հայոց պետականութեան ոչնչացումն էր, որ Ռուսաստանը պիտի անէր՝ հայոց նոր հայրենագրկումի համար հիմնաւորումներ յօրինելով: Գերիւնդիրը մէկն էր՝ ըստ ամենայնի բացառել նորանոր ազատամարտերով հայրենակերտ յաւելեալ կառոյցների միաւորումը Վան-Վասպուրականին... Արեւմտահայքը հայագրկելու-ռուսական մարզ դարձնելու գործողութիւնների նոր փուլը Ռուսաստանը սկսեց 1915 թ. յունիս-յուլիսից եւ աւարտեց 1918 թ. մարտի կեսերին՝ Վասպուրականի պետութիւնը վերջնականապէս վերացնելուց յետոյ հայրենակորոյս արեւմտահայութեան ՎԵՐՋԻՆ ԲԵԿՈՐՆԵՐԻՆ ԳԱՐԹԵՑՆԵԼՈՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ: Հետեւաբար՝ **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆԴԻ 1915-1918 թթ. ՓՈՒԼԻ ՎԵՐՋԱԿԵՏԸ** Վան-Վասպուրականի **ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄ** է: Եւ յուսած եւ բազմաթիւ ու բազմապիսի ուրիշ փաստերը անառարկելի են դարձնում այն իրողութիւնը, որ **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱԾԵԱՐԴԱՍԱՐՏԻՆ ԹՈՒՐԵԿԱՅՈՒՄ ՍԱՂԵԼ, ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՒ ԵՐԻՏԹՈՒՐԵՐԻ ՀԵՏ ԴԻՒԱԳՈՐԾԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԸ:** Եւ որ 1917 թ. վերջին իշխանութիւնը Ռուսաստանում զաւթած բոլ-

<sup>46</sup> Տե՛ս «Վանի նահանգապետի գրասենեակ», ֆ. 242, ց. 1, գ. 9, թ. 44, գ. 1, գ. 6, թ. 19, 28, 32-33, 41, 48, 50, 65 գ. 1, գ. 16, թ. 7, 14, 16, 27, գ. 1, գ. 65, գ. 1, գ. 16, թ. 9, 27, գ. 1, գ. 63, թ. 9, 22, 36, 40-50, 53, 57:  
<sup>47</sup> Վասպուրական, Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգամեակի առթիւ, 1815-1930, Վենետիկ, Սբ. Դապար, 1930 թ., էջ 198-200:

շեփակները **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱ-  
ԿԵՑԻՆ ՄԻԱՅՆԱԿ՝** հոգեյօշի, հայասպանդի, հայա-  
թափումի ու հայրենագրկումի ծառայները հասցնելով  
աննախադեպ չափերի: Նրանք Արեւելահայքի հայա-  
գրկումը զուգակցեցին Արեւմտահայաստանի վերջնա-  
կան հայաթափումին՝ 1918 թ. իրենց առաջնորդ Լենի-  
նի հրահանգով գաղթեցնելով Թուրքիայում իրենց հո-  
դին կառչած եւ ոչ մի պարագայում գաղթել չկամեցող  
մօտ 150 հազար վերջին հայերին (մանրամասն տես  
Ռ. Համբարձումեան, Հայոց ցեղասպանութիւնը 1921-  
1949 թթ. շարունակել է բուշեփկեան Ռուսաստանը,  
Երեւան, 2013 թ.): Աւելին, բուշեփկները Արեւելահա-  
յաստանի հայագրկումը սկսեցին Հայաստանի Անկա-  
խութիւնը վերականգնելու՝ 1918 թ. մայիսեան հերոսա-  
մարտերի նախաշէմին: Դա յատուկ արում էր, որպէսզի  
հայութիւնը ոչ մի հնար չունենար փրկուելու նաեւ Արեւ-  
ելահայաստանը մէջտեղից վերացնելու թրքբուշեփկ  
**ոճրածրագրից:** Հետեւաբար՝ հայ ժողովրդի մայիսեան  
յաղթանակները անհաւատալի էին, քանի որ բազմա-  
պատիկ աւելի զինուոր, զէնք-զինամթերք ունեցող զոյգ  
կայսրութիւնների միացեալ ռազմարշաւին դիմակայող  
հայութիւնը այդ կացութեան մէջ ոչ մի հնար չուներ դի-  
մադրելու, ԷԼ ՌԻՐ ՄԼԱՑ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒՄ պետակա-  
նութիւնը...

## ԴՐՈՒԱԳ Ը

Հայաստանի Հանրապետութիւնը պաշտօնապէս  
ճանաչելու եւ Արցախն ու Նախիջեւանը ՀՀ կազմում  
իրաւասու համարելու Ազգերի լիգայի՝ 1920 թ. փետ-  
րուարի 24-ի յայտարարութիւնն ու նման այլ միջազ-  
գային վաւերագրերը, յատկապէս Սեւրի դաշնագրի՝  
Հայաստանին վերաբերող հատուածն ու Ուիլսընեան  
Իրաւարար վճիռ-քարտէզի իրագործումը վիժեցնե-  
լու նպատակով 1920 թ. օգոստոսի 24-ին Ռուսաս-  
տանը եւ Թուրքիան Լենին-Աթաթուրք գաղտնի դա-  
շինքով վճռեցին հայոց պետականութիւնը **բաժանել  
իրար մէջ:** Ռուսաստանը, ՀՀ-ին պարտադրելով հրա-  
ժարուել Սեւրի դաշնագրից, Արեւմտահայաստանը,  
ինչպէս նաեւ Ռուսահայքի Կարսի մարզը, Սուրմալուն,  
Օլթին ու այլ տարածքներ յանձնեց Թուրքիային, Նա-  
խիջեւանը, Շարուրն ու Արցախը՝ Ադրբեջանին, Ախալ-  
քալաքը, Բուխու-խաչենը եւ այլ բնակավայրեր՝ Վրաս-  
տանին (Թուրքիային տրուած Ռուսահայաստանի տա-  
րածքների չափը նշում են մօտ 20 հազար քառ. կմ):  
**Ռուսաստանն ու Թուրքիան** 1921 թ. մարտի 16-ի՝  
Մոսկուայում կնքուած պայմանագիր կոչուող **Հա-  
յաստանի հողակողոպուտին տուեցին «իրաւական»  
տեսք: ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԵՐԲԵԻ ԵՏՍԱԾ ԱՍԵՆԱ-  
ՄԱՐԴԱՅՕԾ ԲՈՆԸԵԻԿԵԱՆ ԲՈՆԱԴԵՏՈՒԹԻՒՆԸ**  
1921-1955 թթ. ընթացքում, մասամբ նաեւ հետագա-  
յում, կոտորել է 87 միլիոն ՄԻԱՅՆ սեփական քաղա-

բացու<sup>48</sup>, բանտարկել, խոշտանգել, տանջամահ է արել ինչպես կայսրութեան բոլոր բանտեալ ազգերի, այնպես էլ Հայաստանի ԱՄԲՈՂԾ ԸՆՏՐԱՆՈՒՆ՝ 20-րդ դ. հայ գրականութեան մեծագոյն դէմքերից Վահան Տերեանից (1885-1920), Եղիշէ Չարենցից (1897-1937), Ակսել Բակունցից (1899-1937) սկսած՝ Ամենայն հայոց Խորէն Մուրադբեկեան կաթողիկոսով (1873-1938), Գարեգին Նժդեհով (1886-1955) ու Պարոյր Սեւակով (1924-1971) վերջացրած:

Պատմագիտութիւնը Հայոց մեծ եղեռնի սկիզբը դնում է 1915 թ. ապրիլի 24-ը, երբ մէկ գիշերուայ մէջ թուրքերը ձերբակալեցին 235 անուանի հայ մտաւորականի, գրողի ու արուեստագետի, որոնց թիւը կարճ ժամանակ անց հասաւ 760-ի: Նոյնը, բայց տասնապատիկ մեծ քանակով եւ աւելի ահարկու չափերով 1949 թ. յունիսի 13-ի գիշերը իրականացրին սովետները՝ Հայկական ԽՍՀ-ից, Ադրբեջանական ու Վրացական ԽՍՀ-ներից ու Սեւ ծովի առափնեայ շրջաններից անմարդաբնակ սառցադաշտ Ալթայ աքսորելով **15 հազար 500 հայի**: Մոսկուայի իրագործած 1921-1955 թթ. գնդակահարութիւնները, կացնահարումներն ու այլ պատիժներ, նաեւ Հայաստանը առանց հայերի ծրագրով՝ 1949 թ. զանգուածային աքսորը Ալթայ, համապատասխանում են Յեղասպանութեան մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի **ռւխտագրի** (կոնվէնցիա) յօդուածներին:

<sup>48</sup> Ռուս արդի պատմագիտութիւնը նշուած 87 միլիոն փոհերին յայտարարում է «հչ իրենց բնական մահով» մահացածներ, որոնցից միայն գնդակահարուածների թիւը նշում է աւելի քան 45 մլն: Տ'ես նաեւ Платонов Олег, *Русский труд, Москва, 1991 г., стр. 253, 261, 282-283.*

Յեղասպանդ էր նաեւ Կերչում եւ այլուր հայ ժողովրդի աւելի քան 300 ՀԱԶԱՐ ԶԱԲԱԿՆԵՐԻ ՄՊԱՆԴԸ 1939-1945 թթ. երկրորդ աշխարհամարտում (հայաստանցիներ՝ աւելի քան 200 հազար, գրեթէ նոյնքան՝ Այսրկովկասում եւ կայսրութեան այլ վայրերում բնակուողներ): 1939 թ. օգոստոսի 23-ին Մոսկուայում կնքած «Չյարձակման մասին» Ռիբենտրոպ-Մոլոտով պայմանագրով ՀԻՏԼԵՐԸ սեպտեմբերի 1-ին, ՍՍԱԼԻՆԸ՝ 17-ին ներխուժեցին Լեհաստան եւ Լեհաստանի բաժանումով ՍԿՍԵՑԻՆ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ: Սեպտեմբերի 1-ից մինչեւ 1941 թ. գարունը Գերմանիան գրաւեց Լեհաստանի մի մասը, Ֆրանսիան, Բելգիան, Յոլանդիան, Նորվեգիան, Յունաստանը, Բուլղարիան, Լիբսեմբուրգը եւ այլն, իսկ սովետները գրաւեցին Լեհաստանի արեւելեան մասը՝ այն անուանափոխելով Արեւմտեան Ուկրաինա: Գերմանիան 1940 թ. յուլիսի 15-ին կնքուած սովետ-գերման Նոր պայմանագրով Ռուսաստանին զիջեց Բեսարաբիան ու Բուկովինան, նաեւ Ռիբենտրոպ-Մոլոտով դաշինքով Գերմանիային անցած Լիտվան ու Բրեստը, ինչը պաշտօնապես իրապարակուեց 1939 թ. սեպտեմբերի 22-ին այդ քաղաքում անցկացուած գերմանա-սովետ միասնական շքեղ զօրահանդէսին: Ապատեղեկատուութիւն է ռուս պատմագիտութեան այն պնդումը, թէ Գերմանիան, խախտելով սովետա-գերման դաշնագիրը, իբր թէ Ռուսաստանի վրայ է յարձակուել՝ նուաճելու այդ կայսրութիւնը: Ճշմարտութիւնը հետեւեալն է. ողջ Եւրոպան գրաւել ձգտող սովետները զաւթեցին անհամեմատ աւելի շատ հողեր, քան նշուած էր Ռիբենտրոպ-Մոլոտով հողաբաժանումով: Պայմանագրով Հիտլերին տրուած Ռուսի-

Նիայից Ստալինը պոկեց աւելի քան 3 մլն բնակչութիւն ունեցող Բեսարաբիան եւ հիւսիսային Բուկովինան, որը 1940 թ. օգոստոսի 2-ից կոչեց Մոլդովական Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն, իսկ 1940 թ. հոկտեմբերի 3-ին Մերձբալթեան երկրներում անցկացրած խորհրդարանական ընտրութիւններին «ընտրուած» խորհրդարանները յատուկ որոշումներով Լատվիան, Էստոնիան եւ Լիտվան միացրին Ռուսաստանին: Սովետ կայսրութիւնը 1939 թ. սեպտեմբերից մինչեւ 1941 թ. յունիսի 21-ը զաւթեց **աւելի քան 250 հազար քառ. կմ տարածք՝ 25 միլիոնի չափ բնակչութեամբ, որոնցից հարիւր հազարաւորների բանտարկում, աքսորում կամ զնդակահարում էր: Օրինակ՝ Ստալինը 1940 թ. միայն Մերձբալթեան երկրներից աքսորեց մօտ 50.000 մարդու, իսկ Արեւելեան Գերմանիայից (անուանակոչեց Արեւմտեան Ուկրաինա) եւ Բելառուսին կցած որոշ տարածքներից՝ 356 000 մարդու:** Բացի իր ազդեցութեան տակ ՉԸ մտնող Նշուած եւ այլ տարածքների զաւթումից, Ստալինն իր գաղտնի ծառայութիւններով պատերազմի հենց սկզբից Գերմանիային անցած Սլովակիայում, Սերբիայում, Բուլղարիայում եւ այլ տարածքներում, նաեւ հենց բուն Գերմանիայում, ծաւալում էր լոտեսական գործողութիւններ՝ դրանք «Գերմանիայից ազատագրելու», այն է՝ Սովետ Միութեանը միացնելու քարոզչութիւն, որին կցել էր նաեւ «Կոմիստերն» կոչուող «միջազգային» հաստատութիւնը: Հիտլերն իր ուխտադրուած դաշնակցի աշխարհակալ նկրտումներին վերջ տալու համար հրաժարուեց Նոր բանակցութիւններից եւ 1940 թ. դեկտեմբերի 18-ին ստորագրեց Ստալինին

պատժելու «Բարբարոսա» անուն թիւ 21 գաղտնի որոշումը: 1941 թ. **յունիսի 22-ի սովետա-գերման պատերազմը ըստ էութեան ՆՈՅՆՊԵՍ ՍՍԱԼԻՆԸ հրահրեց:** Նա, այնուհետեւ իր աշխարհակալութիւնը ներկայացնելով ինքնապաշտպանութիւն, սովետ կայսրութեան բնակչութեան համար Բ աշխարհամարտի սկիզբ յայտարարեց ոչ թէ 1939 թ. սեպտեմբերի 1-ը, այլ 1941 թ. յունիսի 22-ը: Այդ Նոյն նպատակով եւ **բռնամիութեան** բնակչութեան բիրաւոր մահապատիժները կոծկելու դիտաւորութեամբ կայսրութեան ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ԿԱԼԱՆԱԾ ԵՒ ԳՆԴԱԿԱՅԱՐԵԼՈՒ ՄՊԱՌՆԱԼԻԶՈՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՇՈՂ Ստալինը գերմանա-սովետ պատերազմի անունը կնքեց **հայրենական:** Ողբայի անհեթեթութիւն է, որ անկախ կոչուած ՀՀ-ի ինչպէս երեկուայ, այնպէս էլ այսօրուայ ղեկավարութիւնը, ներառեալ հիմնականում 60-ն անց հայ պատմաբանը, գիտնականը եւ ընդհանրապէս կրթամշակութային մտաւորականութեան բացարձակ մեծամասնութիւնը, **ԺԹ** դարում ռուս արքունիքի սարքած «**հայրենական**» ռուսաբանութեամբ են կոչում այն պատերազմը, որի ընթացքում իր **բռնիշխանութիւնը ՊԱՅԵԼՈՒՆ Ի ԽՆԴԻՐ ՍՍԱԼԻՆԸ ԿՈՏՈՐԵԼ ՏՈՒԵՑ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ 27 ՄԻԼԻՈՆ ԶԱՂԱԶՍԻ, որոնցից ԱԻԵԼԻ ԶԱՆ 250 ՀԱԶԱՐԸ՝ ՀԱՅԵՐ:** Ռուս-գերման ճակատ քշուած հայերի, նաեւ գոհուածների ստույգ քանակը ճշգրտուած չէ: Ընդունուած են հետեւեալ թուերը: Խորհրդային Միութիւնում 1941 թ. բնակուող երկու միլիոն 152 860 հազար հայերից ռուս-գերման ճակատներում 1941-1945 թթ. կռոււմ էին աւելի քան 500 հազարը, որոնցից 300 հազարը՝ Հայաստանից, 200 հազարից աւելին՝ Այսրկովկասից ու

կայսրության այլ հայաշատ վայրերից: Կայսրության միւս տարածքներից զօրակոչուած հայերի ընդհանուր քանակի մասին ստոյգ տեղեկութիւններ չկան: Կես միլիոնից ավելի զինակոչուածներից, ըստ պաշտօնական տուեալների, զոհուել են ավելի քան 250 հազարը: Ինչպէս հայերին, այնպէս էլ կայսրության միւս բոլոր ազգերին ռազմաճակատ էր քշել 1917 թ. հոկտեմբերին կայսրութիւնը զաւթելուց յետոյ իր ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ԱՆԸՆԴՅԱՏ ԲԱՆՏԱՐԿԱԾ, ԱՔՍՈՐԱԾ ՈՒ ԿՈՏՈՐԱԾ Արիւնարբու **ռճրահմակը**: Բացարձակ կեղծիք է նաեւ ռուս պատմագիտութեան այն պնդումը, թէ իբր Բ. աշխարհամարտում Գերմանիային հիմնականում ռուս կայսրութիւնն է յաղթել: Իրողութիւնը հետեւեալն է. գերմանա-սովետ պատերազմում սովետ զինուորներով Գերմանիային յաղթեցին Մեծ Բրիտանիան ու **ՅԱՏԿԱՊԵՍ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՉՆԵՐԸ**: Գերմանիայի դէմ 1942 թուից եղել է նաեւ **երկրորդ** ճակատը, որին կայսերական պատմագիտութիւնը, երկրորդական նշանակութիւն տալով, անդրադառնում է թռուցիկ, իհարկէ **ճշտամերժ** կեղծիքներով: Բրիտանիան 1942 թ. աշնանից Գերմանիայի դէմ պատերազմ էր մղում Եգիպտոսում, որտեղ Գերմանիան մեծ բանակ ուներ: Վճռական էր Գոալիսաֆրիկյան ռազմաճակատի կարեւորագոյն մարտերից մեկը՝ 1942 թ. հոկտեմբերի 23-ից սկսուած **Էլ-Ալեմայնէի** ճակատամարտը: Ինչ վերաբերում է Ամերիկայի Միացեալ Նահանգներին, ապա նախագահ Ֆ. Ռուզվելտի ստորագրած եւ Կոնգրեսի՝ 1941 թ. մարտի 11-ի **ԼԵՆԴ-ԼԻՉ** ծրագրով Ամերիկան սկսեց օգնութիւն առաքել դաշնակիցներին: ԱՄՆ-ը, 1941 թ. մարտի վերջից սկսած, վիթխարի զոււարթների զենք-զինամթերք,

պարէն, **նաւթօղանաւեր**, բեռնատար մեքենաներ, գնացքներ, սուզանաւեր եւ այլն է ՈՒՂԱՐԿԵԼ Սովետ Միութիւն<sup>49</sup>:

Աւելի քան 60 տարի այդ օգնութեան մասին խօսել-գրելը խստագոյն պատժելի յանցագործութիւն էր, ուստի կայսրութեան պատմագիտութիւնը կամ դրան չէր անդրադառնում, կամ համարում էր ոչ էական: Սակայն 1960-ական թթ. սկսած, հիմնուելով երկիրն ու բանակը ղեկավարող բարձրագոյն պաշտօնեաների, մեծահամբաւ զօրավարների ու գերագոյն հրամանատարների տարատեսակ վկայութիւնների ու յատկապէս չը հրապարակուող «գերգաղտնի» աղբիւրների վրայ՝ պատմաբաններն ու պետական գործիչները հրապարակել են Սովետ Միութեանը տրամադրուած օժանդակութեան վիթխարի չափերը: Սովետ պատմագիտութիւնը թաքցրել է նաեւ սովետների զօրքերի քանակի, նաեւ զենքի ու սպառազինութեան բազմապատիկ առաւելութիւնը Գերմանիայի հանդէպ, որից մինչեւ 1943 թ. ԱՅՂՈՒԱՄԵՆԱՅՆԻԻ կրեց պատերազմների ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՍՈՍԿԱԼԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Բացարձակ կեղծիք է նաեւ այն պնդումը, թէ գերմանա-սովետ ճակատում Գերմանիան իբր թէ ուներ զինուժի եւ սպառազինութեան ահռելի առաւելութիւն: Իրողութիւնը **ՃԿՇՏ ՀԱԿԱՌԱԿՆ Է**: 1941 թ. յունիսին ավելի քան 11 միլիոն ռազմիկ ունեցող սովետները զինուորների քանակով, տանկերի թուով, օդանաւերով եւ այլն Գերմանիային գերազանցում էր բազմիցս (մանրամասն՝ ներքոբերեալ յօդուածում): **Այսպիսով, Ստալինն իր**

<sup>49</sup> Суворов В., *Последняя Республика*, Москва, 2005 г., стр. 107-110.

ԲՈՒՆԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԻԵԼԻ  
ՔԱՆ 30 ՄԻԼԻՈՆ ՉԻՆՈՒՐԱԿԱՆԻ, ԵՕԹ ՄԻԼԻՈ-  
ՆԻՑ ԱԻԵԼԻ ՍԵՓԱԿԱՆ ԶԱՂԱՔԱՑՈՒ ԵՆ ԿՈՏՈՐԵՑ  
ԻՐԱԿԱՆ ԵՒ ՉԻՆՏՈՒ ՍՈԿԻՑ, ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻՑ,  
ԳՆՂԱԿԱՅԱՐՈՒԹԻՒՆԻՑ ԵՒ ԱՅԼՆ<sup>50</sup>:

Կայսրութեան զոհերի քանակը կեղծելու օրինակ է հետեւեալ արտառոց փաստը. ռուս պատմագիտութիւնը Բ. աշխարհամարտում Ռուսաստանի զոհուած ռազմիկների թիւը Ստալինի ժամանակ նշում էր 7 միլիոն, նրա յաջորդի՝ Խրուշչովի ժամանակ՝ 20 մլն, սրա յաջորդի ժամանակ՝ 27 մլն, իսկ 1991 թ. յետոյ՝ մէկ այլի օրօք, պատմաբաններից ոմանք զոհերի թիւը հասցրին 30-40 միլիոնի<sup>51</sup>:

Արդի ռուսագիր որոշ պատմաբանների վկայութեամբ կայսրութեան պատմագիտութիւնը 1914-1918 եւ 1939-1945 թթ. Ա. եւ Բ. աշխարհամարտերում կայսրութեան ունեցած զօրքերի թիւը, յատկապէս ճակատներում ունեցած զոհերի, վիրաւորների ու գերիների, նաեւ երկրի ներսում կայսրութեան իրականացրած բնակչութեան կոտորուածների, աքսորեալների եւ բանտարկեալների թուաքանակը բազմակի նուազեցրել է նուազեցնում է: Ռուսաստանի քաղաքացիական պատերազմներին (1917-1921 թթ.) կայսրութեան ուղղակի կորուստները նշում են 17 մլն, իսկ ընդհանուր կորուստները (սպանուածներից բացի նաեւ վիրաւորներ, գերիներ, սովից, համաճարակներից եւ բռնութիւններից զոհուածներ եւ այլն)՝ 21-ից 25 մլն մարդ: Եւրոպա-

յի եւ ԱՄՆ-ի գիտնականների ճշգրիտ հաշուումներով Ռուսաստանի կորուստները կազմում են 70-ից 75 մլն, այսինքն՝ 2-3 անգամ անելի, քան Ռուսաստանի ներկայացրած տուեալներն են: Ըստ այդ տուեալների՝ Ռուսաստանի բնակչութիւնը 1914 թ. յունուարի 1-ին 178 մլն 905,5 հազար էր: Եթէ նշուած տուեալներին գումարենք կայսրութեան կողմից ինքնավարութիւն յայտարարուած տարածքների (Ֆինլանդիայից զաւթուած տարածքները, Խամսայի խանութիւնը, Բուխարայի էմիրութիւնը եւ Ուենհայի մարզը) 3 մլն-ից անելի բնակչութիւնը, կայսրութեան բնակչութիւնը 1914 թ. յունուարի 1-ի դրութեամբ կազմում էր մօտ 185,5 մլն, իսկ 1914-1918 թթ. կորուստները նշում են 8-ից 13 մլն: Ռուսաստանը պատերազմի բռնկումից առաջ ուներ 1,4 մլն զօրք, պատերազմի սկզբին անցկացրած զօրահաւաքով բանակ ուղարկեց 13,68 մլն մարդ: Այդ ընթացքում կայսրութիւնը մօտ 20 մլն մարդ էր զօրակոչել բանակ, որից 17,6 մլն-ը՝ ռազմաճակատ: Այդ թուերին գումարելով իր 2,6 մլն ներքին զօրքերը եւ գործող բանակին օգնող թիկունքի 2,7 մլն զինուորականները՝ նշում է, որ Ռուսաստանը 1914-1917 թթ. ուներ մօտաւորապէս 25 մլն զինուոր եւ սպայ: Մէկ այլ տուեալով Ռուսաստանը 1917 թ. փետրուարից մինչեւ բոլշեւիկների հոկտեմբերեան բռնապետութեան հաստատումը, կորցրել է 17 մլն մարդ, իսկ 1918 թ. մարտի 3-ին կնքուած Բրեստ-Լիտովսկի գործարքից յետոյ Ռուսաստանից ազատագրուած եւ գրաւուած տարածքների բնակչութիւնը 50 մլն էր, այսինքն՝ 1917 թ. հոկտեմբերից մինչեւ 1918 թ. մարտի 3-ը կայսրութեան բնակչութիւնը պակասել էր 67 միլիոնով: Նոյն աղբիւրները հաւաստում են, որ Առա-

<sup>50</sup> Платонов О., *Русский труд*, М., 1991 г., стр. 253, 261.

<sup>51</sup> *Տե՛ս Первая мировая война, пролог XX века*, М., 1999 г., стр. 474-475.

ջին աշխարհամարտից այս կամ այն կերպ տուժել է (սպանուած, գերի, զանազան գնդակահարութիւնների եւ համաճարակների զոհեր եւ այլն) Ռուսաստանի բնակչութեան մօտ կեսը<sup>52</sup>: **ՅԵՂԱԶՆՁՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՇՆԱՐԴԱՅԻՆ ՊԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԲԱՅԱՌԻԿ ՄԱՐԴԱՅՕՇՈՒԹԻՒՆ ԷՐ** 1988 թ. դեկտեմբերի 7-ին Սպիտակի իր ստորերկրեայ գերգաղտնի ռազմակայանում երկրաշարժաբեր պայթիւններով Ռուսաստանի սարքած արհեստական երկրաշարժը: Արցախեան ազատամարտը կասեցնելու համար հայ ժողովրդի դեմ այդ բստմսելի **համապատժով** Ռուսաստանը կոտորեց 50 հազարի չափ ՀՀ քաղաքացու (զոհերի թիւը պաշտօնապէս յայտարարուեց 25 հազար, հանրային որոշ միութիւններ նշում էին աւելի մեծ թուեր), կէս միլիոնից աւելի մարդու թողեց անտուն, որոնցից պաշտօնական տուեալներով 5763-ը ստացան մարմնական վնասուածքներ ու այլ վէրքեր, իսկ 12472 մարդ երկրից գաղթեցուեց<sup>53</sup>: Ռուսաստանը 1991 թ. ապրիլի 31-ից մինչեւ օգոստոսի վերջը շարունակուող «կոլցօ» (հայերէն՝ օղակ) պատժարշաւով բռնագրաւեց-ազերիներին յանձնեց Գիլյիստան-Շահումեանը, Գետաշէնը, Մարտունաշէնն ու այլ հայկական տարածքներ, ազերիների հետ մի-

<sup>52</sup> Первая мировая война, 1999 г., стр. 475-479, 481-482, 498.

<sup>53</sup> Տե՛ս «Ստորիդային Հայաստան» թերթ, 1988 թ. նոյեմբերի 26, էջ 1: «Ասպարէպ» օրաթերթ, Լոս Անճելէս-Կլենտէյ, 1988 թ. նոյեմբերի 23, էջ 1, 16: «Ասպարէպ», 1988 թ. նոյեմբերի 29: «Ակատ Հայք», 1989 թ. սեպտեմբերի 13, թիւ 17, էջ 3: Լրացուցիչ, առաւել ամբողջական տեղեկատուութիւնների աղբիւրներ՝ Ռ. Համբարժումեան, Հայ-ռուս յարաբերութիւնների 1720-2015 թթ. նենգափոխուած պատմութեան սրբագրումներ, Երեւան, 2016 թ.: Ռ. Համբարժումեան, Հայոց Մեծ եղեռնի 1915-1918 թթ. փուլը սաղրել, կապմակերպել եւ Թուրքիայի հետ իրագործել է Ռուսաստանը, Երեւան, 2018 թ.: Ռ. Համբարժումեան, Յաղագս արցախականի, Երեւան, 2018 թ.:

ասին կոտորեց բազմաթիւ արցախահայերի, իսկ մնացածներին, աւելի քան 5 հազար մարդու, քէց իրենց պապենական հողերից, դարձրեց գաղթական: 1994 թ. մայիսի 12-ին Ռուսաստանը, մեր երկրին պարտադրելով դադարեցնել հայ-ազերի պատերազմում մեր յաղթարշաւը, Ադրբեջանի պարտութիւնը ամրագրող անձնատուութեան փաստաթղթի փոխարէն մեզ ստիպեց ստորագրել յաղթարշաւը կասեցնող հրադադարի **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**: 2013-2014 թթ. ընթացքում Ադրբեջանին տալով մօտ 4 միլիարդ դոլարի զէնք-զինամթերք՝ դաշնակցի դիմակով Հայաստանի դեմ պատերազմող Ռուսաստանը գործում էր իբրեւ Ադրբեջանի ՌԱԶՄԱ-ԴԱՇՆԱԿԻՑ<sup>54</sup>: Այս ու բազմաթիւ այլ թաքուցեալ ճշմարտութիւններ հայոց ազգային գիտակրթամշակութային գործիչներին ու համայն հայութեանը ԹԵԼԱԴՐՈՒՄ ԵՆ գործադրել Ռուսաստանի վերսկսած հայոց նոր ցեղասպանութիւնն ու պետականապրկումը կասեցնելու, այն է՝ հայ ժողովրդին նոր արհաւիրքից ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ: Այդ ծրագիրն ըստ իս ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՈՒԹԵԱՆ ՌՈՒՄԱԽՏԱԳԱՆՈՒՄ Ե, ՈՐԻՆ ՊԷՏԵ Է ԼՇՈՒԻ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ...

<sup>54</sup> Առաւել ամբողջական տեղեկատուութիւնների լրացուցիչ աղբիւրներ՝ Ռ. Համբարժումեան, Հայ-ռուս յարաբերութիւնների 1720-2015 թթ. նենգափոխուած պատմութեան սրբագրումներ, Երեւան, 2016 թ.: Ռ. Համբարժումեան, Հայոց Մեծ եղեռնի 1915-1918 թթ. փուլը սաղրել, կապմակերպել եւ Թուրքիայի հետ իրագործել է Ռուսաստանը, Երեւան, 2018 թ.: Ռ. Համբարժումեան, Յաղագս արցախականի, Երեւան, 2018 թ.:

**Ռուսաստանի գնդակահարած կամ  
տանջասպանած արեւելահայ մեծերից  
ուրի լուսանկարները**



**Իսրայել Օրի  
(1659-1711)**



**Մինաս վարդապետ  
(1658-1740)**



**Խորեն Ա. Մուրադբեկեան  
կաթողիկոս Ամենայն Բայոց  
(1873-1938)**



**Եղիշէ Զարեան  
(1897-1937)**

**Մխիթար Սպարապետ (17-րդ դարի վերջ-1727 կամ 1730)**



**Խաչատուր Աբովեան  
(1809-1848)**



**Միքայէ Լալոբանդեան  
(1829-1866)**



**Ակսել Բախչեան  
(1899-1937)**



**Պարոյր Սեւակ  
(1924-1971)**

**ՅՕԴՈՒԱԾՆԵՐ,  
ՊԱՇՏՕՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ,  
ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ 1939 Թ.  
ՕԳՈՍՏՈՍԻ 23-ԻՆ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ ԿՆՔՈՒԱԾ  
ՌԻՔԵՆՏՐՈՊ-ՄՈՒՆՏՈՎ ՈԱԶՄԱԴԱԾԻՆՔՈՎ  
ՍԱՆՁԱԶԵՐԾԵԼ ԵՆ ԳԵՐՄԱՆԻԱՆ ՈՒ ՍՈՎԵՏ  
ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ ՍՏԱԼԻՆԻ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹԵԱՄԲ:  
ՍԱ ԻՐ ԴԻՎԿԱԼՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԿՈՏՈՐԱԾԻ ՄՂԵՑ 27 ՄԻԼԻՈՆԻՑ ԱՄԵԼԻ  
ՍԵՓԱԿԱՆ ԶԱՂԱՅՈՒ**

1939 թ. օգոստոսի 23-ին Մոսկուայում կնքուած Ռիբենտրոպ-Մոլոտով պայմանագրով Ստալինն ու Յիտլերը 1939 թ. սեպտեմբերի 1-ին սկսեցին Բ. աշխարհամարտը: Ամբողջովին կեղծիք է ռուսագիր պատմաբանների այն պնդումը, թէ Ռուսաստանի վրայ յարձակուելով՝ Գերմանիան է խախտել նրանց կնքած դաշնագիրը: Ծշմարտութիւնը սա՛ է. ամբողջ Եւրոպան զաւթել ձգտող սովետները գրաւեցին բազմապատիկ աւելի շատ հողեր, քան նշուած էր Ռիբենտրոպ-Մոլոտով ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒՄՈՎ: Ստալինը 1939 թ. սեպտեմբերից մինչեւ 1941 թ. յունիսի 21-ը զաւթեց աւելի քան 250 հազար քառ. կմ տարածք՝ մօտ 25 միլիոն բնակչութեամբ, 1940 թ. Արեւմտեան Ուկրաինա անուանակոչուած Արեւելեան Գերմանիայից եւ Բելառուսին կցուած որոշ տարածքներից աքսորեցին 356 000 մարդ, գրաւեալ միւս տարածքներից՝ եւս մօտ 50 հազար մարդ: Այս ամենը նկատի առնելով էր, որ ԵՐԿՐԱՆՈՐՀՐԴԱՐԱՆԸ 2009 թ. ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ը ՀՈՀԱԿԵՑ ՍՏԱԼԻՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԻՏԼԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՉՈՂԵՐԻ ՅԻՇԱ-

ՏԱԿԻ ՕՐ<sup>1</sup>: Ստալինը արեց այն, ինչ որ Ն. Խրուշչովի վկայութեամբ Ռիբենտրոպ-Մոլոտով դաշինքը ստորագրելուց անմիջապես յետոյ Կրեմլում ասել էր իր բարձրագոյն պաշտօնեաներին. «Հիտլերին խաբելու եմ, խաբելու եմ», ռուսերեն՝ օբմանու, օբմանու Գիտլերա<sup>2</sup>: Ստալինն ու Հիտլերը Լեհաստանը գրաւելուց յետոյ՝ 1939 թ. սեպտեմբերի 28-ին, կնքեցին «ԽՍՀՄ եւ Գերմանիայի խաղաղութեան եւ սահմանների մասին» պայմանագիրը, որին կցուած Լեհաստանի բաժանումի ՅԱՏՈՒԿ ԶԱՐՏԵՉԸ վաւերագրում էր իրենց հետագայ նուաճումների սահմանները: Դաշնակիցների սահմանագծից արեւմուտք ընկած տարածքները տնօրինում էր Գերմանիան, իսկ արեւելեան տարածքները՝ Սովետ Միութիւնը: Սակայն Ստալինը Գերմանիայի նուաճած տարածքները ՆՈՅՆԴԵՍ զարթելուն հետամուտ, սովետա-գերման սահման բերեց վիթխարաբանակ զինուժ՝ 160 դիվիզիա, իսկ Գերմանիային անցած տարածքներում, ներառեալ հենց Գերմանիայում, իր գաղտնի ծառայութիւններով սկսեց համապարփակ գործողութիւններ: ԲՆԱԿ-ՉՈՒԹԵԱՆԸ ԴԱՏԵՐԱԶՍ ԶՇՈՂ Ստալինը բուն ճակատամարտերում յատուկ զօրամիւտրներին ուղարկում էր «հայրենական պատերազմի» մասնակից զօրքի յետեւից, եւ նահանջողին ՏԵՂՈՒՏԵՂԸ ԳՆԴԱԿԱՅԱ-

<sup>1</sup> *Գերի Զիսինգեր*, «Դիւանագիտութիւն» աշխատութիւնը, Ուինսթըն Չերչիլի Բ. աշխարհամարտը, գիրք Ա, հատոր 1-2, նաեւ՝ *Das nationalsozialistische Deutschland und die Sowjetunion, 1939-1941. Akten aus dem Archiv es Deutschen Auswärtigen Amts; Department of State, 1948; Nazi-Sowiet Relations, 1939-1941, Documents from the Archives of The German Foreign Office, Departments of tState, 1948:*

<sup>2</sup> Տե՛ս Н. С. Хрущев, *Воспоминания*, М., 1997, стр. 195.

ՐՈՒՄ ԷԻՆ: Ոմանց կարծիքով միայն այդ կերպ գնդակահարողների բանակը միլիոնից անցնում է... Բացարձակ կեղծիք է ռուս պատմագիտութեան այն պնդումը, թէ իբր Բ. աշխարհամարտում Գերմանիային հիմնականում յաղթել է ռուս կայսրութիւնը: Իրողութիւնը սա՛ է. գերմանա-սովետ պատերազմում սովետ զինուորներով Գերմանիային յաղթեցին Մեծ Բրիտանիան ու ՅԱՏԿԱ-ԴԵՍ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐԸ: Բրիտանիայի դերը բացառիկ է դիւանագիտական ճակատում: Անգլիան եւ քաղաքակիրթ աշխարհը գերմանա-սովետ ռազմադաշնութեան աղետից միայն ՄԷԿ ԴԵՂՇՈՒՄ ԿԱՐՈՂ ԷՐ ՓՐԿՈՒԷԼ, եթէ յաջողուէր դրանց ԴՈՒՐՄ ԲԵՐԵԼ ԻՐԱՐ ԴԵՍ: Մեծ Բրիտանիան ԴԱ ԱՐԵՑ համաշխարհային դիւանագիտութեան ու ռազմաքաղաքական մտքի մեծագոյն դեմքերից ՈՒՒՆԱԹԸՆ ՉԵՐՉԻԼԻ ՇՆՈՐՀԻԻ... Մի բանի խօսք նաեւ սովետների բազմիցս շահարկած երկրորդ ճակատի մասին: Գերմանիայի դեմ երկրորդ ճակատ գրեթէ միշտ էլ եղել է, որը սովետ պատմաբաններին կամ արգելուել է նշել եւ կամ թռուցիկ յիշատակութեան դեպքերում ԻՍԿ երկրորդական նշանակութիւն է տրուել: ԱՄՆ-ն ու Մեծ Բրիտանիան, յանձինս Ֆրանկլին Ռուզվելտի եւ Ուինսթըն Չերչիլի՝ 1941 թ. օգոստոսի 14-ին հրապարակած **Ատլանտեան խարտիա** անուանումով յայտնի միասնական Յայտարարութեամբ ազդարարեցին իրենց վճռակամութիւնը անհրաժեշտ բանակի զենք-զինամթերքով ու պարէնով Խորհրդային Միութեանը օգնելու մասին: Խորհրդային Միութիւնը 1941 թ. սեպտեմբերի 24-ին միացաւ ԱՏԱՆՏԵԱՆ ԽԱՐՏԻԱՅԻՆ, որը 1941 թ. վերջերից մինչեւ 1942 թ. կեսերը ընդարձակուելով վերածուեց «ՅԱԿԱՅԻՏԼԵՐԵԱՆ

ԿՈՍԿԻՑԻԱՅԻ»: «Կոսպիցիայի» առաջնորդող ուժերն էին ԱՄՆ-ը, սովետներն ու Մեծ Բրիտանիան, որը 1942 թ. աշնանից Եգիպտոսում մեծ բանակ ունեցող Գերմանիայի դեմ մղում էր յաղթական պատերազմ: Կճռական էր նաեւ «Յիւսիսաֆրիկեան» կոչուող ռազմաճակատի կարեւորագոյն մարտերից մէկը՝ 1942 թ. հոկտեմբերի 23-ից մինչեւ նոյեմբերի 5-ը տեւած Էլ-Ալեմայնէի ճակատամարտը, որտեղ բրիտանական զորքերը ջախջախեցին գերմանա-իտալական զորքը: Այդ ճակատումից յետոյ Աֆրիկայում ընթացող պատերազմում, ինչպէս Ուինսթըն Չերչիլն է գրում, Անգլիան «Էլ-Ալեմայնէից յետոյ որքէն անգամ այլեւս չպարտուեց»: Ինչ վերաբերում է Ամերիկայի Միացեալ Նահանգներին, ապա նախագահ Ֆ. Ռուզվելտի ստորագրած եւ Կոնգրէսի՝ 1941 թ. մարտի 11-ին ընդունած Լենդ-Լիզ (Lend lease) ծրագրով սկսուեց օգնութեան առաքումը դաշնակիցներին: ԱՄՆ-ը, 1941 թ. մարտի վերջերից սկսած, Սովետ Միութեանը տուեց 11 միլիարդ դոլարի (այսօր՝ աւելի քան 140 միլիարդ) 17 ու կէս միլիոն տոննա զէնք, զինամթերք, պայթուցիկ, գերարդիական 427284 բեռնատար, 8218 զէնիթային եւ 5815 հակատանկային թնդանօթ, 2660 բեռնանաւ, 595 նաւ, 105 սուզանաւ, 9681 ռմբակոծիչ օդանաւ, 13 303 զրահամեքենա, 11 հազար 155 երկաթուղային վագոն, երեք միլիոն 820 906 տոննա զանազան մթերք՝ իւր, երշիկեղէն, շոկոլադ եւ այլն, եւ այլն<sup>3</sup>: Ռուս **պատմաժխտութիւնը** այդ օգնութիւնը ոչ էական էր համարում: Սակայն նրանց արդի պատ-

<sup>3</sup> Суворов В., Последняя Республика, Москва, 2005 г., стр. 107-110.

մաբաններից շատերը նշուած օժանդակութեան չափերը ճշտել են՝ հիմնուելով սովետական ռազմաքաղաքական ղեկավարների արտայայտած, բայց դրանք տասնամեակներ շարունակ գաղտնի պահուող տուեալների վրայ: Ստացուած օգնութիւնների մասին գրել-խօսելը խստիւ արգելուած էր: Հրամանը անտեսող չկար, քանի որ բոլորը գիտէին՝ չենթարկուողներին տանջասպանոյ է սպասում: Արդի ռուսագիր պատմաբանները հիմնուել են չը հրապարակելի մասնաւոր գրոյցներ արձանագրող ՀԱԻԱՍՏԻ աղբիւրների, ինչպէս նաեւ բացարձակ գաղտնի պահուող յատուկ տուեալների վրայ: Ստալինից յետոյ բանակի երեւի թէ գլխաւոր դէմքը՝ մարաշախտ Գ. Ժուկովը, ոչ պաշտօնական հանդիպումներում նշել է. «Ասում են, թէ դաշնակիցները մեզ չեն օգնել... Բայց չէ՞ որ անկարելի է ժխտել, որ ամերիկացիները մեզ այնքան ապրանք ուղարկեցին, առանց որի մենք չէինք կարող կազմակերպուել եւ շարունակել պատերազմը... Ստացանք 350 հազար ատոմեքենա, ոչ պայթուցիկ ունէինք, ոչ էլ վառօդ, որ լիցքաւորէինք հրացանները... Առանց «ստուղբէկներների» մեր հրետանին անհնար էր փոխադրել»: Պատերազմի տարիներին Սովետ Միութեան արտաքին առեւտրի նախարար Ան. Միկոյեանն էլ գրում էր. «...Մենք, որքան յիշում եմ, ստացել ենք 400 հազարի չափ այդ ժամանակուայ համար արդիական փոխադրականներ: Փաստօրէն «ակներ» ունեցաւ մեր ամբողջ բանակը, ինչի շնորհիւ նկատելիօրէն բարձրացան բանակի դիրաշարժութիւնն ու յարձակողականը»: Ստալինից յետոյ եկած Սովետ Միութեան բարձրագոյն պաշտօնեայ Ն. Խրուշչովն իր «Յիշողութիւններ» գրքում շեշտում է. «Մեր գրեթէ ամբողջ հրետանին ամե-

րիկեան ակների վրայ եր... Եթէ չլինէր ԱՄՆ-ը, մենք անկարող էինք յաղթանակել, քանի որ պատերազմի առաջին օրերին չափից անելի կորուստներ էինք տուել»։ Նոյն գրքում Խրուչչովը բերում է նաեւ իր հետ մասնաւոր հանդիպումներում Ստալինի ասածները. «Եթէ ԱՄՆ-ը մեզ չօգնէր, մենք այս պատերազմում Գերմանիայի դէմ առանձին-առանձին պատերազմելու դէպքում չէինք յաղթի... քանի որ պատերազմի առաջին օրերին մենք վիթխարի կորուստներ ունեցանք: Իսկ ԼԵՆԴ-ԼԻԶ-ի բացառիկ նշանակութեան մասին նա ինձ ասել է մի քանի անգամ»: ԼԵՆԴ-ԼԻԶ-ի առանցքային նշանակութիւնը Ստալինը շեշտել է նաեւ Թեհրանի՝ 1943 թ. Խորհրդա-ժողովի օրերին Ռուզվելտի ու Չերչիլի հետ ճաշին ազդարարելով. «Առանց ամերիկեան արդիւնաբերութեան, Միաւորեալ ազգերը այդ պատերազմում երբեք չպիտի կարենային յաղթել»<sup>4</sup>: ԲԱՑԱՐՁԱՎ ՍՈՒՏ Է անընդհատ թմբկահարող այն պնդումը նաեւ, թէ գերմանա-սովետ ճակատում Գերմանիան իբր թէ ուներ զինուժի եւ սպառազինութեան վիթխարի առաւելութիւն: Իրողութիւնը ԵԿՇՏ ՅԱԿԱՌԱԿՆ Է: 1941 թ. անելի քան 11 միլիոն ռազմիկ ունեցող Սովետ Միութիւնը զինուորների քանակով Գերմանիային գերազանցում էր անելի քան երեք անգամ, տանկերի թւով՝ 7, իսկ ռմբակոծիչ օդանաւերով՝ չորս անգամ (սովետների 10 հազար օդանաւի դիմաց գերմանացիներն ունէին 2500 օդանաւ) եւ այլն: Ռուս արդի պատմաբանները դիւանական փաստաթղթերով ապացուցել են, որ միայն պատերազմի առաջին վեց ամիսներին գերմանացիները գերեցին ու ոչնչաց-

<sup>4</sup> Хрущев Н. С., Воспоминания, т. 2., М., 1997 г.

րին ավելի քան ութուկէս միլիոն զինուոր եւ սպայ, որոնցից 56-ից 62 տոկոսը ճակատից փախածներն ու զենքերը գերմանացիներին տուած գերեվարուածներն էին: Պատերազմի մասնակից մարաջախտ Իվան Կոնեւը, մեջբերելով գերգաղտնի յատուկ նամակի տուեալները, գրում է, որ Սովետ Միութիւն-Գերմանիա ճակատներում սովետները տուել են առնուազն 27 մլն զոհ, 46 մլն 250 հազար վիրաւոր, որոնցից 775 հազարը՝ ջախջախուած գանգով, 155 հազարը՝ մէկ աչքը կորցրած, 54 հազարը՝ լրիւ կուրացած, 501 հազարը՝ այլանդակուած դէմքերով, 440046-ը՝ պատռուած պարանոցներով, 1 մլն 10 հազարը՝ առանց զոյգ ձեռքերի, միայն մէկ ձեռքը կորցրածները՝ 3 մլն 255 հազար, առանց զոյգ ոտքերի՝ 1 մլն 121 հազար, կիսախեղուած ոտքով ու ձեռքով՝ 418 905 հազար եւ այլն (տուեալները քաղել են մարաջախտի յատուկ յանձնարարականների գծով նախկին օգնական, գեներալ-գնդապետ Ստեպան Կաշուրկոյի՝ համացանցում 2020 թ. մարտի 20-ին գետնղած հրապարակումից): Այսպիսով, ՍՍԱԼԻՆ ԻՐ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ՊԱՅՊԱՆԵԼՈՒ ՅԱՄԱՐ 1941-1945 ԹԹ. ԻՐ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ԶԱՂԱԶԱՑԻՆԵՐԻՑ ԿՈՏՈՐԵՑ ԱԻԵԼԻ ԶԱՆ ԶՍԱՆԵՕԹ ՄԻԼԻՈՆԻՆ: Դիւապետը գրեթէ ՆՈՅՆԶԱՆ ԽՍՅՄ ԶԱՂԱԶԱՑԻ ԿՈՏՈՐԵՑ ՍՈՎԻՑ, ՅԱՄԱՃԱՐԱԿՆԵՐՈՎ, ԳՆԴԱԿԱՅԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, այսինքն՝ ո՛չ թէ պատերազմի դաշտում, այլ երկրի եւ բանակի ներսում... Եթէ պատերազմում սպանուած եւ զոհուած սովետական վերոյիշեալ առնուազն 27 միլիոնին գումարենք 1918-1956 թթ. կայսրութիւնում «ոչ իրենց բնական մահով» սպանուած 87 միլիոնին (Платонов О., Русский труд, М., 1991 г., стр. 253, 261), ապա ԲՈՒՇԵԻԿՆԵՐՆ

իրենց դիւապետութիւնը պահպանելու համար 1917 թ. դեկտեմբերից մինչեւ 1956 թ. Սովետ Միութեան Կոմկուսի 20-րդ համագումարում ուկրաինացի Ն. Խրուշչեւի գլխատրած՝ Ստալինի դիմակազերծումը, 38-39 ՏԱՐՈՒՄ ԿՈՏՈՐԵԼ ԵՆ ԱԻԵԼԻ ԶԱՆ 90 ՄԻԼԻՈՆ ՍԵՓԱԿԱՆ ԶԱՂԱԶԱՅՈՒ: Այն է՝ ՏԱՐԵԿԱՆ ԳՆԴԱԿԱՅԱՐԵԼ ԵՆ տուել ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴՈՒ: Գերմանացի գիտնական Եռիախիմ Յոֆմանը իր ու եւրոպացի այլ գիտնականների հաշտումների վրայ հիմնուած գրում է, որ սովետական բանակը Արեւելեան Եւրոպան եւ Գերմանիան գրաւելուց յետոյ բարձրագոյն հրամանատարութեան (մարաջախտ ժուկով, տասնեակ գնեթաւներ եւ բազմաթիւ սպաներ) հրահանգներով ու մասնակցութեամբ 1944 թ. ծմռանը եւ 1945 թ. գարնանը սովետական ճամբարներում ու նաեւ Լեհաստանի, Արեւմտեան Ուկրաինայի, Լիտվայի, Էստոնիայի, Լատվիայի, Բելառուսիայի, Յարաւալպիայի, Յունգարիայի, Բուլղարիայի գրաւեալ տարածքներում հաշուեյարդարներ են իրականացուել 660 000 բնակչի հանդէպ՝ տղամարդ, կին ու երեխայ: Ռուս զինուորները եւ սպաները Գերմանիայի բաղաբներից մեկում հինգ երեխաների սպանել էին՝ նրանց ԼԵՉՈՒՆԵՐԸ ՄԵԽԵԼՈՎ ՍԵՂԱՆԻՆ, իսկ 1945 թ. յունուարին ողջ-ողջ վառել էին 30-ի չափ մարդու, տանջասպանել առնուազն 1264-ին: 1945 թ. յունուարի 20-ին նրանք, տանկերի տակ լիճելով, կոտորել են նաեւ մի քանի հարիւր «գերմանացիներին ծախուած ռուս դաւաճանների»՝ **ԻՐԵՆՑ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՈՒ ՄԱՅՐԵՐԻ ԳԵՏ ՄԻԱՍԻՆ:** Նշածս հեղինակները շեշտում են, որ ռուս զինուորները զոհերին տանջամահ են արել՝ նրանց աչքերը փորելով, կանանց ու երեխաների լեզուները

կտրատելով, շատերին դռներին մեխելով եւ այլն, որոնք իրենց դաժանութեամբ բազմակի հրէշաւոր են եղել, քան մոնղոլ-թաթարների կատարած տանջասպանողները»<sup>5</sup>...

Բացարձակ սուտ է նաեւ անւիյի քան 70 տարի անընդհատ թմբկահարուող այն պնդումը, թէ 1941 թ. յունիսի 22-ին սկսուած գերմանա-սովետ պատերազմին Սովետ Միութիւնն իբր թէ պատրաստ չէր, թոյլ էր, եւ իբր թէ Գերմանիան ուներ զինուժի եւ սպառազինութեան վիթխարի առաւելութիւն: Իրողութիւնը ՃԻՇՏ ՅԱԿԱՌԱԿՆ Է: Ստալինը 1920-ական թթ. վերջերից մինչեւ 1940 թ. յունիս ամիսը պատրաստում էր «Յամաշխարհային յեղափոխութեան յարթանակի» անուան տակ նուածել Եւրոպան, ուստի 1930-ական թուականներից երկիրը վերածել էր զենք-զինամթերքի գործարանի եւ փաստօրէն կայսրութիւնը ղեկավարում էր պատերազմական օրէնքներով: Մի քանի տուեալ պատերազմին իբր թէ ոչ պատրաստ սովետական զօրքերի քանակը 1937 թ. ՄԵԿ ՄԻԼԻՈՆ 100 ՅԱՉԱՐԻՑ 1938 թ. վերջին հասաւ ՄՕՏ ՅԻՆԳ ՄԻԼԻՈՆԻ, իսկ 1941 թ. յունիսի 22-ին՝ հինգուկէս միլիոնի: Երբ սկսուեց գերմանա-սովետ պատերազմը, պատերազմի հենց ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՄԵԿ ՇԱԲԱԹՈՒՄ ՉՕՐԱԿՈՉՈՒԵՑ ԵՄ ՅԻՆԳ ՄԻԼԻՈՆ 300 ՅԱՉԱՐ ՄԱՐԴ ԵՆ ՉՕՐՔԵՐԻ ԹԻԸ (գաղտնի ու սովորական ուսիկանութիւնում ծառայող անւիյի քան մեկ միլիոնը հաւած) 1941 թ. ՅՈՒՆԻՍԻ ՎԵՐՋԻՆ ԱԻԵԼԻ ԶԱՆ 11

<sup>5</sup> *Иоахима Гофман, Сталинская война на уничтожение, М., АСТ, 2006 г., стр. 390-391, 394-395, 321-347.*

ՄԱՆ ԷՐ: Վերջին տասնամեակներին ռուսական բազմաթիւ պատմաբանների ճշգրտած տուեալներով սովետները 1941-1944 թթ. զինուորների քանակով, տանկերի, **ռազմօդանաւերի** թուով եւ այլն բազմիցս գերազանցում էին Գերմանիային: Այսուհանդերձ, սովետները 1941 թ. յունիսի 22-ից մինչեւ 1942 թ. մայիս ամիսը՝ մօտ ՏԱՍՆՄԵԿ ԱՄՍՈՒԲ ԿՐԵՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԴԱՄԱՇԽԱՐԴԱՅԻՆ ՊԱՏՍՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՄԵՆԱԳՆԱՐԿՈՒ ԵՒ ԱՂԵՏԱԼԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ: Պատմաբանները դիւանական փաստաթղթերով ապացուցել են, որ պատերազմի առաջին երկու շաբաթներին գերմանացիները ոչնչացրին սովետների վիրաւորներին, իսկ գերիները, երեք միլիոն ութ հարիւր հազար զինուոր եւ սպա (ամբողջ կորուստների 45 տոկոսը), որից երկու միլիոն 343 հազարը՝ բանակից փախածներ: Միայն Կիեւի շրջափակումի ընթացքում Ռուսաստանը տուեց 664 հազար գերի<sup>6</sup>: Ռուսական արդի պատմաբաններ Մ. Սալոնինը, Վ. Սուվորովը, Ա. Վլասովը եւ ուրիշներ դիւանական փաստաթղթերի յղումներով նշում են, որ Ստալինը պատժիչ յատուկ զօրամասերով կոտորում էր բոլոր նրանց, ուժեր ճակատամարտերում հակառակորդի բացարձակ առաւելութեան պատճառով նահանջում կամ զենքը գցում-փախչում էին: Աւելին, Մարկ Սալոնինի տուեալներով Ստալինը յատուկ ռազմօդանաւերով զնդակոծում, հողին էր հաւասարեցնում ՆԱՒԵ ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԻ ԳԵՐԵՎԱՐԱՃ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ

<sup>6</sup> Суворов В., Очужение, М., 1999 г., стр. 433; СБЭ, т. 5, стр. 343.

ՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԶՄԱԹԻՒ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՆԵՐ:

Դեռեւս ճշտուած չէ կայսրութեան այլ հայաշատ տարածքներից զինակոչուածների թիւը: Ըստ հրապարակուած տուեալների՝ **Բ. աշխարհամարտին հայերը տուել են 600 հազար ռազմիկ**: Դրանցից կէս միլիոնից աւելին զօրակոչուել ու կռուել են սովետա-գերման պատերազմին: **100 հազարի չափ** հայեր բացառիկ հերոսութիւն են դրսեւորել Եւրոպայի ճակատներում **ու դիմադրական մարտերում**, որտեղ կռուել են ոչ թէ պարտադրաբար, ինչպէս Սովետ Միութեան բանակներում, այլ իբրեւ ինքնակամ-յօժարակամ կամաւորներ: Որոշ կրճատումներով գետնում եմ այդ մասին Ահարոն Շիրտըմեանի՝ 2021 թ. սեպտեմբերի 21-ին համացանցում հրապարակած կարճառոտ յօդուածի առաւել վստահարժան **տեղեկոյթները**. «Հայ ազգային-ազատագրական փառքը խտացնող օրերէն անմոռանալի էջ մըն է 19 սեպտեմբեր 1918-ը: Այդ օրը Պաղեստինի Արարա լեռան մօտ տեղի ունեցաւ Առաջին աշխարհամարտի ամենավճռական ճակատամարտերէն մին: **Մարք Սայքսի (Բրիտանիա), Ժորժ Փիքոյի (Ֆրանսա) եւ Հայ Ազգային** Պատուիրակութեան նախագահ **Պօղոս Նուպար** փաշայի միջեւ 27 հոկտեմբեր 1916-ին Լոնտոնի մէջ կնքուած համաձայնագիրի մը հիման վրայ, կազմուեցաւ «Արեւելեան լեզոն»-ը: Ան ֆրանսական զօրքերուն հետ պիտի մասնակցէր սուրիական-պաղեստինեան ռազմաճակատին վրայ Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմական գործողութիւններուն: Այս ծառայութեան դիմաց Ֆրանսա պատերազմէն ետք ինքնավարութիւն կը խոստանար

Կիլիկիոյ հայերուն: «Արեւելեան լեզուն»-ին կորիզը դարձան Սուսալեռցիները: Անոր միացան Յեղասպանութենէն փրկուած բազմաթիւ հայորդիներ: Արեւելեան՝ հետագային՝ «ՅԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆ»-ին ռազմական անդրանիկ մկրտութիւնը տեղի ունեցաւ Պաղեստինի մէջ: Դաշնակիցները Արարայի բարձունքները կանուանեին «թուրքերու երկրորդ Տարտանելը»: Անգլիական զօրքերը երեք անգամ ապարդիւն փորձած էին գրաւել այդ դիրքերը: Ռազմավարական գետնի վրայ, առանց Արարան գրաւելու, դաշնակիցներու համար անհնար պիտի ըլլար իրենց հակակշիռին տակ վերցնել Լիբանանը, Սուրիան եւ Կիլիկիան: Այս ճակատամարտին առաջադրութեամբ տոգորուած վրէժխնդիր հայորդիներու, կամաւոր մահուան երդուեալներու փաղանգը ստեղծուած էր: Յարձակումի առաջին ազդանշանին, անոնք խոյացան խրամատներէն դուրս, խիզախ ու անվախ վճռական հարուած մը տալով մեր ռիսերիմ թշնամիին՝ ցեղասպան թուրքին: **19 սեպտեմբերի լուսաբացին շուրջ 600 հայ մարտիկներ** յարձակումի անցան ռազմաճակատի ամենադժուար հատուածը գնահատուող երկու մղոն տարածութեան ուղղութեամբ եւ հակառակ թրքական մարտկոցներուն սուկայի կրակին՝ քանի մը ժամուան ընթացքին գրաւեցին Արարայի բարձունքները: Հայ լեզունականներ **ունեցան 24 նահատակ եւ 76 վիրաւոր...**

Արարայի պարտութենէն ետք թուրք-գերմանական զօրքերը արագընթաց նահանջի դիմեցին: Զանի մը շաբաթ ետք բայգերական Գերմանիան **Ագամեմոն** ռազմանաւուն վրայ ստորագրեց պարտութեան համաձայնագիրը: Արարայի յաղթանակը արժանացաւ

Դաշնակիցներու, յատկապէս Ֆրանսայի եւ Բրիտանիոյ փայլուն գնահատականին: Ֆրանսական բանակի հրամանատարութենէն պատմական հնչեղութիւն ունեցող գնահատական տուին Հայկական լեզունի դերակատարութեան: Արարայի յաղթանակէն ետք հայ լեզունականները մուտք գործեցին Պեյրութ, ապա անցան Ալեքսանտրէթ, Կիլիկիա: Կիլիկիոյ մէջ պետականութիւն յայտարարելու երազը պիտի դառնար իրականութիւն: **Չօրավար Ալենպիի կողմէ գործուողուած գնդապետ Պրեմոն կը ներկայանար իբրեւ «Հայաստանի եւ Կիլիկիոյ կառավարիչ»:** Ան կը յայտարարէր, թէ ինք առժամեայ պիտի կառավարէր Կիլիկիան, ապա իշխանութիւնը պիտի փոխանցէր հայերուն: «Հայկական լեզուն»-ը հետզհետէ պիտի տարածուէր Կիլիկիոյ քաղաքները: Դաշնակիցները անկեղծ չէին իրենց խոստումներուն մէջ: Ֆրանսա սերտ զօրակցութիւն սկսաւ քեմալական թուրքիոյ հետ եւ 1920 թ. օգոստոս 19-ին լուծարեց «Հայկական լեզուն»-ը: 1921 թ. հոկտեմբեր 20-ին կնքուած համաձայնագրով Ֆրանսա թուրքիոյ յանձնեց Կիլիկիան: Այս ճգնաժամային պայմաններուն մէջ Կիլիկիոյ հայերը, **Ամբողջական Հայաստանի ներկայացուցիչ Միհրան Տամատեանի եւ Ատանայի հայոց Առաջնորդ Գեորգ վարդապետ Արսլանեանի գլխաւորութեամբ, 4 օգոստոս 1920-ին ընդունեցին Կիլիկիոյ անկախութեան հռչակագիրը:** Խորքին մէջ հռչակագիրը, հայ ժողովուրդին արդար իրաւունքները անտեսելու դեմ արեւմտեան պետութիւններուն քուլիսային գործարքները դատապարտող բողոքի արտայայտութիւն մըն էր պարզապէս: Այսպիսի դաժան ճակատագիր վիճակուած էր Հայ լեզունականներուն եւ հայ ժողովուր-

դին: Ինքնապաշտպանութեան մահ ու կենաց կռիւներ մղուեցան **Յաճընի, Ատանայի, Ուրֆայի, Այնթապի, Չէթունի, Չորք-Մարզպանի** եւ այլ բնակավայրերու մէջ՝ մասնակցութեամբ հայ լեզեռնական կամաւորներուն: Հայ ժողովուրդը, պետականութենէ զուրկ ըլլալով հանդերձ, գործուն մասնակցութիւն ունեցաւ Մեծ պատերազմին մէջ: Առաջին համաշխարհային պատերազմը ողբերգական հետեւանքներ ունեցաւ հայ ժողովուրդին համար: Անոր զաւակները, ռուսական, ֆրանսական եւ այլ դրօշներու տակ արիւն թափեցին պատերազմի գրեթէ բոլոր ճակատներուն վրայ»: Այսօր անգամ մը եւս կը փափաքիմ յիշեցնել Առաջին համաշխարհային պատերազմին զոհուած հայ կամաւորներու յիշատակին յուշարձանի մը անհրաժեշտութիւնը Հայաստանի մէջ: Յուշարձանները յիշողութեան վկայարաններ են: Առաջին համաշխարհային պատերազմին մասնակից գրեթէ բոլոր ժողովուրդները ունին յիշատակի այս համալիրը: Որքան փափաքելի պիտի ըլլար Արարայէն ափ մը հող տանիլ Արարատի փեշերուն տակ մեր անկախ հայրենիքը եւ կոթողով մը յաւերժացնել Արարայի հերոսներուն յիշատակը»: 1939 թուականի մարդահամարի տուեալներով Հայաստանն ուներ միլիոն 320 հազար բնակչութիւն, որից զորակոչուել է 324 հազարը (300 հազար հայազգիներ, 24 հազար Հայաստանի այլազգի քաղաքացիներ, իսկ 200 հազարը՝ ԽՍՀՄ միւս հանրապետութիւններից, մեծամասամբ՝ Այսրկովկասից): Ռուսեւզերման ճակատներում զոհուել են աւելի քան 250 հազարը (քազմաթիւ գրքերում եւ յօդուածներում զոհերի թիւը նշուած է 300 հազար): Դեռեւս ճշտուած չէ կայսրութեան այլ հայաշատ տարածքներից զինակոչուած հայերի

թիւը: 1945 թ. դեկտեմբերի 31-ի տուեալներով պատերազմին մասնակցել են 68 հայ զորավար (զեներալ), օդուժի մէկ մարշալ (Ա. Խանկերեանց) եւ մէկ ծովակալ (Յովհ. Իսակով): Պատերազմի մասնակից հայ սպաներից 93 հոգու պատերազմից յետոյ շնորհուել է գեներալի կոչում, 3. Բաղդամեանին՝ Խորհրդային Միութեան մարշալի (մարաջախտ) կոչում, Յովհաննես Իսակովին՝ Նաւատորմի ծովակալի կոչում, Համազասպ Բաբաջանեանը 1975 թ. ստացել է զրահատանկային զօրքերի գլխաւոր մարշալի, իսկ Սերգէյ Ազանովը՝ «իւժեներական զօրքերի մարշալի» կոչումը:

23 օգոստոսի 2019 թ.

**7 ԼՐԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Барятинский М., Танки ленд-лиза в бою. М., 2009 г.; 2. Вознесенский Н. А. Военная экономика СССР в период Отечественной войны, М., 1948 г.; 3. Кашеев Л. Б., Реминский В. А., Автомобили ленд-лиза. Харьков, 1998 г.; 4. Котельников В. Р., Авиационный ленд-лиз. М., 2015 г.; 5. Ленд-лиз и Россия. Сост. М. Н. Супрун. Архангельск, 2006 г.; 6. Хрущев Н. С., Воспоминания, т. 2., М., 1997 г.; 7. Иохима Гофман, Сталинская война на уничтожение, М., АСТ, 2006 г., стр. 390-391, 394-395, 321-347; 8. Генри Киссинджер, Дипломатия, М., 1997 г., стр. 301; Оглашению не подлежит, СССР-Германия, 1939-1941, составитель переводчик Юрий Фельштинский, М., 1991 г., стр. 4-11, итди գրքի Договор о ненападении между Германией и Советским Союзом, եւ Секретный дополнительный протокол к нему, стр. 69-71, 73-90, 138, 229-235, 240-278; 9. Суворов В., Последняя Республика, М., 2005 г., стр. 103-105. 10. Das nationalsozialistische Deutschland und die Sowjetunion, 1939-1941. Akten aus dem Archiv es Deutschen Auswartigen Amts, Department of State, 19489. 11. Nazi-Sowiet Relations, 1939-1941, Dokuments from the Archives of The German Foreign Office, Departmens of tState, 19489. 12. Уистон Черчилль, Вторая мировая война, Книга первая, т. 1-2, М., 1991 г., стр. 163-166.

**ԲԱԶՈՒԻ, ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ԵՒ ԱՂՐԲԷԶԱՆԻ  
ՍԻՒՍ ՎԱՅՐԵՐԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ  
ԱՂՐԲԷԶԱՆԻ ՂԵՎԱՎԱՐՈՒԹԵԱՆ  
ՉԻՆԱԿՑՈՒԹԵԱՍԲ ԻՐԱԳՈՐԾԵԼ Ե  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՍ 1988 Թ. ՓԵՏՐՈՒԱՐԻ 20-ԻՑ  
ՊԱՏԺԱՐՇԱՒ ՍԿԱԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ**

Հիմնախնդիրը ճշգրիտ ներկայացնելու համար մեր ժողովրդին ու միջազգային հանրությանը պետք է ներկայացուեն աւելի քան երեսուն տարի թաքցուող ու չը հրապարակուող մի քանի իրողութիւններ: Դրանցից առանցքայիններն են.

**Ա.** 1988 թ. փետրուարի 20-ին հայ ժողովրդի բռնկած արցախեան ազատամարտի սկզբից մինչեւ այսօր ՀԱՅԱՍՏԱՆԻ ու հայրութեան դէմ շարունակուող **ՊԱՏԵՐԱԶՍԸ ՍԿՍԵԼ ԵՒ ՎԱՐՈՒՄ Ե ՌՈՒՍԱՍՏԱՆԸ**՝ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՎ 1920 թ. օգոստոսի 24-ին կնքուած Լեւին-Աթաթուրք անիրաւազօր ռազմադաշինքը:

**Բ.** Ռուսաստանը **Արցախականի** դէմ պատերազմ սկսեց, քանի որ հայրութիւնը 1988 թ. Արցախը Մայր Հայրենիքի հետ վերամիատրելու ազատամարտով Ի ՉԻՔ ԴԱՐՁՐԵՑ 1923 թ. յուլիսի 7-ին ՀԱՅԱՍՏԱՆԻՑ 4388 քառ. կմ ՏԱՐԱԾԵԻ ԲՈՒԱԶՄԱՏՈՒՄԸ: Հետեաբար՝ այս պատերազմի մէջ գլխաւոր ու հիմնական սանձազերծն ու հակառակորդը ոչ թէ ԱՂՐԲԷԶԱՆՆ Ե, ԱՅԼ ԱՐՑԱԽԸ ԱՂՐԲԷԶԱՆԻՆ ԲՈՒԱԿՑԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ: **Արցախամարտի** ելած հայրութիւնը, ՋԱԽՉԱԽԻՉ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵԼՈՎ ՌՈՒՍԵԻԹՈՒՐԸ ՈԱԶՄԱԴԱՇԻՆՔԻՆ, ԿՐԿՆԱԿԻ-

ԵՌԱԿԻ ԱԲԵԼԻ ՄԵԾ ՏԱՐԱԾԸ ԵՏ ԲԵՐԵՑ, ԶԱՆ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻԹԻՑ ԲՈՒԱԳՐԱԲԵԼ ԷԻՆ 1923 թուին:

**Գ.** Երբ ռուսերօրք ռազմադաշինքը Բաքուում սկսեց հայերի կոտորածը, այդ ժամանակ համաշխարհային աջակցութիւն ստացող Հայաստանը բացառիկ հնարաւորութիւն ուներ հայերին կոտորածից փրկելու համար ԱՌԱՅՑ ԷԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏԻ զօրք մտցնելու Բաքու: Սակայն Ռուսաստանը իր ձեռնասուն Հայաստանի ղեկավարութեանը 1994 թ. պարտադրեց Բիշկէքի ռազմադադարը, որով **Ադրբեջանը, փոխանակ արձանագրեր իր ջախջախիչ պարտութիւնը, ստացաւ զինադադար: Դա Հայաստանի յաղթանակը պարտութիւն դարձնող հաւաստագիր էր:**

**Դ.** Ռուսաստանը ռուսերօրք ռազմադաշինքի խայտառակ պարտութիւնը չէզոքացնելու համար, իր լրատումիջոցներով ԱՆԸՆԴՅԱՏ յայտարարում է, թէ Ադրբեջանը իր բնակչութեան մէջ հայերի հանդէպ ատելութիւն է սերմանում ու տարածում: Հայաստանի դէմ պատերազմող երկիրը իր բնակչութեան մէջ ՀԱՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ պիտի քարոզէ...

Ռուսաստանի նպատակն էր հայերիս **հոգեբանութեան** մէջ ԱՌԿԱՅ ԲՆԱԶԴԱԿԱՆ հայրենապաշտութեան փոխարէն ատելութիւն սերմանել՝ փորձելով հայրութեան ազատամարտը շիջանել ատելութեան վրայ հիմնուած գործողութիւններով, որտեղ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՋԱԽՉԱԽԻՉ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԿՐԵՐ: Մեր ազատամարտերի բոլոր յաղթանակների ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՔՆ ՈՒ ԱՌԱՅՔԱՅԻՆԸ, Հայկ Նահապետից սկսած, եղել եւ մնում է ՍԵՐԸ ԱՌ ՀԱՅՐԵՆԻՍ, ոչ թէ ՄԵՐ ԴԵՍ ԿՈՒՈՐ ԹՇՆԱՍՈՒ ԴԵՍ ԱՏԵԼՈՒԹԻՒ-

ՆԸ: Մենք ատելությունը հարիւրամեակներ շարունակ ռազմավարություն դարձրած բռնակալութեանը **ատելաբարոզությունամբ, այն է՝** թշնամուն ատելու մարտավարութեամբ չէինք յաղթի: Խաւարը ինչնիվ են վերացնում ՄԻՄԻԱՅՆ լոյսով: Մենք յաղթել եւ յաղթելու ենք ՍԻՐՈՎ, այսինքն՝ ԽԱԲԱՐԻ ԴԵՍ ԼՈՅՍ ՉԱՅԱԲՈՐԵԼՈՎ: Ասուածի պերճախօս օրինակը **Արցախամարտն է:** Հայ ժողովրդի այդ տիեզերացունց ՀԱՄԱՅՆԱՄԱՐՏՈՎ ՍԿԶԲՆԱԲՈՐՈՒԵՑ ԿՈՍՈՎՆՆՍՍ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՓԼՈՒՀՈՒՄԸ:

Ե. Վերը նշածն պատճառներով ԲԱԶՈՒԻ, ՍՈՒՄ-ԳԱՅԻԹԻ ՈՒ ԱՂԲԵԶԱՆԻ ՀԱՅԱՇԱՏ ՄԻՄ ՎԱՅՐԵՐԻ ՀԱՅՈՑ ԿՈՏՈՐԱՇԵՆՐՆ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՒ ԱԶԵՐԻՆԵՐԻՆ ՉԻՆԱԿԻՑ ԻՐԱԳՈՐԾԵԼ Է ՈՌԻԱՍԱՍԱՆԸ, որի նախաձեռնութեամբ իր եւ թուրքիայի ղեկավարները 1921 թ. մարտի «ռուս-թուրքական եղբայրութեան» ռազմադաշինքով իրականացուած Հայաստանի ՀՈՂԱԿՈՂՈՊՈՒՏՆԵՐԸ 2013 թ. մարտի 16-ին ՏՈՆԱԿԱՆՕՐԵՆ ՎԵՐԱՏԻՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ...

2. 1991-1995 թթ. ու յետագայ տարիներին Ադրբեջանահայոց տեղահանություններն ու կոտորածները, նաեւ հայոց ազատագրեալ տարածքները ԱՂԲԵԶԱՆԻՆ ՎԵՐԱԲՈՒՆԱԿՑԵԼԸ համատարած **ՎԵՐԱԳՐԻՈՒՄ Է ՄԻՄԻԱՅՆ ԱՂԲԵԶԱՆԻՆ:** Այդ ստաբարոզութեան պարտադրիչը 1988 թ. փետրուարի 20-ից մինչեւ այսօր հայութեան ՀԱՄԱՅՆԱՄԱՐՏՈՒՄ ջախջախելուն լծուած եւ հայ ժողովրդի դէմ ԱԶԵՐԻՆԵՐԻՆ ՉԻՆԱԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄՈՂ Ռուսաստանն է: Այս խաբէութիւնը հա-

յութեանը ԴԱՐՁԵԱՂ ՈՒ ՎԵՐԱՏԻՆ նոր ԳՐԱՍԱՍՏՈՒԹԵԱՄԲ թակարդելու դաւադրութիւն է...

Է. Անընդհատ այն **ՍՈՒՏ ԶԱՐՈՉՈՒԹԻՒՆՆ ԵՆ շաղ** տալիս, թէ իբր Ռուսաստանը ոչ միայն ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱԼԱՆԱԾ ԻՐ ՉՕՐԶՈՎ Է մեզ թուրքերի եւ ազերիների յարձակումներից իբր պաշտպանում, այլեւ անընդհատ կանխում է հայ-ազերի նոր բախումները: Իրողութիւնը ճիշտ հակառակն է. կայսրութիւնը, Ադրբեջանին անընդհատ զինելով, մշտապէս ձգտում է՝ ՎԵՐԱԿԱՍԻ ԻՐ ՀՐԱՀՐԱԾ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ այդ զինաբախումը: Եւ եթէ Ադրբեջանին զինակից եւ նրան անընդհատ զինող Ռուսաստանը 1989-1994 թթ. Ադրբեջանին միլիարդատոյ դոլարների զէնք մատակարարելով չօգնէր, հայերս այդ թուրքին նաեւ Բաքուն գրաւելով, Ադրբեջանի Հանրապետութիւն կոչուածը մեջտեղից վերացրած պիտի լինէինք...

21 յունուարի 2020 թ.

ՄԱՍԻԿՈՆԵԻՑ-ՏԱՐՕՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՄՏ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻ ԼԻԱԶՕՐՈՒԹԵԱՄԲ՝

Ռաֆայել Համբարձումեան

**ՀԱՅՈՒԹԵԱՆՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ  
ՍՊԱՌՆԱՑՈՂ ԱՂԵՏԸ ԽԱՓԱՆԵԼՈՒ  
ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ ՀԱՅ ԸՆՏՐԱՆՈՒՆ ՊԱՐՏԱԴՐՈՒՄ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՉՈՅԳ ՎԵՅԱՓԱՌՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ ՍՈՒՐԲ  
ԷԶՄԻԱՃՆՈՒՄ ԳՈՒՄԱՐԵԼԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ  
ԳՈՅԱԴՐԵԼ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԴՐ  
ՎԵՐԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ**

Հայ ժողովրդի բացարձակ մեծամասնությունը, Հայաստանեայց եկեղեցին, հանրային-քաղաքական եւ գիտակրթամշակութային ԲՈԼՈՐ հիմնարկներն ու յայտնի դեմքերը պահանջեցին եւ պահանջում են 2020 թ. նոյեմբերի 10-ի ճՈՐՏԱԳԻՐԸ ստորագրած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը: Սակայն՝ այդ թուղթը ստորագրելուց ի վեր մինչեւ այսօր եղած բազմաթիւ հրապարակումները չարձանագրեցին ԱՅՆ ԱՆԺԽՏԵԼԻ ՈՒ ՄԵՐ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑԱՌԿԿ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐՈՂՈՒԹԻՒՆԸ, որ չնայած Թուրքիայի, Իսրայելի եւ Ռուսաստանի մատակարարած զենք-զինամթերքին եւ այլ ԲԱԶՄԱ-ՊԻՍԻ օժանդակություններին՝ ազերիթուրք ռազմադաշինքը 40-իՑ ԱԻԵԼԻ ՕՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԿԱՐՈՂԱՑԱՒ եւ չպիտի կարողանար յաղթել հայոց սխրագործ բանակին եւ Շուշիի գրաւումով զավթել Արցախը: Շուշին ու Արցախը 1921 թ. օրինակով ՀՀ վարչապետի ու տասից անելի ՌՈՒՄԱՃԱՐԱԿ կուսակցությանց դաւադիր օժանդակությամբ ՉԱԻԹԵՑ եւ որոշ տարածքներ իրեն պահելով՝ մնացածը թուրքերին յանձնեց **ԱՐՑԱՆԻ ԽՆԴԻՐԸ ԻՐ ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ**

**ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻՆ ՈՒ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆԸ ԼԾԱՑ ՌՈՒՄԱՍՏԱՆԸ:** Եւ դա արուեց առանց «արցախեան հակամարտության խնդրի խաղաղ լուծման գործընթացը» գլխաւորող ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՄԻՒՄ ԵՐԿՈՒ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ՝ ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի մասնակցութեան: ԱՄՆ-ի ու Եւրոպայի դերակատարությունը Կովկասում նուազագոյնի հասցնելու այդ քայլը պիտի յարուցեր եւ յարուցեց համանախագահների տարակուսանքը: «Արցախը միմիայն մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանի օգնութեամբ է հնարաւոր պահել հայերին»: Սա՛ն են անընդհատ քարոզում ՀՅԴ-ն եւ ՀՀ-ում ՄՈՍԿՈՒՄՅԻ ՀՐԱՀԱՆԳՈՎ ՀՀ նախկին երեք նախագահների տնօրինութեամբ «Հայրենիքի փրկութեան կոմիտե» սարքած միւս 16 կուսակցությունները: Հայ ռազմիկներին ճակատը լքելու քարոզչութեան եւ **ռազմադուլի** այլ որոգայթներով մեր գլխին եկած ԱՅՍ ԲԱՑԱՌԿԿ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ մեջ վերստին մեղադրում են ազերիների դաշնակից Թուրքիային եւ ԻԲՐ Ո՛Չ ԹԵ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ, ԱՅԼ ԹՈՒՐԶԻԱՅԻ կամակատար Նիկոլ Փաշինեանի վարչախմբին: Համազգային աղէտը յաղթահարելու, արցախահայութեան հայրենագրկումը կասեցնելու եւ հայոց պետականությունը զօրաւորելու համար մեզանում գործող քաղաքական, գիտակրթամշակութային հաստատություններն ու յայտնի դեմքերի **ՄԵՇ ՄԱՍԻ** կարծիքը **ՄԻԵԻՆՈ՛ՅՆՆ Է. ՀՀ Ազգային ժողովի, Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների** նախագահների, հանրութեան վստահութիւնը վայելող Հայաստանի եւ Սփիւռքի արհեստավարժ անձանց, ինչպէս նաեւ **ռազմայաղթանակ** ապահովող ծրագրեր ու առաջարկներ ներկայացրած **ԱՆԱՐԱՏ**

հիմնարկների ու անհատների ներգրաւումով ՀՐԱԻԻ-  
ՐԵԼԻ խորհրդատուական ընկերությունը ՊԵՏՔ ԷԿԱՉՄԻՀԱՅ ԺՈՂՈՎ-  
ՐԴԻՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ ՊԱՐՈՒՐԱԾ  
ԱՂԵՏԸ ԿԱՍԵՑՆՈՂ, ՀՀ ինքնիշխանութիւնը վերա-  
կանգնող եւ Արցախը Հայաստանին վերամիաւորող  
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ ԱՆԿՈՒՍԱԿՑԱ-  
ԿԱՆ ՄԱՐՄԻՆ: Սոյն համընդունելի առաջարկին ՅԱ-  
ԻԵԼՈՒՄ ԵՄ՝ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԶՈՅԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԵ-  
ՐԻՏՏՈՐԻՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՐԿ Է՝ ԱՆՑԿԱՑՈՒԻ ՍՈՒՐԲ  
ԷԶՄԻԱՃՆՈՒՄ:

Ռաֆայել Համբարձումեան  
16 փետրուարի 2020 թ.

**ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԿՈՂՈՊԵՆ Է ՈՒԿՐԱԻՆ  
ԺՈՂՈՎՐԴԻ՝ Թ-ԺԴ ԴԴ. ԱԻԵԼԻ ԶԱՆ 500  
ՏԱՐՈՒԱՅ ՊԱՏՈՒԹԻՒՆԸ**

Ռուսաստանին վերագրուող Թ-ԺԴ դարերի պատ-  
մութեան ԻՐԱԿԱՆ ՏԵՐԸ ՈՒԿՐԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐՆ  
Է: Արդի Ռուսաստանը մինչեւ 1720-ական թթ. վերջե-  
րը ԱՇԽԱՐՀԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԱՆՈՒԱՆՈՒՄ ԵՐ «ՄՈՍ-  
ԿՈՒԱՑԻՆԵՐԻ ԵՐԿԻՐ», իսկ մոնղոլարիւն-թրքարիւն  
բնակիչներին՝ մոսկուացի (մոսկովիտ): ՄՈՍԿՈՎԻՏ  
ԱՆՈՒԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՈՒՄԸ ՌՈՒՄ, ԻՍԿ ԵՐԿԻՐԸ ՌՈՒ-  
ՍԱՍՏԱՆ, իսկ ԼԵՉՈՒՆ՝ ՌՈՒՍԵՐԵՆ ԴԵՑ ՊԵՏՐՈՍ Ա  
կայսրը: Հայերս ուկրաինացիներին 9-րդ դարում անու-  
անում էինք ՌՈՒԶԻԿ: Սլաւոնական հնագոյն աղբիւրնե-  
րը հայերին յիշատակում են որպէս ԿԻԵՒԸ ԲԵՐԴԱՔԱ-  
ՂԱՔ ԴԱՐՁՐԱԾ ՇԻՆԱՐԱՐՆԵՐ: Դրանից առաջ 7-րդ դ.  
պատմիչ Մեթեոսի տուեալներով Բիւզանդիայի Սօրիկ  
կայսրը (582-602), որին Ստեփաննոս Տարօնացի Աստ-  
ղիկը աշտարակցի հայ է համարում, Մուշեղ Մամիկո-  
նեանի գլխաւորութեամբ զօրք է ուղարկել Թրակիա՝  
Դանուբեան սահմանները պաշտպանելու: Ստեփաննոս  
Տարօնացի Աստղիկի վկայութեամբ 991 թ. Բիւզան-  
դիայի հայազգի Վասիլ Բ կայսրը (976-1025) արշա-  
ւում է Հայաստանի Տայք աշխարհը, գրաւում է բազ-  
մաթիւ բերդեր ու ամրոցներ եւ մօտաւորապէս 992 թ.  
իր հաւատարիմ մարդկանց կարգում նրանց վրայ եւ  
Տայոց աշխարհի մնացած ազատանիներին տանում  
բնակեցնում է Յունաց աշխարհում... «Ապա մտածեց՝  
իր թագաւորութեան մէջ ապրող հայերին անցկացնի  
Մակեդոնիա՝ Բուլղարիայի դիմաց, որպէսզի շէնացնեն

այդ երկիրը»<sup>8</sup>: Բազմաթիւ ուսումնասիրողներ գրում են, որ Կիւեւեան Ռուսիայի տարածքներում 10-13-րդ դարերից կային հայկական գաղութներ: Նշուած տուեալների վրայ հիմնուելով՝ հայերի շփումները արեւելեան սլաւոնների հետ հաւանաբար կարելի է սկսել 7-րդ դարի վերջից: Այն է՝ ՄԻՆՉԵԻ 8-9 դարերում Կիւեւեան Ռուսիայում (ՌՈՒԹԵԼԻԱՅՈՒՄ) պետականութեան գոյառումը: Զրիստոնէութիւնը Վասիլ Բ հայկազուն կայսեր տնօրինութեամբ Կիւեւեան Ռուսիայ է մտցրել Կիւեի իշխան Վլադիմիր Սվիատոսլաւիչը (978-1015)՝ իր տիկին Աննայի ՄԻՋՈՅՈՐՎ, որը Վասիլ Բ-ի քոյրն էր: Բիւզանդական աղբիւրները վկայում են, որ Վասիլ Բ կայսեր յորդորներով Կիւեի մեծ իշխան Վլադիմիրը վեցհազարանոց զօրք է ուղարկել կայսեր դէմ աւատատերերի ապստամբութիւնը ճնշելու համար: Դրան ի գին, Կիւեի մեծ իշխանը կայսրից խնդրում է կայսեր քոջ ձեռքը: Վասիլ Բ-ն համաձայնում է՝ պայմանով, որ Վլադիմիրը մկրտուէր եւ քրիստոնէացներ ամբողջ Ռուսիան: Աննան Վլադիմիրի հետ ամուսնանում է Վլադիմիրի՝ խերսոնում մկրտուելուց յետոյ եւ սկսում է քրիստոնէացնել այդ ամուսնութեամբ միջազգային հեղինակութիւն ստացած Կիւեւեան Ռուսիան: Կիւեւեան Ռուսիան քրիստոնէացնելու մէջ Աննայի վճռական դերակատարութիւնը աներկբայ շեշտում են հենց սլաւոնական աղբիւրները, որոնք վկայում են նաեւ, որ ռուբէն եկեղեցին Աննային տուեց ԿՆՔԱՄԱՅՐ պատուանունը: Այսպիսով, ԿԻԵՒԵԱՆ ՌՈՒՄԻԱՆ ԶՐԻՍՏՈՆԵԱՅՐԵԼ ԵՆ ԶԱ-

ՅԵՐԸ: Այդ ասելով՝ նկատի ունեմ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՆՆԱՅԻ ՉՈՒՏ ԶԱՅՈՒԴԻ ԼԻՆԵԼԸ, ԱՅԼԵԻ ՅԱՏԿԱՊԵՍ ԱՅՆ ԱՆԺԽՏԵԼԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐ ԱՆՆԱՆ ՎԱԴԻՄԻՐԻ ԶԵՏ ԿԻԵՒ ՄՏԱԻ ԶԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻՑ, ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻՑ, ԲԺՇԿՆԵՐԻՑ, ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻՑ, ԳՐԻՉՆԵՐԻՑ, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻՑ, ՏՊԱԳՐԻՉՆԵՐԻՑ ՈՒ ԱՌԵՏՐԱԿԱՆՆԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՄԵԾ ՇՔԱԽՄԲՈՎ, ՈՐՈՆՔ ԵԼ ՄԿՐՏԵՑԻՆ ՌՈՒԹԵԼԻԱՆ ՈՒ ՉԱՐԳԱՅՐԻՆ ԵՐԿՐԻ ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՅԹԸ: Դա այդպէս է, որովհետեւ հենց հայերն էին, որ Կիւեւեան Ռուսիայում հիմնեցին դպրոցներ, կառուցեցին եկեղեցիներ, հիւանդանոցներ, ձեռագրատներ եւ մշակութային-տնտեսական այլ կենտրոններ: Այսպիսով, Ռուսաստանին վերագրուող Թ-Ժ դդ. պատմութեան ԻՐԱԿԱՆ ՏԵՐԸ ԱՅԴ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԿԵՐՏԱԾ ՈՒԿՐԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐՆ Ե, Ո՛Չ ԹԵ ԱՐԴԻ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԶԻՄԱԿԱՆՈՒՄ ՄՈՆԱՐԱՐԻՒՆ-ԹՈՒՐՔԱՐԻՒՆ ՌՈՒՄ ԿՈՉՈՒՐՆԵՐԻ ՆԱԽՆԻՆԵՐԸ: Ընդ որում, դրանց անելի քան 95 տոկոսը յատկապէս վերջին մօտ 200-ամեայ կայսերական բռնաձուլումների հետեւանքով խառնուել է նաեւ տասնեակ ճորտացուած այլ ժողովուրդների հետ: Այնպէս որ ռուսանուն զանգուածի նախնիները գոյացել ու բազմացել են այդ տարածքներում ԲԱՉՄԱԿԻՆ սելճուկ-թաթարների գրեթէ 250-ամեայ (1236-1480 թթ.) տիրապետութեան ընթացքում: Ասել է թէ՛ արդի ռուս կոչուածների նախնիները՝ որպէս ԲՈՆԱՉՈՒԼՈՒՄԻ ԽԱՌՆԱԾԻՆ ԶԵՏԵՒԱՆՔ, ձեւաւորուել են մօտաւորապէս ԺԲ-ԺԵ դարերի ընթացքում: Եզրակացութիւնը անժխտելի է՝ ռուս բռնապետութիւնը սեփականել-իւրացրել է ուկրաին ժողովրդի անելի քան 500

<sup>8</sup> Տե՛ս Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երեւան, 1939 թ., էջ 53-54: Ստեփանոս Տարօնացի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Երեւան, 2000 թ., էջ 240, 255:

տարուայ պատմութիւնը, որն ընդգրկում է առնուազն 9-րդ դարի կեսից մինչեւ 1462-1505 թուերին Իւան Գ-ի օրօք «Մոսկովիա» կոչուած կենտրոնացուած պետութեան ծեւաւորումը: Ռուսաստանը ուկրաին ազգի պատմութեան կողոպուտը կատարել է՝ շրջանցելով ու անտեսելով բազմաթիւ փաստեր: Օրինակ՝ 1187 թ. սլաւոնական հնագոյն տարեգրութեան այն վկայութիւնը, որ Արեւելեան սլաւոնների հողերի ամբողջութիւնը Ուկրաինա էր կոչուած առնուազն 1876 թուից... Եւս մէկ կարելոր յաւելում. արեւելեան սլաւոնների իրական հետնորդներն այսօրուայ ուկրաինացիներն են (մասամբ նաեւ՝ բելոռուսները) ՆԱՒԻ ԱՅՆՈՒ, քանզի նրանց արիւնը աւելի սլաւոնական է, քան այսօր ռուս յորջորջողների բացարձակ մեծամասնութեանը: Երկրորդ՝ ուկրաինացիները մոնղոլ-թաթարների տիրապետութեան տակ այդքան երկար չեն խառնակուել, որ ռուս կոչուող զանգուածների չափ թրքանային: Եւ երրորդ՝ ուկրաինացիները Ռուսաստանի նման բազմացել կայսրութիւն չեն ունեցել, որ դարեր շարունակ բռնածուլին նուաճուած տասնեակ ցեղերի:

ՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԵՍ ՀԱՅՈՒԹԵԱՆ 1921 Թ.  
ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ  
1920 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՍԿՍԵԼ ԵՒ  
ՇԱՐՈՒՆԱԿԵԼ Է ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵՅԸ՝  
ԱՒԵԼԻ ԶԱՆ ԵՕԹ ԱՄՍՈԿ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈԿ  
ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Գարեգին Նժդեհն իր դերով ու նշանակութեամբ հայոց պատմութիւնը *ոգեկարդող այն ՅԱՒԵՐԺԱԿԵԱՅ* մենաւորներից է, որը Արամ Նահապետի, սբ. Տրդատ Մեծի, սբ. Վարդան Մամիկոնեանի, Աշոտ Ողորմածի, Լեւոն Մեծագործի, Դաւիթ Բեկի ու նմաններին զուգապատիւ իր 1919-21 թթ. բազմաշաղթ ճակատամտերով հայրութեանը դարձրեց ՀԱՅՈՑ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ մօտ ԵՕԹ ամսով ՎԵՐԱԿԱՆԳՆԱԾ ՄԻԱՎ բանտեալ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԿՈՄՈՒՆԻՍՏ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ:

Նժդեհագիտական ռեւէ ամբողջական ծանրակշիռ աշխատութիւն սովորական կենսագրականի մէջ դժուար է պարփակել: Դժուար է, քանի որ «Գարեգին Նժդեհը երեք հանճար է զետեղում իր մէջ՝ հայոց ազգային գաղափարաբանութիւնը վերածնող-լրացնող *իմացաբան-իմաստագէտը*, ազգային-բաղաբական-պետական անզուգադիր գործիչն ու մեծ զօրավարը»<sup>9</sup>: Զանի դեռ նրա անբաղդատելի արարումներն ու պատմաատենախօսական վիթխարի ժառանգութիւնը հիմնաւոր հետազօտութիւններով արժեւորուած չեն,

<sup>9</sup> Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, «Նախիջեան» շաբաթաթերթ, 1999 թ., բաղոց ամիս, թիւ 3-4, էջ 9:

ընդունուած չափանիշներով նրա մասին գրուած ցանկացած **վարքագիրք** ընդամենը պիտի լրացնի եօթանասունից անէլի եղածների ցանկը: Այս ու մի քանի այլ նկատառումներից մեկնէլով՝ «Նժդէհագիտութիւն» եգրոյթը հարկ է լրացնել **«Նժդէհաբանութիւն» եպրոյթով, որով** զբաղուողը կը կոչուէր **Նժդէհաբան**: Նժդէհաբանութիւնը Նժդէհի ժառանգութեանն ու վարքագրութեանը վերաբերող տուեալների, փաստերի ու գիտելիքների հետազօտութիւնն իրականացնող գիտաշխատութիւնների ամբողջութիւնն է: Նժդէհապատում երկերի հիմնախնդիրներից մեկն այսօր այն անժխտելի իրողութեան ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐՈՎ արձանագրումն է, որ հայրց ազատամարտի 20-րդ դարի **ռազմագաղափարաբան** Գարեգին Նժդէհը բացառիկ դեր ունի նաեւ ազգային գաղափարաբանութեան ու ռազմարուեստի ՀԱՄԱՇՆԱՐՀԱՅԻՆ պատմութեան մէջ:

Հայաստանում Ռուսաստանի գլխաւորած հայասպանդի դէմ 1921 թ. ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍԱՍԲՈՒԹԻՒՆԸ 1920 թ. հոկտեմբերի 10-ին Գարեգին Նժդէհն է սկսել: Նա, ԵՕԹ ձիաւորներով **Խուստուփից իջնելով Ղափան**, Գիւտկում գիւղից իրեն միացած եւ 40 հոգու համալրումով, առանց որեւէ զոհ տալու վերագրաւում է Ղափանը՝ գերելով անէլի քան 650 ռուս զինուոր: «Հայաստանի կառավարութիւնը իմ Ղափանը վերագրաւելու օրը,- հոկտեմբերի 10-ին գրում է նա,- Չանգեզուրը անորոշ ժամանակով զիջում է կարմիր զօրքերին, մեծապէս ծանրացնելով իմ գործը: Իսկ ես նոյն օրերին կարմիր հրամանատարութեան ուղղում եմ իմ երկրորդ վերջնագիրը եւ երկարատեւ կռիւններով վերագրաւում բովանդակ Չանգեզուրը» (տե՛ս **Գա-**

**րեգին Նժդէհ**, Ազատ Սիւնիք, երկեր, հտ. 2, Երեւան, 2002 թ., էջ 171): Գարեգին Նժդէհն այդ ժամանակ բուշելիկեան ամբողջ կայսրութիւնում ապստամբութիւն գլխաւորած **ՄԻԱԿ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԷՐ**, որը 1920 թ. ոչ միայն ջախջախեց-հալածեց Հայաստանը բռնատիրած Ռուսաստանի կացնահար զօրքը, այլեւ, բնակչութեան **ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԵԻՆՈՒԵԼՈՎ ՀԱՅՈՑ ԻՆՔԻՇԻՆԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒՆ, ապստամբութիւնը ՎԵՐԱԾԵՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՅՆԱՄԱՐՏԻ**: 1920 թ. սեպտեմբերի 6-ից Նոյեմբերի 21-ը, գրաւելով Գորիսը ու երկրամասը մաքրելով ռուսերու զաւթիչներից, ըստ երկրեան ՇԱՐԵԻՑ ՀԱՆԵՑ «11-րդ Կարմիր բանակ» կոչուող ռուսերու զինուորը վոհմակը՝ ոչնչացնելով մօտ 12 հազար, գերեվարելով չորս հազարից անէլի թրքաբուշելիկ զինուոր ու սպայ՝ ջահաւորելով նաեւ ռուս բռնակալութեան դէմ Սովետ Հայաստանի՝ 1921 թ. Փետրուարեան ապստամբութեան յաղթանակը: 1921 թ. փետրուարի 9-10-ին Խորհրդային Հայաստանի Արտակարգ յանձնաժողովի համատարած ձերբակալութիւններն ու կացնահարում-սպանդները Գարեգին Նժդէհի սկսած ապստամբութիւնը բոցավառեցին ամբողջ Հայաստանով մէկ: Այդ օրերին միայն Երեւանում ձերբակալեց 100-ից անէլի յայտնի դէմքի (միւս վայրերում կատարուած կալանքների, աքսորների, ձերբակալումների ու սպանուածների թիւը արձանագրած որեւէ տուեալ չյաջողուեց գտնել): Ձերբակալուածներից 88-ին ուղարկեցին բանտ, որոնց մէջ՝ Համազասպը, Լեւոն Շանթը, Լիկոլ Աղբալեանը, Յովհաննէս Զաջազունին եւ բազմաթիւ ուրիշներ: Միայն փետրուարի 17-ի եւ 18-ի լոյս

գիշերը երեւանում գնդակահարուած եւ մի թուրքի ձեռքով կացնահարուածների քանակը 93 էր<sup>10</sup>: 1920 թ. դեկտեմբերի 17-ից մինչեւ 1921 թ. յունուարի 17-ը ձերբակալուեց 1400 սպայ եւ զօրավար (Թ. Նազարբեկեան, Յովհ. Հախվերդեան, Մ. Սիլիկեան, Գ. Շելկովնիկեան, Պօղոս-բէկ Փիրումեան եւ ուրիշներ), որոնց յունուարի 24-ին Բաքուի վրայով անլուր տանջանքներով աքսորեցին Ռեազան:

Հայանուն բոլշեւիկները Մոսկուայից իշխանութիւնը ստանալու առաջին իսկ 15 օրերին միայն երեւանում գնդակահարեցին, կացնահարեցին ու աքսորեցին մօտ հինգ հազար հայ ռազմաքաղաքական դէմքի ու զինուորականի: 1921 թ. փետրուարի 10-ին վճռելով անյապաղ կասեցնել հայասպանող, Գարեգին Նժդեհը Վայոց Ձորը գրաւելու մարտագրում հրահանգում է. «1. Երեւանի համար դէպի Սիւնիք բացել մի դուռ. 2. Թշնամուց վերցրած գերիներով ապահովել խորհրդային բանտերում եղած հայ մտաւորականների կեանքը. 3. Հոգեբանօրէն հրահրել եւ հնարաւոր դարձնել հակաբոլշեւիկեան պոռթկում Արարատեան Հայաստանում»: Դա բոլշեւիկեան դիապետութեան դէմ Հայաստանում ութ օր յետոյ յաղթանակած ազատամարտի մարտակոչն էր, որ Նժդեհը գրել էր անելի վաղ. «Դափանի անկումից դեռ շաբաթներ առաջ, գրում է նա, - երկրի սպառնական դրութիւնից խթանուած, ես մթութեան մէջ ծնունդ էի տուել մի ստորերկրեայ կազմակերպութեան, որ ծաւալուելով եւ հզօրանալով, ժամանակին պիտի ուժասպառէր թուրք եւ ռուս

հորդաներին... Պիտի ստեղծուէր Ինքնավար Սիւնիքը, Անկախ Լեռնահայաստանը, եւ վերջապէս հոգեբանօրէն պիտի կազմակերպէր ու հրահրէր երեւանեան ապստամբութիւնը»: Այսպիսով, ԳԱՐԵԳԻՆ ՆՇՂԵ-ՅԸ 1920 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԳԻՇԵՐԸ ՌՈՒՄԱՍՍԱՆԻ ԴԵՄ ԻՐ ՍԿՍԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԾԵՑ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԻՇԵԱՆԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏՈՒՄԻ՝ 1920 թ. դեկտեմբերի 25-ին կոթողելով Չանգեզուրի, իսկ 1921 թ. փետրուարի 18-ին՝ ԱՄԲՈՂՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Հայութիւնն այդ ապստամբութեամբ բոլշեւիկեան Ռուսաստանի բանտեալ ազգերից ՄԻԱՎԸ եղաւ, որը ջախջախելով-երկրից հալածելով Հայաստանը կալանած ռուս կացնահար զօրքը, 1920 թ. դեկտեմբերի 25-ից մինչեւ 1921 թ. յուլիսի 12-ը՝ Նժդեհի հեռանալը Սիւնիքից ու Հայաստանից, մօտ եօթ ԱՍՍՈՎ վերականգնեց ՀԱՅՈՑ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Կայսրութեան պարտութիւնն ու հայութեան յաղթանակը իրօք ՋԱԽՋԱԽԻՉ էր, որովհետեւ կայսրութեան պատմութեան մէջ առաջին ու ՄԻԱՎԸ դէպքն էր սա, երբ ոչ միայն չկարողացաւ ճնշի իր դէմ ոտքի ելած հանրոյթի ըմբոստութիւնը, այլեւ ստիպուած եղաւ բանակցութիւններ վարել եւ նոյնիսկ գործակցել պետականութիւնը վերականգնած ազգի ղեկավարների հետ...

Ռուսաստանի դէմ հայ ժողովրդի ազատամարտի համաշխարհային նշանակութիւնն էլ այն էր, որ ԿԱՍԵՅՐԵՑ ՌՈՒՄԱԿԱՆ «ԲՈՒՇԵԻՉՍ» ՀԱՄԱԿԱՐԱԿԻ ԱՌԱԲԵԼԱԳՈՅՆ ԾԱԲԱԼՈՒՄԸ ԱՐԵԻԼԵՐՈՒՄ, որը պիտի ընդգրկէր Իրանից մինչեւ Հնդկաստան: ՀԱՅՈՑ ՊԵ-

<sup>10</sup> Գ. Ստեփանյան, Համապատ, Երեւան, 2016 թ., էջ 757-758, 766-768, 774:

ՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱԳՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՅՆԱՍՄԱՐՏԸ  
ՁԱԽՈՂԵՑ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԵՒ ՊԱՆԹՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ  
ՏԱՐԱԾԶԱՅԻՆ ԿԱՊԻ այն ծրագրի ԱՍԲՈՂՋԱԿԱՆ  
ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ, որով բոլշեփկ աշխարհակալությունը  
կլանելու էր ԵՒՍ անեյի քան 5700 հազար քառ. կմ տա-  
րածք եւ մօտ 750 մլն բնակչություն<sup>11</sup>:

Ռաֆայել Համբարձումեան  
2021 թ. փետրուարի 12

1921 թ. ՄԱՐՏԻ 16-Ը՝ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ  
ՆԱԽԱՁԵՈՒՆԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ  
ՀՈՂԱԿՈՂՈՊՈՒՄԻ ՈՒ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՐԵՈՒՆԻ  
ԲԱՐՁՐԱԿԵՏ

Մեր հասարակական-քաղաքական ուժերը, առան-  
ձին անհատներ ու ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ բոլորս, 1921 թ-ից  
ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ ՌՈՒՄԱՍՏԱՆԻՑ ու միջազգային  
կազմակերպություններից պահանջում ենք՝ հայ ժո-  
ղովրդի պետական ԻՐԱՒՈՒՆՔԸ ԱՌԵՒԱՆԳԱԾ Մոս-  
կուայի մարտի 16-ի ԱՊՐՈՒՆԻ ռազմագործարքը  
ՉԵՂԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԻ: Սակայն գործարքի՝ մեր  
քարոզչության հարիւրամեայ սխալ ըմբռնումով մեկ-  
նաբանությունը ու ՅԱՏԿԱՊԵՍ պահանջի ՈՉ ԱՐ-  
ԴԻՒՆԱԻՏ ձեւակերպումը մեր հարիւրամեայ գոր-  
ծողությունները դարձրել են ապարդիւն: Հայ ժողով-  
րդին հողակողոպտող այդ թուղթը նախ եւ առաջ  
ապօրինի է այն պատճառով, որ Հայաստանը իջ  
ՄԱՍՆԱԿՑԵԼ եւ իջ էլ ՍՏՈՐԱԳՐԵԼ է այն: Երկրորդ,  
բայց ՀԻՄՆԱԿԱՆ պատճառն այն է, որ 1921 թ.  
մարտին այդ թուղթը ստորագրած ՌՍՖՍՀ եւ «Թուր-  
քիայի Ազգային մեծ ժողով» կոչուող ՄԻԶԱԶԳԱՅՆՕ-  
ՐԵՆ ՃԱՆԱԶՈՒԱԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԿԱՅԻՆ: Այ-  
սինքն՝ ռազմագործարքը ԱՆԻՐԱԲԱԶՕՐ ու ապօրինի  
էր: Մենք, մեր հարիւրամեայ քարոզչության մեջ Հա-  
յաստանի հողակողոպտող անուանելով ՊԱՅՄԱՆԱ-  
ԳԻՐ, ըստ էության ԱՅԴ ԱՆԻՐԱԲԱԶՕՐ ու ապօրինի  
**ոճրագործարքը** օժտել եւ օժտում ենք ԻՐԱԲԱԶՕՐՈՒ-  
ԹԵԱՄԲ... Վաղուց ի վեր ՀԱՐԿ էր՝ ձերբազատուէիք  
այս մոլորանքից: Հայությունն ու Հայաստանի Հանրա-

<sup>11</sup> Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, Կենսատարեգրություն,  
մտամասունքներ, Երեւան, 2019 թ., էջ 36, 39-42:

պետութիւնը պատկան երկրներից պիտի պահանջեն՝ 1921 թ. մարտի 16-ի գործարքը ՈՉ ԹԵ ՉԵՂԵԱ՛Լ ՃԱՆԱՉՈՒԻ, այլ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԻ ԱՆԻՐԱԿԱԶՈՐ ՈՒ ԱՊՕՐԻՆԻ: Հայոց պետութիւնն ու հայութիւնը իրենց **գիտամտաւոր** ու դիւանագիտական կարողութիւնները ՅԱՏԿԱՊԵՍ ՊԵՏԵ Է ԲԵԻԲՈՅՆ ՄՇԱԿԵԼՈՒ ԵՒ ԳՈՐԾԱԴԻԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ ՎՃՈՂ ԱՐԴԻԿԱԻՈՐ ՄԵԿՆԱԿԵՏ, ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ: Դրա նախապայմանը մարտի 16-ի դրոյապատճառներն ու շարժառիթները մատնանշելն ու գործարքի ԲՈՒՆԵՐՔԻՆԸ ԲԱՑԱՅԱՅՏԵԼՆ Է: Այսպէս, Եւրոպայի բազմաթիւ երկրներ, նաեւ ԱՄՆ-ը եւ ճապոնիան 1920 թ. օգոստոսի 10-ից մինչեւ 1921 թ. նոյեմբերի 22-ը, այն է՝ Սեւրի դաշնագրի հրապարակումից մինչեւ աշխարհի 14 երկրների հաստատած՝ Վուդրո Ուիլսոնի Իրաւարար վճիռ-քարտեզի հրապարակումը, ճանաչեցին Հայաստանի անկախ պետականութիւնն ու սահմանները: Ռուսաստանի եւ Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանութեան հետեւանքները վերացնելու համար նշած երկրները ԱՄՆ-ի վճռական դերակատարութեամբ Թուրքիային հարկադրեցին, որ իր այդ ժամանակուայ տիտղոսակիր ղեկավար սուլթանի լիազօրութեամբ ստորագրի Հայաստանի Հանրապետութեանը 40 ՀԱԶԱՐ ԶԱՐ. ՄՂՈՆ տարածք (103 հազ. քառ. կմ) յանձնելու պարտաւորութեան տակ՝ անյապաղ իրագործելու թելադրանքով: Մինչ այդ ԱՆԳԼԻԱՅԻ բացառիկ դերակատարութեամբ 1920 թ. մայիսին Հայաստանի տնօրինութեանն էին անցել նաեւ Նախիջեւանն ու Արցախի պատկառելի մասը: 1918 թ. մայիսի 30-ին մօտ 11 ՀԱԶԱՐ ԶԱՐ. կմ տարածքի վրայ հիմնուած եւ չորս

կողմից ռուսերութեւ զօրքերով օղակուած Հայաստանի Հանրապետութիւնը Եւրոպայի եւ ԱՄՆ-ի սատարումով 1919 թ. հոկտեմբերի վերջին արդէն զբաղեցնում էր 70 ՀԱԶԱՐ ԶԱՐ. ԿՄ-ի չափ տարածք, որը գումարուելով ուիլսոնեան տարածքներին, Հայաստանի տնօրինելի տարածքը հասնում էր անելի քան 170 հազ. քառ. կմ-ի: Հայաստանը բռնազավթած Ռուսաստանը 1920 թ. օգոստոսի 24-ին Թուրքիայի հետ հայերից գաղտնի կնքած ՈԱԶՄԱԴԱՇԻՆՆԵՐՎ ՍԿՍԵՑ ՈՒԽԼՍԸՆԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿԱՐԱՐ ՎՃԻՌ-ԶԱՐՏԵԸ ԱՆԻՐԱԳՈՐԾԵԼԻ ԴԱՐՁՆԵԼՈՒ վճռական գործողութիւնները, որի բարձրակետը 1921 թ. մարտի 16-ին Հայաստանը իրար մէջ բաժանելու ՀՀ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍՆԱՏՈՒՄՆ ԷՐ: Ռուսաստանը դաշնագրով իրեն կցած հատուածը ՍԱՐՔԵԼՈՒ ԷՐ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶ, իսկ Թուրքիան իր բաժին տարածքները Արեւմտահայքի օրինակով հայազրկելու էր: Հայակործան այս գործողութիւնների մէջ ինչն ու հրն էր Ռուսաստանին եւ Թուրքիային միաւորողը. ՄԷԿ բան: 1917 թ. հոկտեմբերին ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲԱՅԱՌԻԿ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ (2 միլիոն մարկ, այսօր՝ կես միլիարդ եւրոյ<sup>12</sup>) Ռուսաստանում իշխանութիւնը սուտ յեղափոխութեամբ զավթած Լենինը կայսրութիւնը դաւադրաբար դուրս բերեց «Աւտանտ» դաշինքից եւ միացրեց Գերմանիայի զիսաւորութեամբ գործող ռազմադաշինքին, որի մէջ էր նաեւ Թուրքիան: Եւրոպան ու ԱՄՆ-ը դատապարտեցին Ռուսաստանում բուլշեւիկ վոհմակի ՀԱՄԱՄՊԱՆԴՆ

<sup>12</sup> Deutsche Welle (DW): How Germany got the Russian Revolution off the ground. July 11, 2017.

ու այլոց տարածքների կողոպուտը: Ուկրաինայում եւ այլուր տարածքներ զաւթող եւ Սովետ կայսերութիւնը վերականգնելու աշխարհակալ նկրտումներով սնուող ԱՐԴԻ Ռուսաստանը մօտաւորապէս ԱՅՆ իրավիճակի մէջ է, ինչ որ 1917-1921 թուերին: Այսօր ՆՈՅՆՊԵՍ բազմաթիւ երկրների մշտական պատժամիջոցներին դիմադրող, ԶԱՂԱԶԿԻՐԹ ԱՇԽԱՐՀԻ ԹԶԱՄԱՆ Ռուսաստանի կողքը միայն ՄԷԿ պետութիւն կայ՝ ՆՈՅՆ ԹՈՒՐԹԻԱՆ: Այսպիսով, ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՂՆՉԱՅՆԵԼՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԹԻԱՅԻ՝ 1921 թ. ՄԱՐՏԻ 16-ի ԳՈՐԾԱՐԹԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՆԴԻՐԸ 1920 թ. ՍԵՒՐԻ ԴԱՇՆԱԳԻՐՆ ՈՒ ՎՈՒՐՈՈ ՈՒՒԼՍԸՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԲԱՐԱՐ ՎՃԻՌ-ԶԱՐՏԵՉԸ Ի ՉԻՔ ԴԱՐՁՆԵԼՆ ԷՐ:

Ահա՛ 1921 թ. մարտի 16-ի ռուսերու կողմէ «Բարեկամութեան ու եղբայրութեան» պայմանագիրը գոյաւորելու հիմնադրոյթն ու մեկնակետը, որը Ռուսաստանը եւ Թուրքիան դարձեալ Մոսկուայում ՊԱՇՏՕՆԱՊԵՍ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑԻՆ 2021 թ. մարտի 16-ին՝ ԵՐԿՈՒՍՏԵՔ ՊԵՐՃԱՇՈՒՔ ՃՈՒՍՏԻՄՈՒԹԱՍԲ ՆՇԵԼՈՎ ԳՈՐԾԱՐԹԻ ՀԱՐԻՐԱՍԵԱԿԸ:

ՄԱՍԻԿՈՆԵԻՑ-ՏԱՐՕՆԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՏ  
ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԱՏԵՆԱՎԱՐ՝  
Ռաֆայել Համբարձումեան  
16 մարտի, 2021 թ., Երեւան

**ՀԵԹԱՆՈՍՈՒԹԻՒՆԻՑ ՈՒ ԿՈԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԻՑ  
ԱՆՏԱՀԱՆՈՒԵԼՈՒ ՄԱՐԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՄԱՐՏԸ  
ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ ՁԵԲԱԻՐՈՒԵԼՈՒ  
ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅԿ ԱՅՅԱԴԵՏԻ ՁԵՆԱՍԲ  
ՍԿԶԲՆԱԻՐԵԼ Է ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԸ**

Ա. Այս անհերքելի իրողութիւնը ժխտող օրուայ ՀՀ ԽԱԲԱՐԱՄԻՏ իշխանութիւնը խրախուսում է հեթանոսութեան քարոզչութիւնը, որից հայ ժողովուրդը անելի քան ՉՈՐՍՈՒԿԵՍ ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ Է ազատագրուել՝ մեր նախահօր հետեւեալ մարտակոչով.

«Երբ մենք ելնենք Բելի ամբոխի դեմ, աշխատենք խփել այնտեղ, որտեղ կանգնած կը լինի Բելը քաջերի խումռն բազմութեան մէջ: Որպէսզի կամ մեռնենք, եւ մեր աղիւղ Բելի ծառայութեան տակ ընկնի, եւ կամ մեր մատների յաջողութիւնը նրա վրայ ցոյց տալով՝ ցրուի ամբոխը, եւ մենք յաղթենք (գրաբար բնագիրը՝ «Յելանելն մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ դիպել ջանասցուք տեղոյն, ուր անցեալ կայցէ ի մէջ խռան քաջացն Բել: Չի կամ մեռցուք, եւ աղիւ մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեցի ամբոխն, եւ մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»): Յիսուս Քրիստոսի յայտնութիւնից 2492 տարի առաջ՝ Նաւասարդի 1-ին, Հայկ Նահապետի արտասանած գօրակոչի ԱՅՍ ԽՕՍԵԵՐՆ ԵՆ ՀԱՅԵՐԻՍ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ: Սա հայի բնատրոյթեան, խառնուածքի, բարոյական նկարագրի ու կերտուածքի, մեր պատմական հոգեբանութեան բազմաձալ խտացումն է, համաշխարհային ռազմարուեստի պատմութեան ԳՐԱԻՐ ՀՆԱԳՈՅՆ յուշարձանը, որը Ալեքսանդրիայի

գրադարանից քաղած՝ ասորի պատմիչի աշխատութիւնից թարգմանելով՝ մեջբերել, սերունդներին է կտակել Պատմահայր սբ. Մովսէս Խորենացին: Գր կառավարութիւնը փոխանակ մեզանից չորսուկէս հազար տարի առաջ մեր նախահօր այս հակիրճ, հատու, բազմախորհուրդ, ռազմակրչը մտցնի դասագրքեր, որպէսզի ԱՄԷՆ ՅԱՅ ԱՇԱԿԵՐՏ ԵՒ ՌԻՍԱԼՈՂ ԲՆԱԳՐՈՎ ԱՆԳԻՐ ԱՆԻ, պետականօրէն նպաստում է «հեթանոսութիւնը վերականգնելու» քարոզչութեանը...

Բ. Հայ եւ օտար բազմաթիւ հին եւ նոր պատմիչներ ու հեղինակներ, վկայակոչելով Սբ. Գիրքն ու հնագոյն այլ աղբիւրներ, արծանագրում են, որ համատարած քրիստոնէից յետոյ ճշմարիտ աստծուն նուիրուած ԱՌԱՋԻՆ ԱՐԹԱՐԱՆԸ ԿԱՆԳԼԵՑՐԵԼ Է ՆՅՅ ՆԱՅԱԳԵՏԸ ԱՇԽԱՐՀԻ ոչ այլ ՎԱՅՐՈՒՄ, ԶԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐԱՏ ԼԵՐԱՆ ՍՏՈՐՈՏԻՆ: Դրանից յետոյ հայերը՝ որպէս Աղամից սկսուող մարդու տեսակի ՇԱՌԱԻՂՈՒՈՂ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱՐԴԷՆ ՆՅՅ ՆԱՅԱԳԵՏԻ ՁԵՌԱՄԲ իրենց դաւանութեամբ պահպանեցին ՄԱՐԴՈՒ ՏԵՍԱԿՆ ՈՒ ԵՇՄԱՐԻՏ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ...

Բազմաստուածութիւնը տարածուել սկսուեց աշտարակաշինութիւնից ծնուած բազմալեզուութիւնից յետոյ, որին հայերս չենք մասնակցել: Գճմարիտ Աստծուն դաւանող մեր նախահայրը Բաբելոնից վերադարձաւ հայրենիք եւ սատակելով հայութեանը բազմաստուածութիւն պարտադրող բռնակալին՝ ՍԿՁԲՆԱԴՈՐԵՑ ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ԴԷՍ ՄԱՐԿՈՒԹԵԱՆ **ՀՈԳԵՄԱՐՏԸ**: Միջնադարի մեծ իմաստասէր Վարդան Արեւելցին (1198-1271), վկայակոչելով օտար բազմալե-

զու աղբիւրները, գրում է. «Հայկ Նահապետը այդ երկրի 71 Նահապետների նման Բելի պատուէրը չկատարեց, այլ նրանց պատկերապաշտ կենդանի առաջնորդին շուն կոչելով՝ սատակեց»: ԺԱ դ. վրաց պատմիչ Լեւոնտի Մրովելին (Ռուխսեցի) «Զարթիս Տխովրեբա» ժողովածոյի մեջ նշում է. «...Հայոսը այդ եօթ հսկաներին ժողովեց եւ ասաց. օգնութեամբ արարչի, չլինենք ոչ ռքի ծառայ, եւ ոչ ռքի չծառայենք բացի արարիչ Աստծուց... Եւ հայոսը արծակեց նետը եւ զարկեց Նեբրովթի կրծքին, պղնձեայ տախտակն անցնելով, դուրս եկաւ նրա թիկունքից»: Հայկ Նահապետի ապստամբութիւնն ըստ Էութեան ՅՈԳԵՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՐ ԿԵՂԾ ԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ: Այդ կարծիքին են նաեւ Է դարի հայոց պատմիչ Սեբեոսը, մեծ պատմաբաններ Միքայէլ Չամչեանը (1738-1823), Դուկաս Ինճիճեանը (1758-1833), Մաղաթիա Օրմանեան պատրիարքը (1841-1918), Դեւոնդ Ալիշանը (1820-1901) եւ բազմաթիւ այլ հայ, նաեւ օտար պատմիչներ ու պատմաբաններ: Դեւոնդ Ալիշան, օրինակ, վկայում է. «Կրնանք ընդունիլ մեր պատմչաց երկիւղած ասանդութիւնը, որք Հայկայ գործոց մեջ դիւցազնական **ԶԱՍՈՒԹԵՆԷ ՎԵՐ** բան մալ կու դիտեն,- ԿՐՕՆԱԿԱՆ ԴԻՄԱՐՐՈՒԹԻՒՆ ՄԸ, ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ Ի ԲՈՆՈՒԹԵՆԷ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՂԱՇՏԻՆ, կամ անոր՝ որ աստուծոյ վայելած պատիւը եւ պաշտօնն՝ իր անձին կու սեփականներ»<sup>13</sup>:

Մեր գիտակրթական բազմաթիւ հիմնարկներ, կուսակցութիւններ, նրանց ազդեցութեամբ նաեւ հանրութիւնը, թիրիմացաբար նաւասարդի 1-ը շարունակում են համարել գործող տոմարով օգոստոսի 11-ը: Մինչդեռ նաւասարդի 1-ը ներկայ տոմարով համապատասխա-

<sup>13</sup> Դեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. Ա., Սբ. Դապար, 1869 թ., էջ 96 (ընդգծումները իմն են, Ռ. Գ.):

նում է օգոստոսի 23-ին: Պատճառը այն սխալմունքն է, որ նաևասարդի 1-ը իբր թե համընկնում է այսօրուայ տոմարով օգոստոսի 11-ին: Բայց նաևասարդի 1-ը օգոստոսի 11-ն է ո՛ր թե ԱՅՍՕՐ ԳՈՐԾԱԾՈՒՐՆ ՏՈՄԱՐՈ՛Վ, այլ ՅՈՒԼԵԱՆ ՏՈՄԱՐՈՎ, որին մարդկութիւնը հրաժեշտ է տուել մօտ 500 տարի առաջ: Զանի որ տոմարագետների ստոյգ հաշուարկներով յուլեան տոմարի գործածութեան սկզբից մինչեւ 1582 թ. հոկտեմբերի 4-ը կուտակուած տոմարական սխալը կազմում էր 10 օր, Հռոմի Գրիգորիոս Գ պապը 1582 թ. հոկտեմբերի 4-ի կոնդակով յաջորդ օրը ոչ թե դրեց հոկտեմբերի 5, այլ հոկտեմբերի 15: Այդպէն սկզբնաւորուեց այժմ գործածուող տոմարը, որը Հռոմի պապի անունով գիտութիւնը կոչում է «գրիգորեան»: Հայերս ընդամենը եՐԿՈՒ ՏԱՐԻ ՅԵՏՈՅ՝ 1584 թ., հայերէն թարգմանեցինք Գրիգորեան տոմարը բացատրող տոմարագիտական աշխատութիւնը: Հայերս այդպիսով աշխարհի ԱՅՆ ՄԻ ԶԱՆԻ ԱԶԳԵՐԻՑ ԷԻՆ, որ սկսեցին գործածել նոր տոմարը: Դեռնոյ Ալիշանը, 1860-ական թթ. սկսած, Յովհաննէս Սարկաւազ Իմաստասերի՝ յուլեան տոմարով կատարած հաշիւները արտայայտեց Գրիգորեան նոր տոմարով, ցոյց տուեց, որ Հայկ Նահապետն իր **հոգեմարտը** արարել է նոր տոմարով օգոստոսի 23-ին: Այսպիսով, մեր Նախահայրը ոչ միայն դիմակազերծեց ինքզինքը աստուած հռչակած բռնակալին, այլև նրա ենթակաների աչքի առաջ, ինչպէս Սեբեոսն է գրում. «սատակեց աստուածակարծեալ մտելն արձանը»: Ուստի անժխտելի իրողութիւնն է փաստ է, որ **ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԻՈՒՄ Է ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԱԶԱՍԱՄԱՐՏՈ՛Վ**, այն է՝ բազմաստուածութիւնը ձեւաւորուելու տարիներին կռակաշտութեան եւ բազմաստուածութեան դէմ մարդկութեան պայքարը Հայկ

Նահապետի ձեռամբ սկզբնաւորել է հայ ժողովուրդը: Ասել է թե՛ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱՆԴԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ԻՐ ԱԶԳՆ ՈՒ ԴԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀՈԳԵՄԱՐՏՆ Է: Սա միաժամանակ քաղաքակրթութեան արձանագրած ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՐՈՒՄՆ ԷՐ ՎԱՍՆ ԻՐԱՒ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ, ԽՂԵԻ ԱԶԱՍՈՒԹԵԱՆ, յառաջադիմութեան, ճշմարտութեան եւ բարու, որով մեր **ՍՐԲԱԳՈՐԾ** Նախահայրը Նախորդում է տիեզերական եկեղեցու աստուածաշնչեան սրբերին... Սա կը նշանակի՝ հայերս ոչ միայն սկզբից ի վեր եղել ենք միաստուած, այլև ՍԿԶԲՆԱԻՐՈՒՆԵԼ ԵՆՔ քաղաքակրթութեան ԱԶԱՍԱՄԱՐՏՆ ԻՏԵՔանսութեան, բազմաստուածութեան ու բարբարոսութեան, ԱՅՆ Է՛ ՅԵՏԱՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԴԵՄ: Հետեւաբար՝ այն իրողութիւնը, որ սբ. Գրիգոր Լուսաւորիչի ձեռամբ 301 թ. հարիւր հազարաւոր հայեր միասնաբար մկրտուեցին, եւ որ քրիստոնէութիւնը առաջինը ԱԶԳՈՎԻՆ հայերս ընդունեցինք, պատահական չէր, քանզի հայութեան համար «քրիստոնէութիւնը ոչ թե հագուատ էր», այլ «մարմնի գոյն» (սբ. Վարդան) եւ որ «սկզբից ի վեր հայութիւնն ու իր քրիստոնէութիւնը ձուլուած են ի մի բնութիւն. այս երկուսի ճակատագիրը նոյնացած է» (Գարեգին Նժդեհ): Նշուած է բազմաթիւ այլ փաստերն ու իրողութիւնները հիմք են տալիս եզրակացնելու, որ ՀԱՅԿ ԱԿՅԱՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ Ի ՎԵՐ ՀԱՅԵՐԻՍ ԴԱԿԱՆԱԶԵՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՆՈՅՆԱԿԱՆ ԵՆ, ԱՆԱՆՋԱՏԵԼԻ: ԵՆ...

Ռաֆայել Համբարձումեան:  
25 մարտի 2021 թ.

Համացանցում տես Rafael Hambardzumyan  
կայքէջում (facebook.com)  
25 մարտի 2021 թ.

**ՀԱՅՈՒԹԻՒՆԸ 1918 Թ. ՄԱՅԻՍԵԱՆ  
ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏ ԳՐԱՇԱՄԱՐՏԵՐՈՒՄ  
ՅԱՂԹԵԼ Է Ո՛Չ ԹԵ ԹՈՒՐԶԻԱՅԻՆ, ԱՅԼ  
ՌՈՒՄԵԹՈՒՐԸ ՌԱԶՄԱՂԱՇԻՆՔԻՆ**

Հայ ժողովուրդն իր Սարդարապատի, Ապարանի, Ղարաբաղի սայի ու Բաքուի՝ ՊԵՏԱԿԱՆԱԿԵՐՏ համայնամարտերը տալիս էր ոչ թե ՄԻԱՅՆ ԹՈՒՐԶԻԱՅԻ, այլ Բրեստ-Լիտովսկի՝ 1918 թ. մարտի 3-ի պայմանագրով Հայաստանի կործանումը վաւերագրած ՌՈՒՍԵԹՈՒՐԸ ՌԱԶՄԱՂԱՇԻՆՔԻ ԴԵՄ: Այսինքն՝ նշուած անկախամարտերում մենք յաղթել ենք ոչ թե ՄԻԱՅՆ ԹՈՒՐԶԻԱՅԻՆ, ԱՅԼ ՌՈՒՄԵԹՈՒՐԸ ՌԱԶՄԱՂԱՇԻՆՔԻՆ: 113 տարի թաքցուող այս, նաեւ մի քանի այլ ԱՆԺԻՍՏԵԼԻ իրողութիւնները բազմապատկում են 1918 թ. մեր համայնամարտի ընդգրկումների ծաւալը, դերն ու նշանակութիւնը... **Այդ սխրամարտերից եօթ ամիս առաջ** Գերմանիայի վճռական աջակցութեամբ եւ գումարներով Ռուսաստանում իշխանութիւնը զաւթած Լենինը Ռուսաստանը դուրս բերեց «Անտանտ» ռազմադաշինքից, միացրեց գերմանականին: Կովկասեան ճակատում թուրքերին միացած Ռուսաստանը Արեւմտահայքի՝ 1915 թ. հայաթափումը շարունակեց՝ իրագործելով իր կազմակերպած հարիւր հազարաւոր արեւմտահայերի նահանջը Արարատեան դաշտ: Շա-

*Բաքուի գոյամարտը միաւորում են մայիսեան մեր երեք անկախամարտերին, քանի որ Ռոստոմի (1867-1919) գլխաւորութեամբ Բաքուի՝ 1918 թ. ապրիլ-յուլիս ամիսների գոյամարտը՝ որպէս Հայաստանի պետականութիւնը վերականգնող գործօն, իր նշանակութեամբ անվերապահօրէն հաւասարազօր է Ղարաբաղի սայի, Ապարանի ու Սարդարապատի առիւծամարտերին:*

պին-Գարահիսարի, Ուրֆայի, Մուսա լեռան, Կարինի, Խարբերդի ու այլ վայրերի հերոսամարտերը ու յատկապէս Վանում 1915 թ. ապրիլի 7-ին ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐԵԱՆԻ, ապա ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ, իսկ 1917 թ. մարտ-ապրիլին ԿՈՍՏԻ շուշեցի ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ գլխաւորութեամբ հիմնադրուած հայոց պետութիւնների գոյութիւնը Ռուսաստանին մղեցին Արեւմտահայքի հայասպանողով Հայաստան անունը վերացնելու իր քայլերը **ԱՆՅԱՂԱՂԱՑՆԵԼ:** «Ռուս բանակի հրամանատարութիւնը, - վկայում են քաջատեղեակ աղբիւրները, - կտրուկ կերպով հրահանգեց գաղթեցնել Վասպուրականի հայութեանը: Ռուս հզօր բանակը հսկայական տարածութեան վրայ սկսաւ այրել իր զինուորական մթերքներու պահեստները (որպէսզի յանկարծ չանցնէր Վանը լքել չկամեցող հայերին, Ռ. Հ.) եւ նահանջել Մանազկերտ-Ախլաթ-Արճէշ Դատուան՝ Սորի-Գաւաշ-Վան գծերու վրայ: Միայն երեք օր ժամանակ կար Բերկրիի կիրճը անցնելու, այլապէս Վասպուրականի 200 հազարի հասնող հայութիւնը պիտի իյնար ծանր ծուղակի մէջ եւ նորէն երես երեսի գար իր թշնամիի դէմ: Արամն ու վանեցին ըրին բոլոր հնարաւորը՝ խուսափելու այդ դաւադիր ահաւոր հարուածէն, զոր կը հասցնէր ռուսական բանակի հրամանատարութիւնը... Վասպուրականի հերոսական ժողովուրդը ստիպուած եղաւ անողորմ նահատակի ճամբան բռնել: Զաշկրտուելով աւելի քան 200 վերստ տօթակէզ, անջրդի ճամբաներու վրայ, յոգնած, քաղցած, ծարաւ, լքուած Վասպուրականի ժողովուրդը տասնեակ հազարաւոր զոհեր տուաւ Բերկրիի արիւնտ կիրճին մէջ՝ քրտական յարձակումներուն, Իգդիրի, Էջմիածնի, Երեւանի մէջ՝ քաղցի եւ տարափո-

խիկ հիւանդութիւններուն... Եւ ոչ մէկ կասկած, որ այդ մեծագոյն դաւադրութիւնը յաջողապէս իրագործուեցաւ ռուս կառավարութեան ոճրագործ մէկ քաղաքականութեամբ: Քաղաքականութիւն մը, որ տակաւին Լօպանովի օրերէն իր շնական նշանաբանն ունէր՝ Հայաստանը առանց հայերու... Ատոր անհերքելի փաստն այն է, որ մինչդէռ Ջանիկի ճանապարհով ռուս զօրքը կը «նահանջեր», ընդամենը ԵՐԿՈՒ ՕՐ ԵՏԶ, նոյն բանակի մէկ ուրիշ թեւը կը մտներ Վան»<sup>14</sup>:

Գաղթին վճռական դեմ էին Վանի դիւցազնամարտի բոլոր մասնակիցները, բնակչութեան մեծ մասը, յատկապէս երիտասարդութիւնը: Երբ Ռուսաստանը Վասպուրականի ՀԱՅՈՑ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ 1915 թ. ՅՈՒԼԻՍԻ 18-ԻՆ վերացնելուց յետոյ ՆՈՅՆ ԹՈՒԻ ՅՈՒԼԻՍԻ ՎԵՐՋԻՆ թուրքերից նորից գրաւեց Վանը, 20-ից 30 հազար արեւմտահայեր, հիմնականում վանեցիներ, էտ եկան Վան: Բայց արեւմտահայութեան տունդարձը Ռուսաստանի համար ԱՆՀԱՆԴՈՒՐԺԵԼԻ ԵՐ, քանզի խափանուում էին Արեւմտահայաստանը ՌՈՒՍԱՍՏԱՆՑԻՆԵՐՈՎ (հիմնականում ապատախտի աքսորական կոչակներով) ԲՆԱԿԵՑՆԵԼՈՒ ԵՒ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾԵ ԴԱՐՁՆԵԼՈՒ նրա սեւեռուն քայլերը: ԱՐԵՒՍՏԱՀԱՅՈՑ 1915-1917 թթ. ՀԱՍԱՏԱՐԱԾ ՏՈՒՆԴԱՐՁԸ, որը հայութիւնը մեծ խանդավառութեամբ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՐ ԿՈՉՈՒՄ, ԽԱՓԱՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ Մոսկուան բազմաբնոյթ ծածուկ խոչընդոտ-

<sup>14</sup> Օնիկ Մխիթարեան, Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930 թ., էջ 200-221, 222-226: Оборона Вана, 7 апреля-4 мая 1915 г., Москва, 1917 г., стр. 24-26, 28-29. Ռ. Համբարձումեան, Հայրուս յարաբերութիւնների 1720-2015 թթ. նենգափոխուած պատմութեան սրբագրումներ, Երեւան, 2016 թ., էջ 32-35:

ներով շարունակեց խրախուսել ու սադրել հայերի նոր կոտորածներ՝ օգտագործելով հիմնականում քուրդ, չէրքեյ եւ զանազան այլ արիւնարբու աւազակախմբերին: Ռուսաստանի գերխնդիրը նոյնն էր, ինչ որ Արեւմտահայաստանը ազատագրելու խոստումներով յարուցուած 1915-1916 թթ. կեծ նահանջները, բայց նորահնար միջոցներով<sup>15</sup>: Արեւմտահայաստանի հայազրկումն ու Ռուսաստանի նահանգ դարձնելը, որը 1720-ական թթ. սկզբնաւորել էր ՌՈՒՍ ցեղանունը հնարած Պետրոս կայսրը (նա 1721 թ. ուկրաինացիների «Ռոսիա» երկրանունը իսկական տերերից առեւանգեց, տուեց Մոսկովիայի՝ հիմնականում ոչ սլաւոն թաթարաբնի-թրքաբնի մոսկովիտներին՝ դրանց անունը դնելով ռուս, իսկ յետագայում իրենց ուկրաինացի կոչող ռոսիներին էլ ստիպեց՝ կոչուեն «մայրոցու» (հայերէն՝ փոքրառուս): Ռուսաստանն իր խամաճիկ հայ երեւելիների քարոզչութեամբ Արեւմտահայաստանի ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ հայերիս եւ այլոց ներկայացնում էր որպէս «հայերին ԵՂԵՆԻՑ փրկող «ՀԱՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ»: Եւ այդ «հայասեր փրկիչների» գլխաւորը Լիկոլայ Բ-ի դուստրն էր, որին ՌՈՒՍԱՄԻՏԱԺԱՅՐ հայերը մեծարում էին «350 000 տաճկահայի՝ Ռուսաստան փոխադրելը կազմակերպած ու նրանց կոտորածից փրկած օրիորդ» խօսքերով: Ռուսաստանը 1918 թ. սկզբին արեւմտահայերին Արեւելահայաստան գաղթեցնելուց յետոյ նրանցից առնուապ 330 հազարին էլ գաղթեցրեց Ռուսաստան ԱՐԵՒԵԼԱՀԱՅԱՍՏԱՆԻ հետեւեալ վայրերից՝ Կարսի մարզից՝ 120 000, Ախալցխայի շրջանից՝ 30 000, Գիւմրիից՝

<sup>15</sup> Տես Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947 թ., էջ 244-246, 249, 264 265, 274, 277, 279, 288-289:

60 000, Էքսիաճնի եւ Սուրմալուի գաւառներից՝ 80-ական հազար, Ախալքալաքի շրջանից՝ 80 000, Երեւանի, Շարուրի ու Նախիջեւանի գաւառներից իրար հետ՝ մօտ 100 հազար, իսկ 20 հազար հայ Ռուսաստան գաղթեց Բաթումի շրջանից<sup>16</sup>: Հայոց պօրքը, 1918 թ. փետրուարի 13-ին ռուսերուրբ փինակցութեանը յանձնելով Երվնկան, փետրուարի 27-ին՝ Էրպրումը, ապա՝ Սարիղամիշն ու Ղարսը, իսկ մայիսի 15-ին՝ Գիւմրին (Ալեքպո), եռամսեայ նահանջից յետոյ հասաւ Դիլիջան: Հայ զօրքն ու քաղաքական ղեկավարութիւնը դիմադրելը անհնար ու անիմաստ էր համարում՝ գրեթէ միահամուռ հրաժարուելով դիմադրելուց: Յատուկ այդ նպատակով գումարուած հաւաքում զօրավար Թ. Նազարբեկեանն ու սպայակազմը յորդորում են նահանջել եւ քաղաքը թշնամուն յանձնել առանց կռուի: Հրամանը չկատարելու ելոյթ է ունենում արցախցի հայրենապաշտ կապիտան **ԳՈՒՐԳԵՆ ՏԵՐ ՄՈՎՍԻՍԵԱՆԸ**: Նրա հետ ամբողջովին համակարծիք Նժդէի **ԿՈՒՆԱՄՈՂ** ելոյթը ներկաներին պարուրում է ճակատելու աներեր վճռականութիւն: Բնակչութեան եւ զօրքի վրայ ՈՉ ՄԻ ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ հայ ռազմաքաղաքական ղեկավարութեանն ու ժողովրդին կռուելու ոգի ներշնչելուց յետոյ նրանց յաղթական ճակատումի է առաջնորդում **ոչ թէ բարձրաստիճան ՈՐԵԻ ԶՕՐԱՎԱՐ, հրամանատար կամ ԱՃԵԱՐԴԻԿ ՂԵԿԱՎԱՐ**, այլ ցածրաստիճան (պորուչիկ) **ԳԱՐԵԳԻՆ ՆՏՂԵՅԸ**: Աննախա-

<sup>16</sup> «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. V, Երեւան, 1981, էջ 576: Ռ. Համբարձումեան, Հայոց մեծ եղեռնի 1915-1918 թթ. փուլը ... Թուրքիայի հետ իրագործել է Ռուսաստանը, էջ 34-35: Նոյնի՝ «Հայ-ռուս յարաբերութիւնների 1720-2015 թթ. նենգափոխուած պատմութեան սրբագրումներ», Երեւան, 2016 թ., էջ 32-40:

ղէպ իրողութիւն... Գուրգէն Տեր Մովսիսեանի ու Գարեգին Նժդէի նշուած ելոյթներից յետոյ թուրք զօրքի դէմ դուրս գալն ու յաղթելը **իրագործելի համարելով**՝ բնակչութեան մեջ հաւատ ու վստահութիւն են ներշնչել Մետրոպ եպիսկոպոս Տեր Մովսիսեանն ու հորքն աւագ քահանան, քաջ ռազմիկ Սերգէ Թորոսեանը, Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին անդրանիկ գրքովը գրած Մուշեղ Ղազարեանը, ճակատամարտի խիզախ մարտիկներ Իսահակ Տերտերեանը, վաշտապետ Վախթանգ Տեր Յարութիւնեանը եւ ուրիշներ (պատմաբան Հ. Առաքելեանն իր «Չանգեզուրի ճակատագիրը» գրքովի 92-94-րդ էջերում յիշատակում է Գարեգին Նժդէին միացած հերոսաբար կռուողներից մօտ 60 մարտիկների ու հրամանատարների անուններ): Նրանց անվերապահ աջակցութեամբ 1918 թ. մայիսի 24-ի լոյս 25-ի գիշերը սկսելով ու մայիսի 24-ից 27-ը վարելով Ղարաքիլիսայի ճակատամարտը՝ Գարեգին Նժդէի դառնում է թուրք զօրքի դէմ Ղարաքիլիսայում հայոց զօրքի մայիսի 22-ի յաղթանակից յետոյ երկրորդ յաղթանակը պարգեւած հրամանատարը: Նա այդ յաղթանակով կատարում է մայիսի 23-ին Յ. Իրազեկի (Յակոբ Տեր Յակոբեան) միջոցով Ղարաքիլիսայ յղած Արամ Մանուկեանի հետեւեալ յորդորը. «Պատրաստուում ենք վճռական ճակատ տալու Սարդարապատի մօտ: Ի սեր Աստուծոյ, գոնէ երեք օր էլ պաշտպանեցէք Ղարաքիլիսայի ճակատը, որ թշնամին իր այդ կողմի ուժերը չբերի մեր վրայ»<sup>17</sup>:

Գարեգին Նժդէի, մայիսի 24-ից 27-ը Ղարաքիլիսասան պահելով անառիկ, լիովին կատարեց Արամի յորդոր-խնդրանքը:

<sup>17</sup> Ռ. Համբարձումեան, Ղարաքիլիսայի ճակատամարտը յաղթանակի վերածած ոգին, 2010 թ., էջ 15-26:

## ՅԱՂԱԳՍ «ՌՈՒՄԱՏԵԼՈՒԹԻՒՆ» ԸԱՐՈՉԱԾՈՒՐԱԿԻ

Ռուսաստանին ազգերի ազատությունն ու ինքնիշխանությունը վերացնող անուանողին կայսրությունը դարեր շարունակ յայտարարում է «ռուսատելություն» քարոզող «ՀԱԿԱՌՈՒՄ»: Այդ երկրից բացի աշխարհի ոչ մի պետության ղեկավարություն իր քարոզչությանը զուգում գող, խաբեբային՝ խաբեբայ, աւազակին՝ աւազակ ԱՆՈՒԱՆՈՒՐԻՆ «ՀԱԿԱԳՈՐ» ՈՒ «ՀԱԿԱԱԲԱԶԱԿ» չի համարում...

Կայսրությունը, իր բնակչության ինքզինքը «հայրենասեր ռուս» կոչող ճորտագրեալ, յետամնաց ու կիսաքաղց *մեծաբանակին* դարեր շարունակ սարքելով ատելավառ ցեղախտիկների ամբոխ, այլազգիների հանդեպ սրսկուող ատելությունը դարձրել է այդ գանգուածի հիմնական *հոգեկերակուրդ*:

Կայսրության ղեկավարության *քարոզաթակարոն* ընկած ճորտագրեալներն, այսօր իշխանություններին կապկելով, «ռուսատեացությունը» ազդարարում են «ԱՆՆ հակառուս պրոպագանդա»՝ խանդավառուելով 200-ամեայ այն ցնորամիտ քարոզչությանը, թե աշխարհակալ «ամենահզոր երկրի ապահով ու երջանիկ քաղաքացիներն են»: Նուազագոյն իսկ ազատախոհությունից *մշտապուրկ, կիսանօթի յետամնացության տիպար* այդ «երջանիկը» չհասկացաւ իրենից դարերով թաքցուող այն ճշմարտությունը, որ Ռուսաստանը դիւաճարակ բռնատիրություն է եւ ինքզինքը *երջանիկ ռուս կոչողն է*, քանի դեռ դեռ չի նետել *աշխարհակալի ճՈՐՏԱՅԻՆ ԱՆՈՒՐԸ*, որ նրա գրաստությունը իրենից

*քողարկելու* համար իր վիզն են օղակել կայսրությունը ՆԵՐՄԻՑ ՉԱԲԹԱԾՆԵՐԸ. քանի դեռ այդ խաժամուժը մրափում է իրեն «ազգերի տիրող եւ յառաջադիմութեան մունետիկ» յորջորջողների օրորոցայիններից, **միշտ մնալու է ՏԻԵՉԵՐԱՂԱԲ (սբ. Գրիգոր Նարեկացու բառն է) արհաւիրքը քաղաքակրթության գլխին:**

Կայսրությունը մշտապէս ճգնել է, որպէսզի իր հայրենասիրութեան քարոզչությունը, մանկապարտեզից սկսած պաշտօնատեղերով ու գիտակրթամշակութային հիմնարկներով վերջացրած, ընկալուի ոչ այնքան ժողովրդի ու երկրի համար ՉՈՂՊԱՆՈՒՄՆԱՍՏՈՒԹԻՒՆ, որքան ախոյեանի հանդեպ մոլազար ԱՏԵԼՈՒԹԻՒՆ եւ դրա չափաբանակի սեւեռուն յաւելում...

ՌՈՒՄԱՏԵԼՈՒԹԻՒՆ կոչուող այս ծուղակում են հազարաւոր հայեր, որոնց մէջ նաեւ հանրութեան յարգանքը վայելող *հայրենահոգ* այրեր: Այդ գործիչներից ոմանք «ՀԱԿԱՌՈՒՄ» կոչուելուց խուսափելու համար, այն է՝ ԱՐԴԱՐԱՆԱԼՈՒ միտումով, յայտարարում են, թե իրենց պարսաւանքն ու դատապարտումը ոչ թե ՌՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ԵՆ ուղղուած, այլ ռուս ՊԵՏՈՒԹԵԱՆԸ: *Նմանախոհերին* ի գիտութիւն. սովորական հայերի մէջ ՆՇՈՒԱԾ ՀԱՅԵՑԱԿԵՏՈՎ «ռուս ժողովուրդ» եւ «Ռուսաստան» զանազանում եւ տարբերակում ՉԻ ԵՂԵԼ ԵՎ ՉԿԱՅ, քանզի հասարակ ու պարզ հայը ռուս պետութեան յայտնի դեմքերից ոչ մէկի հետ առնչութիւն չունէր ու չէր կարող ունենալ...

Ինչպէս ամենուր, այնպէս էլ մեզանում, ամեն մի ազգի ու երկրի մասին քննադատութեան հասցեատեղը նախեառաջ ԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ Է, որի անունով կոչում է այդ երկիրը: Ուստի հանրությունն այս առու-

մով անելի ԶԱՆՁԱՆՈՒ Է, քան իշխանութիւնը, քանզի դա ժողովրդի ԶԱԲԱԶԱԿԱՆ ԶԱՄԱՐՈՒՄԻ վրայ անելի է ազդում, քան իշխանութիւնների: Այնպես որ Ռուսաստանի մասին թաքցուած ճշմարտութիւններ հրապարակող մեր հայրենակիցները, «ռուս ժողովրդի» եւ «Ռուսաստանի» միջեւ զանազանում դնելով, արդարանալու անհեթեթ ջանքեր չպիտի թափեն, ինչպես որ դա չեն արել **այդ երկիրը հայութեան ոխերիմ համարած** արեւելահայ մեր ԲՈԼՈՐ ՄԵՃԵՐԸ: Սովետ Միութիւնում բնակուող հայութեան ու յատկապէս հայաստանցի հայերի մտքներով իսկ չի անցել ռուս ժողովուրդը զանազանել ռուս պետութիւնից, քանի որ հասարակ ժողովուրդը շփումներ ու կապեր ուներ միայն ռուս կոչուող սովորական հանրութեան հետ: Այդ կապերն ու շփումներն են ռուսահայերի մէջ ձեւաւորել այն ԸՆԴՅԱՆՐԱԿԱՆ կարծիքը. ռուս տղամարդկանց մեծ մասը հարբեցող են, կանայք՝ բարոյազուրկ: Այս կարծիքի հանրայնացումին մեծապէս նպաստում էին ռուսական մամուլում ՅԱՅՍՕՐ անընդհատ տպագրուող հարիւրաւոր յօդուածները, որոնք, յատկապէս ԶԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆԸ վերաբերողները, ազդարարում էին երկրի տնտեսութեան քայքայումն ու երիտասարդ սերնդի ապաբարոյացումը բազմապատկող աղէտաբեր դրդապատճառներ...

Սոյն վկայութիւնները ճշտել կամեցողը դա թող անի 70-ն անց իր հարազատներից ու ծանօթներից...

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԺՈՂՈՎԱՐԿԱՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԵՐՈՎ յօշոտող ու արգիլող այդ **աշխարհաւէր** բռնակալութիւնն իր **դիւարարքները** (ժողովուրդների հոգեւախճիրները, տանջասպանդները, հողակողոպուտները եւ այլն) դատապար-

տողներին ու պախարակողներին՝ ՄԵՉՏԵՂԻՑ ՎԵՐԱՑՆԵԼԸ ԶԻՄԱԿՈՐԵԼՈՒ համար նրանց հակառուս պիտակելով, յայտարարում է ռուս ժողովրդի թշնամի: Ռուսաստանի մասին ճշմարտութիւնն ասող հայկազուններին «ռուսատեաց» ԱՍՈՂԻՆ հարց եմ տալիս. եթէ մի բռնապետութիւն, որը առնուազն 1880-ական թթ. սկսած՝ ՄՇՏԱԿԱՆ ոգեւախճիրներով վերացրել է հայոց դպրոցներն ու գիտամշակութային հիմնարկները, բազմիցս (յատկապէս 1903-1905 եւ 1921-1956 թուները) քարուքանդ արել ու կողոպտել է հայոց եկեղեցիներն ու դատարկել Վեհափառի դրամապահարանները, զաւթել եկեղեցիների խաչերն ու այլ սրբութիւններ. եթէ Տաճկահայքը նուաճելու նպատակով Թուրքիայի դէմ 1914 թ. պատերազմ սկսած այդ երկիրը հայութեանն իր ՅԱՆԹԱՆԱԿԻՆ ԼԾԵԼՈՒ համար 1915-1918 թթ. Արեւմտահայքում սադրել, ապա կազմակերպել ու երիտթուրքերի հետ **եղեռնապոհել** է հայ ժողովրդին. եթէ Թուրքիայի զինակցութեամբ զաւթելով ինքնիշխան Զայաստանը՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին ու 3-ին Երեւանում եւ Գիւմրիում ԶԳ-ին պարտադրեց մեր երկիրը բաժան-բաժան անող **կողոպտագրեր**. եթէ այդ բռնակալութիւնը 1921 թ. մարտի 16-ի **հողակողոպուտով** այդ օրերի Զայաստանի տարածքի անելի քան կեսը բաժանեց իր, Թուրքիայի, Ադրբեջանի ու Վրաստանի մէջ՝ Թուրքիային տալով նաեւ ԶԱՅՈՑ ՍՐԲԱԶԱՆ ԱՐԱՐԱ՛ՏԸ: Շարունակեմ. եթէ «բուլշեւիկեան» Ռուսաստանը 1920-1940-ական թթ. բանտարկեց, բռնադատեց ու աքսորեց անելի քան 60 հազար մարդու, որոնցից բիւրաւորներին գնդակահարեց, մի մասին էլ կացնահարեց. եթէ Ռուսաստանը, սկզբնաւորելով Զայոց եղեռնի վերջին

փուլը (1920 թ. դեկտեմբերի 3-ից մինչև հայերի՝ 1949 թ. պատժագաղթը Ալթայ եւ 1988 թ. *դիւազորճած* արհեստական երկրաշարժը), Հայկական ԽՍՀ-ից, Ադրբեջանին ու Վրաստանին բռնակցած հայոց տարածքներից ու Սեւ ծովի կայսրութեան առափնեայ հայաշատ վայրերից մէկ գիշերուայ մէջ սառցադաշտ Ալթայ աքսորեց ՏԱՄՆՅԻՆԳՈՒԿԷՍ ՀԱԶԱՐ հայի. եթէ Ռուսաստանը 1939 թ. սեպտեմբերի 1-ին եւ 17-ին, Գերմանիայի հետ Լեհաստանի վրայ յարձակուելով, սանձազերծեց **Բ** աշխարհամարտը եւ 1941-1945 թթ. ռուս-գերման ճակատներում ՏԱՆՉԱՍՊԱՆ Ստալինի ԴԻԿԱՊԵՏՈՒԹԻԻՆԸ պահպանելու մոլուցքով պատերազմ քշած կէս միլիոնից անէլի ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ հայերից ողջակիզեց առնուազն 250 հազարին (մեր պատմագիտութիւնը կայսրութեան մնացած տարածքներից բանակ քշուած հայերի ճՇԳՐԻՏ քանակը ցուցանող ռեւէ գիտաշխատութիւն չի հրապարակել), եթէ 1991 թ. ի վեր իրեն ճորտագրուած ՀՀ ղեկավարներին լծելով ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐԻ՝ ԻՐ անէլի քան 200-ամեայ ծրագրին, Հայաստանը դատարկում է հայերից՝ 10 ՄԻԼԻՈՆԻՑ անէլի ՍՓԻՒՔԱՀԱՅԵՐԻ փոխարէն ՀՀ-ում բնակեցնելով բազմաթիւ ընչազուրկ այլազգիների, հարց եմ տալիս՝ հայութեան զիսին այսքան աղէտ ու արհաւիրք բերած ԵՐԿՐԻ ԲՈՒՆ ԷՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԲԸ «ռուսատեացութիւն» է: Եթէ Հայաստանը Ռուսաստանի ճիրամներից ազատագրուելուն լծուած մեր ազգի իրաւ նուիրեալներին անուանում էք «հակառուս», այդ դէպքում ովքեր են Ասորեստանի բռնակալութեան դէմ սխրամարտած Հայկ եւ Արամ Նահապետներից մինչև Պարսկաստանի, Բիւզանդիայի, Արաբական խալիֆայութեան, սել-

ջուկների եւ ի վերջո ռուսեպուրք կայսրութեանց դէմ մեր ազատամարտերը գլխատրած սուրբ Վարդանն ու Վարդանանք, Լեւոն Ա Մեծագործը, Դաւիթ Բէկը, Գարեգին Նժդեհն ու Նրանց **ԲԱԶՄԱԲԻՐ** նմանները: Նրանց էլ «ազգադաւ հակաատորի», «ազգադաւ հակաարմբ», «ազգադաւ հակաթնուրք» ԱՆՈՒԱՆԵՆԶ...

**ՍԱ՛ Է ԶԵՐ ԶԱՐՈՉԸ:**

**ԶԵՐ ՆՍԱՆՆԵՐԻՆ** բացառիկ ճշգրիտ բնորոշող նորաբանութիւն ունի մեր լեզուն՝ **ՌՈՒՄԱՆՍ, ՌՈՒՄԱՆՏԻ ԲԱՅԻԼ, ՌՈՒՄԱՆՍԱԺԱՅՐ...**

Հայոց ազատ ու անկախ Պետականութիւնը վերականգնելու եւ մեր ժողովրդի լինելիութիւնը ապահովելու **ՍԷԿ ՃԱՆԱՊԱՐՀ ՈՒՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ. ՌՈՒՄԱՆՏԻՑ ԿԱՐԱԿԱԶԵՐԾՈՒԵԼ ԱԶԳՈՎԻՆ:**

Հայութեանը թուրքից ՎԵՐՍՏԻՆ «փրկել» տեսչացող իրենց ռուս կոչողներին ու հայանուն ռուսախտաժահիրին հազար անգամ էլ ասենք, քիչ է. **մուրացկանութեան, սովի, յետամնացութեան, տգիտութեան եւ ստրկութեան ճորտուղիներով հազար տարի քայլող «ՀՈԳՈՎ ԹԱԹԱՐԱՑԱԾ ՌՈՒԲԸ»** (Գարեգին Նժդեհի բնորոշումն է) փրկող է, թող ինքզինքը փրկի այն երկրից, որին աշխարհը հարիւր տարուց անէլի «ԲՈՒՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ» է կոչում:

**ՅԵՏԱԳՆԱՑ ԲՈՒՆՏԻՐՈՒԹԵԱՆ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԵԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒ ՅԱՌԱՋՆԹԱՑ ԲԱՑԱՌՈՂԻՄ Է:**

Մեր ժողովրդի մեծամասնութեանն արդէն պարուրող ԱՅՍ ՀԱՄՈՉՈՒԲՆ Է հայոց ինքնիշխանութեան եւ մեր ՆՈՐ ՈՍԿԵՂԱՐԻ ՎԵՐԱՇՆՈՒՆԴԻ ԵՐԱՇԽԵԼ ՈՒ ԳՐԱԲԱԿԱՆԸ...

**ՀԱՅՐԻԿԵԱՆԸ ՎԱՐԿԱԲԵԿՈՒՄ ԵՒ  
ԱՊԱԿԱՆՈՒՄ Է ԱՉԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ԵՐԵՒՈՅԹԸ,  
ԱՐԺԵԶՐԿՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԱՏՄԱԿԵՐՑ ԱՅՐԵՐԻ  
ՄԵՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ**

1918 թ. մայիսի 28-ին հայոց պետականությանը վերականգնելու տարելիցին ունեցած հեռուստատելոյթում Պ. Հայրիկեանը Գարեգին Նժդեհի, Արամի եւ այլ սրբանունների կողքը դրեց իր հիմնած Ազգային ինքնորոշում միաւորումի (ԱԻՄ) անդամ Մովսէս Գորգիսեանին: Այդ ԱՆՆԵՐԵԼԻ ՊՐԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՄԲ նա ոչ միայն ԱՊԱԿԱՆԵՑ ազգասիրության եւ ազգային գործիչ երեսյթները, այլեւ մեր բազում սերունդների հայրենակերտ սրբութիւնների յիշատակն ու ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ: Ինչ գործեր է կատարել այդ անձը, որ Հայրիկեանը անելի քան 30 տարի բազմաթիւ գործիչների արժանայիշատակ արածները կողոպտում, խցկում է նրա կենսագրութեան մէջ: Իբրեւ Գորգիսեանին ՎԵՐԱԳՐՈՒՈՂ գործերի մեծ մասի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ, ՊԱՏՄԱԽԱՆԱՏՈՒ ԵՒ ԶԱԶԱՏԵՂԵԱԿ ՎԿԱՅ, հրապարակում եմ հիմնական կեղծիքները:

Արցախը Հայաստանին միաւորելու մասին «ԼՂԻՄ մարզխորհրդի»՝ 1988 թ. փետրուարի 20-ի պատմակերտ որոշումին ի պատասխան, կայսրութիւնը բազմապատկեց համազգային դարձած արցախամարտը կասեցնող գործողութիւնները: Մարտի 24-ին Սովետ Հայաստանի «Գերագոյն խորհուրդը» յատուկ հրամանագրով ապօրինի յայտարարեց «Ղարաբաղ կոմիտե»-ի գործունեութիւնը, ձերբակալեց անդամների մեծ մասին, իսկ 1988 թ. մարտի 24-ի զիշերը՝ նաեւ Պ. Հայրիկեանին

ու ԱԻՄ միւս բացայայտ անդամներին (Մեխակ Գաբրիէլեան, Գեորգ Միրզոյեան, Արա Ստեփանեան, Մովսէս Գորգիսեան): Այդ օրուանից ստանձնելով ԱԻՄ ղեկավարութիւնը՝ ձերբակալումների յաջորդ օրն իսկ կալանուածների, նաեւ դրսում մնացած ԱԻՄ մէկ-երկու անդամների կանանց ու իմ համակիրների հետ Հայաստանի կառավարութեան դիմաց անցկացրի բողոքի ցոյց: Ինչպէս մօտ 100-հոգիանոց այդ ցոյցը, այնպէս էլ առաւելապէս «Անկախութիւն» թերթի շարունակուող լոյս տեսնելը կասեցնում էր հանրութեան մի ստուար հատուածի կորովաթափութիւնը: Մարտի 24-ի կալանքներից եւ Պ. Հայրիկեանին երկրից արտաքսելուց յետոյ ԱԻՄ-ը փաստօրէն գոյութիւն չունէր: Կար միայն «Անկախութիւն» շաբաթաթերթը, որը մօտ երկու ամիս տպում, տարածում էի նախ՝ ՄԵՆ-ՄԵՆԱԿ, այնուհետեւ՝ գլխաւորածս գործադիր նրր խորհրդի աջակցութեամբ: Խորհրդի անդամներն էին լրագրող Սամուէլ Սեդրակեանը, համալսարանի դասախօս Գարեգին Մխիթարեանը, բժիշկ Արցախ Բունիաթեանը, բանասէր Արսէն Պօղոսեանը, մշակութաբան Լեւոն Ղուկասեանը, քաղաքագետ Ալեքսանդր Մանուչարեանն ու ԱԻՄ-ի առաջին գործադիր խորհրդի անդամներից նրր խորհրդի կազմ ընդգրկուած ՄԻԱԿ անդամը՝ Մեխակ Գաբրիէլեանը: Նկատի առնելով, որ ամբողջ ԱԻՄ-ը Յայտարարութեամբ մղեցի ընդհատակ: Դրա շնորհիւ ու ՅԱՏԿԱՊԵՍ «Անկախութիւն» թերթի հրապարակումով կանխեցի կազմակերպութեան փլուզումը: Ոչ միայն դա. «Անկախութիւն» թերթը 1988 թ. մարտի 25-ից յետոյ մէկ տարում միաւորումին ապահովեց աննախադէպ հեղինակութիւն եւ համալրում: 1988 թ. մարտի վերջից ստանձ-

*Ս. Հայրիկեանի կապուածները*

նելով ԱԻՄ ղեկավարութիւնը՝ խմբի չորս-հինգ-հոգիա-  
նոց գործուն անդամների քանակը 6-7 ամսում հասցրի  
մօտ երեսունի, համակիրների ու հետետորդների թիւը՝  
երեքուկէս-չորս հազարի (արցախեան համայնամարտի  
շնորհիւ այդ թուերի բոլոր կազմակերպութիւններն էին  
շատ արագ բազմանդամ դառնում): Երբ Մոսկուան  
1988 թ. մարտի վերջերին ձերբակալեց արցախեան  
ազատամարտի գրեթէ բոլոր գործիչներին եւ արցախա-  
մարտը կասեցնելու վրայ էր արդէն, ԱԻՄ ոչ բացայայտ  
ու համակիր անդամների, հանրային-գիտամշակու-  
թային ու ազգային բազմաթիւ գործիչների օժանդակու-  
թեամբ ապրիլ 24-ին ԱԻՄ-ի անունից կազմակերպեցի  
Մեծ եղեռնի տարելիցը Նշող մօտ երեք հարիւր հազա-  
րանոց ցոյցը: Այդ ցոյցով շարժումը դարձեալ մօտեցաւ  
բարձրակէտին՝ որոշիչ դեր ունենալով 1988 թ. ապրիլ-  
մայիսին արցախականը յարուստիւ տալու մէջ: Իբրեւ  
ԱԻՄ-ի ղեկավար՝ 1988 թ. մայիսի 28-ին օպերայի հրա-  
պարակում բազմաթիւ եռագոյններով Նշեցի Հայաստա-  
նի Հանրապետութեան 60-ամեակը, որը 1920 թ. ի վեր  
առաջինն էր Հայաստանում: Տօնակատարութիւնը Նա-  
խապատրաստելու համար գրեցի մի քանի թռուցիկներ  
ու Նամակներ, ձեռնարկեցի դրանցից մէկի ստորագրա-  
հաւաքը: Մայիսի 22-ի դրութեամբ Նամակը ստորագ-  
րած մօտ 1500 անձանց մէջ էին բազմաթիւ յայտնի ղեմ-  
քեր, օրինակ՝ Նկարիչ Սէյրան Խաթաւամաճեանը, դերա-  
սան Վոլոդիա Աբաջեանը, բանաստեղծ Ռազմիկ Դաւո-  
յեանը, իսկ լեզուաբան Ռաֆայէլ Իշխանեանը, ի յաւե-  
լումն ստորագրութեան, իմ առաջարկով հանրութեանը  
հանրահաւաքի էր հրավիրել Նաեւ իր զխաւորած ՀԱՅ  
ԽՕՍԶ միութեան «Հայրենակիցներ» վերնագրած կոչով:

Այդ հրապարակումով «Հայ Խօսքը» մայիսի 28-ը տօնա-  
կատարող ԱԻՄ-ին միացած ՄԻԱԿ կազմակերպութիւնն  
էր Հայաստանում: Մէկ այլ կոչ էլ, որ գրել էր Ազգային  
միացեալ կուսակցութեան (ԱՄԿ) հին անդամ Յակոբ-  
ջան Թաղեոսեանը, անստորագիր տարածել էր ուսանո-  
ղութիւնը: Հայոց ազատ ու անկախ պետականութիւնը  
վերականգնելու 1988 թ. մայիս 28-ի հանրային տօնա-  
խմբումը վճռական ազդեցութիւն ունեցաւ արցախա-  
մարտը անկախութեանը հակելու գործում, իսկ Հայաս-  
տանի կոմունիստական ղեկավարներին համարձակու-  
թիւն տուեց Մոսկուային ներկայացնելու աննախադէպ  
պահանջներ: ԱԻՄ-ին ամենամեծ հռչակը բերող մայիս  
28-ի տօնախմբութիւնը պատրաստելու, ստորագրահա-  
ւաքի, եռագոյն դրօշները եւ ցուցապատումները կարե-  
լու եւ այլնի մէջ էական դեր ունեցան Սամուէլ Սեդրա-  
կեանը, Գրիգոր Դարբինեանը, Գարեգին Մխիթարեանը,  
Ալեքսանդր Մանուչարեանը, Սուսաննա Աւագեանը,  
Ռուբէն Մնացականեանը, Արցախ Բունիաթեանը եւ  
ուրիշներ: Հանրահաւաքը բացեց ու վարեց մերձաւոր  
օգնականս՝ ԱԻՄ կազմակերպական հարցերի պատաս-  
խանատու Մեխակ Գաբրիէլեանը: Նա ազդարարելով,  
որ ԱԻՄ-ը Նշում է Հայաստանի անկախ Հանրապետու-  
թեան 60-ամեակը, յայտարարեց, որ կ'ընթերցուի Ամե-  
նայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ին, Մեծի Տանն Կի-  
լիկոյ կաթողիկոս Գարեգին Բ-ին, կուսակցութիւններին  
ու համայն հայութեանն ուղղուած ԱԻՄ Նամակը, այնու-  
հետեւ յորդորեց պարզել եռագոյնները: Եօթ մեծադիր  
եռագոյններից երեքը փակցուեցին օպերայի թատրոնի՝  
հարթակ դուրս բերող դռներին, մնացածն էլ ցուցարար-  
ները անընդհատ ծածանում էին: Բոլոր ցուցապաս-

տառները նոյնպէս եռագոյն էին: Հանրահաւաքը կասեցնելու համար իշխանութիւնները Անկախութեան հրապարակի դիմաց՝ երաժշտանոցի բակ բերեցին մօտ 500 կայսերական զինուոր: Երբ Մ. Գաբրիէլեանը խօսքը ուզում էր փոխանցել իմ հրաւերով ելոյթ ունենալու համար ներկայ Վարագ Առաքելեանին ու Ռաֆայէլ Իշխանեանին, իշխանութիւնները, հոսանքը անջատելով, բարձրախօսները լռեցրին ու գաղտնի ոստիկանութեանը եւ որոշ պաշտօնեաների հարթակ ուղարկելով՝ փորձեցին գրաւեն հարթակը: Ամփջապէս հարթակ ուղարկեցի ձեռքի բարձրախօս, որով հանրահաւաքը վարող Մեխակ Գաբրիէլեանը ապահովեց Վարագ Առաքելեանի եւ Ռաֆայէլ Իշխանեանի ելոյթների լսելի լինելը: Իշխանութիւնների սադրած քաշքշուկի մէջ ընկած Մ. Գաբրիէլեանի փոխարէն տօնահանդեսի աւարտը ազդարարեց Մ. Գորգիսեանը: ՀՀ 60-ամեակը տօնախմբող հանրահաւաքից յետոյ նրա կիսը Պ. Հայրիկեանի աջակցութեամբ ամուսնուն հեղինակութիւն սարքելու համար տարածեց այն կեղծիքը, թէ եռագոյնը հանրահաւաքում իբր առաջինը Գորգիսեանն է ծածանել: Իրողութիւնը հետեւեալն է. տօնակատարումի գերխնդիրը ՈՉ ԹԵ ԻՆՉ ՈՐ ՄԵԿԻՆ առաջինը ԴՐՕՇ ՃՈՃԵԼ ՏԱՂԼ ԵՐ, այլ 60 ՏԱՐԻ ԱՐԳԵԼՈՒԲԾ 1918-1920 թթ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՕՇԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒԲԸ: Իսկ դա հնարատր էր ՈՉ ԹԵ ՄԵԿ, ԱՅԼ ԲԱԶՄԱԹԻԿԻ ԵՌԱԳՈՅՆՆԵՐԻ Ծածանումով, ինչը եւ արեց ՀԱՆՐԱՀԱՒԱԶԸ: ՀԱՆՐԱՀԱՒԱԶԸ ՍԿՍԵԼՈՒՅ ԱՌԱՋ ՅԻՍՈՒՆԻ չափ մասնակիցներ ձեռքներին բռնել էին ՈՉ ՄԻԱՅՆ բազմաթիւ մեծ ու փոքր եռագոյններ, այլ նաեւ հայոց անկախ պետականութիւնը ջատագովող, մայիս 28-ը տօնել յորդորող 20-ից

ԱԻԵԼԻ ԵՌԱԳՈՅՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ՝ գումարած եռագոյնը անյապաղ վերականգնել պահանջող հանրահաւաքի ելոյթները: Ելոյթ ունեցողներից եռագոյնը առաջինը պարզեց Վարագ Առաքելեանը՝ իր ելոյթը սկսելով եռագոյնը համբուրելով: Բացի այդ՝ եռագոյն դրօշներ եւ ցուցապաստառներ ապահովածները դրօշ ճոճելը կարող էին պատուիրէին այնտեղ ներկայ բազմաթիւ ԱԻՄ-ականներից ՅԱՆԿԱՅԱՎԾԻՆ: Այնպէս որ անհնար է պարզել, թէ Օպերայի հրապարակում ընթացող հանրահաւաքում բազմաթիւ եռագոյններ բռնողներից ՈՐՆ ԵՐ ԱՌԱՋԻՆԸ ծածանել այն: Դրանցից ԵՒ ՈՉ ՄԵԿԸ, ինչպէս լաւ երեւում է մայիս 28-ի հանրահաւաքի ԻՐԱԿԱՆ տեսագրութեան մէջ, Գորգիսեանի ձեռքում չկար ու չէր կարող լինել, քանի որ նրան յանձնարարել էի ՈՉ ԹԵ ԴՐՕՇ ԲՈՒԼԵՐ, այլ կարդար գրածս Յայտարարութիւնը, որը եւ արեց: Իսկ հանրահաւաքի բուն դերակատարը ՀԱՆՐԱՀԱՒԱԶԸ ԲԱՅՈՂ ՈՒ ՎԱՐՈՂ Մեխակ Գաբրիէլեանն էր: Չեղծարարները «եռագոյնը առաջինը ծածանող»-ին պարուրեցին մի քանի այլ դիցապատումներով նոյնպէս: Նրան ջատագովում էին նաեւ իբրեւ ԱԻՄ-ի «Հայրենիք» հանդեսի խմբագիր: Մինչդեռ ԻՐԱԿԱՆ խմբագիրը ոչ թէ «Պատասխանատու խմբագիր» ստորագրող, բայց յօդուածներ գրելուց եւ խմբագրելուց հեռու Գորգիսեանն էր, այլ հին ԱՄԿ-ական հրապարակախօս Յակոբջան Թաղեոսեանը, որը գրում էր յօդուածների հիմնական մասն ու առաջնորդողները: Սպիտակատր եկեղեցում վերաթաղուած Գարեգին Նժդեհի գերեզմանի խաչքարը տեղադրելու մէջ նոյնպէս Գորգիսեանը ՈՉ ՄԻ մասնակցութիւն չունի: Դրա նախածեռնողն ու կազմակերպիչը ինքս էի, իսկ խաչքարը կերտել ու նուիր

րաբերել էր քանդակագործ Գեղամ Սահակեանը: «Անկախութեան բանակ»-ի հիմնադիրն էլ ինչ թէ Գորգիսեանն է, այլ ԱՄԿ առաջին ղեկավարներից Աշոտ Նաւասարդեանը, որն իր մտերիմների յորդորով 1989 թ. իր հիմնած զօրախումբ էր ընդգրկել նաեւ Գորգիսեանին: Նրա դերակատարութիւնը 1988 թ. մայիս 28-ի տօնակատարումի մէջ ՄԷԿՆ էր. իր խնդրանքով ընթերցել է գրածս ԱԻՄ-ի փաստաթուղթը: Տոյցը կազմակերպելու, յատկապէս եռագոյնը պարզելու մէջ ՆԱ ՌՉ ՄԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ: Դիցապատումներից մէկն էլ այն էր, որ նա իբր թէ ճակատում հերոսանալուց յետոյ սպանուել է ոչ թէ թշնամու գնդակից, այլ նրան «ՀՀՇ-ն է խփել»: ՀՀՇ-ի արծակած գնդակից Գորգիսեանի սպանութեան հեքիաթը նրա թաղումին դարձաւ երկրի ղեկավարութիւնը զաւթած ՀՀՇ-ից հիասթափուած բազմահազար անձանց ներկայութեան պատճառներից գլխաւորը՝ յաւելելով վարկ եւ ճանաչում բերելով նրան: Իրողութիւնը սա՛ է. Մոսկուան ազատամարտը ջլատել-պառակտելու նպատակով պայքարի նուիրեալ գործիչների ու մարմինների մի մասին վարկաբեկելով, մի մասին էլ իր սպասաւոր ՀՀ նախագահ ԼՏԴ-ի միջոցով սպանել տալով, գցում էր ՀԱԲ-ի կամ ազգային այլ կառույցների ու անձանց վրայ... (1990 թ. օգոստոսի 20-ի գիշերը ազատագրական պայքարի նուիրեալներ Գեղազնիկ Միքայելեանի ու Վիտիա Այվազեանի սպանութիւնը «Հայոց ազգային բանակ»-ի վրայ գցելու համար ՀՀՇ-ականները նրանց դիակները տարան գցեցին ՀԱԲ-ի գրասենեակի դիմաց): Այդ սպանութիւնը յօրինող-տարածողները նրան այնուհետեւ ազդարարեցին «թշնամու դէմ մարտնչող հերոս»: Բայց նա ինչ թէ թշնամու դէմ ճակատելիս էր զո-

հուել, այլ իրենց խմբակով միանալով ազերիների հետ ընդհարումից յետ դարձող ռազմաջոկատին՝ անփորձութեան պատճառով էր սպանուել՝ պատճառ դառնալով նաեւ նրա կեանքը փրկել փորձող քաջարի մարտիկներ Երուանդ Սաղումեանի (1958-1990) ու Էդիկ Մարկոսեանի (1946-1990) զոհուելուն: Հայոց պատմութեան մէջ եզակի դէպք. ինչ թէ մարտադաշտում ճակատելիս, այլ անփորձութեան հետեանքով թշնամու գնդակից սպանուած եւ ԵՐԿՈՒ ԻԻՐԱՅԻՆ ԸԱԶԱՄԱՐՏԻԿԻ ԶՈՒՐՈՒԵԼՈՒ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾԻՆ շնորհուեց ազգային հերոսի կոչում... Էլ աւելի անգոսնելի էր նրան Մեծ եղեռնի յուշարձանում թաղելու աճաբարութիւնը... Նրան խարդախութեամբ եռագոյնը առաջինը բարձրացնող պսակելուց, ազգային սուտ հերոս սարքելուց, այլոց արածները կողոպտելով նրա շալակը գցելուց, այնուհետեւ Մեծ եղեռնի զոհերի յուշարձանում թաղելուց յետոյ՝ 2019 թ., մեր նորագոյն պատմութիւնը բեռնեցին նոր կեղծիքով. արցախամարտը կազմակերպելու հետ ՌՉ ՄԻ ԱՌՆԶՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԵՑՈՂԻՆ սարքեցին «Ղարաբաղեան շարժման առաջնորդ»՝ այդ մակագրութեամբ լուսանկարը ՄԵՐ ՄԵԾԵՐԸ գրութեամբ փակցնելով Երեւանի փողոցներում: Սա արդէն ԻՐԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅԻ արժեգրկում-ծանակում էր... Պարոյր Հայրիկեանը Գորգիսեանի մասին հայոց պետականութեան վերականգնումի տարեդարձին ունեցած 1988 թ. մայիսի 28-ի 2021 թ.՝ հեռուստատելոյթում, նրա անունը կցելով մեր ազգի յաւերժակեաց մեծերից մի քանիսի անունին (Արամ Մանուկեան, Գարեգին Նժդեհ), պղծեց ու ապականեց մեր ժողովրդի մեծագոյն դէմքերի յիշատակն ու ՀԱՅՈՑ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ...

Եզրակացութիւն. երբ նշուած խարդաւանքներին բաջատեղեակ ԱԻՄ առաջնորդ Պ. Յայրիկեանը նրան անուանում է «ԱԻՄ-ի մեծ գործիչ», գուցէ թէ մի կերպ հանդուրժեյի է, քանի որ իր հիմնած ու ղեկավարած միաւորումի անդամի մասին է խօսում: Բայց երբ նա ՅԱՆՐՈՒԹԵԱՆԸ ԾՈՒՂԱԿԵԼՈՎ իր թիմակցին **անուանում է «ազգային հերոս»**, դառնում է հայոց Նորագոյն պատմութիւնն ապականոդ զեղծարար: Ասուածի պերճախօս **վաւերափաստերից** բերեմ երկուսը: Յայոց ազատամարտերի պատմութիւնը ոգեզարդող ԱՄԿ հիմնադիրների գործերը Նոյնպէս իր սարքած սուտ գործչին վերագրելու համար Յայրիկեանը ԱՄԿ-ի հիմնադիրների մասին բազմակի անելի քիչ է գրում-խօսում, քան Գորգիսեանի: Նրան մի քանի անգամ առաջարկեցի ԱՄԿ հիմնադիրներից Յայկազ Խաչատրեանի, Շահէն Յարութիւնեանի ու Ստեփան Չատիկեանի յիշատակը յաւերժացնելու համար իշխանութիւններին դիմենք յատուկ հանրագրով: Բայց դրա փոխարէն նա յաջողացրեց Երեւանի դպրոցներից մէկը կոչուի ազգային սուտ հերոսի անունով... Պ. Յայրիկեանը 1988 թ. մարտ ամսից մինչեւ 1989 թ. օգոստոսը ԱԻՄ-ը ղեկավարելուս ընթացքում իմ, Մ. Գաբրիէլեանի եւ այլոց իրականացրած բացառիկ գործերը վերագրում է իրեն ու իր «հերոս»-ին: Անելին՝ ԱԻՄ-ը ղեկավարելուս տարիներին երկրի բազմաթիւ յայտնի դեմքերի ներգրաւումով ԱԻՄ-ի անդամների քանակը առնուազն քսանապատկածիս, միաւորումի ազդեցութիւնն ու վարկանիշը բազմապատկածիս եւ լուծարումը կասեցրածիս Յայրիկեանը մեղադրեց «ԱԻՄ-ի առաջնորդին դաւաճանելու» մէջ: Այս յերիւրանքը եւ արածներս իրեն ու ազգային կեղծ հերոս սարքուածին

վերագրելը ԵՐԱԽՏԱՍՈՌՈՒԹԻՒՆ ՉԷ միայն: Դա ԱԻՄ-ի ՈՍԿԵՂԱՐԸ ԿԵՐՏԱԾԻՍ հանդէպ առնուազն երախտամերժութիւն է, անելի ճշգրիտ՝ ՎԱՐԶԿՈՂՈՂՈՒՏ: Կասկած չունեմ, որ այս ամէնն իմացող իւրաքանչիւրի մէջ ինձ ու Յայրիկեանին ուղղուած հասկանալի մի հարց պիտի ծագի՝ որն է այս զեղծարարութիւնների պատճառն ու խթանը, եւ կամ Պ. Յայրիկեանը ինչո՞ւ պիտի ոչ թէ ԱՄԲՈՂՏ արածներս, այլ դրանց մի մասը իւրացնելով վերագրեր իրեն ու այլ մէկին: Յարցերին ճիշտ պատասխանելու պարագայում Յայրիկեանը կամ պիտի ընդունի դրանց իրողութիւնը եւ կամ ժխտի, ինչը անժխտելի փաստերի առատութիւնը ԱՆՅԱՐԸ Է դարձնում: Դետեւաբար՝ նա ուրիշ ելք չունի, քան պատասխանից հրաժարուելը: Յարցի պատասխանը թէ ընթերցողի եւ թէ ինձ համար դիտելով յոյժ ԱՆՅՐԱԾԵՇՏ, քնքսեմ տալիս: Յայրիկեանը գիտակցելով, որ ՎԱՐԶԿՈՂՈՒՏԸ ՅԱՍՏԱՏՈՂ ԲԱԶՄԱԹԻՒ ԱՆՅԵՐԵՆԼԻ ՓԱՍՏԵՐԸ ԺՍՏԵԼԸ ԱՆԿԱՐԵԼԻ Է, յոյսով էր, թէ ԻՐԱԿԱՆ գործակատարի մասին իրողութիւնները անտեսելն ու ժխտելը հնարաւոր է ՄԻՄԻԱՅՆ դրանք ՈՐԵՒԷ ՈՒՐԻՇԻ ՇԱԼԱԿԸ ԳՑԵԼՈՎ... Եզրակացութիւնը սա՛ է. 1988 թ. մայիսի 28-ին ԵՌԱԳՈՅՆՆԵՐՈՎ հայոց պետականութեան վերականգնումի ՆՇՈՒՄԸ, որը 1920 թ. այս կողմ բացառիկ էր մեր պատմութեան մէջ, ԱԻՄ-ին դարձրեց Յայաստանի եւ Սփիւռքի այդ օրերի ԱՍԵՆԱՅԵՂԻՆԱՎԿԱԻՈՐ կազմակերպութիւնը: Իսկ Յայաստանում այդ կազմակերպութիւնը ղեկավարում էր ոչ թէ 1988 թ. ՄԱՐՏ ԱՄՍԻՑ ծերբակալուած, այնուհետեւ Արեւմուտք վտարուած ՅԱՅՐԻԿԵԱՆԸ, այլ այդ օրերի հայերէն թերթերից ամենահեղինակաւոր «Անկախութիւն» շաբա-

թաթերթի անուանադիր խմբագիրս: ՀՀ-ից աքսորուած Հայրիկեանը գիտեր, որ ինչպէս ի՛ր, այնպէս էլ քաջատեղեակների համար այս ամէնի հեղինակն ու կազմակերպիչը ոչ թէ ԻՆՔՆ Է, այլ ուրիշ մէկը: Չոքամոլութեամբ տառապող այդ գործչի համար դա անհանդուրժելի էր: Եւ նա գտաւ այն մէկին, որին վերագրելով ԱԻՄ-ի Հայաստանեան գործունէութիւնը ու ՅԱՏԿԱՊԵՍ մայիսի 28-ի տօնախմբութիւնը, յոյս ուներ պիտի նուազեցնէր ԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ դերակատարութիւնը: Այդ փնտրելի անձը նրա համար դարձաւ Մ. Գորգիսեանը, որին էլ վերագրեց 1988 թ. մայիսի 28-ից մինչեւ Գորգիսեանի մահը ԱԻՄ բոլոր հանրայայտ գործերը: Թուամ էր, թէ մահացած անձին նոր քաջագործութիւն շնորհելը անհնար է: Բայց Հայրիկեանը հայոց պետականութիւնը վերականգնելու տարելիցին ելքը գտաւ՝ նրա անունը կապելով մեր ազգի յաւերժակեաց մեծերի անուններին: Հայրիկեանն իր այս արկածախնդրութեամբ գերազանցեց ինքզինքը:

Ռաֆայել Համբարձումեան  
29 մայիսի 2021 թ.

## ՀԱՅՈՑ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՒ ՀՀ ՆԵՐՆՈՒԺԱԾ ԹՇՆԱՍՈՒՆ ԵՐԱԿՐԻՑ ՎՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՅԹՆԵՐ

Ա. Հայաստանի Հանրապետութիւնն իր պետական սահմանների քաղաքական, իրաւական ու դիւանագիտական ՀԻՄՔ ՊԻՏԻ ԴԱՐՁՆԻ 1920 թ. օգոստոսի 10-ին եւ նոյեմբերի 22-ին ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԻՐԱԴՈՒՆՔԸ ՄԻԶԱԶԳԱՅՆՏՐՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԱԾ ՍԵՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՒ ՈՒԼՍՈՆԵԱՆ ԻՐԱԴԱՐԱՐ ՎԵՒՈՒՔԱՐՏԵԶԸ: Օրինագոր այդ ԲԱՑԱՌԻԿ ՎԱԿԵՐԱԳՐԵՐԸ ԵՎՈՒԿԱՆ (Ֆրանսիա, Բրիտանական կայսրութիւն, Իտալիա, Բելգիա, Յունաստան, Լեհաստան, Պորտուգալիա եւ այլ պետութիւններ) ու ԱՄՆ-ը, նաեւ ճապոնիան, իրենց ստորագրութիւններով **ԱՄՐԱԳՐԵԼ ԵՆ** ԻՐԱԴԱՐԱՐՈՒՄԸ: ՀՀ-ն եւ հայութիւնը այդ փաստաթղթերը ստորագրած տերութիւններին պիտի յորդորեն պաշտօնապէս **ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՆ** իրենց իրաւագոր ստորագրութեամբ ՓԱՍՏՐԵՆ (de facto) ԻՐԱԳՈՐԾՈՒՄԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՉ ՄՏՑՈՒԱԾ ՈՒԼՍՈՆԵԱՆ ԻՐԱԴԱՐԱՐ ՎԵՒՈՒՔԱՐՏԵԶԸ: ՌՈՒՄԱՍՏԱՆԸ, 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՎԵՐԱՑՆԵԼՈՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԽԱՓԱՆԵՑ դրանց իրագործումը: Ինքնիշխան կոչուած ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ նոյնպէս ՄՈՒՍԿՈՒԹՅԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ Հայաստանի անկախութեան հռչակագիրը 1991 թ. ընդունելուց ի վեր ՍԱՐԻ ու ՈՒԿԻՍՆԵԱՆ ԻՐԱԱՐԱՐ ՎՃԻՌՔԱՐՏԵՂԻ տարելիցները ՉԵՆ ՆՇՈՒՄ: Հետևաբար, միջազգային այդ վաւերագրերի **ԱՐԴԱՐԱԶՕՐՈՒՄԸ** ՊԵՏՔ Է ՏՆՕՐԻՆԻ **ՀԱՅ ԺՈՒ**

**ՂՈՎՈՐԴԸ:** Համայն հայութեանը, **Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ**, յորդորում ենք ԱՅՍՈՒՅԵՏԵՒ և յոյեմբերի 22-ը ԱԶԳՈՎԿՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԻ ԱՄԵՆԱՄԵԱՅ ՏՕՆԵ-ԼԻ ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՕՐ (հայ ժողովրդի համազգային ծրագիրը 15 տառի մեջ Գարեգին Նժդեհի խտացրած այս բառ-գաղափարաբանությունն է): Սոյն պարտաւորութեամբ հայութիւնն իր ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ հետապնդելու եւ հատուցում ստանալու **անժամանցելի իրաւունքը պիտի գործադրի՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՐՈՂԱՐՇԱՒ** սկսելով Արարատեան դաշտից մինչև Արգենտինա, Կանադայից ու ԱՄՆ-ից մինչև Եւրոպա ու Մերձատր Արևելք, Իրանից մինչև Աստրալիա...

**Բ.** ԵՐԿԻՐԸ ՉԱԻԹԱԾ ԹՇՆԱՍՈՒ ԽԱՄԱԾԻԿ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԼԾՈՒՄԸ Է ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԵԶՏԵՂԻՑ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՄԱՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆԸ: ՀԱՅՐԵՆԻԶԻ ԿՈՐՈՒՄՏԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՒ ԹՇՆԱՍՈՒ զինանուաճումները **ՎԵՐՉԱԿԵՏԵԼՈՒ** ՄԷԿ ԵՄԱՆՊԱՐԶ ՈՒՆԻ հայ ժողովուրդը. 1918 թ. մայիսի 30-ին ազդարարուած ՀՀ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԾՐԱԳՐՈՎ ազգային ուժերի ՀՐԱԻՐԱԾ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԱՆՅԱՊԱՂ ՊԵՏԸ Է ԿԱԶՄԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԲՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ: Թ՛՛ ՀՀ Նախորդ 31 տարիների եւ թ՛՛ ԱՅՍՕՐՈՒՄՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ Հայաստանի «թիւ մէկ ու ՄԻՎԿ ԹՇՆԱՄԻ» եւ ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ի՛նչ թէ ԱՄԵՆԱԳՈՐԾՈՒՆ ու ամենավտանգատր ՀԱԿԱՌԱԿՈՐԴ ՌՈՒՄԱՍՏԱՆԻՆ, այլ այդ ԵՐԿՐԻ հրահրումով ու Նրա զինօժանդակութեամբ մեր դէմ պատերազմող Ադրբեջանին եւ Թուրքիային: Հետևաբար, ժողովրդի ՆՈՐԸՆՏԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ԻՐ ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԸ Է ՍԿՍԻ՝ ԱԶԴԱՐԱՐԵ-ԼՈՎ ՀՀ դէմ պատերազմող ԱՄԵՆԱԿՏԱՆԱԿԱԲՈՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴ ԵՐԿՐԻ ԱՆՈՒՆԸ: Հայ ժողովուրդն իր պետականութիւնը պահպանելու եւ ԾՐԱԳՐՈՒՄԸ ՆՈՐ ՑԵՂԱՄՊԱՆԴԻՑ ՓՐԿՈՒԵԼՈՒ համար իր բովանդակ ուժերն ու կարողութիւնները ՊԵՏԸ Է ԲԵԿԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱԿՈՐԾԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ դէմ: Հետևաբար, եթէ ժողովրդին «ոտքի ելնել» կոչնահարող ՀՀ ՑԱԿԱՑԱԾ ՂԵԿԱԿԱՐՈՒԹԵԱՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ «հայրենափրկիչ» խՍԲԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԵՐԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆԻՇՆԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻ ՎԵՐՈՆՇԵԱԼ ՀԻՍՆԱԴՐՈՅԹՆԵՐՈՎ ՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐՈՎ ԻՐԱԳՈՐԾԵԼԸ ՉԷ, ԴՐԱՆՔ ԹՇՆԱՍՈՒ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐՆ ԵՆ ՄԵՐ ՄԵԶ...

**Գ.** ՀՀ դէմ պատերազմը 1920-1921 թթ. օրինակով սանձազերծել է մեր երկիրը 1991 թո՛ւտի ԻՐ ԶՕ-ՐԱՄԻԱԲՈՐՈՎ ԿԱՆԱՆԱԾ ԵՆ այդ զինուժը այսօր ԱՄԲՈՂՋՈՎԿՆ ԱՐԻԲԵԶԱՆԻ ՌԱԶՄԱՐՇԱԻՆ ԼԾԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ: Սովորաբար պատերազմներում յաղթելու համար կողմերը ճգնում են հակառակորդի բանակում ունենան իրենց ենթակայութեան թաթուն զորախմբեր, որոնք ճակատումների առանցքային պահերին ներսից հակառակորդի համար անսպասելի յարձակումներով յաղթանակ են ապահովում: Իրեն «ՀՀ դաշնակից» յատարարող Ռուսաստանը հայ-ազերի նոր պատերազմը սադրելուց Ի ՎԵՐ **ՀԵՆՑ ԴԱ՛ Է ԱՆՈՒՄ:** Ռուսաստանը «խաղաղապահ» յայտարարած իր **ԿԱՆԱՆԱԶՕՐՈՎ** մեր նահատակների **խնկելի արեամբ** ազատագրուած Արցախի 70 տոկոսը նորից իրեն ԲՈՒՆԱԿՑԵԼՈՒՑ յետոյ

այսօր նոյնը իրագործել է ճգնում նաեւ ՀՀ-ի առումով՝ Հայաստանը վերագալթելու եւ իր մարզերից մէկը սարքելու համար: ՀՀ տարածքները գրաւող թշնամու դէմ հայոց զօրքի **հայրենամարտերը** խափանող Ռուսաստանը իրեն ճորտագրուած ՀՀ վարչապետի ձեռամբ ՉԻՆԱԹԱՓՈՒՄ Է ՀՀ ու Արցախի ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ՝ կասեցնելու մեր տարածքներ ներխուժած ազերի զօրքին ՀՀ սահմաններից վռնդելու մեր **հայրենահոգ** բոլոր **վճռափորձերը**: Այն է՝ Հայաստան տեղակայած իր զօրքով մեր երկրի բնակչութեան ՁԵՌԶԵՐԸ ԿԱՊԵԼՈՎ ԵՏԵԻՇ, Ռուսաստանը հայրութեանը ՁՐԿՈՒՄ Է ԳՈՅԱՄԱՐՏԻ ՆՈՒՎՉԱԳՈՅՆ ՀՆԱՐԱԴՈՒՐՈՒԹԻՒՆԻՑ...

Դ. Յոյժ անհրաժեշտ է սոյն հանրահաւաքի ՀԱՍՏԱՏՈՒՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ ԺԱՄԱՆԱԿԱԴՐՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԻ ԶԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ՝ յայտարարելով, որ յաջորդ հանրահաւաքում արուող համալրումներից յետոյ նշանակուած ՅԱՏՈՒԿ հանրահաւաքի տնօրինութեանն ու հաստատումին են ներկայացուելու իշխանութեան ամբողջ կազմը: Ո՛Չ ՄԷԿ ԿԱՍԿԱԾ, որ նշուած քայլերից յետոյ յաջորդ հանրահաւաքին ներկայանալու են շատ աւելի շատ համակիրներ, եթէ հանրութիւնը հանրահաւաքին ոչ թէ հերթական բոցաշունչ քննադատութիւն-դատապարտումներ լսի, այլ ՏԵՍՆԻ ԻՐԱԳՈՂԾԵԼԻ ԿՃՈՎԱՅՅԵՐ...

Ռաֆայել Համբարձումեան  
27 նոյեմբերի 2021 թ.

## ՅՈՐԴՈՐԱԿ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆԸ

ՀՀ ՌՈՒՄԱՃԱՐԱԿ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՈՒԽՆԸՆԵԱՆ ԻՐԱԴԱՐԱՐ ԿՃԻՌ-ԶԱՐՏԵԶԻ  
100-ԱՄԵԱԿԸ ՆՈՅՆԴԷՍ ԶԸ ՆՇԵՑԻՆ:  
ԴՐԱՆ Ի ՊԱՏԱՍԽԱՆ, ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆԸ  
ՅՈՐԴՈՐՈՒՄ ԵՆԸ՝ ՎՈՒՐՈՈ ՈՒԽՆԸՆԻ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԴԱՐԱՐ ԿՃԻՌ-ԶԱՐՏԵԶԻ  
ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԻ ՏԱՐԵԼԻՑԸ ԱՅՍՕՐՈՒԱՆԻՑ  
ԱԶԴԱՐԱՐՈՒԻ ԱՄԵՆԱՄԵԱՅ ՏՕՆԵԼԻ  
«ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ» ՕՐ

Սերի դաշնագրի եւ Ուիլսընեան «Իրաւարար վճիռ» քարտեզի վերաբերեալ, յատկապէս դաշնագրի 100-ամեակը մերձենալու ընթացքում, բազմաթիւ յոյժ անհրաժեշտ եւ օգտակար յօդուածներ ու ելոյթներ եղան:

Սակայն առայժմ մեծամասնութիւն են այն անձինք ու մարմինները, որոնց կարծիքով Սերի դաշնագիրը թղթի վրայ մնացած անիրագործելի փաստաթուղթ է: Նմանախոհները դրա մէջ մեղադրում են Եւրոպային ու ԱՄՆ-ին, որոնք իբր թէ Լօզանում Սերը դարձրին անիրագործելի: Այդ խարդաւանքը իր հայ ձեռնաստուներով մեր մէջ տարածողը Ռուսաստանն է, որը ՍԵԻՐԻ ԵՒ Ուիլսընեան Իրաւարար վճիռ-քարտեզի իրականացումը խափանեց՝ 1920 թ. դեկտեմբերին ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՎ:

Ուրիշ ի՛նչ մի պատճառ գոյութիւն չունի, քանի որ Եւրոպան ու ԱՄՆ-ը, նաեւ ճապոնիան եւ այլ երկրներ միջազգային այդ փաստաթղթերն իրենց իրաւագոր

ստորագրութեամբ **ԱՄՐԱԳՐԵԼ ԵՆ** ԻՐԱԿԱԲԱՆՈՐԸՆ: Միացեալ Հայաստանին վերաբերող միջազգային այդ բացառիկ հայանպաստ փաստաթղթերի մասին 1921-ից 1970-ականների վերջը գրել-խօսելը Խորհրդային Հայաստանում խստիւ ԱՐԳԻՆՈՒՄԾ էր: Սոյն յօդուածը հիմնականում արձանագրում է, թէ Հայաստանի սահմանները ՄԻԶԱԶԳԱՅՆՈՐԸՆ հաստատող այդ ԲԱՅԱՌԻԿ Վաւերագրերի մասին 1920 թ. դեկտեմբերից ի վեր Հայաստանում ԵՐԲՈՒՄՆԻՑ ԵՆ ՍԿՍԵԼ ԳՐԵԼ-ԽՕՍԵԼ:

Խորհրդային Հայաստանում Սեւրի դաշնագրի առաջին անկողմնակալ բնութագիրը տալիս են 19-20-րդ դդ. հայոց պատմագիտութիւնը հիմնովին սրբագրող «Թուղթ ընդհանրական» եւ «Յորդորակ» **պատմաքաղաքագիտական** աշխատութիւնները (առաջինը գրել, անստորագիր տարածել էմ 1980 թ., երկրորդը իմ ստորագրութեամբ տպագրուել է 1987 թ.): Հայաստանում եւ Սփիւռքում տարածուած այդ երկերը առաջինն են շրջանառել այն իրողութիւնը, որ 1828 թ. Պարսկահայքը զաւթելուց եւ արեւելահայութեանն իր տիրապետութեան տակ գցելուց յետոյ Ռուսաստանը սկզբնաւորեց հայոց պատմութեան ամենադժնդակ գերութիւնն ու յանդակապէս հայ ժողովրդի երբեւէ տեսած **ԱՍԵՆԱԿԱԶԻՈՐ ՀՈԳԵՍՊԱՆԴԸ**: Նշուած աշխատութիւնները այն իրողութիւնն են հիմնաւորում նաեւ, որ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԵՐ, ՈՐԸ ԵՐԻՏԹՈՒՐԸԵՐԻ ՀԵՏ ՈՒ ՆՐԱՆՑԻՑ ԱՌԱԿԵԼ **ԴԻԿԱԳՈՐԾԵԼ** Է ՆԱԿԻ ԱՐԵՄՏԱԶԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ: «Թուղթ ընդհանրական»-ը Հայաստանի բնակչութեանը եւ ընդհանրապէս ամբողջ հայութեանը

իրազեկում էր, որ աշխարհի տասից աւելի ազդեցիկ տերութիւններ միջազգային մի քանի փաստաթղթերով ու յատկապէս Սեւրի՝ 1920 թ. օգոստոսի 10-ի դաշնագրով են ճանաչել Հայաստանի ինքնիշխանութիւնը, Թուրքիային պարտադրել Հայաստանի Հանրապետութեանը վերադարձնել աւելի քան 100 հազար քառ. կմ տարածք: Աշխատութեան մեջ նաեւ արձանագրում էր, որ Սեւրի դաշնագիրը չգործադրուեց, քանի որ Ռուսաստանը, 1920 թ. դեկտեմբերի 2-ին ՎԵՐԱՅՆԵԼՈՎ ՀԱՅՈՑ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՆԸ, իր դրածոյ Սովետ Հայաստանի ղեկավարներին պարտադրեց անիրաւագոր ու ապօրինի յայտարարել միջազգային այդ դաշնագիրը: ՀՀ Գիտութեանց կաճառում, Երեւանի Պետականալսարանում, Հայաստանի գրողների միութիւնում եւ մայրաքաղաքի գիտամշակութային ու կրթական հիմնարկներում 1988 թ. մինչեւ 2005 թիւը ամէն տարի անցկացնում էի Սեւրի դաշնագրի տարելիցի նշումը: Ընդունուած փաստաթղթերում ամրագրում էր հետեւեալ պահանջը.

Հայաստանի Հանրապետութիւնն իր **պետսահմանների** քաղաքական, իրաւական ու դիւանագիտական ՀԻՄՔԵՐԸ ՊԻՏԻ ԴԱՐՁՆԻ Փարիզի խաղաղութեան վեհաժողովի (ընդհատումներով տեւել է 1919 թ. յունուարի 18-ից մինչեւ 1920 թ. յունուարի 21-ը), Ազգերի լիգայի՝ 1920 թ. փետրվարի 24-ի զեկոյցի, 1920 թ. ապրիլի 26-ին կնքուած Սան Ռեմոյի պայմանագրի որոշումներով ընդունուած ՍԵՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՒ ՈՒԿԱՆԵՆԵԱՆ ԻՐԱԿԱՐԱՐ ՎԵՌՈՒՄԱՐՏԵՉԸ: Սեւրի դաշնագրի 80-ամեակի առթիւ «Ազգային միասնութեան ուխտ» կուսակցութեան անունից 2000 թ.

յուլիսին հրապարակեցի հետեւեալ փաստաթուղթը. «ԿՈՉ ԶՅ նախագահին, ԶՅ Ազգային ժողովին, հայրենիքի եւ Սփիւռքի բոլոր կուսակցութիւններին, հասարակական ու այլ կազմակերպութիւններին, ազգային, հանրային, մշակութային գործիչներին, հայկական մամուլին ու քարոզամիջոցներին.

Սիրելի հայրենակիցներ, ս. թ. օգոստոսի 10-ին լրանում է վերջին մի քանի հարիւրամեակի ընթացքում հայոց դիւանագիտութեան ամենանշանակալի ձեռքբերումի՝ Սերի միջազգային դաշնագրի ստորագրման 80-ամեակը: Դաշնագիրը ստորագրած Թուրքիան, Բրիտանական կայսրութիւնը, Ֆրանսիան, Իտալիան, Չեխոսլովակիան, Յունաստանը, Պելճիքան, Ճապոնիան, Լեհաստանը, Պորտուգալիան եւ Ռումինիան ճանաչում էին Միացեալ Չայաստանի անկախութիւնը: Ուիւսընեան վճռագիր-քարտեզով Չայաստանին տրուելիք 40 հազար քառ. մղոնով (աւելի քան 103 հազար քառ. կմ) ԶԶ-ն պիտի ունենար մօտ 162 հազար քառ. կմ տարածք: Զայ ժողովուրդը, ի Չայաստան եւ ի Սփիւռս, ԶԶ կառավարութեան տնօրինութեամբ պէտք է մեծ շուքով ու համատարած հանդիսութիւններով նշի մեզ համար այդ պատմական իրադարձութեան տարելիցը: Յոյժ անհրաժեշտ է, որպէսզի հայկական եւ օտար լրատուամիջոցներով հանրաւորուեն այդ հանդիսութիւնները, ուղերձներ յղուեն Փարիզի ու Սան Ռեմոյի պայմանագրերը, Սերի դաշնագիրը եւ Ուիւսընեան Իրաւարար վճիռ-քարտեզը ստորագրած տերութիւններին՝ յորդորելով *նչ միայն* պաշտօնապէս **ՎԵՐԱԱՍՐԱԳՐԵՆ** իրենց իրաւագոր ստորագրութիւններով ՓԱՍՕՐԷՆ (*de facto*) ԻՐԱԳՈՐԾՈՒՄԻ ՄԷՋ ԵՂԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ, այլեւ

**ՎԵՐԱԶԱՍՏԱՏԵՆ** հատուցում ստանալու **հայ ժողովրդի անժամանցելի իրաւունքը:**

Սիրելի հայրենակիցներ, Սերի պայմանագրի ստորագրութեան 80-ամեակի համազգային նշումը դարձնենք մեր ժողովրդի դատը հետապնդելու համաշխարհային քարոզարշաւ՝ Արարատեան դաշտից մինչեւ Արգենտինա, Կանադայից ու ԱՄՆ-ից մինչեւ Եւրոպա ու Մերձաւոր Արեւելք, Իրանից մինչեւ Աւստրալիա:

Ազգային միասնութեան ուխտի խորհուրդ,  
7 յուլիսի, 2000 թ., Երեւան»:

Նոյն Կոչը որոշ խմբագրումից յետոյ ԶԶ այդ օրերի վարչապետ Անդրանիկ Մարգարեանին ուղարկելու համար առաջարկեցի՝ ստորագրեն նաեւ երկրի յայտնի դէմքերը: Փաստաթուղթը աւարտուում էր հետեւեալ յորդորով. «Կարծում ենք, Չայաստանի անկախ Չանրապետութեան կառավարութիւնը պիտի պատշաճ նշի դաշնագրի ստորագրութեան 80-ամեակի տարելիցը, որն այսօր ունի քաղաքական նշանակութիւն եւ պիտի նպաստի մեր երկրի միջազգային դիրքերի ամրապնդումին: Միաժամանակ առաջարկում ենք Երեւանի փողոցներից մէկը կոչել օտար երկրների ղեկավարներից մեր ժողովրդի ամենանուիրեալ աջակից Վուդրո Ուիլսընի անունով՝ մայրաքաղաքում կանգնեցնելով նաեւ նրա արձանը»: Ստորագրել են՝ Աղալովեան Լենսեր (ԶԶ ԳԱԱ արձանը), Ստորագրել են՝ Աղալովեան Լենսեր (ԶԶ ԳԱԱ ակադեմիկոս), Զրանտ Աւետիսեան (ԶԶ ԳԱԱ ակադեմիկոս), Բարխուդարեան Վլադիմիր (ԶԶ ԳԱԱ ակադեմիկոս), Գալուեան Գալուստ (ԶԶ ԳԱԱ ակադեմիկոս), Չեթունցեան Պերճ, արձակագիր, Կապուտիկեան Սիլվա, քանաստեղծուհի, Մանարեան Արման, շարժանկարի

բեմադրիչ, Մուրադեան Սարգիս, գեղանկարիչ, Համբարձումեան Ռաֆայել, Նախիջեանահայոց ազգային խորհրդի նախագահ, Ղազարեան Ռաֆայել (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Սարգսեան Սոս, ժողովրդական դերասան, Սիմոնեան Հրաչիկ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս)»:

Մտաւորականութեան ստորագրած սոյն հանրագիրը 2000 թ. յուլիսի 13-ից 15-ը տպագրուեց Հայաստանի գրեթէ բոլոր թերթերում<sup>18</sup>: Նամակին յաջորդեց իմ հանդիպումը վարչապետի հետ, որը յայտնեց օգոստոսի 10-ին գիտաժողովը անպայման անցկացնելու իր պատրաստակամութիւնը: Յաջորդ օրը հրապարակուեց հետեւեալ հաղորդագրութիւնը. «ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՍԵՐՐԻ ԴԱՇՆԱԳՐԻ 80-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ, Երեւան, 2000 թ., 18 հուլիսի, ՆՈՅԱՆ ՏԱՂԱՆ: Օգոստոսի 10-ին լրանում է Սեւրի միջազգային դաշնագրի ստորագրման 80-ամյակը: Այդ կապակցությամբ հանրապետության մի խումբ ակադեմիկոսների, գրականության ու արվեստի ճանաչված գործիչների նամակ-հանրագիրը հաշվի առնելով, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը յանձնարարել է Երեւանի քաղաքապետարանին մայրաքաղաքի փողոցներից մէկը կոչել Սեւրի դաշնագրի նախաձեռնողներից՝ ԱՄՆ նախկին նախագահ, հայ ժողովրդի բարեկամ Վուդրո Վիլսոնի անունով: Ինչպես հայտնեցին ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայ-

<sup>18</sup> Տես Հայ մտաւորականների դիմումը ՀՀ վարչապետին, «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթ, 2000 թ., յուլիսի 13, էջ 2: «Ազգ» եռօրեայ, 2000 թ. յուլիսի 13, էջ 3: «Երկիր» օրաթերթ, 2000 թ. յուլիսի 13, էջ 3: «Գոյոս Արմենիի» ռուսերէն թերթ, 2000 թ. յուլիսի 8, էջ 3: 80th Anniversary of Treaty of Sevres Marked, «Armenian Reporter», no 43, august 12, 2000, «Նախիջեան» պարբերաթերթ, 2000 թ., արեգ մեհեկան, թիւ 15, էջ 1-2 եւ այլ թերթեր:

նության հետ կապերի վարչությունից, հայ ժողովրդի պատմության համար նշանակալի այդ հոբելյանը պատշաճ մակարդակով նշելու նպատակով վարչապետը հանձնարարական է տվել նաեւ Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիային՝ Սեւրի դաշնագրի ստորագրման 80-ամյակին նվիրված գիտաժողով կազմակերպել եւ այդ միջոցառման ամբողջ ընթացքը լուսաբանել: 2000 թ. օգոստոսի 10-ին ՀՀ կառավարութեան տնօրինութեամբ ՀՀ Գիտութեանց կաճառի լեւի-լեցուն մեծ դահլիճում վարեցի Սեւրի դաշնագրի ԱՌԱՏԻՆ յոբելեանական նիստը Հայաստանում: 2006 թ. օգոստոսի 10-ին՝ Սեւրի պայմանագրի տարելիցին, ՀՀ ԳԱԱ Գիտութեանց կաճառում անցկացրածու հայրենակցական ու ստեղծագործական միութիւնների, գիտնականների եւ արուեստագետների համաժողովը ամրագրեց, որ 1920 թ. օգոստոսի 10-ին կնքուած Սեւրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հատուածը եւ նոյն թուի նոյեմբերին ընդունուած Վուդրո Ուիլսոնի «Իրաւարար վճիռ» քարտեզը Հայոց ցեղասպանութիւնն ու հայ ժողովրդի հայրենատիրութիւնը միջազգայնօրէն հաստատող ցայսօր ուժը չկորցրած իրաւագոր փաստաթղթեր են: Համաժողովը կոչ արեց վճռականապէս հանդէս գալ բռնագրաւուած, բայց Սեւրի դաշնագրով եւ Ուիլսոնեան Իրաւարար վճիռ-քարտեզով Հայաստանին տրուած պատմական տարածքները Հայաստանի Հանրապետութեանը միաւորելու գործողութիւններով: Յայտարարելով, որ Հայաստանի Հանրապետութեան ու ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՍԱԶԳԱՅԻՆ քաղաքական ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ ՍԵՐՐԻ ԴԱՇՆԱԳՐԻԸ ԵՒ ՈՒՒՍԸՆԵԱՆ ԻՐԱՒԱՐԱՐ ՎՃԻՐԸ ԿԵԱՆՔԻ ԿՈՉԵՆ Է, համաժո-

ղովը իմ առաջարկով օգոստոսի 10-ը **ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԳԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՕՐ**<sup>19</sup> հայ ժողովրդին ու ՀՀ իշխանութիւններին յղած Յորդորակով կոչ անելով ամեն տարի նշել այդ օրը<sup>20</sup>: 2006 թ. դեկտեմբերին նամակով դիմեցի Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներին՝ Վուրդո Ուիլսընի մահուան տարելիցին (յունուարի 3) հայոց եկեղեցիներում մատուցուելիք Պատարագամատոյցից յետոյ նրա հոգեհանգիստը նշելու առաջարկով: Չոյգ վեհափառների յատուկ արտօնութեամբ 2007 թ. յունուարի 3-ին Սբ. Էջմիածնում, Հայաստանի այլ եկեղեցիներում եւ Անթիլիասի Մայր եկեղեցում պատարագամատոյցից յետոյ կատարուեցին Վ. Ուիլսընի մահուան հոգեհանգստեան պաշտօններ<sup>20</sup>:

**2006 թ. դեկտեմբերի 28-ին** ՀՀ Գիտութեանց կաճառում կազմակերպեցի ու վարեցի Վուրդո Ուիլսընի ծննդեան 150 ամյակի նշումը: 2007 թ. նոյեմբերի 22-ին անցկացրի «Վ. Ուիլսընի 1920 թ. նոյեմբեր 22-ի Իրաւարար վճիռը» խորագրով **առաջին** գիտաժողովը, իսկ 2010 թ.՝ վաւերագիրը հրապարակելու 90-ամեակին նուիրուած նոյնպէս **առաջին** գիտաժողովը, որին զեկուցումներով հանդէս եկան քաղաքագետ Լ. Շիրինեանը, ռուսաստանաբնակ յայտնի պատմաբան Եուրի Պարսեղովը (նրա ուղարկած զեկուցումը կարդաց Հայաստանում Ռուսաստանի Դաշնութեան դեսպանատան պատասխանատուն), դիւանագետ Ա. Պապեանը

<sup>19</sup> Սելիեան Երազանքներ, «Ազգ» թերթ, 11 օգոստոսի, 2006 թ., էջ 1:

<sup>20</sup> Noyan Tapan, diasporan armenian organ, Erevan, 12 february 2007, p. 11.

\* Վուրդոյ Ուիլսընի ծննդեան տարելիցը իջ ԱՄՆ-ում, իջ էլ մէկ այլ երկրում չը նշուեց: Հայութիւնը միակ ապզն էր աշխարհում, իսկ Հայաստանը միակ երկիրը, որ նշեց Վուրդոյ Ուիլսընի ծննդեան 150-ամեակը:

եւ ուրիշներ: Մինչ այդ Պերճ Չեթունցեանի, Սիլվա Կապուտիկեանի, Արման Մանարեանի ու այլ յայտնի դեմքերի ստորագրութեամբ ՀՀ վարչապետին ուղղած մի Յորդորակով առաջարկեցինք այդ օրը նշել պետականօրէն՝ ՀՀ արտաքին քաղաքականութեան հիմնադրոյթներից մէկը դարձնելով Սելիեի պայմանագրի արծարծումը: «Հայաստանի Հանրապետութիւնը, նշում էր ուղերձում,՝ ՄԱԿ-ից, Եւրախորհրդից եւ համաշխարհային ձեռնհաս այլ կառոյցներից հարկ է՝ պահանջի միջազգային այդ գործուն պայմանագրի տնօրինութեամբ ԱՄՆ նախագահ Վուրդո Ուիլսընի ձեռքով 1920 թ. նոյեմբերի 22-ի Իրաւարար վճռով ամրագրուած ՀՀ սահմանների վերահաստատում»<sup>21</sup>:

Գիտաժողովների հրապարակած իրազեկումներում շեշտուած էր, որ Հայաստանի Հանրապետութիւնն իր պետական սահմանների հիմքն այսօր ոչ թէ պետք է շարունակի համարել 1921 թ. մարտի 16-ի Լենին-Աթաթուրք օրինապիղծ գործարքով Հայաստանին պարտադրուած 1921-1923 թթ. հողագաւթումը, այլ միջազգայնօրէն ճանաչուած Ուիլսընեան Իրաւարար վճիռ-քարտէզը: Հայաստանի Հանրապետութեան պետական սահմանը ամրագրել է 1919-1920 թթ. Փարիզի միջազգային վեհաժողովի (1919-1920 թթ.), Սան Ռեմոյի խորհրդաժողովի (1920 թ. ապրիլի 9-26) ու Սելիեի միջազգային դաշնագրի վճռով հաստատուած եւ ԱՄՆ Մեծ կնիքով կնքուած նոյեմբերի 22-ի անբեկանելի Իրաւարար վճիռը: ՀՀ իշխանութիւններին յղած Յորդորակով նշում էր. «Զանի որ Վուրդոյ Ուիլսընի Իրաւարար

<sup>21</sup> «Նախիջեան» պարբերաթերթ, 2000 թ., արեգ-մեծեկան, թիւ 15, էջ 2:

